




I-485







# ԱՐԱԳՈՒ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1892

ԶՈՐՅՈՒԹԻ ՏԱՐԻ

ԳԻՐՔ Ա

ՅՈՒՆԻՄ

Ա-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
ՏՊԱՐԱՆ Յ. Ի. ԼԻԲԵՐՄԱՆԻ

Дозволено цензурою. С-Петербургъ, 2 Сентября 1892 года.

Типографія Я. И. Либермана (Вознесенській пр., № 38—4).



## ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Աերկայ տարուայ մայիսի 3—5-ին Ս. էջմիածնի Մայլ  
Աթոռում տեղի ունեցաւ մեծ հանդիսիւ Ամենայն Հայոց Կա-  
թողիկոսի ընտրութիւնը: Ի մեծ փառա աղքային համերաշխու-  
թեան՝ համայն ազգի և եկեղեցու կողմից միաձայն առաջին  
թեինածու Շանաչուեցաւ ազգի Հայրիկը՝ Ամենապատիւ Մկրտիչ  
արքեպիսկոպոս Խրիմեանը, իսկ երկրորդ թեինածու՝ Գերապա-  
տիւ Մատթէոս եպիսկոպոս Իղմիրլեանը—52 ձայնով 72-ից:

Ընտրութիւնների այսպիսի ցանկալի վախճանի առթիւ  
«Արաքսի» ուրախութիւնը կատարեալ է ամբողջ Հայութեան  
ուրախութեան հետ: «Արաքսը» դոհ է, որ Ս. Լուսաւորչի գա-  
հի քօղը վերցնելու է այն անձը, որն իր մէջ ամփոփում է ազ-  
գի ամենանուիրական իղձերը: «Արաքսը» առաջին անգամը  
չ որ զարգարում է իր էջերը այս մեծ մարդու, այս գորովա-  
գութ հօր անունով և կենդանազրով: «Արաքսը» անժամանակ  
դուրս գալով միջոց ըւնէր օր առաջ մատնացոյց անել թեկ-  
նածուների վերայ, սակայն մասնաւոր կերպով շատ շատերին  
յայտնի էր, թէ «Արաքսը» որոնց կրցանկար այս վեհ կոչման  
համար. գոքա մեր եկեղեցական դասի այն երկու բարձր անձ-  
նաւորութիւններն են, որոնք և աղզովին արդէն ընտրուած են  
ի Գայհ Հայրապետական:—

## ԱՐԵՆԱՎՈՅՏԻ ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ամեն. Խրիմեանի կենսագրութիւնը արդէն տպագրած  
լինելով «Արաքսում», այժմ նպատակայարմար ենք գտնում  
մէջ բերել 1862 թ. Պոլսի «Մեղու» տասնօրեայ հանդէսից  
Հայրիկի մասին մի գրութիւն, որը պատկանում է նոյն հան-  
գիսի համբաւաւոր խմբագիր Յ. Սվաճեանի գրչին և որի ի-  
մաստը նոյն իրաւամբ և նոյնքան գեղեցիկ կերպով կարող է  
պատշաճել ներկայումն Ս. Էջմիածնի վանքին և բովանդակ  
ազգին: Այս գրուածքը հետաքրքրական է նաև իբրև կեն-  
դանի յայտարար այն ժամանակուայ գաղափարների, որ տի-  
րապետում էին ազգի մէջ Հայրիկի մասին:

Ահա այդ գրութիւնը.

«Այս անունը միշտ բերկրութիւն և միշտ խինդ պատճա-  
ռած է մեզի, և ամէն անդամ զինքը յիշելու առիթ ունենալ-  
նուս՝ ի հոգի կը հրձուիմք. քանզի անոր անունովը Ճշմարիտ  
հայր մը, ժողովրդասէր Հովիւ մը, կրօնասէր ամբիծ կղերական  
մը, անձնուրաց առաքեալ մը, Հայաստանի լուսաւորութեան  
ջանազիր մը և Հայաստանի վարատեալ որդւոյս յառաջդիմու-  
թեան և միութեան անձնուէր կենդանի նահատակ մը՝ կիմա-  
նանք, և գոհ եմք որ ցարդ մեր համարմանը մէջ սխալած  
չեմք, և յետ այսորիկ ալ չխալելու մեծապէս յուսով եմք:

«Սյօր առիթ ունիմք գարձեալ յեղյեղելու Հայաստանի  
հրեշտակին անունը. և կը փութամք հաղորդել մեր ընթեր-  
ցողաց՝ որ պատուական Հայրենասէր Խրլմեան Մկրտիչ վար-  
դապետ Վարագայ վանուց վանահայրը, ուր տեղ ազգին բա-  
րեկրօն պարկեշտասուն վարդապետներ, վարժապետներ և ժա-  
ռանգաւորներ պատրաստելու Ճիպին մէջ ամեն զահերու յանձ-  
նառութեամբ աղքատութեան և նեղութեան հետ մարտնչելու  
արիութիւնը ունեցեր էր մինչեւ յայսօր, նոյն վանքին վանահայ-  
րութիւնն ալ իւր վըայ մնալով ըստ խնդրոյ բաղմաթիւ ա-  
ղերսարկուաց, և Աղքային առժամանակեայ վարչութեան Յանձ-

Նաժողովոյ որոշմամբը Մշոյ ընդարձակ վիճակին ալ առաջ-  
նորդ և Ս. Կարապետի վանից ալ վանահայր անուանեցաւ:

«Այս արժանաւոր ընտրութեամբ ընդարձակ նոր ասպա-  
րէզ մը ևս կը բացուի հայրենասէր վարդապետին ջանիցը  
առջև, ասպարէզ մը՝ որ ոչ միայն նորա փառքը պիտի յա-  
ւելու (որուն հետամուտ չչ անձնուրաց առաքեալը), այլ առա-  
ւել ընդարձակ միջոցներ պիտի ունենայ Ս. Կարապետի մե-  
ծահօչակ վանքին բարեկարգութեամբը և հասցյաժներովը  
Մշոյ գաւառին անխնաւմ մանկուոյն մտային լուսաւորու-  
թեանը ձեռնուու և օղնական ըլլալու և այսպիսի բարեկար-  
գութեան և բարոյապէս հիմնական նորոգութեան մ' ալ կա-  
րօտ էր անշուշտ նոյն վանքը:

«Ուրեմն այսպիսի ընդարձակ ասպարէզի մը մէջ անտա-  
րակցյս Ս. Կարապետի վանից միաբանութիւնն ալ իր բա-  
ժինը չպիտի մոռնայ ՚ի գործ գնել. իր բաժինն է աջակցու-  
թիւն իրենց նորընտիր վանահօր ազգասիրական ձեռնարկու-  
թեանցը. ասով միայն պիտի կարող ըլլան իրենց տիուր ան-  
ցեալին բամբասանկներէն աղատ ըլլալ. քանզի եթէ բանի-  
բուն վանահօր և ընտիր ու ազգասէր առաջնորդի մը կը կա-  
րօտէին, աշա՞ իրենց այնպիսի մէկը՝ որ կարծենք թէ ազգա-  
սիրական ձեռնարկութիւններուն օժանդակ ըլլալէն ուրիշ  
բան մը չիմնար իրենց փառքերնին յաւելցընելու և այնպիսի  
մեծ վիճակի մը բարոյական մեռելութենէն վերածնութեան  
նպաստամատոյց լինելու:

«Ասիկայ կ' սպասէ իրենցմէ ազգը. ասիկայ կ' սպասէ ի-  
րենցմէ Մշու վիճակն ու ժողովուրդը, և ասիկայ կ' ակնկալէ  
իրենցմէ նցն իսկ իրենց պարտաւորութիւնը. այս պարտա-  
ւորութիւնը կատարելու մասին ըլլափակ վհատին անշուշտ և  
մենք այսօրվնէ կը մաղթենք թէ իրենց և թէ գերապատիւ  
Միրտիչ վարդապետին անյողբողդ համբերութիւն և յարատե-  
արիութիւն իրենց ընթացքնուն մէջ դէմերնին ելելիք գժուա-  
րութեանց գժուարութիւններ՝ որք պիտի հարթանան ան-  
շուշտ իրենց ջանքերուն առջեր, եթէ յանուն ազգին, յանուն  
ժողովրդեան և յանուն հայկական լուսաւորութեան ձղնին»:

«Նույնէ Վշեմիա» և «Նովապէ» ռուսական մեծ թերթերը կաթողիկոսական ընտրութեան մասին հազորդած հեռագրի հետ միասին՝ տպած էին միևնույն օրուայ համարումնաև ընտրեալների համառօտ կենսագրութիւնները։ Հայրիկի մասին «Նովապէ» մէջ գրուածը, որ աւելի ընդարձակ էր, այսպէս է վերջանում։ «Խրիմեան գրած է զանազան ժամանակներ բազմաթիւ աստուածաբանական, փիլխոփայտական, բարոյական և ազգագրական երկեր, որոնք մեծ ժողովրդականութիւն են վայելում։ Խրիմեանը յայտնի է և որպէս տաղանդաւոր բանաստեղծ։ Նա, որպէս քարոզիչ իր պերճախօս քարոզներով, որոնք հնչվում էին Պոլսի եկեղեցական բներից, ժամանակակից Ուկեբերանն էր ներկայանում»։

---

### ԳԵՐԱՊԱՏԻՒ ՄԱՏԲԵՈՍ ԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

---


Կաթողիկոսական երկրորդ ընտրելին, գերապատիւ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, նախկին համբաւաւոր քարոզիչ Սկիւտարու ո. Կարապետ եկեղեցու, երբեմն պատրիարքական խորհրդական, իսկ վերջերս Եղիպատոսի առաջնորդ, յայտնի է հայ եկեղեցւոյ իրաւանց և օրինաց մասին կարի հմտութեամբ և ջերմնախանձախնդրութեամբ։ Յայտնի է նաև Ս. էջմիածնի և Կիլիկիոյ կաթողիկոսական ինդրոց մէջ մատուցած գնահատելի ծառայութեամբ և իր եկեղեցական՝ իւր անստգիւտ անցեալով և անկեղծ ու համեստ բնաւորութեամբ։ Դերապատիւ Իզմիրլեանը հեղինակութիւն ունի եկեղեցականաց մէջ։ Իր ազգեցութեամբ, աշխատութեամբ և կանոնաւոր ներկայութեամբ զրեթէ հոգին էր եղած 1883-ի եկեղեցական համագումար ժողովի մէջ։ նոյնպէս Մատթէոս սրբազնը միշտ փայլած է իր գեղեցիկ ատենաբանութիւններով, մանաւանդ 1884 թուականի մարտի 12-ի եկեղեցական համագումար ժողովի մէջ կաթողիկոսի ընտրութեան



Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան:

Երկրորդ ընտրելի հայրապետական գահի

Преосвященный Маттео́с Изми́рліанъ,  
второй кандидатъ на Эчмадзинскій патріаршій престолъ




առիթով։ Այս ատենաբանութիւնների ողին չէ զանազանվում ազգից սիրած Հայրիկի աւետարանական մարդասիրութեան ողուց։ Այդ օրը Կղմիրեան Տ. Մատթէոս սրբազն եկեղեցականութեան վիճակի վերայ խօսելուց յետոյ, թէ ի Տաճկաստան և թէ ի Ռուսաստան, եկեղեցւոյ վիճակը նկարագրեց, և բարեկարգութեան պէտքը խիստ զբալի կերպով ցոյց տալուց զինի ու կաթողիկոսացու անձի փափուկ և մեծ պարտականութիւնը յիշելուց յետոյ, յարեց՝ թէ «մեր եկեղեցու կառավարութեան համար՝ զիւանազիտական նրբութեանց մէջ սուզելու պէտք չկայ. ընդհանրական Հայրապետը իւր եկեղեցին և ազգը պիտի պաշտպանէ աւետարանի ոգով և սկզբմամբ», այսպէս կարգում ենք ահա նոյն Համազումար ժողովի արձանագրութեան մէջ։

Այս մի քանի խօսքերը բաւական են Սրբազնի ամբողջ ուղղութիւնը ցոյց տալու համար, որն, ինչպէս ասացինք, բոլորովին նոյնն է ամենապատիւ Հայրիկի ուղղութեան հետ և որի խիստ հակապատկերն է ոմանց գովարանած քաղաքագիտութիւնն ու կառավարչական տակտը։

Մայրաքաղաքի վերցիշեալ թերթերում Գեր. Կղմիրլեանի մասին մէջ բերած առղերից հանում ենք այս կարեւոր խօսքերը.

«Գեր. Կղմիրլեան եպիսկոպոսին, շնորհիւ նորա աստուածաբանական զիտութեան, մանաւանդ հայ եկեղեցու գաւանական մասում, կարելի է դասել աստուածաբանական առաջնակարգ Հեղինակութիւնների շարքում։ Կիլիկիայի և Աղթամորի կաթողիկոսութիւնների մասին զբած նորա գիրը, իր ուսումնականութեան, ոճի գեղեցկութեան և ոյժի կուլմից, հայ զրականութեան մէջ օրինակելի է Համարվում»։



ՏԱՐԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐ ԽՆԴՐՈՒԱԾ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՃՐԱԳԻՐԸ

Ա.

Թուրքից հայաստանը բովանդակում է երզումի և վանայ վելասէթները, Դիարբէքիրի վելասէթի հիւսիսային մասը, այն է՝ Քարբերդի սանջագի արեելեան մասը (արեմուտքից սահման ունենալով Եփրատը), Արդնի սանջագը և Սղերդի սանջագի հիւսիսային մասը, որոնք կազմում են միանգամայն Մեծ Հայքի թուրքական մասը. բայց սորանից նոյնպէս և Ռիզէի նաւահանգիստը, որը գտնուելով Տրապիզոնի և Բաթումի մէջ տեղը, պիտի ծառայէ իրու գիւրութիւն վաճառականութեան և արտահանութեան համար:

Տաճկա-Հայաստանը պիտի կառավարարուի մի Ընդհանուր կառավարչով, աղքաւ հայ: Նորան նշանակողը պիտի լինի Բարձրագոյն Դուռը հաւանութեամբ երաշխաւոր պետութեանց: Նորա նստավայրը պիտի լինի երզում: Ընդհանուր կառավարիչը պիտի ունենայ գործադիր իշխանութեան ամեն իրաւունքները. նա պիտի հսկէ բովանդակ նահանգի

«Վաքսի» ծրագրի համաձայն՝ մենք հանդիսի իւրաքանչիւր գրքում զետեղում ենք Տաճկահայ ժողովքի ուսումնասիրութեան առիթով այլ և այլ ամիտով զրութիւններ. այս անդամ էլ մենք գնում ենք «Վաքսում», որպէս պատմական կարեոր վաւերագիր, տաճկահայոց գեռ թարմ անցեալից «Տաճկահայաստանի համար ինդրուած կազմակերպական կանոնագրի ծրագիրը», որը ի Տէր հանգուցեալ «Երսէս պատրիարքի առանձին նամակի հետ միասին՝ հայ պատուիրակութիւնը Ռերլինում ներկայացրեց տեղւոյն վեհաժողովին:

բարեկարգութեանց պահպանութեան և հասարակաց ապահովութեան վըայ, հարկերը նորա հրամանաւ միայն պիտի հաւաքուեն և Ընդհանուր Կառավարիչը իր պատասխանատվութեան ներքոյ պիտի ունենայ երկրի համար մատակարար գործիչներ: Նա պիտի հաստատէ դատաւորները, գումարէ Ընդհանուր ժողովը, նախագոհէ այդ ժողովին և Հոկէ նահանգի բոլոր վարչական գործոց վըայ:

Ընդհանուր Կառավարչի իշխանութիւնը Հինգ տարի պիտի աևէ, որի ընթացքում Բարձրագոյն Դուռը կարող չպիտի լինի ուրիշ կերպ փոխել նորան, բայց եթէ ոչ երաշխաւոր մեծ պետութեանց հաւանութեամբ:

Վարչային կենդրոնական մէկ Խորհրդարան պիտի լինի Ընդհանուր Կառավարչի նախագահութեամբ: Խորհրդարանի անդամները պիտի լինեն՝ Ա. Ելեմոնից տեսուչը, Բ. Հասարակաց շինութեանց աեսուչը, Գ. Օրէնսդէտ խորհրդականը, Դ. Հասարակաց բանակի հրամանատարը, Ե. Քրիստոնեայ գպրոցների ընդհանուր վերատեսուչը և Զ. Մահմետական գպրոցների ընդհանուր վերատեսուչը: Այս վերջինը պիտի առաջարկուի Շէրիի ատենակալութեան զլխաւորից (շէյխ-ուլ-իսլամ) և հաստատուի ընդհանուր Կառավարչից:

Նահանգը պիտի բաժանուի սանջազների, իսկ սանջազները՝ գաղաների: Սանջազների կառավարիչներ և գաղաների փոխ-կառավարիչներ նշանակողը պիտի լինի ընդհանուր Կառավարիչը:

Այդ կառավարիչները և փոխ-կառավարիչները Ընդհանուր Կառավարչի փոխանորդ գործիչներն են, որին և պիտի ներկայացնեն նահանգի սատրաբաժանութեների մէջ: Իրենց օգնական պիտի ունենան երկու խորհրդականներ, Ընդհանուր Կառավարչի կողմից նշանակուած:

Շէրիի ատեանների, սովորական ատեանների և հաշտարար դատաւորների թիւը, ձեռնահասութիւնը և իրաւասութիւնները պիտի սահմանուեն մասնաւոր կանոններով: Քաղաքական օրագիրները և պատժական օրինագիրները պիտի յօրինուեն եւրոպական արդի արդարագատութեան սկզբանց վըայ:

¶.

Կրօնական գաւանութիւնները կատարեալ ազատութիւն  
պիտի ունենան:

Կղերի և կրօնական կառուցմանց ծախքերը պիտի հոգայ  
իւրաքանչիւր գաւանութեան պատկանող հասարակութիւնը:

¶.

Նահանգի հասարակաց զօրութիւն կազմողները պիտի  
լինեն. Ա. Ժանդարմայութիւնը, և Բ. Զինուորութիւնը:

Զինուորութեան պիտի կոչուին, ի բայ առեալ քիւրդե-  
րը, չէրքէզները և ուրիշ վրանաբնակ ժողովուրդները, նախ՝  
հայերը. Բ. ոչ հայ տարրերը, որոնք հինգամեայ բնակութիւն  
ունեցած են նահանգի մէջ:

Ժանդարմայութեան գործը պիտի լինի բարեկարգու-  
թեան պահպանութիւնը և բովանդակ նահանգի ապահովու-  
թեան վրայ հսկելը:

Ժանդարմաները մէկ գլխաւոր պիտի ունենան, որ նահան-  
գի հասարակական զօրութեան Ընդհանուր Հրամանատարից  
պիտի առաջարկուի և Ընդհանուր Կառավարչեց անուանուի  
նորա անմիջական հրամանաց ստորագրուելով:

Զինուորութիւնը պիտի լինի հասարակաց զօրութեան  
Ընդհանուր Հրամանատարի իշխանութեան տակ և պարտա-  
կան պիտի լինի ի պահանջել հարկին օգնել ժանդարմաներին:

Սովորական ժամանակ զինուորական գործօն ծառայու-  
թիւնը պիտի կազմեն 4000 զինեալ մարդիկ, անկախ բերդա-  
պահ կանոնաւոր գունդերից, որ կարող է Կայսերական Կա-  
ռավարութիւնը նստեցնել իր սեփական ծախքով նահանգի  
բերդերի և ամրոցների մէջ:

¶.

Ընդհանուր ժողովը պիտի կազմուի այսպէս. ամեն մի  
գաղա երկու նուիրակ պիտի զըկէ, մէկը մաշմետական և մէ-  
կը հայ, իւրաքանչիւրը գաղայի իսլամ և քրիստոնեայ բնա-  
կիչներից ընտրուած:

Այս նուիրակները սանջագի կենարոնատեղում գումարուելով պիտի ընտրեն երկու խորհրդական իւրաքանչիւր սանջաղի համար, մինը քրիստոնեայ, միւսը մահմետական:

Հնարողներ և ընտրելի պիտի լինեն երկու աստիճանի մարդիկ—Ա. նահանգի ամեն մի բնակիչ որ 25 տարեկանից վեր է, և որ և է կալուածի տէր է կամ թէ տուրք վճարող:

Բ. Կղերը և որ և է կրօնի պաշտօնեաները:

Գ. Դպրոցների ուսուցչապեաները և ուսուցիչները:

Բ.

Բարեկարգութեան պահպանութիւնը և հասարակաց ապահովութիւնը նահանգի ընդհանուր կառավարութեան հոգացողութեան յանձնուած լինելով, նահանգի ընդհանուր եկամուտների 20 առ 100 գումարը տարեց տարի կայսերական ելումակաց պաշտօնատարին պիտի յանձնուի:

Քաղաքական և գատաստակական մատակարարութեան, զինուորութեան և ժանդարմաների պահպանութեան համար հարկաւոր ծախքերը հանելուց յետոյ, մացորդ յաւելուածը հետեւել կերպով պիտի գործադրուի:

Ա. 80 առ 100 ձանապարհների և հասարակաց ուրիշ պիտանի շինութեանց կառուցման և պահպանման պիտի սահմանուին:

Բ. 20 առ 100 գպրոցների կառուցման և պահպանման պիտի յատկացնուեն: Բարձրագոյն գպրոցների համար որոշուած գումարները հանելուց յետոյ, մացորդը պիտի բաշխուի, իբր նպաստ մահմետական և քրիստոնեայ գպրոցներին, իւրաքանչիւր գաւանանքին պատկանող թուին համաշափ:

Գ.

Մահմետական ատենակալութեան գլխաւորն անուանուելու է Սուլթանից, որի իրաւասութեանն պիտի ենթարկուեն նահանգի մէջ Շէրիի հետեւող բոլոր ատեանները:

Շէրիի ատեանները գաւաելու են միայն մահմետականներու մէջ ծագած վէճերը:

Սովորական ատեաններու մէջ պիտի քննուին ամեն տեսակ քաղաքական, եղեռնական և առևարական վէճեր, որոնք կը պատահէն թէ քրիստոնեանների մէջ առանձնապէս և թէ քրիստոնեանների և մահմէտականաց մէջ ընդհանրապէս: Այս ատեանները կազմուելու են երեք գատաւորներից, որոնցից մէկը նախաղահի պաշտօն է վարելու: Ընդհանուր կառավարիչն է նշանակելու գատաւորները և սահմանելու այդ ատեանների նախաղահները:

Հաշտարար գատաւորութիւնը կ'կատարէ գաղայի փոխ կառավարիչը և նորա խորհրդականները:

Յայտնի կրօնական միաբանութեան գլխաւորները այս խորհրդի իրաւանց անդամներ են լինելու, իրաքանչիւր կրօնից մի մի մարդ:

Ընդհանուր ժողովը գումարուելու է տարին մի անդամ նահանդի ղլխաւոր տեղում՝ նահանդի տարեկան հաշիւր քննելու և ստուգելու և տուրքերը բաժանելու մասին: Ընդհանուր կառավարիչն ներկայացնելու է նորան ելմախ տարեկան հաշուեցյցը:

Տուրքերի հաւաքումը և բաշխումը կարգադրուելու է այնպէս, որ երկրի հարստութեան զարգացմանը նպաստէ: Ընդհանուր կառավարիչն և Ընդհանուր ժողովն միաձայն հաւանութեամբ իրաքանչիւր հինգ տարին մի անդամ պիտի որոշեն այն գումարները, որ ուղարկուելու են Բարձրագոյն Դուռը վերոյիշեալ տրամսդրութեանց համաձայն:

¶

Երաշխաւոր պետութիւններից տարեցտարի համազգային Յանձնաժողով պիտի նշանակուի այս կանոնագրի գործածութեան վերայ հսկելու, որ առաջին ատենադրութեան ստորագրութիւնից երեք ամիս վերջը պիտի սկսի գործադրուիլ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՏԱԺԿԱՀԱՀԱՑԱՄԱՆԻ ԲՆԱԿՉԱՑ ՎԵՐԱՅ

Խիստ գժուար է Թուրքիոյ հայոց ամբողջ Ճիշտ թիւն ասել մանաւանդ աւելի գժուար է պաշտօնական վա-

ւերագրերով հաստատել իւրաքանչեւր վելսսէթի առանձին առանձին բնակչաց թիւը: Կանոնաւոր աղքահամար բնաւ կատարուած չէ: Այն, որ օսմանեան կառավարութիւնը հրամայած է 1845 թուին անել և որոնցից օդտուած են ուղղակի Ուրիշնին և շատերը, որոնք նորանից յետոյ խօսած են Թուրքիոյ վերայ, շատ անկատար է, թէև նորանից առաջ և նորանից յետոյ եղած աղքահամարներից կրկին աւելի կանոնաւորը 1845 թուինն է: Թուրքիոյ ժողովրդի մէջ սաստիկ հակակրութիւն կայ դէպի աղքահամարը և ոչմահմետական հպատակները ամեն անգամ աղքահամարը զլիահարկի և պէտէլիյէ տուրքերի ծանրանալու պատճառն են համարած:

Հաստատ կանոն է եղած իրենց, որ որչափ կարելի է աղքահամար կատարող պաշտօնեաներին նուազագոյն թիւ ցոյց տալ, իսկ կառավարութիւնը չունի իր ձեռքին տակ ոչքաղաքային վիճակի արձանազրութիւն և ոչ մի ուրիշ ու է ազգու միջոց համեմատելու և ստուգելու աղքահամարը:

Այսպէս Ուրիշնի հիմնուելով 1845 թ. աղքահամարի վերայ, Թուրքիոյ հայոց թիւը համարում է 2,500,000, որոց 400,000-ը Պոլսում և Բալկանեան թերակղզում, իսկ մնացեալը Փոքր Ասիայում:

Բայց օսմանեան պետութեան ամեն կողմերից, զօր. իշխանական նահանգներում, որտեղ աւելի կատարեալ աղքահամար կարելի եղաւ կատարել վերջերս, ստուգուեցաւ, որ 1845-ի աղքահամարի ցոյց տուած թուերը իրականից կամ արդի բնակչաց թուից շատ պակաս են:

Այսպէս ուր Ուրիշնին Եգիպտոսում և Թունիսում հաշվում է միասին 3,200,000 բնակիչ Սերբիայում 1,000,000 և Մոլդովաքիայում 4,000,000, որոնց համագումարն է 8,200,000, այն ինչ դեռ. 1871 թ. Եգիպտոս ունէր 5,200,000 բնակիչ ըստ վիճակագրութեան Ռէյնի, Թունիս՝ 1,500,000, Սերբիա 1,300,000 և 1873-ին Ռումինիա 5,000,000, որոց համագումարն է 13,000,000 (Մորիս Բլօք, Տարեցոյց տնտեսագիտութեան), նշանակում է 4,800,000 հոգու աւելացումը, կամ միջին հաշուով 60% աճում:

Ուրեմն ի՞նչպէս համաձայնենք, որ 30 տարի առաջ եղած ազգահամարաւ ցոյց տուած հայոց երկու ու կէս միլիոն թիւը միշտ կարող է լինել և այսօրուան համար։ Գտառաց հայոց մեծամասնութիւնը գիւղերումն է ապրում, իսկ թուրք գիւղացիք չկարողանալով մրցել նոցա հետ, քաղաքներն են տեղափոխվում, ուր հասարակաց պաշտօններ, զինուորադրութիւն, հարկահանութիւն, որ ուրիշ ազգաց չեն արվում, նոցա տեղի գիւրին ապրուստի միջոցներ են հայթայժում։ Գիւղական կեանքն է միակ, որ ժողովը կի աճմանը նպաստում է, մանաւանդ ազքատ երկրում, ուր արուեստներ չկամ կամ եղածն էլ խեղճ՝ վիճակի մէջ է։ Այդ տեղափոխութիւնն է, որ թուրքական ցեղը նուազեցրած է Կրիտում, Բոլգարիայում և այլուր, մինչ գեռ քրիստոնեայք միշտ աճած են ի շահ երբեմն երբեմն պատահած պատերազմների և խռովութիւնների։

Բայց այս, մի սովորութիւնն, որ ճշտութեամբ պահում են հայերը, պահանջում է որ տղայ և աղջիկ տարիկներն առնելուն պէս ամուսնանան, որդիք և թոռները իրենց ծնողաց և պապերուն հետ մի և նոյն յարկի տակը մնան, միասին աշխատեն, այս պատճառով հայերը շատ էլ չեն տաքնապում իրենց ապրուստը ճարելու կամ որդիկանցը սնուցանելու համար, որովհետեւ ընտանեկան օջախը, որքան էլ աղքատ լինի, այնուամենայնիւ բոլորի ապրուստը կարող է հոգալ։ Երբ ընտանիքի զլուկը մեռնի, տան երիցագոյնը յաջորդում է նորան և միայն այն ժամանակ, երբ մեծերի մահուամբ կարգը թոռներին է զալիս ընտանեաց հայր լինելու և հասարակութեան գործերի մէջ մանելու, գոցանից աւելի գործունեաները կամ փարթամագոյնները բաժանվում են և առանձին տուն են կազմում։

Այս պայմանաց տակ մեղ խիստ ցանկալի է հաւատալ նոցա, որոնք հայաբնակ կողմերի վերայ աւելի կամ նուազ ամփոփ տեղեկութիւններ ժողովելով, հաստատում են թէ հայոց թիւը երեք ու կէս միլիոնի կհամնի, թէև տեղ տեղ քուրդերու մերձաւորութիւնը նոցա աճման մեծ արգելք է զնում

և բազմաթիւ ընտանիք, առևտրի չլինելուց անկարող լինելով հողադործութեամբ այնքան շահել որ կարող լինեն հարկը վճարելու, ստիպուած են Պօլիս ուղարկել իրենց անդամներից մէկին կամ երկուսին, որոնք իրենց որդւոց հոգար յանձնելով իրենց եղբարցը կամ ծնողացը, զնում են պանդիստութիւն ի վես իրենց շահերի՝ արքունական գանձարանից պահանջած դրամը աշխատելու համար:

Սանք երեք միլիոնի իջեցնենք այս թուահամարը, սակայն և այնպէս կէս միլիոնի կամ  $20^{\circ}/\circ$  աճում կ'ունենանք 1845-ի աղբահամարի թուցն վերայ. այս աճումը հետեւանք է աւելի ծնունդների առաւելութեան քան մահուան:

Այս երեք միլիոն հայերը կազմելու են. 400,000 Պուտում և Բալկանեան թերակղզում, ըստ Ուրիշնու, որ մենք այստեղ այս թիւը կ'պահենք: Եւրոպական թուրքից հայերը զրեթէ բոլորն էլ ապրում են քաղաքներում և պարապում են առևտրով և արուեստներով. այսու պատճառ ունենք հաստատելու, որ դոցա թիւը զգալապէս աւելցած չլինի: 600,000 Փոքր Ասիայում և Կիլիկիոյ գաշտավայրի մէջ, 670000 Փոքր Հայքում (այն է Սեբաստիոյ վելայէթում և Կեսարիոյ սանձագում) և 1.300,000 Թուրքից Մեծ Հայքում, որը բովանդակում է էրզըումի և Վանայ վելայէթները, Դիարբէքիրի վելայէթի հիւսիսային մասը, այն է Խարբերդի սանձագի արևելեան մասը (արևմուտքից սահման ունենալով Եփրատ), Արդնոյ սանձագը և Սղերտի սանձակի հիւսիսային մասը:

Եւրոպայի Ճանապարհորդները, որոնք այցելում են սովորաբար Բալկանեան թերակղզին և Փոքր Ասիոյ արևմուտքը շատ տեղ հանդիպելով հայերին, տարածած են, իր թէ տաճկահայերը ցրուած են ամբողջ Օսմանեան տէրութեան մէջ, որ միանգամայն սխալ է, ըստ որում հայերի մեծադժյն մասը ապրում է հայերինի հողի վերայ: Սակայն պէտք չէ դատել քաղաքների բաղմութիւնից, ինչպէս որ, խիստ սխալուած կինի մէկը, եթէ նա Կրիտ կղզու ժաղովուրդները ճանաչելու համար, քննէ միայն գլխաւոր քաղաքները, որտեղ բազմաթիւ են մահմետականք և կամ Բոլգարեայ և Հերձո-

կովինիոյ համար՝ Աղբիանուպոլիս, Ռուսական և Մոստար  
քաղաքները զիտէ:

Նմանապէս անուրանալի է, որ ինչպէս Թուրքիոյ շատ  
կողմերը, նաև Հայաստանի մէջ քրիստոնէից և մահմետակա-  
նաց համեմատութիւնը խիստ փոխուած է 1845 թուից ի  
վեր: Մինչ գեռ քրիստոնէայ ժողովուրդները տարեցտարի ա-  
ճում են աւելի կամ նուազ չափով ընդհակառակը մահմետա-  
կանաց մէջ հակառակ երևոյթն է նկատվում:

Մահմետականաց նուազման պատճառները բազմաթիւ են:

Ա. Զինուորագրութիւն

Բ. Քաղաքներում համախմբուելը

Գ. Պետական պաշտօններուն հասնելու նպատակաւ գաղ-  
թելը մայրաքաղաք և այլ տեղեր:

Եթէ այսօր Տաճկահայաստանի նահանգներում կանոնա-  
ւոր ազգահամար լինի, կը տեսնենք թէ ինչպէս թուական  
առաւելութիւնը մահմետականից անցած է հայերին.

Դարձեալ զիտելի է, որ Հայաստանում ընակուող մահ-  
մետականների մի մասը՝ ծագումով հայեր են: Սոքա շատ  
տեղ պահել են իրենց ցեղի բարքը, լեզուն և սովորութիւն-  
ները, և գժուար չէ հանգիպել նոցա մէջ անհատների, որ  
տակաւին իրենց հօր կամ նախահօր հայ անունը պահած  
լինեն. ինչպէս, Մարկոս օղլու-Մուսթաֆա, Տէր-Գրիգոր օղ-  
լու-Մէհէմէտ:

Կան նաև քուրդեր, որ բնակութիւն են հաստատած  
Հայաստանում: Դիւրին է նոցա Մամքեցի, Մէնդէքլի, Սլի-  
վանցի, Ռոշկունցի անուանց մէջ նկատել հին հայ ընտա-  
նեաց Մամիկոնեան, Մանդակունի, Սլկունի և Ռշունի ա-  
նունները: Նոցանից շատերը քրիստոնէական սովորութիւն-  
ներ ունեն, և տարակուսում է մարդ, թէ կատարեալ մահ-  
մետական համարելու է դոցա թէ ոչ Կարելի է որ ըն-  
թերցողէ մուքի մէջ այստեղ մի խնդիր ծագի, թէ ինչո՞ւ  
թուրքերը անփոյթ են եղել բազմանալու հայական աշխար-  
հում: Օդի խստութիւնն է որ այդ աշխարհը պահել է միայն  
իրեն որդւոցը: Թուրքն ի բնէ թոյլ և մեղկ աւելի սիրել

է Փոքր Ասից, Եւրոպական Թուրքից և Ասորւոց բարեհասոն կամ ջերմ երկիրները, քան թէ մշանջենաւոր ձիւնով ծածկուած լեռները և ծովի մակերեցթից հաղարաւոր ոտնաշափ բարձր բարձրաւանդակները: Բացի սորանից, հարկաւոր էլ համարած չէ այդ քիւրգերին և ուրիշ ցեղերին թողնել բնակիչներին անդադար կռիկելու ու տկարացնելու հոգաբ:

Այս մաքով ուրիշ բան պէտք էլ չէ, բայց եթէ նոցաչրիքներից աք խիել և ի հարկին քաջալերել խիկ: Եւ Թուրքեան այսպէս վարուել է, և գուցէ միայն այս պարագան է, որի մէջ չէ կարելի մեղադրել Թիւրքիայի անհոգութիւնը կամ կառավարութեան վատթար եղանակը:

---

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

---

ԹՈՒՐՔԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե

Ա. Երզումի և Վանայ վելայէթները, չյիշելով այն երկիրները, որ Այա-Ստեֆանոսի հաշտութեան նախաձեռն պայմանով անցաւ Ռուսիային:

Այդ վելայէթների բազմամարդ կենդրոններն են, երզերում, Բաբերդ, Երզնկա, Մանազկերտ, Մուշ, Բաղէշ և Վան:

Այս երկու վելայէթների բնակիչներն, ըստ Սալնամէին, այսինքն, Օսմանեան պետութեան պաշտօնական օրացուցին, Տիգրէթի 1294 տարւոյն, հաշվում են 2,066,000, որից գուրս հանելով Ռուսիոյ ձեռքը անցած մասի բնակիչները՝ 366,000, կը մնայ 1,700,000, որը այսպէս է բաժանվում ըստ ցեղեց, Տայեր,—1,150,000, Թուրքեր,—400,000, Քուրգեր,—80,000: Զաղացք կամ Տէմպէլքը, յասուկ լեզուով և կրօնով ժողովուրդ,—35,000: Եղետ արևապաշտներ, որոնք ըստ մեծի մասին վրանաբնակներ են և յասուկ լեզու ունեն 13000. Գընչուներ, վրանաբնակներ—3000. Թօյներ և Տրէաներ—5000. Ասորիներ (Յակոբի),—14000. բոլորն 1,700,000:

Այս երկու վելայէթներում կան 109 վանքեր \*):

---

\*.) Այս վանքերից շատերը հիմնուած են Հայոց Քրիստոնէութեան առաջին դարերում, որոնց մէջ այսպիսի շինութիւնների

**Բ.** Տիարբեքիրի վելայէթի հիւսիսային մասը, այսինքն Խարբերդի սանձազի արևելեան մասը, որ շարունակվումէ դէպի արևմուտք մինչև Եփրատ գետը, Արդնոյ սանձազը և Սղերտի սանձազի հիւսիսային մասը: Սոցա բազմամարդ կեղրոններն են. Խարբերդ, Ակն, Զմշկածագ, Բալու և Սղերդ:

Հաստ Սալնամեխի ամբողջ բնակիչներն են՝ 664,600, որոնցից հանելով վելայէթի միւս մասը՝ 302,300, մնումէ 362,300 և այս թիւը բաժանվում է ըստ ցեղից այսպէս.

Հայեր,—180,000, Թուրքեր,—130,000, Քուրդեր, Վրանակներ,—40,000, Զազայք,—2300, Եղիսաներ,—2000, Ասորիներ և Քաղցէացիք 8000. բոլորն 362,300:

Այս նահանգը ունի 48 վանք:


Բնգհանուր պատկեր.

Վէլայէթ.

	Տիարբեքիր (հիւս. մասն)	Ցամագումար.
Հայք. . . .	1,150,000	180,000
Թուրք. . . .	400,000	130,000
Քուրդ. . . .	80,000	40,000
Յոնք. . . .	5,000	—
Ասորիք. . . .	14,000	8,000
Զազայք. . . .	35,000	2,300
Եղիսաք. . . .	13,000	2,000
Գնչուք. . . .	3,000	—
Բոլորն. . . .	1,700,000	362,300
		2,062,300

Աճ եռանդ կար և այս պատճառաւ այս վանքերը աւելի կամ նուազ կարեսրներն ժառանգած են մեծամեծ հողային կալուածներ զանազան ընդարձակութեամբ: Ծնէպէտ ամեն ժամանակ այս կալուածներից յափշտակած են երբեմն մասնաւոր մարդիկ և երբեմն իշխանութիւնը, սակայն և այսպէս տակաւին այդ վանքերը պահել են իրենց ձեռքին շատ մշակելի հողեր և եկամուտներ, որոնցով պահպանում էին դպրոցներ, տպարաններ, հիւսնդանոցներ և ուրիշ ազգային հիմնարկութիւններ և սոքա միշտ հին ազգային աւանդապահներ են եղած:







Կեչարայ վանքերի ընդհանուր տեսարանը. Տ. Փեշտմալճ հանի լուսանկարից:

Кечарийский (Дарачиагский) монастырь.

Съ фотографии Пештималчіана гравировалъ В. Матэ.





# ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԾԱՂԱԿԱՑՈՐ

ԵՒ

ԿԵԶԱՌՈՒ ՎԱՆՔԵՐԸ

Ծաղկաձոր, ուր, որպէս պատմական կոթողներ մեծապանծ նախնեաց ստեղծագործութիւնների, կանգնած են դարերէ ի վեր խորհրդաւոր լոռութեան մէջ Կեչուու երբեմն հռչակաւոր վանքերը, Մեծն Հայտատանի գեղանկար անկիւններից մինն է համարվում:

Եւ յիրաւի, բնութեան այդ սքանչելի և հրապուրիչ տեսարանը, որ ունի նախնի Վարաժնունեաց դաւառի այս դողարիկ վայրը, բանաստեղծական մի ամբողջ աշխարհ է ներկայացնում իր բոլոր այն հրապոյրներով, որոնցով խիստ առատորէն օժտած է սորան Հայտատանի զեղածիծաղ բնութիւնը: Չոր, լեռ, հովիտ, բոլոր ծածկուած են գոյնզգոյն ծաղիկներով, որոնք յաջորդարար փոխարինում են մինը միւսին գարնան, ամստուան և աշնան եղանակներին: Մերձակայ լեռները և բարձրաւանդակները ծածկուած են խիստ անտառներով, որոց մէջ թթուաշ ասլորը, վայրի տանձը և թութանման մօրին անդացիների սիրած պտուղներն են: Ծաղկաձորի անտառներում, որոնք տարածվում են մինչեւ Արդաքեան, գանվում են բաղմատեսակ գաղաններ և թռչուններ: Մինչեւ 1840 թ. այս անտառներում կային նաև բազմաթիւ եղջերներ, սակայն այդ ժամանակ օտար որսորդների

կողմից այնքան սպանուեցին, որ այդ գեղեցիկ անառունների քանակութիւնը խիստ իջաւ Ծաղիաձորի անառառներում:

Հողի տակից և լեռնային բարձրաւտնգակներից բջիսում են մշտահոս զովարար աղբիւրներ, որոնց մէջ առանձնապես յիշելի են կաթնաղբիւրը և թթուաղբիւրը, որոնց շուրջը շարունակ մեծ բաղմանթիւններ է, ժողովում այս աղբիւրներից զատ գետի հիւտիս ընկած բարձրունքից հրսում են յորդառաստ աղբիւրներ, որոնք միանալով կազմաւմ են վճիտ վուտի, որը երբեմն հեղլ երբեմն սրնթաց անտառապատ ձորակի միջով հրսում է շրջապայտ տկոսներ անելով և փրփրագեղ կոհուկներ տալով մերթ մութ անտառի միջին և մերթ աներեցիթանալով խոր ձորի մէջ, և ապա կարկաչելով պարար արօտատեղիներով հանում է ծաղկաւէտ գաշտը և այնտեղից թափվում պատմական հրազդան գետը:

Այսպէս Ծաղկաձորի մօտ հրսում է և բանասաւեղծից երդած հայտառանի յայտնի գետերից մինը—հրազդան, այժմ ջանդի, որ այստեղ միանալով Միսխանաց գետի հետ, ահեղ կոչումներ արձակելով, և ձորեր ու հովիաներ ձեղքելով խրոխառար զիմում է Երեանի միջով գետի Արարատեան գաշտը:

Համարես այս բոլոր բարձրաւտնգակ տարածութիւնը իր գաշտերով և հովիաներով ծածկուած է պարար բուսահողով, որ, ինչպէս յայտնի է, բաղկանում է զանազան արմաններից, աերեւներից, շիւղերից և բոյսերի ու անտառների մնացորդներից, որ ժամանակի ընթացքում փառում է փիրուն, սեաւուն կամ մոյդ փոշի, որ ընդունակ է արտաքերելու ցորենի, կատատի, կանեփի և այլ բայսերի ամեն տեսակները: Իսկ պարար արօտատեղիները հօ անունի է ամբողջ շրջակայքում:

Այստեղ, համարես ամեն մի քայլափոխի մէջ, թէ անտառների խորքերում և վանքի շրջակայքում, թէ ձորերում և բարձրաւտնգակների գաղաթում, ուղերի աչքին է զարնում նախնաց հայերի բարեկալաշտութեան զանազան յիշատուկները, օր. խաչքարեր, գամբարաններ, աւաղաններ և այլն:

Ծաղկաձորի գաւառը, որ սյժմ Դարաչչակ անունով կ'յիշատակուի կառավարութիւնից, հնումը յայտնի էր Վարաժնունեաց գաւառ անուամբ: Էստ Մովսէս Խորենացու, այսպէս անուանուեցաւ այս գաւառը Վարաժ քաջի անունով, որին նուեր էր առւած հայոց Մեծն Արտաշէս թագաւորը: Այս Վարաժն մեծ հռչակ ունէր նետաձզութեան մէջ և Արտաշէսի որդու Տիգրանի ուսուցիչն և գտափարակն էր:

Ծաղկաձոր, բայցի Դարաչչակ անունից, կրում է նաև Զնջըրլու անունը: Աւանդութիւնը տառւմ է, որ Ծաղկաձորի մայր տաճարի գմբէթից կախուած է եղել Գրիգոր Մաղիստոսից նուիրուած արծաթեայ մի շղթայ, որը յափշտակած են մենաստանի աւերման ժամանակ. տհա այս խոկ շղթայի պատճառով Ծաղկաձորը մակմատականներից անուանուել է Զընջըրլու, զնջիլ թուրքերէն բառից, որ կ'նշանակի շղթայ:

Ծաղկաձորը գտնվում է 17 վերսա Հեռաւորութեան վերայ Սևանայ լճից և 52 վերսա Երևանից: Սևանայ լճի հետ հաւատար մակերեսոյթի վերայ է գտնվում, սուկայն բարձրը է նա ծովի մակերեսոյթից 5873 ոտնաչափով, խոկ Երևանից 2699 ոտնաչափ:

Ծաղկաձորը երեք կողմից ընկած է բաւականին բարձր բարձրաւանդակների մէջ, որոնցից երկուաը ծածկուած են խիտ անտառներով, խոկ երրորդը՝ Ալիբէզգաղը, որ առենաբարձրն է և որի կողմանակի փոսորակներում ամառուայ ընթացքում երբեմն ձիւն է մնում, մասամբ ծածկուած է, մի աեսակ ծառերով որի ձիւղերից պատրաստում են բնափառ ձևութեան համար: Երբ Բաղրատունի վերջին Գագիկ թագաւորը Վեստ Սարգսի նենդութեամբ գերի առնուեցաւ յոյներից և հայաստանը դորա-

նից յետոյ Բիւզանդիոնից յանձնուեցաւ կառավարուելու Գաղիկ  
թագաւորի անուանի զօրապետ Գրիգոր Մագիստրոսին, հայ  
ժողովրդի վիճակն աւելի ևս դառնացաւ, մանաւանդ եթէ յի-  
շնչք և այդ ժամանակներում Տուղթիլի և Ալփասլանի անողոք  
աւերումները և կոտորածները Հայաստանում: Աշա Հայաստա-  
նի այս փոթորկալից ժամանակամիջոցում, հայ ժողովուրդի  
մի մասը ապահով ապաստարան գտնելու նոպատակով դի-  
մում է գէպի Վարաժնունիք, այժմեան Ծաղկաձորի գաւա-  
ռը, ուր յաճախ գտնվում էր և այդ ժամանակ Հայաստանի  
Մարզպան Գրիգոր Մագիստրոսը: Եւ ահա տասնումիշկերրորդ  
դարու սկզբներից Ծաղկաձորի գաւառը սկսում է լցուել  
բաղմաթիւ Հայերով որոնք և այս դաւառը Հայաստանի բաղ-  
մամարդ կենտրոններից մինն են գարձնում:

Սյստէս Ծաղկաձորի խական այն վայրը ուր կանգ-  
նած են Կեշառու վանքերը, ժամանակին խիստ բաղմա-  
մարդ և ծաղկած վիճակ է ունեցած, որի կենդանի փաս-  
տերը կարելի է համարել ի միջե այլոց և տաճարի շուր-  
ջը գտնուող բաղմաթիւ շիրիմները, մանաւանդ Ա. Յա-  
րութիւն եկեղեցւոյ ստորոտին ընկած գերեզմանասունը:  
Շիրիմների և դամբարանների մեծ մասը պատուած են մե-  
ծամեծ խաչքարերով, որոնք փորագրուած են մեծ ճարտա-  
րապետութեամբ. սոցա նշանաւոր մասը ժամանակին մենաս-  
տանի անբնակ լինելու պատճառաւ ընկած են գետնի վերայ  
և այժմ մամուռով կամ հողով ծածկուած են:

Ծաղկաձորի անկման պատճառները գարձեալ Հայաստա-  
նի նոյն փոթորկալից և աղետալից անցքերն են եղած, որոն-  
ցով այնքան հարուստ է մասնաւորապէս մեր Հայրենի երկրի  
պատմութիւնը խակ ընդհանրապէս բովանդակ Փոքր Ասիոյ:  
Երբ զրայի արիւնարբու աղքերի շարունակ յարձակումնե-  
րը աւազակային հրոսակախմբերը և մերոնց ստոր ու զգուե-  
ցուցիւներքին երկարառակութիւնները վերջապէս ջլառում են  
ժամանակուայ հայ կառավարութեան բոլոր ոյժերը ու այնու  
խսպառ ջախջախում դանալզան կողմերում հայերի միահա-  
մուռ զիմանիրութիւնները, հաւանական է, որ մեր մօտակայ

Նախնիք ևս, անկարող լինելով իրենց սակաւութեամբ արգելք հանդիսանալու ամեն կողմից տեղայող աւազակային ասպատակութիւններին, վերջ ի վերջոյ թողնէին իրենց նուրիական վայրերը և չուեին երկրի այլ ապահով կողմերը: Այսպէս և Կեչառու վանքերի հասատուելուց ի վեր, երբ այս հոջակաւոր մենաստանի շրջակայքը խմբուել էր ժամանակին հայ ազգաբնակութեան մեծ բազմութիւն, այն էլ հարուստ նիւթական ապահովութիւններով բնական է, որ թշնամիների յարձակումները պէտք է ուղղուէին և այս կողմի վերայ, մանաւանդ որ Գրիգոր Մազիստրոսի օրով Ծաղկաձորի մօտը պէտք է գանուեր և հայոց պատմութեան մէջ յայնի Կեչոր քաղաքը, որը, հաւանականութեամբ, այժման Ռնդամալ զիւղի տեղումն է հաստատուած եղել:

Սակայն Գրիգոր Մազիստրոսի մարգարանութեան օրից անյաւ գեռ բաւականին երկար դարաւոր միջոց, որ արտաքին յարձակումները այնքան ևս չէին փշած ու ջախջախած Ծաղկաձորի ազգաբնակութեան ոյժերը ու համբերութիւնը, բայց տասնուերեք դարու սկզբներից սկսում է և այստեղի շուն, սկիզբը սահմանափակ թուով բայց յետազայ դարերում երբ յափշտակութիւնների համար սյստեղ էին արշաւում մինչև անզամ լեզգիների հրոսակամբերը և շարունակ աւերումներ պատճառում նոյն իսկ սրբավայրերին, բնական էր, որ միանգամայն հրաժեշտ ասյին Կեչառու սրբավայրերին ոչ միայն պարզ ժողովուրդը, այլ նաև մենաստանի միաբանութիւնը: Այս բոլորից յետոյ հասկանալի կը լինի, թէ ինչու սորանից մօտաւորապէս վաթսուն տարի սուած Ծաղկաձորը իւր Կեչառու վանքերով միանգամայն կատարեալ անտպատ էր դարձած, ըստ որում 1700 թուականից մինչև ներկայ դարու երեսնական թուերը այս կողմերում մշտակեաց ազգաբնակութիւն բնաւ չկար, այլ միայն թափառիկ թուրք և քուրդ ցեղերը Ղարաբաղի, Գանձակի և Ղաղախի կողմերից ձմեռնամուտից յետոյ ժամանակաւորապէս կդային այստեղ և պարարտ արօտատեղիներում կ'անցկացնէին ամառը իրենց ընտանիքներով և բաղմաթիւ հօտերով: Սակայն այս դաւա-

ուր ևս Երեանի նահանգի հետ միասին Ռուսաստանի տիրապետութեան ներքոյ անցնելուց յետոյ, մանաւանդ 1855 թ. ռուս-տաճկական պատերազմին զինի, Մաղկաձորու ընտարձակ գաւառը իր պատմական գիւղերով նորից սկսեց լցուել հայ ազգաբնակութիւնով. Հաղարաւոր ընտանիքներ Ատրուտականից և Բայաղեալից գաղթելով բնակավայր ընտրեցին իրենց համար նախնիքներից թողած աւերակներն ու մոխրակոյտները, որոնց վերայ, որպէս հայութեան կենդանի հոգին, խորին լռութեան մէջ թագաւորում էին հայկական սրբավայրերի երկնասլայ կոթողները, որոնք շէն և որոնք կիսակործան:

Եւ իրօք, ի՞նչ կլինէր հայութեան արդի վեճակը, եթէ նախնիքներից այնքան զոհողութիւններով չկառուցվին այն բաղմավաստակ և հոյակապ տաճարները, որոնք միայն են մնացել յետազայ սերունդներին իբր բաղմավարեան յիշատակներ նախնեաց փառքից: Վերջապէս պէտք է թափանցել պարզ հայի հոգու մէջ և աեսնել որ, Ճշմարիտ, անուսում, այն էլ բարբարոս ժամանակներում, հային իր հայրենիքի մէջ պահողը, նորան կեանք և յոյս ներշնչող ապաւէնը եղած են ազգային այն անթիւ տաճարների տիրապետեաց կոթողները, որ կանգնած են ամենուրեք հաստատ ու կիսաւեր հայրենեաց ընդարձակ տարածութեան վերայ: Մեզնից, որի՞ս վերայ մի առանձին զիւթական ազգեցութիւն չէ ներշնչել և ներշնչում, երբ մենք ակն յանդիման կանգնելով այդ հայկական կոթողների առաջ, մտաւորապէս մեր բոլոր ապաւորութիւններով վերափոխվում ենք այդ տաճարների շինութեան հինաւուրց ժամանակամիջոցները, երբ հայաստանում տեղի էին ունենում այնքան կարևոր մեծ յեղաշրջումներ և զանազան միջնադէպքեր: Նատ կարելի է, որ մենք այս հայկական կոթողներից այնքան էլ վառ կերպով չտպաւորուէինք, մեր հոգեկան աշխարհում չպատկերացնէինք հայու անցեալը, եթէ բացի այս հրաշակերտներից նախնիքները մեղ թողնէին և այլ պատմական մեծագործ յիշատակներ, որոնցով այնքան հարուստ է հին Յունաստանը, որի ամեն մի քարը, ամեն մի

Հին ստեղծագործութիւնը պատմական մեծ և փառաւոր յիշողութիւններ է զարթեցնում արդի յօյնի մէջ և մասամբ գորա առլեցութեան ներքոյ՝ նու արհամարանքով է նայում արդի Եւրոպայի վերայ, միշտ ողերորուած լինելով իր նախնիքների ստեղծագործութիւններով:

Բայց մոռանալու չէ, որ Հնումը լուսաւոր կենտրոն համարուած Աթէնքը և Յունաստանի շատ կողմերը, ուր ծաղկած էր գեղարուեստը իր ամեն ճիւղերով, որի ճարտարապետական և գեղարուեստական հոյակապ արաւազրութիւնները գեղեցկութեան հրաշալիքներ են համարվում; օդառուած է եղել խաղաղութեան բարիքով երկար ժամանակամիջոցներ և հայաստանի նման շարունակ փոթորկալից թատերավայր չէ եղած, որտեղ իրենց բարբարոսութիւնները ու արշաւանքներն են կատարած ոչ միայն գրացի արիւնարբու աղղիքը, այլ նաև Աստիայի, Արաբայի և Եղիպատոսի Խորքերից մրրկի նման աեղացող բարբարոս ցեղերի անհամար զունդերը; Բայց և այսպէս, չնոյելով հայաստանի այս անյաջող զիրքին, չնոյած այս շարունակ պատերազմներին, որ վարում էին մեր թագաւորները արտաքին յարձակութների դեմ և նոյն իսկ զբաղուած էին լինում ներքին մեծութեած երկապառակութիւններով, մեր նախնիքը այնուամենացնիւ կարող են եղել իրենց բնատուր ձիրքով ճարտարապետութիւնը հայատանում այնքան յառաջ տանել և ճարտարապետական անթիւ հրաշակերտաներ ստեղծագործել, որ նոյա մնացորդներն անդամ այս երկար դարերից յետոյ միանգամայն սարսափեցուցիչ տպաւորութիւն են ներգործում ոչ միայն մեզ՝ այլ նոյն իսկ Եւրոպացու վերայ, իրենց ճարտարապետական բարդ հիւսուածքներով և խորիմաստ շինուածքներով:

Այսպէս, եթէ մեր լուսահոգի նախնիքը հետառեսութեամբ աւանդ են թողել մեզ հայկական հրաշակառոյց տաճարները, որով մենք շարունակ հրճվում ե ողերովում ենք, չէ թէ անպայման մեր նուիրական պարտականութիւնն էլ է այսքան դարեր հաստատուն մնացած այդ կոթողները աւերութներից պահպանելու համար փոքր ինչ փոյթ և խնամք տանել այն

ինչ մենք, բայցի որ անկարող ենք հոգեսկէս և բարոյապէս այդպիսի մեծ սխրագործութիւններ էլ մեր կողմից անել այլ նաև ամօթով պէտք է արձանագրել այստեղ, որ այդ հրաշակառոյց տաճարների շինութիւնքը տւերութներից պահպանութեան համար խնամքի նշոյ անդամնչ երկում մերոնցից: Եւ ախուր է ասել թէ ի՞նչ կը նի մի կամ երկու տասնեակ տարուց յետոյ մեր շատ հրաշակառոյց վանքերի դրութիւնը, եթէ օր առաջ զոյտ պահպանութեան համար միջոցներ ձեռք չունել: Օրինակ Սրբածի ստորոտում; Սշտարակից մի քանի ժամ հեռու, հնակառոյց Յովհանու վանքի հրաշակերտ շինութեան դուսն կամարը, ահա քանի տարի է, որ կասկածելի մի կրաշաղաղ քարից է պահպանվում, իսկ հրաշալի կաթողիկեր կիսաւէր մի մասը, ամեն մի բոսէ զգում ես, որ ահա թափուելու վերոյ է. և այստեղ, որքան հնակառոյց պատմական տաճարներ մինը միւսի յետելից ընկնում փշանում են և զոյտ հետ հայ ժողովուրդը զրկվում է այն բարոյական աղբեցութիւնից, որ ներշնչում են նորան այդ հայկական հնագարեան սահղագործութիւնները. սակայն մենք գարձեալ տնցնենք Ծաղկաձորի նկարագրութեանը:

Այնուհետև, երեմնական թուականներին կառավարութիւնը Ծաղկաձորի կենտրոնում բնակեցնում է, Ռուսաստանից աքտոր ուղարկուած ուսւա աղանդաւորներից մի մասին, որոնք մինչև օրս էլ կեշառուայ վանուց ստորոտում երբեմն հոյոց փառաւոր վայրի միւսկ մշտակեաց բնակիչներն են հանդիսանում:

Երեսուներկու թուականին, իշխան Բարսեղ Բեհբուղեան, Տայկական նուաճեալ նահանգների կառավարիչը, հրապուրուելով Ծաղկաձորի բնութիւնով, նպատակայարմար է գտնում ամսուուան շոքերին Երեւանու կառավարչական ատեանները և տեղական զօրքը տեղափոխել օդափոխութեան Ծաղկաձոր, ուր և շարունակում են գնալ այդ օրից մինչև այսօր: Վերջին տարիներս ծառայողների հետ այստեղ ամառանոց են գալիս Երեւանից և տեղւոյն բնակիչներից շատ շատերը, որոնք և այս նպատակով շինած են իրենց համար ընդարձակ շինութիւններ:

Մեր պատմաղիրներից արդէն յայտնի է, թէ որպիսի ջերմուանդութեամբ մեր նախնիքը ձեռնարկում էին մեծածախս և հոյակապ տաճարների շինութեան. իշխաններ, գողեառականներ և ժողովուրդ միշտ աշխատած են իւրաքանչեւրը իր հերթին կառուցտնել հայտատանի այլ և այլ կողմերում զանազան սրբավայրեր և զարդարել նոյա ամեն մեկը իր ճաշակին և կրօնական զգացման համաձայն: Մեր նախնեաց այս գովելի յատկութիւնների արտայայտութեան հետեանքը տեսնում ենք աշտ և Ծաղկաձորի գաւառում, ուր մինչեւ այսօր էլ եղիպատական բուրդերի նման ընդարձակ տարածութիւնների վերայ իւրաքանչեւր ուղեսորի ուշագրութիւնն են դարձնում հայկական հնութիւնների բազմաթիւ մնացորդները, եկեղեցեաց աւերակները և հայ տղաքնակութեան քրիստոնէական հետքերը:

Ծաղկաձոր գաւառուի բաղմաթիւ պատմական յիշատակների մէջ մասնաւոր ուշագրութիւն են գարձնում իրենց վերայ կեշառու մեծահռչակ վանքերը թէ իւրեանց անցեալ փառքով հայութեան կեանքում և թէ սքանչելի ճարտարապետական շինուածքով որ հայի ստեղծագործութեան հրաշալիքների կարգին կարելի է դասել ամենայն իրաւամբ: Թէ այս վանքերի շինութեան հետ որքան մերձ կապակցութիւն ունի հայի կեանքը ԺԱ գարում, երբ Բաղրատունեաց թագաւորութեան անկումից յետոյ, հայ ժողովրդի կառավարիչը այս կողմերում ևս ներկայանում էր Գրիգոր Ծաղկատու անուանի հայ զօրապետը, կարծում ենք մի թոյլ գաղափար առուինք ընթերցողին նախընթաց տողերի մէջ:

Կեշառու վանքերը, որը ընդհանրապէս յայտնի է մեր պատմութեան մէջ, Մենաստան կեշառուաց անունով, բաղկանում են ներկայումս չըրս տաճարներից, որոնցից երեքը զտնվում են մի տեղ միմեանց կից, իսկ չըրորդը Ս. Յարութիւն անուամբ, փոքր ինչ հեռու, դէպի արեւմուաք:

Այս տաճարների տեղը, ուր նոքա կառուցուած են, արդարեւ հարաւի բնութեան դիւթիւ տեսարանն ունի. լանջ

ներկայացնող բարձրաւանդակ մի վայր իր պատմական սոսկալի կոթողներով շրջապատուած է մի կողմից խորագոյն ձորով, որի ներքեւում վաղում է ոլոր մոլոր վճիռ վատակը, որի եղերքից անմիջապէս սկսում է հսկոյ Ալիբէկ սարի սառուոր մասամբ ծածկուած խիտ ծառերով, իսկ հարաւ և արեմուտքից գարձեալ շրջապատվում է անտառախիտ լեռներով, բայց դէպի արեւելք հեռվում բայցվում է նորտ տռաջ մնդամալ զիւղի մօս արծաթափայլ հրազդանը, որի մէջ խայտում է անուանի կարմրախայտ համեղ ձուկը:

Ծաղկաձորի հայկական տաճարների կառուցման համար պատմութիւնը մի քանի փաստեր է ընձեռնում: Ըստ Մխիթար Այրեվանեցւոյ, այստեղ տուածին եկեղեցին կառուցել է հայոց Ապիրատ մեծ իշխանը 1031 թ. իսկ ի թուին հայոց ՆԶ—480 թ. այսինքն այնպիսի մի խորհրդաւոր ժամանակամիջոցում՝ երբ թշուառ հայտառանի դրւխին ձեռամբ անիրաւ ազգայնոց, մանաւանդ Կիրակոս յուղա քահանայի, արհաւելքների այնպիսի մեծ կցյաեր էին կուտակվում, որ վերջապէս հիմնայատակ են անում թէ Բաղրատունեաց թագաւորութիւնը իւր մեծահռչակ գեղեցիկ Անիով և թէ հայ ժողովրդի զյուռթեանը սոսկալի հարուած աեղացնում, որի մի հետեանքն էլ ներկայանում է Լէհաստանի անմիտ մեծ գաղթականութիւնը: Սակայն Ապիրատ իշխանից կառուցած եկեղեցին, որի մասին յիշեցինք մենք, հիմնուելով Մխիթար Այրեվանեցու պատմութեան և այնուհեաւ Շախաթունեանց եպիսկոպոսի Ստորագրութեանց վերայ, այժմ ոչ միայն կանգուն չկայ միւս եկեղեցիների կարգում, այլ նաև նորա յայտնի աւերակները անդամ չէ երեսում և թէ ոչ մի աեղ ոչ ոքից չէ յիշատակվում: Ուստի հաւանական է ենթագրել, որ այդ եկեղեցին կամ գեռ շատ վաղուց աւերակ է դարձած ու քայբայուելով անհետացել, կամ թէ այդ եկեղեցու հիմքի վերայ է շինուած կամ սուրբ Լուսաւորչու զաւիթը կամ թէ կանգուն եկեղեցիներից մէկը: Երկրորդ եկեղեցին, որը իսկապէս ճարտարապետական տեսակէտից մեծ հռչակ ունի, կառուցած է Գրիգոր Մագիստրոսը

իր մարդպանութեան օրով 1033 թուին։ Այստեղ աւելորդ չենք համարում յառաջ բերել այս տաճարի հարաւային դռան վերաց եղած այս արձանագրութիւնը, որ է «ՆԶԲ» (1033) թ. Տ.՝ ի թագաւորութեան Գաղկայ և ՚ի հայրապետութեան տեառն Սարգիս ես Գրիգոր Մագիստրոս որդի Հասանաց շենեցի զեկեղեցիս ինձ ի բարեխաւութիւն և իմ պատրոնին և իմ որդեացն, որք ընթեռնոյք՝ զիս յաղաւթս յիշեցէք ՚ի Քրիստոս, աղաւեմ»։

Այս տաճարի շինութեան ձեր յիրաւի յոյժ սոսկալի տաղաւորութիւն է զործում մարգու վերաց իր հմուտ և խորիմաստ կառուցմամբ։ Թէ որպիսի ընտիր և վսկը գործ է այս մեծագոյն և հրաշակառոյց տաճարի ճարտարապետութիւնը, զս կարելի է մասամբ եղրակացնել նշյն խակ նորա երինասլաց անսիւն վայելածև գմբէթից, որի գաղաւթը, ծերունիների ասելով, նորա կայուն ժամանակը հասնում էր մօտակայ բարձր անսատութիւն լերան գաղաթի աշուելի բարձրութեանը։ Մակայն 1827 թ. մեծ շարժից, որ տեղի է ունեցել այս կողմերում, այս հիսաքանչ տաճարը խախտվում է մի քանի կողմից։ արեւելեան պատր ներքելից, հարաւայինը մինչեւ գուռը Ճեղքուածներ է տալիս. նուև պատռուածքներ կան թէ ներսի և թէ զրսի կողմից. բայց ոչ պակաս յաւալի է նուև գմբէթի խախտուիլն, որի գեռ, իբր արձան, կանգնած մի մասից այսոնի երեսում է, թէ որպիսի հմուտ ճարտարապետի նուրբ ճաշակ է ստեղծագործած այդ կաթողիկէն։

Տեսնելով այս հայկական հրաշակերար, որը վեթիսարի բարձրութիւն ունի, չէ կարելի միանգամայն չիանալ նորա ազնիւ և միեւնոյն ժամանակ խիստ յանդուզն ճարտարապետութիւնով։ Մանելով այս տաճարի ներսը, տեսնում ես վերեսումք յոյժ կարի բարձրութեամբ զեղեցիկ կամարներ, որի քարերը կերտուած են այնպիսի ճարտարութեամբ, որ կարելի է եղել կառուցել այս հցակալ շինութիւնը առանց սիւների, աեսնում ես ներսի և արտաքին կողմից ճարտարապետական խիստ շատ փորագրուած զարդեր ու նշանագրեր. բայց տաճարի զլիսաւոր գեղեցիութիւնը նորա փառահեղ մե-

ծութեան մէջն է կայանում: Ա. Լուսաւորչի տաճարի արեմատեան կողմից զլիաւոր գռան մօա կառուցուած է ընդարձակ գաւիթ, իսկամ նշանաւոր իր յատուկ ճարտարապետութեամբ: Ներսում կայ սրբատաշ ամբողջ որձաքարերից չորս ահաղին սիւներ վերնախարիսխով, որոնք պահպանում են գմբէթի կամորները: Այս գաւիթը կառուցած է 1250 թուին Քուրդ կոչեցեալ Յովհաննէս անձը: Այժմ զարնան ամիսներից մինչեւ աշունքը ժամաստցութիւնը լինում է այս գաւթում, որտեղ կառուցուած կայ նաև սեղան:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կից գէպի հարաւ կանգուն կան երեելի անձանց գտամբարաններ, նաև աւանդատուններ քանդակեալ խաչվիմով և մի քառակուսի սեղան, որի առաջին ընկած է Վեշիկ վարդապետի ղերեղմանը: Այս կից գտնվում է և փոքրիկ գմբէթաւոր մի տաճար, որի արեմատեան գրան վերայ ի միջի այլոց կայ այս տրանազրութիւնը. «Յիշեցեք յաղաւթս զաստուածասէր սրարոն զվաճ՝ որ նորոգեաց վերատին զեկեղեցիս, թիւն Ոչի, (1223)».

Այս փոքրիկ տաճարից գէպի հարաւ մի քանի ոտնաշոփի հեռաւորութեան վերայ կանգնած է մի այլ անսիւն, սակայն չքնաղ տեսօք և հաւաք ճարտարարուեստով զրմբէթաւոր եկեղեցի, որ շնուած է Խաղբակայ որդի Վասակ անունով բարեպաշտ անձը: Առ նոյնպէս գմբէթազուրկ է այժմ: Ներսը ունի մի սեղան և ինն հատ խորան սրբատաշ քարեայ սանդուխտներով:

Այս եկեղեցու արեմատեան գրան վերայ կայ այս արձանազրութիւնը. «Ես Վասակ որդի Խաղբակայ շինեցի զսուրբ կաթուղիէս յաւզնութիւն կինաց իմ պատրոնացն՝ իւանէ Աթարակի և արեան հարազատի իւրոց Շահնշահի և Աւազին և իւր մաւրն պատրոն Խոշաքին և իմ եղբարցն և որդիկանցն յարեւշտութիւն, ինձ և ամուսնոյ իմոյ Մամային մեղաց թողութիւն, որք երկրպաղէք յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ:

Սորանից գէպի արեմուաք անտառը տանող ճանապարհի վերայ գտնվում է մի այլ փոքրիկ տաճար սրածայր գմբէթով Ա. Յարութիւն անուամբ, որն իւր գաւթով գեռ ևս

ամբողջովին կանգուն է մինչև այժմ։ Սորա շուրջը դանվում են բազմաթիւ գերեզմաններ հին ժամանակներից, որոնց վերայ կան դրուած ընտիր փորագրուած խաչքարեր։ Դաւթի մէջ տաճարի գրան վերայ կոյ այս արձանագրութիւնը.

«Թիւ Ոկթ (1220) շինեցաւ սուրբ Յարութիւնս առ՝ ի յիշատակ համաւրէն ննջեցելոց՝ ի Քրիստոս և Ծնողաց իւրոց հասանայ և Ռուզաքանայ, և զաւակայ... արձանս աւրհնութեան սիրոյն որ առ աստուած և առ սուրբս նորա, ամէն»։

Չմոռանանք յիշելու այստեղ նաև նահանգապետի տան առջեւ բարձրաւանդակի վերայ գեռ կանգուն մնացած սրբատաշ քարերից բարձրագիր աթոռը, որտեղ ըստ աւանդութեան, Գրիգոր Մաղիստրոսը իր մարգարանութեան օրերում հայ ժողովրդեան պատղամներ կխօսէր բաց օվի տակ։

Բայցի այս տաճարների շինութիւններից, այստեղ գտընվում են և զանազան աւերակների բեկորներ, որոնցից մի մասը կոփուած են սրբատաշ քարերով։

Եյս աւերակաց հետքերը անշրւշա նախկին Կեչառուաց Ճոխ մենաստանի միաբանութեան շինութիւնների մնացորդներ են, որոնք նաև արձանագրութիւններին նայած, պէտք է որ բաւականին ընդարձակ տեղ բռնէին։ Արդէն ԺԲ դարու սկզբից այս մենաստանը հայոց Ճոխ և բարկաւած մենաստաններից մինն էր կաղմում իր բազմաթիւ կրօնաւորներով, որոնց մէջ կային և յայանի վարդապետներ ու արքեպիսկոպոսներ։ Եյս ժամանակ այստեղի մենաստանը թէ շատ հարուստ էր և թէ խիստ ուժեղ իր ազգեցութեամբը հայ ժողովրդի վերայ։ Կեչառուաց միաբանութիւնը այդ ժամանակ ենթարկուած էր Բընու հայ արքեպիսկոպոսին։

Եյս տաճարների արձանագրութիւնից Կեչառուայ վանաց առաջին առաջնորդը յիշատակվում է 1051 թ. Բարսեղ անունով՝ այնուշետե ժամանակադրական թուով մինը միւսին հետեւում են այս կարգով։ Մոնոնիկ Գրիգոր, 1205., Գրիգոր վարդապետ 1213 թ., Պետրոս 1223 թ., Աթանաս 1272 թ., Միհիթար, Ներսէս, Համազասպ, Փիլիպպոս և այլն։

Եյժմ Կեչառուայ մենաստանի վանահայրն է բարձր ար-

Ժանապատիւ Մկրտիչ ծայրագոյն վարդապետ Տէր Թագէոս սեանց, որը սկսեալ 1862 թուից կառավարում է այդ աւերակ վանքերը օրինակելի խնամքով ու մեծ հոգացողութեամբ։ Այս համակրելի հայ հոգեորականիր մեծ աշխատութիւններ ունի արած այս եկեղեցեայ. եթէ զինէր սորա անդուլ աշխատանքը և արթուն հսկողութիւնը, վանքաբատիան հողերը վաղուց անհետացած կլինէին, սակայն Մկրտիչ հայր սուրբի շնորհիւ վերջին երեսուն աարուան մէջ Կեչառու վանքերը ոչ միայն ոչինչ չեն տուժած, այլ շահուած են, թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Երեսուն տարի շարունակ հովուել քաղցրութեամբ մի ժողովուրդ, առանց ու է նիւթական ակնկալութիւնների, կարդ, կանոն ու հաշիւ մասնել առաջին անդամ վանքի մէջ, օտարներին սիրել տալ հայիական սրբավայրերը, այս բոլորը այնպիսի բարեմանութիւններ են, որոնցից զուրկ են ոչ միայն մէր շատ վանահայրերը այլ նաև անուն վաստակած հողեորականները. բայց աւելի կարեսը սա է, թէ արգեօք ի՞նչ կինէր այս վերջին երեսուն տարուայ ընթացքում Կեշուու վանքի վիճակը, եթէ այստեղ ճրաւիրուեր մի հոգեորական, որը հոգւով կապուած է նախնեաց այս սրբավայրերի հետ։ Բաւտիտն է միայն յիշելլ որ սորանից մի քանի տասնեակ տարի առաջ մալականները փոքր քանեակութեամբ չեն կրել Կեշուու վանքերի քարերը իրենց և այլ շնութիւնների համար, սակայն այս բարբարոս աւերութիւններին վերջ գրուեցաւ միայն այժմեան վանահօր նշանակուելով այստեղի հովեւ։

Այստեղ վերջում զնում ենք մի արծուանկար, որը զարնվում է մայր տաճարի սեղանի վերայ։

Լին



ԾԱՂԿԱՋՈՒ

ԵՒ

Կ Ե Զ Ա Ռ Ի Ք

Ա

Գյընանք, ասին, Դարաշիչակ.

Ո՛չ լու կայ այնտեղ, ո՛չ մոծակ.

Տուրը անուշ, օդը քընքուշ,

Ա արգենիք կան՝ բոլորն անփուշ:

Օ աղիկներն են ըսանդըսանդ,

Փունջ կ'կապեն հաղարերանդ,

Դեղին, սպիտակ, կարմիր, կապոյտ,

Ծառի-ղարաբիլ, միջին ալ պուտ:

Խնկան ծաղկին՝ որ խօսք չը կայ,

Ա երան նայես՝ քէֆեդ կը դայ.

Հոտը բոնում է սար ու ձոր.

Դրախտ է կ'ասես շուրջ բոլոր:

Լանաչաղարդ դաշտերի մէջ,

Ամենայն օր միշտ և անվերջ

Երեխաներն ճկում, ճըշում,

Օրիորդները պինդ կըրկըչում:

Առաւօտեան թէյից յետոյ՝

Չես տեսնիլ տանն էլ Անէտոյ.

Ո՛չ Լիզայ, ո՛չ Կոլիա, Արտուշ

Ո՛չ Էլեօշայ, Միսկայ, Ա անուշ:

Մնհաց, անջուր մինչ՝ ի իրիկուն՝

Զիմանեերումն օրերն ՚ի բուն.

Ա ազվըզում են թաւալ տալիս,

Հաղար վունջով տուն յետ դալիս:

Տ անըմ, ո՞ր մինն ասեմ, լսես.

Գյընանք աչօքոդ կը տեսնես.

Հէնց մի զըրախտ, մի տեսարան,

Որ գովում է ամեն բերան:

Բ.

Եկինք, հասինք Դարաշիշակ  
Դրախտի պէս մի նոր վիճակ.  
Կանաչ դաշտեր, ծառնոտ լեռներ,  
Չորս դին պատեր խոր անտառներ:

Յունիս, յուլիսն գեռ տակաւին  
Վարիլ, մայիս քեզ կերկին.

Զոկայ ամառ, միշտ է դարուն,  
Դաշտ ու հովիտ բոլոր սիրուն:

Ա երջապէս որ կողմն էլ նայես,  
Վուլայ-քուլայ ամպերի պէս  
Տերեախտ ծառերն ու ճիւղ,  
Փակել են դաշտ, կաղմել են խուզ:

Տօ էս բնչնա, կաթնաղբիւրնա  
Դաղախինը խիստ լաւ ջուրնա,  
Ճաքթու աղբիւրն էն հեռունա՝  
Գուրը կասես թէ մեռնա:


Շատ աղբիւրներ, պարզ առուներ՝  
Գրգլըլում են դաշտ ու մարգեր.  
Լեռներին էլ առատաձեւ,  
Ծունչ է տալիս առատ անձրեւ:

Կարծես հրեշտակն ոսկէփետուր  
Տայ բոյսերին քաղցրիկ համբոյր.  
Գեղին, կապոյտ, և այլք կարդ, կարդ,  
Գեղազարդ է յամեն մի մարդ:

Միոէ բոլոր երես դաշտաց  
Ոնց պատուիրել է Տէր Աստուած.  
Կապիկ, ծիծաղ, խինդ, բերկրութիւն,  
Ճագաւորում է օրն՝ ի բուն:

Եւ ժրաջան կտրիչ մարդը  
Հունձ է ընձում կապում բարդը.  
Առը գերանդին ուսին դրած  
Արտի գլխին խրոխտ կանդնած:





Կեչառու Ա. Գրիգոր Լուսաւորչի տաճարը:

Соборъ св. Григорія въ Дарачичагъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Կուրծքը բացած դէմ արևուն,  
Ուրախ ողջոյն տայ հասկերուն.  
Եւ հասկերն էլ ձկվում, թէքվում,  
Մեղմ քամու դէմ վէտ-վէտ ծփում:

(Օգոստոսի քաղցր օրերում,  
Ուց յունիսին մեր արտերում,  
Որ շաբթապահն է խոտհընձի,  
Եւ ըսկիզբն է առաստ հըձի:

Արանք այստեղ թողունք մի ժամ,  
Դ վայելքս միշտ յարաժամ.  
Օսոռայողաց դիւանատանց,  
Երևանայ յոյժ մեծատանց:

Իսկ մենք գընանք ուղին 'ի վեր,  
Քանի վանքեր կան անդ աւեր,  
Կիսախոնարհ սուրբ գմբէթներ,  
Պարթևաղեանց գերեղմաններ:

Գ,

Պահլաւունեանց իմ՝ տամ բարեւ,  
Ուխտեմ ձեզ կեանք, քաղցր արեւ,  
Զեր չոր քարին ես ուխտաւոր,  
Կարօտ համբոյր տամ բիւրաւոր:

Ելէք, ելէք, իմ քաջերս,  
Ելէք, կուրնան զոյտ աչերս,  
Զը տեսնէին ձեր սուրբ տեղիք,  
Ենտէր, աւեր եկեղեցիք:

Եսացէք ինձ, ումը թողիք,  
Զեր սուրբ տեղիք, ձեր կոթողիք.  
Կուիրական եկեղեցիք,  
Ջառանգութիւն և հայրենիք:

Որոնք այսպէս բոլորովին,  
Կան աւերակք և տիրագին,  
Որ ձեր ներկայ ժամանակին  
Պարծանք էին հայոց ազգին:

Ո՞ւր զօրութիւն ձայոց Ազգի,  
Ահեղ գործեր հըզօր բազկի,  
Զեր ճոխ ատեան, ձեր արքունիք՝  
Ո՞ւր Շահընշահն, արքայն Գաադիկ:

Ո՞ւր մեծ իշխան Ասսակորդին,  
Բարեպաշտօն անձըն անգին.  
Եւ նորոգող վանիցս Աաչէ,  
Որ ազգային պարտ ճանաչէ:

Դուքս Գրիգոր, պերճ մագիստրոս,  
Աանօրէիցս նախկին հերոս,  
Եւրակացդ ել՝ ի խնդիր,  
Ենք անաչառ վրէժինդիր:

Մի՛ յոյս կապիր ազգիդ վերայ,  
Ազգըդ վաղ է որ անտէր կայ.  
Քեղ չե օդնիլ վիճակ ներկայ,  
Ապագայում ել ե՞նչ յոյս կայ:

Չար թըշնամիք Խրոխտալից,  
Երկար միջոց ամեն կողից՝  
Զեր երկիրը արշաւեցին,  
Տակն ու վըսայ արին, թողին:

Առւրն և ձեռքը չար ոսոխին  
Եմեն չարիք ել հասցրին,  
Զեր հայրենի անտէր երկրին,  
Աղետալի, ողորմագին:

Եկեղեցիքն աւերեցան,  
Եւ ժողովուրդն համանգամայն  
Անգիմութեամբ մատնուեցան,  
Դառն մահուան և գերութեան:

Թա՛ղ վկայեն այս սուրբ քարեր,  
Որ կան կանգուն դարեր՝ ի վեր.  
Ճայոց ազգի տառապանքը,  
Ճայրենիքում մաշած կեանքը:

Ճաղիւ մընաց սուրբ անկողին,  
Ակամայից ՚որ մեզ թողին,  
Օտարք կերին մեր հայն և ջուր,  
Եւ փոխարէն տային թուք մուր:

Այս մնացորդքս բազմագարեան՝  
Առաքինի գործք սրբազն,  
Անմահ փառաց ձեր նախնական՝  
Յիշատակք են նուիրական:

Որոց որդիս ձեր հոգեծին՝  
Ալբատիս արտօսրը տիրագին,  
Կուիրում է կարօտարար,  
Ճամբոյրներով սիրայօժար:

Ո. Փ. Շ.

ՇԱՀԿԱԶՈՐ. Դ ՎԱՆՍ ԿԵԶԱՌՈՒՄ

1891 թ. 1 Օգոստոսի



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐՁԻ ՏԱՃԱՐԸ ՀԱՐԱԽԱՑԻՆ ԿՈՂՄԻՑ

Այս նկարը պատրաստուած է յիսնական թուականների մի վիճատիալ օրինակից:

Ա. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԻ

Եթէ այսօր մենք յանկութիւն ունենայինք ուսումնա-  
սիրելու մեր նախնեաց ճաշակը գէպի բնութեան գեղեցկու-  
թիւնը, կարծում ենք, այդ նպատակի համար ոչ մի զրական  
շօշափելի ապացոյց այնչափ պարզ գաղափար չէր. կարող տալ  
մեղ նոցա այդ ճաշակի արտայայտութեան մասին, որչափ  
այն գեղեցկատեսիլ և գիւթիչ վայրերը, լեռների բանասաեղ-  
ծական լանջերը, ուր առհասարակ նոքա կառուցել են հայ-  
կական հոյաշէն տաճարները: Ամեն մի անհատ, եթէ նա  
փոքր ի շատէ ճաշակ ունի գէպի բնութեան գեղեցկութիւ-  
նը ընդհանրապէս և գեղարուեստը մասնաւորապէս, եթէ նա  
ընդունակ է ոգեսորուելու և գնահատելու այն ամենը, որը վե-  
հութիւն և կննդանութիւն է ներշնչում, այդպիսին անշուշտ,  
չ կարող սառնասրտութեամբ վերաբերուիլ գէպի մեր երկրի  
բնութեան այն գողարիկ ու վեհ անկիւններն ես, ուր մեր  
նախնիք կառուցած են իրենց և ապագայ սերնդոց համար  
կատարեալ հրաշակերտներ: Այսօր ուղենորը այցելելով այդ  
հնութիւններին՝ չ խմանում իսկապէս, որով նա աւելի սքան-  
չանայ, արդեօք այն զրաւիչ տեսարաններով ուր մեր բազ-  
մաթիւ վանքերն են կանգնած մեռած հայութեանը կեանք,  
հոգի ներշնչելու, թէ մեր նախնեաց այն հրյակապ մեծագոր-  
ծութիւններով, որոնց սաեղծագործութիւնը, ճարտարապե-  
տական արուեստը կատարեալ սքանչացում են յառաջ բերում:

Ահա, մեր նախնիք Դաղախի գաւառում ես նախ քան  
Մակարայ վանուց կառուցմանը ձեռնարկելու, իրենց նուրբ  
ճաշակին համաձայն ընտրած են այնպիսի մի գեղատեսիլ  
ու հրատուրիչ վայր, որ յիրաւի իր շըշակայքում ամենա-  
ընտիր նկարչական անկիւնն է հանդիսանում: Սա շնուած է  
անտառաթաւ լերան լանջի վերայ, պարփակուած լինելով, մի  
կողմից ծառապատ ձորով միւս կողմից վծիտ գետակով, որ  
անուանվում է Մակարայ զետ, արեմաքից խիտ անտառով  
վերջապէս արեելքից դաշտով, ուր հնումը եղած է այգես-  
տան հանդերձ վանքապատկան ջրաղայներով և ձիթահանքով:



ՏԿ. Զ. Շոլլ

Մակարաց վանքը. Մ. Փափաղնանի լուսանկարից:  
Монастырь св. Макария.

Փոտոգրաֆիա Պապայն. Ավտոմիա Անգերեր և Բենե.

Հրատ. «Արարա» հանդիսի:

Изд. лит.-худ. обозрения „Арахс“.





Ս. Մակարայ վանքը, կամ ինչպէս հնումը կոչվում էր,  
Ս. Ուխտն Մակարովանուց, բաղկացած է երկու եկեղեցինե-  
րից, որոնք գտնվում են, հաշաջուր մեծանիստ զիւղի վերև,  
Ղաղախի զաւառում: Այս տաճարների մասնաւորապէս տ-  
րեկելեան դրան ճակատի և պատերի վերայ կան խիստ հե-  
տաքրքրական քանդակագործութիւններ: Առաջին մեծա-  
դոյն եկեղեցին Ս. Աստուածածին անուամբ, որ շինուած է  
Զ դարում, կերտուած է չքնաղ քանդակագործութիւններով.  
լուսամուտների կողքերը մանաւանդ սքանչեցնում են մար-  
դու, այնքան մեծ արուեստիւ փորագրուած են սյստեղ զա-  
նազան նկարներ. արեկելեան կողմից քանդակագործուած է  
մի կատաղի առիւծ, որը ձմիւմ է ոտքերի տակ սխա-  
խրոխա եղին, սորա հանդէպ փորագրուած է յուշկապարի և  
այլ կենդանեաց նկարներ: Այս եկեղեցին ունի տասը սիւ-  
նազարդ կամարներ, բոլորն էլ ամբողջ քարերից: Ս. Աստուա-  
ծածնի հիւսիսային կողմից ընկած է ընդարձակ դաւիթ հրա-  
շալի կերտուածներով. սիւները և գմբէթը ծածկուած են  
գեղեցիկ կենդանագրութիւններով զաւթին կից է չքնաղա-  
շին զանդակատուն, որին հետեւում է մի փոքրիկ գմբէթա-  
զարդ շքեղ եկեղեցի 1198 թուին կառուցուած: Այս եկեղե-  
ցիների տեղեց, որի շուրջը խաչերով զարդարուն հանդատա-  
րան է, երեսում է ընդարձակ ծողկաւէտ դաշտեր և զմայլելի  
հովիտներ:

Այս վանքը այժմ խիստ անխնամ է, թողուած, թէև բազ-  
մաթիւ արձանագրութիւնները նզովք են կարգում ապա-  
գայում հիմնաղիրների և նուիրատուաց հոգւոց սահմանուած  
պատարագները չկատարելու համար:

Մինչև 1881 թ. այս վանքն ունէր իր վանահայրերը,  
սակայն այն օրից, երբ վերջին վանահայրը, ծերունի Գրիգոր  
վարդապետը, զոհ գնաց հաշաջրեցւոց գալգանային դաւադրու-  
թեանց, այս վանքը թոշունների և գաղանների որչ գարձաւ:

Հնուց Մակարայ վանքը ունէր իր կալուածները, որոն-  
ցով հաշաջրեցիք առաջուան պէս այլ ևս չին կարողանում  
աղատօրէն օդտուել. սորա վերայ զիւղայցւոց կատաղութիւ-

նը սահմանից անցնելով վճռում են վանահօր կենացը վերջ տալով աիրապետել այդ հողերին։ Այս նպատակով չարամիտների մի խումբ էիս զիշերին զիմում է այդ սրբավայրը։ մօտենալով վանահօր խուցին, սկսում են ծեծել գուռը և հրաւիրել նորան սարումը մերձ ի մահ հիւանդ մի կնոջ օդնութեան։ Հայր սուրբը հաւատալով, գուրս է զալիս. բայց աւազը ի՞նչ է տեսնում. մի խումբ զրահաւորուած հաշաջրեցւոց։ Բայց ի՞նչ կարող է անել այդ անմարդաբնակ դաշտում մի անզին, այն էլ ծերունի վարդապետ, հանդէպ մօտ տասը զազանների։ Անտէր, անտիրական խեղճ՝ վանահօրը, կիսամերկ ծեծելով առաջ են քշում և որպէս զրաստի, բերանն էլ մի սանձ ձգում։ Այդ գրութեան մէջ մէկը հեծնում է վրան և քշում գէպի լեռան զագաթը, որտեղ տեղի են տալիս այնպիսի մի եղեռնագործութեան, որի միակ յիշելը սոսկում է պատճառում մարդու. լեռան զագաթից խեղճ ծերունուն սարսափելի խորխորաան են զլորում։ Երկու շաբաթ վանահօր մասին ոչ ոք տեղեկութիւն չէ ունենում. մինչև որ մի գիւղացի ձորում պատահմամբ զանում է նորա այլակերպուած մարմինը, որի մասին և յայտնում է ոստիկանութեանը։

Պատմում են որ սպանման միջոցին վերին հաշաջրեցւոց, որոնք գործած են սպանութիւննը, արտերը ու այդիները, սարսափելի կարկուտին զօհ են զնում։

---

Որպէս Ղաղախու վանքերից շատերի, այնպէս և Մակարայ վանքի մասին, հայ ժողովրդի բերանում պտտում է հարիւրաւոր աւանդութիւններ, որոնք երկար ժամանակ բերանէ բերան աւանդուելով վերջապէս հասել մինչեւ մեր օրերը։ Այդ աւանդութիւնները մօտ առնչութիւն ունին երբեմն բազմահռչակ այդ մենաստանի փառաւոր անցեալի հետ։

Թէ ի՞նչ տեսակ վեհ աւանդութիւններ է ստեղծել հայ ժողովրդի վառ երևակայութիւնը նոյն իսկ Մակարայ վանքի մասին, դորան իբր մի թոյլ ապացոյց, յառաջ ենք բերում գէթ մէկը. այն է թէ ինչո՞ւ Մակարայ վանքը ժողովրդից երբեմն անուանվում է նաև Ագրաւայ Հան։

Հնումը Մակարայ վանքը ժամանակի հարուստ մենաստանից մինը լինելով ունէր հարիւրից աւելի միաբան և մեծամեծ կալուսձներ, որտեղ աշխատում էին բաղմաթիւ բանւորներ, որոնց կերակուրը հայթայթում էր վանքի ընդհանուր մատակարարը։ Աւանդութիւնը պատմում է, թէ մի օր դաշտում բանուորների համար կերակուր պատրաստելիս, ինչպէս է պատահում, որ մի օձ մատակարարի անուշաղը թիւնից օգտուելով, սողալով դալիս ընկնում է կերակուրի կաթսայի մէջ։ Այդ բանը տեսնում է միայն վերեսում սլացող ագռաւը. խեղճ թուզունը խղճահարուելով մարդկանց կեանքի վերայ, սկսում է անդադար պտտուել կաթսայի շուրջը և աղաղակ բարձրացնել, որպէս զի այլպիսով գէթ կարողանայ մատակարարի ուշագրութիւնը դարձնել այդ բանի վերայ, սակայն ագռաւը տեսնելով, որ մատակարարը զլիի չէ ընկնում, վրդովլում է, ուստի և այն միջոցին, երբ վերջինը պատրաստութիւն է տեսնում կերակուր բաժանելու բանուորներին, ագռաւը զնդակի արագութեամբ վերեից ներքե սլանալով իրեն ձգում է կաթսայի մէջ։ Մատակարարը և բոլոր բանուորները զարմանքից ապշում են այս երեսյթի վերայ, սակայն նոյա զարմանքը փարատվում է միայն այն ժամանակ, երբ կաթսան խստակելուց յետոյ, տեսնում են ագռաւի հետ կերակուրի մէջ և խաշուած մի օձ։ Այդ միջոցին միայն նոքա հասկանում են գործի էութիւնը, խակ մատակարարին պարզ վում է փոքր ինչ առաջ խեղճ թուզունի պտոյտ գալը և զռաւելը կաթսայի շուրջը։ Այս դէպքն այնպիսի խոր տպաւորութիւն է թողնում բոլորի վերայ, որ միւս օրը մեծ հանգիսով վանքի մօտ հողին են յանձնում այդ ագռաւին, որը շատ հայերի կեանքը աղատեց մօտալուտ մաշից։ Այդ օրից սկսած տեղւոյն հայ ժողովուրդը պատմելով այս աւանդութիւնը, պարծանքով ցոյց է տալիս Մակարայ վանքի պատի տակ այդ ագռաւի գերեղմանը։

ՄԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂ ՂԱԶԱԽՈՒՄ

Քարվանսարայ հայաբնակ զիւղը հիմնագրուած է Գուղարաց աշխարհի թուղթիանայ և Գեօքչայ լեռների դրկումն։ Այս լեռների և սոցա շարունակութեան միացումից կազմը-փում է մէկ վեթխարի ձոր, որ քանի զնում նեղանում է, իսկ լեռներն՝ որոնք ծածկուած են խիտ անտառներով, աւելի ու աւելի վեր են ալանում։ Սոցանից աւելի բարձրերը և դէպի հիւսիսային կողմ ընկածները ծածկուած են գլխաւորապէս կոնաձև եղենի ծառերով։ Չորից աջ ու ձախ բարձրանում են բաղմաթիւ մուժ ծործորներ, որոնք իրենց աշուելիութեամբ միայն սարսափ են ազգում անցուորականի վերայ, և որոնց շատերից խոխոջալով վտակներ են վագրում ու խառնվում Աղստեղ գետին, որն որոտալով մոնշալով սրնթաց հոսում է աշազին ձորի խորերով։ Ահա այդ գետի ափով անտառի միջով՝ որպէս մի բանտառեղծական խորհրդաւոր շափշ օձալաղյաներով բարձրանում է արքունական խճուղին։

Դեռ չմտած այս զիւղը, ճանապարհորդը հեռուից տեսնում է միայն վերսիշեալ երկու լեռների սրածայր գագաթները, ծածկուած խիտ անտառներով, որ մի ակամայ սարսափ է ազգում բնութեան այդ վայրենութիւնը նորա վերայ։ Անցորդը կարծում է, թէ մի խորխորատով, մէկ աւազականոցով պէտք է անցնէ, բայց նորա տատանումը երկար չէ տեսում, պատճառ որ մի քանի վերստ ևս յառաջ ընթանալով ակամայ նորա աչքին է ընկնում Քարվանսարայ գեղեցիատեսիլ զիւղի մի մասը, այդ ժամանակ միայն շտապեցնելով կառապանին, նա փափազում է բոլէ առաջ տեսնելու հայ զիւղացու զրաւիչ որրանը։

Այս զիւղն արեւելեան և մասամբ արեւմտեան կողմից շրջապատուած է այզիներով, որոնցից գժբախտաբար քարվանսարեցին չէ օդտվում։ մասամբ կարկուաի, մասամբ թողկոչուած հիւանդութեան պտտճառով։ Բայց ի՞նչ փոյթ, նա



Քարվանսարայ գիւղը:

Сел. Карвансарай.

Автомобіль Ашерера въ Вінс.



—



գարձեալ դոհ է, որ իւր որդին խաղող օրհնէքին դատարկ ձեռքով չէ զնում եկեղեցի, այլ իւր այգուց եղածին չափ նուիրական ծխին մասն է հասցնում:

Քարվանսարան ունի մօտ երկուհարիւր ծուխ հայ բնակիչն որոնք պարտապում են՝ երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ վաճառականութեամբ: Հողի պակասութիւնն պատճառաւ, քարվանսարեցին յաճախ հացի կարօտութիւն է քաշում, բայց նա այնուամենայնիւ գորա առաջն առնում է մինչեւ հունձը, ինչու որ նա մի ամիս շարունակ թուրքի համար հացով հունձ է անում և իւր պակասը լրացնում:

Քարվանսարեցի հայ կինը տմառ ժամանակ իւր ամուսնու աջ թեն է, եթէ ամուսինը գաշտումն է, նա հանդիսան է. նորան քաջայտնի է որ կալը առանց կալսելու, իւր ոյդին կամ ազարակը առանց ջրելու չեն մնալ:

Ինչպէս պատմութիւնից յայսանի է, Բաղրամունեաց թաղաւորութեան անկումից յետոյ Հազարացւոյ և միջին Ասիայի այլ վայրենի ազգերի յարձակմունքների պատճառով, մի նոր մեծ գաղթականութիւն զիմում է դեպի հարաւ արևմուտք, այսինքն Կիլիկիայ, յուսալով գոնէ այնանեղ գանել հանդսառութիւն: Ահա այս ժամանակուանից մի ուրիշ գաղթականութիւն էլ սկսում է զէպի հիւսիսային Հայաստան. այն է Վրաստանի սահմանները բնութեան այդ ամրութիւններում ամրանալու: Իշխանները մեծ մասամբ սկսում են ամրոցներ հիմնել լեռների կատարներին, իսկ հողեորականները և ժողովուրդը վանքեր առաջների ներկացութեամբ: Այդ ժամանակուայ մնացորդներ են ներկայումն Գոշայ, Հաղարծնոյ, Մակարոյ և Կիրանցայ վանքերը, նմանապէս և Ղզզալոյ (աղջկայ բերդ) և Մանթաշզալոյ բերդերը և ուրիշ սոցա նմանները, որոնք սարսափի և զարմանք են ազգում անցաւորականի վերայ իւրեանց գեղաքանդակ պարիսպներով, ու բուրդերով և վեթխարի տեսքով: Ափսոս, որ ս. Էջմիածինը ուշադրութիւն չէ գարձնում այս վանքերի վերայ. նոցա անցեալը շատ փառաւոր է եղել իւրաքանչիւրը այդ վանքերից ունէ մեծ տարածութեամբ վարելահողեր: Միակ Հաղարծինի վանքը ու-

նէ մէկ ծերունի վանահայր: Աշա երեսուն տարի է, որ Պօղոս հայր սուրբը միայնակ կովում է վայրենի թուրք սարուորների դէմ: որոնք ամեն տարի վանական արտերն ջարդում, ոչընչացնում են. բայց ի՞նչ կարող է անել մէկ ծերունին այդ լանջի վերայ հարիւրաւոր թուրքերին:

Որպէս Ղաղախու գիւղերից շատերը, նոյնպէս և Քարվանսարան, աղայ Մուհամմէդ խանի աւերումից յետոյ է հիմնարկուած: Երբ այս արխինարբու մահմէդականի սուրը ամեն իւր առաջն ընկածը՝ թէ գիւղ, թէ աւան և թէ քաղաք, սրի ու կրակի ճարակ է դարձնում, այդ ժամանակ մօտակայ լեռներում պատսպարուածները ժամանակի յարմարութեան համաձայն սկսում են զիւղեր հիմնել: Աշա այդ ժամանակուայ արդասիքն է և Քարվանսարայ գիւղը: Սաուցապատ և Գեօքչայ լեռների լանջերում գտնուած իշղրղանուտ և Սիստակաղեղցի (սպիտակ եկեղեցի), ներկայումն աւերակ գիւղերի հայերի մնացորդները միանալով ընտրում են իւրեանց համար գիւղատեղի Քարվանսարայ իշկաներ: Պէտք է ասած, որ քանի արքունական ճանապարհի հաղորդակցութիւնը կանոնաւորուած չէր և տեղոյն աւաղակաբարոյ թուրքերի ասպատակութիւններից ստիպուած ճանապարհորդները մեծ խմբերով էին ճանապարհորդում, կամ ապրանքներ տեղափոխում, այդ ժամանակամիջոցում տեղս այդ ճանապարհորդների համար ծառայում էր որպէս իշկանաատեղի: Այս պատճառաւ էլ հնուց սկսած է կրել իր այժմեան անունը. նա նոյն ծառայութիւնն է մատուցանում և ներկայումն երեան և Ղարս գնացող ճանապարհորդների և բեռնակիր սայլերի համար: Ինչպէս Ղաղախու բոլոր գիւղերը, նոյնպէս և Քարվանսարան, հին ժամանակուայ փոթորիկների պատճառաւ մշտական ասպարէկ է եղել ասպատակութեան և կողոպտման: Գիւղացին իւր ցանածի և անսունի տէրը չէ եղել:

Մինչեւ այժմն էլ ծերունիները շարունակում են պատմել թէ այդ ժամանակուայ թուրքը գողանում էր, կոտորում էր և վերջը նա էլ արդարանում էր, այնպէս որ միշտ հայ գիւ-

զացին էր տուժում: Հասկանալի է, որ այդպէս էլ պէտք է լինէր. գիւանբէկին (գատաւորը) միշտ թուրք աղալարներից ընտրուելով, նստում էր Սալահլու թուրք գիւղում: կաշառակերութիւնը դոյցա գլխաւոր յօդուածներից մէկն է եղել բայց որովհետեւ հայր չէ ունեցել այնքան, որ կարողանայ լիայնել Դիւանբէկին, այդ պատճառով ասպարէղը միշտ մնացել է թուրք աւաղակի կողմբ. նորա համար ոչինչ է, եթէ հայի երկու եղն է գողացել. թող մէկն էլ գիւանբէկին առնէ իրեն: Ահա այս գրութեան մէջն էին գիւղացիք մի քանի տասնեակ տարի առաջ:

Կար ժամանակ երբ Քարվանսարեցին սառն աչքով էր նսյում զէպի ուսումնարան ասած հիմնարկութեանը. երբ նորան հարցնում էին, թէ ինչու որդուգ ուսումնարան չես տալիս. նա պատասխանում էր ասելով. «Ես առանց գրի սեն ու սիպատակի եօլա եմ գնացել. թող իմ տղէն էլ եօլա զնայ»: Բայց նա այսօր նոյն միաքը չէ յայտնում: նա պատրաստ է իւր շապիկը ծախել որդուն ուսումնարան տալու համար: Եւ այս նպատակաւ, Քարվանսարան տհան երկու տարի է, ինչ ունէ մէկ համեստ երկսեռ ուսումնարան որտեղ սովորում են բաղմաթիւ երեխայք: Քարվանսարեցին այդ ուսումնարանի գոյութեամբ պարտական է արժանապատիւ Դուկաս քահ. Սիմէօնեանցին, որն աջակցութեամբ իւր եղբայր հանգուցեալ Մարտիրոս Սիմէօնեանցի, երկար ժամանակ ժողովրդեան համողելուց յետոյ 'ի կատար է ածել այդ նպատակը, ժողովրդեան մոմերի ձենձերից ժողովուած սուղ միջոցներով: Ներկայումս ուսումնարանը շնորհիւ նոր հոգաբարձուի ջանքերի՝ ունէ մէկ փոքրիկ համեստ զրադարան, երկու ուսուցիչ և հարիւրի չափ աշակերտներ:

Բ. Թումանեանց



## ՍԵՒԱՆԱՅ ԼԻՋԸ ԵՒ ՎԱՆՔԵՐԸ

Հայաստանի ընդարձակ տարածութեան մէջ, թէև ջրի մէծագոյն աւաղանների սակաւութիւն է տիրում; սակայն և այն փոքրաթիւ ընկրը, որ գտնվում էն մեր երկրում, իրենց սքանչելի զիբքով հարաւի բնութեան գոհարները կարելի է համարել: Ո՞ր ճանապարհորդը կամ օտարազգի զբոսաշրջեկը, թողնենք գեռ տեղւոյն բնակիչներին, չէ հրապուրուել Սևանայ լճի զրաւիչ տեսարանով, նորա զիւթիչ ջրի կապտաւոյն մակերեսով, որ հարաւի երկնքի տակ, արշալցին կամ արևմուտին, կէսօրին՝ արեգակի հրասաւալ Ճառագյթներից կամ կէս զիւերին՝ լուսնի շողերից, երբ նա սկսում է արծաթափայլ ցոլումներ տալ:

Լճի գեղեցիկութեան ներդաշնակութիւնը աւելի զօրանումէ այն ապառաժեայ լեռնաշղթայով, որով պարփակվում է նախակին Գեղամանայ ծովը արեւելքից, հովաշատ վայրերով հարաւից և բազմազումարտակ լեռներով միւս կողմերից:

«Դիլիժանի գեղեցիկ ձորից բարձրանալով լեռների գագաթը և այնուշետե փոքր առ փոքր ապառուելով այդ բազմաթիւ լեռների տիրապետութիւնից», գրում է մի զբոսաշրջեկ, «մեր առաջ, հեռաւոր հորիզոնում, տեսանք փոռուած Սևանայ լճի ընդարձակ տարածութիւնը, պարփակուած բարձրագագաթ լեռների շղթայով. «Ինձ թուաց, որ մի ակնթարթում ես տեղափոխուեցայ Նէապոլիսի ծովածոցը», ասում է յայտնի կոմսուհի Ռւվարովան իր յիշատակարանում Սևանայ լճի մասին, «այնքան յստակ, գեղեցիկ և պայծառ էր ջրի մակերեսոյթը»: Հաղիւ թէ ով և իցէ, շարունակումէ ռուս ուղերը, կարողանայ զսպել իրեն հիացման բացականչութիւնից, երբ մէկը միւսի յետելից բարձրացող ահաբեկիչ լեռների միջով արած ճանապարհորդութիւնից յետոյ տեսնում է հորիզոնի ետե կորչող անեղը կապտաւուն հեռաւորութիւնը, որը քիչ է մնում ծովի տեղ ընդունել թէև այստեղ չէ



Սևանայ լիճը և կղզու վանքերը: Տ. Փեշտմանի լուսանկարից. վորագր. Մ Առել:

Геокчинское озеро и Севанский монастыри.

Съ фотографіі гравироваль В. Матэ.

Հրատ. «Արարա» հանդիսի:

Изд. лит.-худ. обозрителью «Аракс».





Էլ ենթագրում ծով տեսնելու։ Շրջապատուած բարձր ապառաժեայ պարսպով և դանուելով շրջակայ լեռնազոտիների ընդարձակ ծոցում, ծովի մակերեսոյթից բարձր աւելի քան 6000 ոտնաչափ, այս լիճը ամբառնում է Հայաստանի մէջ, որպէս մի վիթխարի մէծութեան աւաղան։ Լճի ջուրը մուք կապտաւուն է, ինչպէս և Միջերկրական ծովում։ Նորասպիտակ ալեքները, քամուց հալածուելով, շիվում են ժայռերին, ինչպէս և եղերքից ոչ հեռու մեկուսացած կղզուն, որի վերայ հիմնուած է Սևանայ վանքը։

Սևանայ լճի երկարութիւնը հաշվում են 63 վերստ, լայնութիւնը 39, շրջակայքը 200, իսկ խորութիւնը տեղականութիւնը 270 արշին։

Շրջակայ լեռներից թափում են լիճը բազմաթիւ վճիռ առուներ, իսկ մի կողմից էլ լճիցն է իր սկիզբն առնում մի մեծ առու, որը իր ընթացքում զանազան բղիսող աղբիւրներ ընդունելով իր մէջ, մէծ զետ է դառնում, որը յայտնի էր Հնումը՝ Հրազդան, իսկ այժմ՝ Զանգի անունով։

Սևանայ լիճը տեղ տեղ զողարիկ ծոցեր և հրուանդաններ ունի, նաև մանաւանդ արեւմտեան և Հիւսիսային կողմերում, այն ինչ միւս եղբներն աւելի ուղղաղիծ են։ Եյս լիճը առհասարակ շատ կենդանի է. շարունակ պտտում են զանազան կողմերում ձկնորսական նաւակներ. թռչունները երաժներով այս ու այն ուղղութեամբ թռչելով ու խուլ ձայներ հանելով մի առանձին հրապոյը են տալիս Գեղամայ ծովին. բայց շարժումը աւելի աշխոյժ կերպարանք է առնում աշնանը, երբ Նոր-Բայազիկից հայ զիւղացիք և վաճառականներ իրենց փոքրադիր մակոյկներով և առաղաստաւոր նաւակներով ցորեն և այլ զիւղատանեսական մթերքներ են փոխազրում Զիբուխլու հայաբնակ ծովեղը աւանը, իսկ այնտեղից, Դիլիժանի անսատուներից մթերած, ածուխ և վառելափայտ։ Զինորսութիւնով և նրա առեւտրով պարապում են դարձեալ Նոր-Բայազիկացիք և շրջակայքի զիւղացիք։ Զիների տեսակները խիստ շատ են Սևանայ ջում, սակայն անուանի են՝ իշխանաձուկը, գեղարքունին, կարմրախացալ և կողակը։

ԼՃի եղերքներում կան հաստատուած բազմաթիւ զիւ-  
զեր և աւաններ, որոնցից մի երկուսը բնակեցրած են մալա-  
կաններով, ոռւս աղանդաւորներով, իսկ մնացեալը թուրքե-  
րով և հայերով։ Հայոց զիւզերն ընկած են զլիսաւորապէս ա-  
րեելեան և հարաւային եղերքներում, Գեղարքունիքում, ո-  
րոնք նոյնպէս ունին իրենց սրտաձմիկ պատմական անցու-  
դարձերը, սակայն սոցա մասին թերեւս մի այլ ժամանակ  
մանրամասնօրէն խօսենք։

Նոր-Բայազէտը, որի բնակիչների մասին վերեսում յիշե-  
ցինք, գտնվում է լՃից դէպի հարաւարեմուտք վեց վերստ  
հեռաւորութեան վերայ Գաւառ անունով մի նեղ հովտիկում,  
գետի ափին։

ԼՃի եղերքի զիւզերի և աւանների մէջ խիստ հրաշալի  
զիւզ ունի Ցամաքաբերդ անուանեալ հայկական զիւզը։ Այս-  
տեղ՝ հրուանդանի ծայրում, գտնվում է ծառերով շրջապա-  
տուած վանքապատկան մի տուն, որը ծառայում է ո. Սևան  
գնացողների համար, որպէս նախնական կայեան։ Ամառը այս-  
տեղ գտնվում է մի վարդապետ, որը ընդունում է հիւրերին  
և ուխտաւորներին ու այնուհետեւ ճանապարհ դցում դէպի  
վանքը։ Կանոնաւոր նաւագնացութիւն ըլինելու պատճառաւ,  
Ցամաքաբերդ իջևանողը պարտաւոր է ատրճանակի կամ  
հրացանի արձակմամբ իմաց տալ Սևանայ կղզու միաբանու-  
թեանը, որը և այդ ձայնի վերայ ուղարկում է Ցամաքա-  
բերդ վանքապատկան նաւակը իր թիավարներով, որոնք և ըն-  
դունելով նաւակի մէջ այցելուներին, լողում են դէպի վանքը։

\* \* \*

Սևանայ կղզին, որի վերայ հաստատուած է Սևանայ մե-  
նաստանը իր բազմածանօթ վանքերով գտնվում է համանուն  
լՃի մէջ նորա հիւսիսային կողմում, մօտաւորապէս մի վերստ  
հեռաւորութեան վերայ, նաւակով մօտենալով կղզուն, այ-  
ցելուի առաջ բացվում է սքանչելի մի տեսարան։ Հիւսիսա-  
յին եղրից մինչեւ արեմտեան եղքը ընկած է ուռի և բար-  
դէնի ծառերից մի հովաշատ ծառուղի, որը կղզու վերայ ա-

մենալնտիր ղբոսատեղին է ներկայանում: Այստեղ է և մի փոքրիկ բանջարանոց զանազան բոյսերով և տունկերով լի:

Կղզին արտաքին կողմից ներկայացնում է ձուի ձեռով մի բարձրաւանդակ, տեղ տեղ թփերով և խոտերով ծածկուած, իսկ արեելեան և հարաւային եղբները աշոելի սեպաձև ժայռեր, որոնք շերտերով իջնում են լճի մէջ:

Այս կղզու վերայ, բլրի գագաթում, հայոց կոտապաշտութեան ժամանակներումը կառուցուած է եղել ամսուր պարապով և զղեակով Սիւնեաց աղջի մեջեանները, սակայն որոնք 305 թուականին, Ս. Գրիգոր Լուսաւորիչը Տրդատ թաղաւորի հետ գալով այստեղ, քանդում է հիմքից և նոցաւերակների վերայ կառուցանում խաչաձև մի տաճար, որից այժմ մնացել է միայն աւերակների մի կոյտ: Այստեղ գեռ ևս պահպանվում է նաև քառաթե մի կարմիր խաչքար, որն ըստ աւանդութեան, օծած է նոյնպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Այնուհետև Սևանայ մենաստանին կենդանութիւն և փայլ առողջն եղած է Աշոտ հայոց թագաւորի բարեպաշտ Մարիամ դուստրը, որի հոգու մեծութեան կենդանաղիրը ընթերցողը կը տեսնէ այս զրութեան ներքեռում: Այս կրօնասէր արքայապն հայուհին ձեռնարկած է մենաստանի շենութեանը 881 թուականին Երանելի Մաշաոց վարդապետի օրով, որը յետոյ շնորհօքն Աստուծոյ և հայ ժողովը ընտրութեամբը կոչուեցաւ բազմելու ի գոհհ հայրապետական Մբրոյ էջմիածնի: Առաջին եկեղեցին, Ս. Պետրոս Առաքեալի անուամբ, կառուցուած է հասարակ քարից խաչաձև և կիսաբոլոր ձեռով: Այս եկեղեցին ունի երկու զուռն աբանոս փայտի աղնիւ տեսակից սքանչելի փորազրութեամբ, սակայն սորահարաւային դուռը հայոց հին քանդակադործութեան մի շեք ձ'օւսնրեը կարելի է համարել սյնքան նա հրաշալի և նուրբ հիւսուածքներ ունի:

Այս եկեղեցու մօտ կանդնած է մի այլ խաչաձև և կիսաբոլոր եկեղեցի, ս. Յովհաննէս Մկրտչի անունով, որի շուրջը եղել է ժամանակին միաբանաց խրճիթներ և այլ շե-

նութիւններ։ Ներկայումս այս երկու եկեղեցիներում ժամասայութիւն լինում է տարին միայն մի երկու անգամ։

Ներքեւից դէպի այս վանքերը, կղզու գաղաթը, բարձրանալիս՝ ճանապարհի վերայ տեղ տեղ աչքի են զարնում զանազան մեծաղիք քանզակագործուած հին քարեր կարմիր քարից, որոնք գեռ կայուն և որոնք կիսաւեր։

Մարդ երբ բարձրանում է կղզու վերեր, այնտեղ կարծես Եղեմայ դրախտն է գտնում, այնքան տխորժելի և յափշտակիչ է բնութիւնը։ Օդը այնպէս մոքուր և զովարար, շուրջդ այնքան զմայլելի, հրապուրիչ տեսարաններ, որ միանգամայն խոր վեշտ է պատում սիրադ, որ դէպքերի անմիտ բերմունքներով զրկուած ես երկար ժամանակներով օգտուել վեհ անդորրութեան մէջ բնութեան այսպիսի դիւթիչ վայրից, ուր ամեն մի կիրք, ամեն մի չարանենդ մսածութիւն, ստոր մարդկանց զղուելի մատնութիւնք և գաւ, բնաւ տեղի չեն կարող ունենալ անցուկ աշխարհի հոգսերից և ունայն վայելութիւններից գուրս բնութեան այս խորհրդաւոր անկիւնում, որտեղ «ոչ մեղի ուները սրբապիղծների և ոչ նենդ միտքը չար ողիների, երեք քրովվել չեն կանզանում անդորր լուսութիւնն այս սրբավայրի», ինչպէս որ նոյն իսկ կղզու անցեալն է վկայում զօրաւոր փաստերով, որի հետևանքը եղաւ երանելի Մաշտոց Ստեփաննոս վարզապետի հրաշալի երգն՝ «Ծնորչեա մեղ Տէր ի զիշերի զերկնային վնասաղութիւն քո և պաշեա զմեղ ի պատրանաց թշնամյն...» որ նա երգեց զիշերուան խորին լուսութեան մէջ ի կորուստ խարդախամիտ գաւառձան աւազակաց, որոնք ինները որդ գարում խորամանկութեամբ մտնելով կղզին միաք յղացան զիշերայն կոտորել ամբողջ միաբանութիւնը և տէր գառնալ կղզւոյն, սակայն աղօթիւք մեծահաւատ և սրբակրօն միաբանացս, ինչպէս զրում է Զալտեանց եպիսկոպոսը, ջնջեցաւ և բարձաւ զօրութիւն 'ի միջոյ թշնամեաց և երեւեցաւ ոչ սակաւ զգալի նշան, որովհետեւ «այստեղ հանապաղ ծխվում են խունկեր, հանապաղ առկայծ վառվում են մոմեր, և մաղթանքները, որպէս հառաշներ խորտակուած սրտի, առաքվում են վեր...»։

Կղզու ստորոտում, տափարակ տեղում, կայ կառուցուած քարաշէն մի եկեղեցի Ս. Աստուածածին անուամբ քարեայ չըրս սիւների վերայ, որը նորոգած են Զիթաղեան եղբայրները 1661 թուականին: Ժամասացութիւնը, օրը չըրս անգամ, լինում է այս եկեղեցում, որի շուրջը ընկած են միարանութեան փաքրիկ սենեակները մի մի փոքրիկ լուսամուտներով, սեղանատունը, մառանը, ամբարը, դարբնատունը, և այլն: Սենեակներից երկուսը յատկացրուած է վանքի թանգարանին, որոնց միոյն մէջ կայ 200 ձեռաղիր և 400 տպագիր զրութիւններ, ըստ մեծի մասին կրօնական բովանդակութեամբ, միւս սենեակում պահպան է եկեղեցական զգեստներ, զարդեր, խաչեր, մասունքներ և հայկական դրոշի երկաթեայ մի խաչ ո. Նշան անունով որն ընծայաբերած է վանքին Մաշտոցի օրով Հայոց Աշոտ թագաւորը, 874 թուին, երբ այստեղ ուխտի է եկած լինում: Մասունքների մէջ նշանաւոր են Յովհաննու Մկրտչի և Պետրոս Առաքեալի մասունքները:

Տեղոյն միաբանութիւնը այժմ կաղմում են երկու եպիսկոպոս, տասը վարդապետ, երեք աւագ սարկաւագ, որոնց մէջ մեծ ժողովրդականութիւն ունի Սողոմոն անունով աւագ սարկաւագը, որի ձեռքում է վանքում և վանքի տընտեսական կառավարութիւնը, թէ ներսում, և թէ դրսում, վանքապատկան կալուածների վերաբերմամբ, նաև մի քանի դպիրներ և աշխատող անձնենք:

Վանքը շարունակ յաճախում են Հայ, ոուս և եւրոպացի ճանապարհորդներ, որոնք գանում են այստեղ միշտ լաւ ընդունելութիւն: Սակայն տարին զլիսաւորապէս երկու անգամ՝ ս. Աստուածածնայ և Վարդավառի տօներին, Հայ ժողովրդի մեծ բազմութիւն է գալիս ուխտագնացութեան: Երբեմն ուխտաւորների թիւը այնքան բազմանում է, որ վանքի ընակարաններում տեղ չընելու պատճառով, շատերը ստիպուած են լինում գիշերելու վանքի բակում բաց օդում:

Սեաննայ վանքը հնումը Հայոց Հռչակաւոր մենաստաններից մինն էր Հաշվում, մանաւանդ ութ և իններորդ դա-

բերում, երբ այստեղ աստուածաբանական և փիլիսոփայական գիտութիւնները խիստ ծաղկած էին: Այս մենաստանումն են անցրել իրենց կենաց շրջանի երկար տարիները հայ եկեղեցու անուանի և ականաւոր կրօնաւորներից շատ շատերը: Նաև այստեղ մնաց մի առ ժամանակ, նախ քան Վենետիկ գնալը, անուանի Միսիթար սեբաստացի վարդապետը, որ հիմնավիրն եղաւ Վենետիկոյ և Վենենայի Միսիթարեանց միաբանութիւնների:

Վերջայնելով այստեղ մեր գրութիւնը, այժմ նպատակայարմար ենք գտնում մէջ բերել ս. Սևանայ վանքի մասին նաև մի ռուս զբոսաշրջիկի նկարագրութիւնը, որը տպուած է «Վանմիրնայա իլլիւստրացիոնի» 1889 թ. երկրորդ համարի մէջ՝ «Սևանայ ծովի վերայ» խորադրի ներքոյ:



Լեռնան Գլուխ Ս. ՅՈՎՀԵՆՆԵԼՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

«Ս. Գրիգոր Լուսաւորիչը 303 թ. քրիստոնէութիւնը տարածելով Հայաստանում, որն ընդունուած էր գեռ 31 թ. Աբգար թագաւորի օրով, հիմնում է Սևանայ կղզու վերայ մի վանք Ս. Համբարձում անունով,—կղզու Թափոր լերանը շատ նման լինելու պատճառով: Տրգատ թագաւորը, լսելով սորա մասին, հրամայում է կղզին անուանել «Այս է վանք», որը կրծատուելով դառել է «Ս է վանք», և յետց «Սևան»:

«Անցնում են գարեր մինը միւսի յետեից այնպէս, ինչպէս և Հայաստանի իշխողները փոխարինում են մէկը միւսին, վարելով անընդհատ պատերազմներ գրացիների գէմ՝ մինչև որ պարսիկները յաղթում են նոցա ու աիրանում նոցա երկրին: Մենաստանը կատարեալ քսյբայման է Հասնում; իսկ բնակիչները գերի են առնվում Պարսից Մրուան զօրապետից: Սակայն 876 թ. աեղի է ունենում ուրախառիթ մի փոփոխութիւն: Մի իշխանուհի, Մարիամ անունով, Աշոտ թագաւորի գուստարը, աշխարհից հրաժարուելով, ապրում էր Յամաքարերի կուսանաց վանքում, որը հիմնուած էր դէմ յանդիման Սևանայ կղզուն: Գրաւուելով կղզու վայրի և բանաստեղծական դիրքից, Մարիամը մտածում է նորոգել նախկին վանքը և շուտով իրազործում է իր մտադրութիւնը շնորհիւ իւր հզօր հօր օգնութեան, որին յունաց թագաւորն իսկ անուանում էր «աիրասուն որդեակս», իսկ նորա հպատակ աւատական ազգերը նորան կոչում էին «իշխանաց իշխան»: Կղզու գագաթի ամենաբարձր տեղում շինվում է մի փոքր եկեղեցի Ս. Աստուածամօր անունով, որը կայ կանգուն և մինչև այժմ: Այս եկեղեցու մէջ գեռ պահպանվում է մի մութը խուց, որտեղ առանձնացած ճղնում էր արքայագուստը կոյսը, երբ նա ընդ միշտ հրաժարուել էր աշխարհային ունայնութիւնից: Միակ ըրյալ թափանձում էր նորա խուցը վանքի մէջ բացած մի լուսամտից: Այստեղից նա լսում էր եկեղեցու ժամասացութիւնը և բոլորից աննշմարելի ջերմեռանդութեամբ ազօթում էր իւր խեղճ՝ ազգի համար: Մինչև որ Մարիամը գեռ բոլորովին չէր հրաժարուել աշխարհից, նա գորովազթութեամբ խնամում էր իրեն շրջապատող անձանց,

ցոյց տալով նոցա հեղութեան, համբերատարութեան և քրիստոնէական սիրոյ կենդանի օրինակ: Նորա հսկողութեան ներքոյ կառուցուեցան մի վանք և խուցերի շենքը, նոյնպէս հիմունեցաւ մի գալրոց և զրադարան, որը հետզհետէ ծաղկեցաւ. այստեղ գտնվում էին և թանկագին մասդաղաթեայ զրուածքներ, որոնք մեծ նշանակութիւն ունեին թէ իրենց հնութեամբը և թէ հաղուադիւտութեամբ: Այս ձեռապիրները ուղարկում էին նուէր թաղաւորները, մասնաւոր անձինք, նոյնպէս և մենաստաններ, որոնք Սևանայ վանքի թանգարանը ամենաապահով տեղն էին կարծում, այնտեղ պահ զրուելիք զրեանց և սրբութեանց համար: Զանազան մենաստանների վանահայրերը հաշուի էին առնում, որ և անհիմն չէր այս գատողութիւնը, թէ տեղի անապատային դիրքից և կղզու անմատելիութիւնից, որ այս միջոցում շըջապատուած էր նա բաւականին ամուր բարձր պարիսպով այդտեղ գտնուած թանկագին և նուիրական իրերը աւելի ապահով և անվտանգ են թշնամու յափշտակութիւններից, քան միւս վանքերում, որոնք յաճախ յարձակմանց ասպարեզ են հանգիսանում: Այդ ժամանակները խիստ վտանգաւոր էին: Բոլորը դեռ լաւ յիշում են Եղիպատոսին նուածող մոլեուանդ արաքներից Աղէքսանդրեան ճոխ մատենադարանի սոսկալի աւերութն: Հէնց այդ շփոթալից ժամանակներում են փոխադրած և Սևանայ կղզու զրատունը մատենագրական այլ և այլ գանձեր: Միանգամմա Սիմէօն կաթողիկոսը վճռում է այցելել Սևանայ վանքը: Յայժ զրասէր լինելով կաթողիկոսը մի առանձին ուրախութեամբ յոյս էր տածում աչքի անցնել այն բոլոր հաղուագիւտ զրեանքը, որոնցով խիստ հռչակուած էր այս մենաստանը: Վանահայրը, լսելով նորա գալուստը, սկսում է պատրաստութիւն տեսնել ընդունելութեան համար. սակայն, քաջիմանալով կաթողիկոսի զրասիրութեան տենչանքը, մասնաւոր ուշադրութիւն է դարձնում զրադարանի վերայ. բայց ի՞նչ է տեսնում... սարսափի մէջ է ընկնում, երբ որ ձեռն առած զրքերը մեծ մասամբ փոշիի մէջ կորած, հինցած, գղղղուած, ժամանակի աղդեցութիւնից և միջատներից, կաղ-

մերից անջատուած և հազարաւոր բայցուխուփ անող ձեռքերից կեզատացրած։ Սոյա մէջ էին եկեղեցական արարողութեանց վերաբերեալ զրեանք, քրիստոնէական առաջին ժամանակներից մնացած աւետարաններ և սաղմոսներ, յիշատակարաններ և փիլիսոփայական զրուածքներ։ Երկիւղ կրելով չոգեռը Պետի բարկութիւնից, նորան յանձնարարուած զրքերի պահպանման սյսպիսի տեսքի ու անհոգութեանց համար, վանահայրը զրատան մէջ ընտրում է բոլոր նոր ու նորակազմ զրքերը, իսկ մնացեալն որոնք ամենահին ժամանակներում էին զրուած, ուստի և աւելի մեծադինն էին, հրամայում է զիշերը նաւակով գուրս տանել ծովի մէջ և ածել ջուրը։ Յայտնի չէ, թէ ինչպիսի «շնորհակալութիւնով է վարձատրում» նորան Սիմէօն կոթողիկոսը, երբ այցելում է Սևանայ վանքը, բայց աւանդութիւնը այս մասին լուսմ է, ինչպէս որ լուռ է և կապտաւուն լիճը, և միայն միակ կիսաւեր զետնայարկի շինութիւնը պերձախօսօրէն հաւատացնում են, որ այստեղ ընդունակ են եղել աւելի լաւ նայել ըմբոսա վարդապետների վերայ, քան պահպանել մենաստանին յանձնարարուած զիտնական գտնաձերը»։

«Հայաստանում յաճախ տեղի ունեցող երկրաշարժներից տապալվում, կործանվում են վերի վանքի շինութեան պատերը և նորա մի քանի մասերը։ Այդ ժամանակ մտածում են, որ անհրաժեշտ է տեղափոխուել ներքեւ, ըստ որում այնպիսի բարձրութեան վերայ շինութիւնները բայցի երկրաշարժների երկիւղեց, անյարմար էին միաբանութեան համար այլ և այլ սկատճառներով, օր. ստիպուած էին այնպիսի հեռաւորութեան վերայ շարունակ ջուր և վառելիք կրելու, և թէ բարձրումը մշտական քամիներից խիստ ցուրտեր է լինում։ Սակայն անհրաժեշտ միջոցներ չունենալով, միաբանութիւնը ստիպուած էր զեռ ևս մնալ առաջուան տեղում, սպասելով թէ նախախնամութիւնը կ'ուղարկի մի բարերար, որը յանձըն կ'առնէ այս գործը իր վերայ։ 1654 թուին, այսինքն 700 տարի սպասելուց յետոյ, ըստ որում առաջին երկրա-

շարժը եղել էր 995 թուին, միաբանութեան ցանկութիւնը կատարվում է և սոյցա երկարատեւ համբերութիւնը վարձատրվում: Թիֆլիսից ուխտի են գալիս Զիթաղեան երեք եղբայրներ, որոնք տեսնելով մենաստանի քայլութեամբ, վճռում են նուիրել մենաստանի բարեկարգութեան համար մի դումար, և իրենց ներկայութեամբ վերանորոգում են ներքեում նախկին տաճարը, շինում են խուցեր, մի խօսքով բոլորը կարզի բերելուց յետոյ, նուիրում են և երեք արծաթեայ ջահ, խոստանալով նաև ուզարկելու նոյց վառելու համար հարկաւոր եղած վառելանիւթը: Ի նշան երախտագիտութեան, միաբանութիւնը փորագրել տալով դոյցա անունները քարի վերայ մատնում է ատաճարի դռան մօտ եկեղեցու պատի մէջ:

«Մի երեանցի, Գ. Մ. Յովհաննէսեան, հաղորդեց ինձ, իր տատից լսած, մի փոքրիկ աւանդութիւն, որը և պատմում եմ այստեղ այնպէս, ինչպէս որ ինձ հաղորդուած է:

«Մի ժամանակ հագարացի լեռնականներ՝ լեղիններ թէ ալաններ, մտադրութիւն ունենալով կողոպտել Սևանու մենաստանը, այս խորամանկութեանն են դիմում: Իրենց քաջերի մի երկուսի առաջնորդութեամբ, նոքա պատրաստել են տալիս մի քանի նաւակներ, որոնց վերայ բարձում են 40 մեծ զամբիւզներ երկաթներով պատած: Խրաքանչիւր զամբիւզում պահուած են լինում երկ-երկու զրահաւորուած անձինք: Սոյց զլսաւորները ներկայանում են վանահօրը, որպէս վաճառականներ, և խնդրում են տեղաւորել նոյց ապրանքը մի որ և է տեղ մինչ քան վատ եղանակի վերջանալը: Նոյց խնդիրը ընդունվում է: Դէպքերի բերմամբ, հէնց այդ գիշերը աշակերտներից մինը ցանկանալով միայնութեան մէջ պատրաստելու իր գասը, վերցնում է զիրքը և գնում այն սենեակը, որտեղ գարսոտուած էին օտարականների զամբիւզները: Այստեղ նա, երեխուն յատուկ սովորութեամբ, սկսում է խաղալ զամբիւզների կողպերի հետ: Յանկարծ այն զամբիւզեց, որի կողպէքներին նա ձեռք է տալիս, լսվում է մի թոյլ ձայն. «Ալի, վախտիզը ըսխմալի», այսինքն «Ալի, ժամանակն է դուրս դալու»: Մի ակնթարթում երեխան իմաց է

տալիս իր ուսուցչին, իսկ սա հաղորդում է այս մասին վանահօրը։ Օտարականներից մինին, որի անունն Ալի էր, իսկոյն խեղդում են, իսկ նոցա զամբիւզները կենդանի ապրանքով ձգում են լեռան ամենաբարձր գագաթից ծովը։ Զամբիւզները փոխազրելուս, տւազակները կարծես նախագուշակելով իրենց վախճանը, խիստ ծանր հառաջում էին և զամբիւզների մէջ այս ու այն կողմն էին խփում։ Բայց տախամիները, երկաթներով պատաժ լինելով ամուր էին և կարող եղան դիմանալու նոցա ձիգերին»։

«Ինչպէս տեսնում էր» այն ժամանակ դատաստանը շատ շուտ էր կատարվում։

«Վերի եկեղեցու շինքը կառուցուած է տաշած սեաւուն չշոտաքարից, ճարտարապեսութիւնը հասարակ և անպահով է, ութանկիւնանի սրածայր կաթողիկէն կապում է ամբողջ շինութիւնը, որը խաչի ձև ունի։ Սյս ու այն կողմում թափուած են քարեր, կառւրից սալաքարեր, պատերի ամեն մի ձեղքուածում բուսած են մամուռ և խոտ—որոնք պերծորէն ապացուցանում են այս շինութեան զառամեալ տաքը, որն արդէն 15 դարու գոյութիւն ունի։ Սորան կից է մի փոքրիկ շինութիւն, գաւթի նման, նոր կառուցուած։ Սա ունի չըրս սիւներ, որոնց վերայ ձգուած է մի քանի գերան չորչովներով ծածկուած։ Սիւների փայտեայ վերնախարիսխը զարգարուած է գեղեցիկ քանդուածքով, որը շնորհիւ արեգակային լաւ եղանակին, այդ օրը երեսում էր շատ պարզ և որը իր շքեղութեամբը հակապատկեր էր ներկայանում տեղ տեղ ծագուած և կոպիտ տաշուած սիւներին։ Գլխաւոր գուռը աբանոսի փայտից, զիրքով ոչ այնքան մեծ, մենաստանի հպարտութիւնն է։ Սյս գուռը ամբողջապէս ծածկուած է հրաշալի մանրանկարով։ Հայկական հիւսուածք, տասներկու առաքելոց պատկերները Յիսուս միջերնին, այլաբանական անասուններ, արձանագրութիւններ, մէկը միւսի հետ վերստին հիւսուելով կազմում են տարօրինակ զեղեցիկ մի նկար։ Հնագիտական տեսակէտից այս գուռը այնքան հե-

տաքրքրական է, որ ասում են, թէ Կոմն Ուվարովան առաջարկած է եղել 600 ռուբլի, սակայն վանահայրը չէ տուել և վաճառումը չէ կայացել: Լսելով այս գուան համբաւը, ես մտածեցի, որ վատ չէր լինի յիշատակութեան համար լուսանկարով հանել դորա մի օրինակն, ուստի և հրամայեցի կանչել յետ մնացած իմ բանուորներին, որոնք բերում էին մեր լուսանկարչական գործիքները:

— Նախ քան եկեղեցին նայելը, հանենք այս գուան նկարը, ասացի ես իմ ուղեկիցներին:

— Ինչու հանել վրդովուեց վարդապետը երկիւղալից մի հայեցք ձգելով մեր բազմութիւ խմբի վերայ. — Հանել չէ կարելի, դուք աւելի լաւն է նայեցէք միայն:

« Հանգստացնելով վրդովուած վարդապետին, մենք այնուամենայնիւ մեր ասածի վերայ պնդեցինք և վերջապէս հանեցինք, ինչպէս դուան նկարը, այնպէս և նորա քաջ պաշտպանի կենդանագիրը:

« Եկեղեցու ներսի զարդարանքը չափազանց աղքատ էր. բոլոր զարդերը կարմիր փայտից էին շինուած, ոսկէզօծի և մետաղի հետքն անդամ չէր երեսում այստեղ: Բարձրութեան վերայ կանգնած է սեղանը Մարիամ Աստուածածնու պատկերով և ժամասացութեան վերաբերեալ իրերով: Մօտիկ նայելով այս նկարին, տեսայ, որ սա ուսւական դործ է և ընդօրինակած է Սմոլինսկի Մայր Աստուածածնու պատկերից: Զէ կարելի չխոստովանուել որ այս պատկերը մի օտարութիւն է անում, ներկայանալով այստեղ մի ինչ որ օտար, այս ոչ ոռւս կահաւորութեան մէջ: Յետոյ այցելելով հայոց և ուրիշ շատ վանքեր, տաճարներ և եկեղեցիք, ես ամենուրեք էլ դիմեցի միևնուն՝ հայոց ազգային զգացման համար ախուր երեցիթը: Ամեն տեղ մինչեւ անդամ, անուանի էջմիածնում, ես ի դուր էի վինդուում հայկական արուեստագէտների նկարներ և պատկերներ... այդպիսիքը չկային, նոյս փոխարէն ես ամենուրեք տեսնում էի պատկերներ օտարականներից նկարուած. աւելի հները կաթոլիկական, իսկ նորագոյները ուսւական գործեր: Կաթուղիկէի խախուտ լինե-

լուց երկիւղ կրելով, ժամասացութիւնը այստեղ կատարվում է տարին միայն երկու կամ երեք անդամ: Ներքեռում կառուցուած տաճարը թէ բաւականին մեծ է և թէ աւելի հարուստ: Ծինուած լինելով երկու հարիւր տարի առաջ, նազեռ աւելի զուարթ է և, ինչպէս երեռում է, միտք էլ չունի քայքայուելու: Ներսից նա ոչ մի բանով չէ զանազանվում տասնեակաւոր այլպիսի հայկական եկեղեցիներից: Մէջտեղումը սեղան, աջուձախ քարեայ կամարների տակ գարձեալ սեղաններ, փորապրուած դուռ, կաթողիկէ, զարդարած դունաւոր փայտերի կտորներից, — աշա այն բոլորը, ինչ որ կարելի է զանել այս տաճարումք: Պատմական հնութիւնները պահպում են եկեղեցական զգեստաանը: Այնտեղ մեզ ցոյց տուին երկաթէ խաչ, որը շինած է առանց կրակի օդնութեան թալիքս առաքեալն այն կոնքից, որի մէջ Սուրբ Կոյսը լողացնում էր իւր աստուածային մանկանը. մի ուրիշ խաչ սպիտակաւուն կոլոր և թափանձիկ քարով, որի գոյնը իբր թէ, պատերազմի առաջ կարմրում է, իսկ ժանտախտի առաջ սեանում: Պողոս և Պետրոս առաքեալների մասունքները, պատեանի մէջ ամիսփած, ներկայացնում են մարդկային երկու պատկերներ, ծործորակները միացրած, որոնք շինուած են արծաթից, և շատ այսպիսի ուրիշ հնութիւններ:


«Եկեղեցին և զգեստատունը հաղորդակցվում են մութ նախասենեակներով, որոնց երկու կողմում էլ բաց է արուած գուներ, որոնք տանում են միայնակեացների և աքսորեալների խուցերը: Միաբանների խուցերը փոքրիկ սենեակներ են մանր պատուհաններով, բնակութեան համար նեղ և անյարմար: Իւրաքանչիւր մի խուցում ապրում են երկու հոգի, որպէս զի վարդապեանների խօսքով ձմեռը ցուրա չլինի, «վառելափայտը մեղանում թանկ է», ասում են նոքա: Կան խուցեր, որ աւելի ընդարձակ են, նոքա բաղկանում են երկու սենեակներից, ննջարանից և նախասենեակից, գոքա աւելի լոյս են և այդ պատճառաւ այնքան խօնաւ չեն և օդն էլ աւելի լաւ է:

«Աքսոր ուղարկուած հոգեորականների բնակութեան տեղին սարսափելի է: Փոքրիկ խուցիկ, հողի մէջ փորուած,

Հաղիւ նշմարելի պատուհանով, երկաթեայ վանդակով պատած, որի վերջումը բացվում է ձագարաձև մի անցք, որ ներքեից տանում է գէպի վեր, հողի մակերևոյթը: Խիստ զգալի է այստեղ խոնաւութիւնը և ցուրտ էլ է. ամբողջ խուցերում չկայ ոչ մի կարասիք, այլ գունվում է միայն մի ծալք ջրի սափորի համար: Այս սափորը, մի խուրձ ծղոտ և հացի մի պատառ կազմում են բանդարկեալի հարստութիւնը: Փայտեայ հաստ գուռը այստեղ նստած աքսորեալին բաժանում է արտաքին աշխարհից, որի հետ նա կարող է տեսակցել միայն մատակարարի միջոցաւ փոքրիկ պատուհանից: Այս մենաստանում խոկ որ պաս են պահում խօսքի բուն նշանակութեամբ և միջոց ունեն քաւելու ու մտածելու իրենց մեղքի վերայ: Վերակացուի խօսքով այժմ այս օժեանները գտտարկվում են և ծառայում են, որպէս Շիլիոնեան գղեակ կամ մռայլ բանդարեղիներ, Վենետիկյ գօմերի ասպարանքների ներքոյ գանուածների նման և ծառայում են հետաքրքիր ճանապարհորդների սյցելութեան համար: Այստեղ քաւելու համար ուղարկուող հողենորականք պարաւառը են ներկայ լինել բոլոր ժամերգութեանցը և առանց թոյլտվութեան չհեռանալ կղզուց, այնուշետև նոքա բոլորովին աղատ են:



ՈՒԽՏԱԿՈՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԲԵՆՅ ՍԵՒՆՆԵՑ ՎԵՆԵՐՈՒՄ.





Անի: Հոռոմոսի վանքը: Պ. Վրոյրի լուսանկարից, փորագրութիւն Բեմէի:

Ани. Храмъ св. Иоанна.


Съ фотографіі П. Вруйра гравироваль Беме.

Հրատ. «Արարա» հանդիսի:

Изд. лит.-худ. обозрънія „Араксъ“.



## ՄԵՆԱՍՏԱՆ ՀԱՌՈՄՈՒԽ



Բազրատունեանց իշխանութեան օրով նիրակայ բաղ-  
մաթիւ վանքերի մէջ խիստ անուանի էր չոռոմոս ա-  
նուանեալ մենաստանը, որը գտնուելով Անի մայրաքա-  
ղաքից քառորդ ժամ հեռաւորութեան վերայ դէպի արևելք-  
հիւսիս, բովանդակ քաղաքամօր ուխտից և երկրպագութեան  
հոչակաւոր տեղին էր հանդիսանում: Բացի պարզ ժողովը-  
դից, այս վանքերը յաճախում էին և խնամում մեծամեծ  
պարզեներով նաև Բազրատունիք, որոց նախնեաց հանգստա-  
րանի տեղին էր այս մենաստանը, ուր վանահայրերի առաջ-  
նորդութեան ներքյ կար բազմամարդ միաբանական ուխտ:

Չոռոմոսի մենաստանը հաստատուած է նիրակայ արե-  
մուեան մասում: Ախուրեան գետի ափում մի բարձր բլըի  
վերայ, որի շուրջովն անյնում է պատմական գետը: Հիւսի-  
սային կողմից, բլուրը հաւասար է այդտեղ սփոռուած դաշ-  
տին, որտեղից է և վանքի մուտքը, իսկ միւս կողմերից, նա  
շը ջապատուած է դարձեալ բարձրաբերձ բլուրներով, որոնց  
ստորոտները իջնում են դէպի անմատչելի ձորը, որտեղից որ  
անցնում է Ախուրեանը:

Չոռոմոսի մենաստանի հաստատութեան ճիշտ թուա-  
կանը յայտնի չէ, թէև այս մասին գրած են՝ Ասողիկ, Վար-  
դան, Կիրակոս և այլ պատմագիրները, բայց և այնպէս հիմ-  
նուելով մի քանի դէպերի վերայ, Չոռոմոսի հիմնադրու-  
թիւնը պէտք է եղած լինի ութերորդ դարում: 781 թուա-  
կանին, ինչպէս որ այդ երեսում է տաճարի մէջ հարաւային  
սիւնի վերնախարիսխի վերայ գտնուած հայկական ՄԽ թուա-  
կանից, թէև այդ որոշապէս շինութեանը չէ վերագրուած:  
Նասերը այս մենաստանի հիմնարկութիւնը սիսալմամբ վերա-  
գրած են այն կրօնաւորներին, որոնք տասներորդ դարում  
չըրրորդ Քաղկեդոնեան ժողովը ընդունելուն համար, յունաց  
Ռումանոս կայսրի հալածանքից փախուստ տալով հաստա-

տուել են այստեղ։ Այս կրօնաւորներին վերադրելու փաստը այն է, որ դոքա հռոռմոց կողմերից գալով կոչուեցին հռոռմեր, որից իբր և սոցա հաստատած վանքը կոչուեցաւ հռոռմոսի վանք։ Այն ինչ ըստ կիրակոս և Վարդան պատմիչների, Ռոմանոս կայսրից հալածուած կրօնաւորների այստեղ բնակութիւն հաստատելը արդէն ինքնին ապացուցանում է, որ նախ քան դոցա գալը, այստեղ պէտք է եղած լինէր մենաստան, որ նոքա ապաստանէին և այնուհետև հաստատուէին։ Սոցա այստեղ հաստատուելուց յետոյ, Ճիշտ է, որ և այս մենաստանը սկսուել է հռչակուել հռոռմոսի անունով բայց թէ սկզբումը, մինչ քան սոցա հաստատովիլը, ինչ անուն էր կրում այս վանքը, այդ յայտնի չէ։

Ասողիկ պատմագիրը հռոռմոսի վանաց շինութիւնը վերագրում է մեծաշուակ Կարմրջաձորոյ ուխտի առաջնորդ հայր Յովհաննէսին, որը նոյնպէս հալածուած էր արեւմտեան աշխարհից, Եղերացւոց գաւառից, Քաղկեդոննեան չորրորդ ժողովը չընդունելուն համար, որպէս և առէ, «իսկ ի գաւառին Շիրակայ հռոռմոսին վանք շինեցաւ 'ի Յովհաննիսէ, որ էր զարդարեալ յամենայն առաքինութիւնս... երես 159—160. Հանդ. Աբէլ արք. Միսիթարեանցն, այս տողերը մէջ բերելուց յետոյ, իր «Պատմութիւն հռոռմոսին» հետազոտութեան մէջ, որ արած է 1851 թուին, գրում է, «Չունելով քան զայս 'ի գիրս պատմազրաց ազգիս վկայութիւն հաւաստի 'ի ցոյց հաստատութեան ինդրոյս, հաւաստական հաճարչին միտ միւնայն լինել Յովհաննէս հայրն, որ առաջնորդն եկաց Կարմրջաձորոյ վանաց յԱրշարունիս, և որ յէլոյ պհամանին շինեցան 'ի Շիրակ...», այն ինչ մի քսան տողից յետոյ գրում է և այս՝ «Ի տեղեկութեանց աստի կարեմք հաւաստի յառաջ բերել եթէ 'ի կրօնաւորացն հալածելոց 'ի Ռոմանոսէ որք հաստատեցին բնակութիւն 'ի վանօրայս հայոց 'ի Շիրակ, էր և հայր Յովհաննէս, որ լիւ շնորհ իւշն յԱստղիայ՝ հռոռմոսին վանաց 'ի թուին հայոց ՅՂ (941 թ.), բայց կիրակոս ընդհանրապէս խօսի զշաստատութենէ վանացն 'ի ձեռն կրօնաւորացն. զի կոչումն իսկ վանացն յանուն նոցին

կրօնաւորաց հասելոց անդր, յուցանէ թէ յառաջագոյն իսկ կայր վանկքն և յատուկ զիմն կրէր անուն, յորոյ ապացուցութիւն աշա ունիմք յարձանագրութեանց նոյն իսկ Հոռոմոսին վանաց Աւածանակի յա-Եւրոպ դարբաց: Յետ որոյ, ասէ, «... 'ի վերայ հարաւային սեան առաջին դասու 'ի վերնախարս-խի այնորիկ ունի զթիւ հայկական ՄԽ (791), որ Եղանէ Աւ- շին-Եւանն, որով և Տաշնէ Պշին-Եւանն Հոռոմոսին վանաց հա- նել յա-Եւրոպ դար քրիստոնէութեան մերոյ, և հաւասարել ըստ բանի պատմագրաց թէ կրօնաւորքն հալածեալք 'ի Հո- ռոմոց յաւուրս Ռոմանոսի կայսեր 'ի Տայս, նորոգեցին զոյն և ոչ նորոգ կանգնեցին մենաստանն, ըստ որոյ և կոչեցաւ յանուն նոյա՝ Հոռոմոսին վանք»:

Մէջ բերելով հանդ. Մխիթարեանց եպիսկոպոսի այս տո- ղերն, որոնք արտագրեցինք նորա ուսումնասիրութիւնից այս խնդրոյն վերայ, մէնք կամեցանք նշանակել այս տեղ սոսկ նո- րա «Պատմութիւն Հոռոմոսին», վերաբերեալ զրքոյկի այս ակներև հակասութիւնը, որ մէլ խիստ զարմանալի թուաց, ըստ որում, եթէ ենթագրենք որ հայր Յովհաննէսը տասնե- րորդ գարբի վերջերում, երբ արեւմուտքում տեղի է ունեցել կրօնաւորների հալածումը, գալով Հայաստան, նախ Կարմրջա- ձորի վանքը և այնուհետեւ Եիրակ, ուր և ըստ Ասողկայ կտ- որուցել է Հոռոմոսի մենաստանը, որի մասին զրում է Մխի- թարեանց եպիսկոպոսը, թէ «Հաւանական համարիմք մէք միենոյն լինել Յովհաննէս հայրն...» Հոռոմոսի շինողն, ապա Բնաշիւս հասկանալ նոյն եպիսկոպոսի և հետեւեալ տողերը. «ապացուցութիւն աշա ունիմք յարձանագրութեանց նոյն իսկ Հոռոմոսին վանաց թիւ ժամանակի շինութեան յու- թերորդ գարու»: Այս հակասութիւնն աւելի աչքի է զար- նում և նորանով, որ եթէ թոյլ տանք ենթադրելու, թէ Հայր Յովհաննէսը մի քսան երեսուն տարով միւս հալածեալ կրօ- նաւորներից առաջ էր եկել Հայաստան և շինել Հոռոմոսի վանքը, այնուամենայնիւ նոյն Ասողկայ ցոյց տուած Հոռո- մոսի շինութեան 941 թուականը, շատ հեռու է սիւնի արձա- նագրութեան վերայ գտնուածից, հայկական ՄԽ (791 թուից),

Երբ որ իսկապէս Հիմնադրութիւնն է եղել յիշեալ վանաց, ուրեմն այս գէպքում երբէք տասներորդ դարու հայր Յովհաննէսը կարող չէր լինիլ Հիմնադիր վանաց, որ կառուցուած են ութերորդ դարում։ Ուստի այս բոլորից յետոյ մենք հակամիտ ենք ընդունելու Մխիթարեանցի վերջին ենթադրութիւնը հակառակ առաջնի, որ ըստ մեզ միանգամյն սխալ է, թէև Ասողիկն Յովհաննէսին է անուանում շինող վանաց, բայց մեզ համար աւելի հաւանական է թուում գէպքերի առաջ բերած եղրակացութիւնները, նոյն և արձանագրութեան թուականը, քան Ասողիկի Վնո՞ւ բար-ը, որ թերեւ Ասողիկ իսկական մաքով գործածած չլինէր այս գէպքում։

Հոռոմոսի վանաց մենաստանի մասին խօսելով, մենք՝ ի նկատի ունէինք նշյն մենաստանի Հիմնարկութիւնը երկու հնակառոյց եկեղեցիներով հանդերձ, այն ինչ այս պարսպապատ մենաստանի մէջ կայ և մի երրորդ եկեղեցի, Ս. Յովհաննէս անուամբ, որը կառուցած է Գաղիկ թագաւորի որդի Յովհաննէս Շահնշահը հայկական ՆԶէ (1038) թուականին։ Այժմ այս երեք եկեղեցիների մէջ մեծն ու հրաշակերտն է Ս. Յովհաննէսը, որի մէջ և ներկայումս կատարվում է ժամասացութիւնը։ Սա հցակապ շինութիւն է առանց սիւնի գմբէթաձև։ Այս եկեղեցու ժամատունը գրեթէ բոլորովին սիւնազարդ է. մէջտեղում ունի վեց կողմէ սիւն, հիւսիսային և հարաւային պատերի մօտ չորս չորս, ինչ պէս և արևելեան և արևեմուեան պատերի մօտ երկ-երկու բոլոր սիւներն էլ ունին քառանկիւնանի վերնախարիսխ և բոլորաձև ներքնախարիսխ տաշած սե քարերից։

Հոռոմոսի միւս երկու եկեղեցիները կարի հցակապ շինութիւններ են, մանաւանդ մեծն, որը կառուցուած է քառակուսի ձեռվ տասներկու սիւներու վերայ։ Սացա ժամատունները շինուած են անսիւն չորս կամարների վերայ։

---

Մինչև որ իշխում էին Բագրատունիք, այս մենաստանը Ճոխ ու բարգաւած վիճակ ունէր, սակայն երբ ընկնում է Բագրատունեաց դահը ու տեղւոյն հայ ժողովրդի ստուար

մի մասը գաղթում է այլ և այլ կողմեր ու տէրութիւններ, այն ժամանակ ամայանում է և այս անուանի մենաստանը. սակայն երբ 1174 թուին վրաց Գորգի թագաւորն առնում է Անին և վերակացու նշանակում այստեղ Խւանէ Աթարէկ Ուռքէլեանին նորա Զաքարիա եղրօր հետ միասին, նորից ինչ-պէս այս կողմերը այնպէս և հոռոմոսի մենաստանը, ազտ են ֆում Պարսից և այլ աղքերի ասպատակութիւններից մինչև 1239 թուականը: Եյս ժամանակամիջոցում նորից վերահաստատվում է վանահայրութիւնը և միաբանական ուժութը, նորից Անւոյ հայ ժողովուրդը դիմում է իր նախնեաց հռչակաւոր ուխտատեղին և նորանոր ընծայաբերութիւններ անում թէ մենաստանին և թէ միաբանաց և բարեպաշտական յիշատակներով յաւերժացնում իր անունը: Եկեղեցիների վերաց բազմաթիւ արձանազրութիւններն այս մենաստանի կենդանի պատմութիւնն են կազմում: Եյսպէս այդտեղի արձանազրութիւններից երեսում է, որ վրաց իշխանութեան ներքոյ, Զաքարիա Սպասալարի օրով, հոռոմոսի վանքը հայոց իշխանների կալուածն է եղել որը թերեւս առաջացած լինի նորանից, որ Անիի առման ժամանակ հայ իշխանները չկամենալով թողնել հոռոմոսի սրբավայրը պարսիկների կամ վրաց ձեռքին, գնած լինեն նոցանից: Բայց մի կարդ ուրիշ արձանազրութիւններ աւանդում են և այն, որ յետազայ ժամանակներում մենաստանի վեճակը խանգարուած էր և վանքի ու միաբանութեանն յատկացեալ կալուածները զործագրուել են չարացար կերպով անհաւատարիմ վանահայրերից իրենց օդանին: Եղել են միենայն ժամանակ դէպքեր, որ զանազան կրօնաւորներ կաշառակերութեամբ ձեռք կին բերում մենաստանի իշխան տէրերից վանահայրութիւնը և յետոյ վանքի արդիւնքը, որը ծախում և որը յափշտակում էին իրենց: Այնուհետեւ հայ իշխանները, որոնց կալուածն էր հոռոմոսի մենաստանը, տեսնելով այս երբեմն հռչակաւոր մենաստանի քայքայումը շնորհիւ անարժան հոգեորականաց, նզովիւք արգելում են ապագայում վանահայրց այս կործանարար արարմունքը և 1228 թ. (Ոչէ) հաստատում են այս առիթով

զիր յիշատակի այս բովանդակութեամբ. «Կամու ամենակալին Աստուծոյ այս մեր զիր յիշատակի է Հիճուկի Գրիգորոյ հասանայ և եղբայրորդեանց իմոց տերանց Սուրբ Ուխտիս վանացս Հոռոմոսի, որ հաստատեցաք արձանագրով... 'ի յարանց կամ 'ի կանանց ովկ կաշառով հայր դնէ, այնպիսին նզովս առնէ զյուլգայի Աստուածավաճառին... և հայր և այլ գործաւոր որք կաշառս տան յայտնի կամ ծածուկ... և հայր որ 'ի վանիցս հաց ծախէ կամ 'ի վանիցս 'ի բաց խորէ, նղովեալ եղիցի մահով և կենով...»:

Բայց ինչպէս երկում է միւս արձանագրութիւններից, անարժան կրօնաւորները ուշագրութիւն անգամ ցարձնելով այս նզովքի վերայ, մինչ այն ծայր աղքատութեանն էին հասցրած Հոռոմոսի մենաստանը, որ 'ի թուին հայոց ՈՂԵ (1246) հայոց իշխաններից մինը, Աշոտ, միաբանութեան թշուառ վիճակը տեսնելով, ընծայում է վանքին չորս եզ, երեք կով չորս էշ և երկու ձի:

Զաքարիայ սպասալարի մահից յետոյ, մանսաւանդ երբ Շիրակն անցնում է սպարսից ձեռքը, երբեմն մեծահռչակ Հոռոմոսի մենաստանը իսպառ աւերակ է գառնում մինչ 1685 թ., երբ Արարատեան աշխարհում խաղաղութիւն տիրելով, Դանիէլ վարդապետի առաջնորդութեամբ վերստին հաստատվում է տեղեղոյն միաբանութիւնը: Դանիէլ վարդապետը, մենաստանն աղքից և ապականութիւնից մաքրելով, նորոգում է Ս. Յովհաննէս եկեղեցին, իսկ 1785 թ. Շամբեցի Յովհաննէս վարդապետը նորոգում է զանկազատունը:

Ներկայ դարու սկզբում՝ 1800—1807 թ., Էջմիածնի խառնուշիոթ օրերում, Հոռոմոսի վանքում յաճախ ապաստանում էին Ս. Էջմիածնի միաբանները, մինչև որ երկրում տիրում էր խաղաղութիւն: Այս մասին պատմած են Աբէլ եպիսկոպոսին Էջմիածնու Տերունի միաբաններն, որոնք իրենց սարկաւագութեան օրերում փախուստ տալով Էջմիածնից, ապաստանած են եղել Հոռոմոսի մենաստանում:





# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՐԱՖՖԻԻ  
ՊԱՐՍՎԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ \*

Ա.  
ՈՒՍՈՒՄ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ճանապարհորդելով Պարսկաստանի քաղաքները՝ ամեն մի մշտի բակին կից զտնում ես մաղրասաներ (վարժարաններ): Եւ շատ մշտիներ իրանք ծառայում են որպէս մաղրասաններ: Դու տեսնում ես մի կողմում, իւր թթուած գէմքով՝ փոքրիկ խալիչայի վերայ ծալապատիկ նստած է մօլլան, վարժապետը: Նրա առջե դրուած է փոքրիկ գրքակալ, մի երկայն նախշուն թանաքաման իր եղեգնեայ գրիչներով, և մօտին դրած են մի քանի գալար ճիպոտ, խեղճ աշակերտների հոգեհանր:

Մաղրասէի յատակի ամբողջ մակերեսոյթը ծածկուած է փոքրիկ և մեծ աշակերտներով, խառն ի խուռն նստառած, որը մերկ գետնի վերայ, որը վախաթի վերայ, իսկ ոմանք, որ հարուստ են՝ իւրեանց տանից բերած փոքրիկ կապերտի վերայ:

Աշակերտներից ամեն մինը իւր առջե դրած ունի գիրը ծնկների վերայ, զլուխը կռացրել է դէսլի ընթերցարանը

\* ) Խմբագրութիւնս յոյս ունի բաւականութիւն պատճառել իր ընթերցողներին՝ լցոս ընծայելով «Արաքսում» Հանդուցեալ Ռաֆֆիի անտիպ զրուածքներից: Եյս անդամ տալում ենք մի քանի կտոր Պարսկաստանի կեանքից:

Ա երեւ դրած վերնագիրը բնագրում չկայ:

և կարգում է բարձրաձայն, անդադար զլուխը դէպի ցած շարժելով։ Աշակերտների աղաղակը միախառնուելով հնչեցնում են խիստ անախորժ և աններդաշնակ ձոյն։

Մի այդպիսի մաղբասեի այցելութեան էի գնացել ես ինձ շատ զարմացրեց աշակերտների անդադար շարժումք ես մօտեցայ մօլլային և հարցրի դրա պատճառը։ Մօլլան խիստ զարմացած կերպով պատասխանեց.

—Աշակերտները կարգում են սուրբ զրքեր և Աստծու անունն ամեն անգամ արտասանելիս նրանք պարտաւոր են երկրպաղանել։

Ես հասկացայ որ աշակերտների կարգացածը կամ դօրան պիտի լինէր և կամ այլ կրօնական զրքեր, և ասացի մօլլային։

Դա շատ վեասակար է աշակերտների առողջութեանը, որովհետեւ այդպիս չոքած, մէջքը կռացրած դրութեան մէջ, զլիսի անդադար դէպի ցած շարժումք, կպատճառէ արեան մակրնթացութիւն դէպի ուղիղը, երեխայի աչքերը կլցուին արիւնով և կպատճառեն զլիսի պտոյտ և աչքերի ցաւ։ Այլ և մէջքը միշտ այդպիս կռացած պահելով մէջքի ողնաշարն ևս ծոռում է իւր ուղղութիւնից, այնպէս որ երեխայքը ոչ միայն կիննին սատպատող, այլ և կուրծքի ոսկորները և մըկնակները ձնշելով սիրաը և թոքերը՝ նրանք կստանան կուրծքի և սրտի ցաւ։

Մի հեգնական ծիծաղ շարժեց իսլամի մանկավարժի թթուած ռեխը, և նա պատասխանեց ինքնաբաւական համոզմունքով։

—Սուրբ զրքի ընթերցանութիւնը ոչ միայն այդպիսի ցաւեր չէ պատճառում, այլ ընդհակառակն նա փարատում է բոլոր ցաւերը, ով որ կարգում էր նրան։

—Այդ մօլլուանդութիւնն է, կտրեցի ես մօլլայի խօսքը. ես բժիշկն եմ, ես ոչ մի երկրում չեմ անսած այնքան աչքի ցաւ, կուրծքի ցաւ, մէջքի ցաւ, որպէս Պարսկաստանում։ Այդ բոլորի մ.ծ մասը երեխան ստանում է, իմ կարծիքով՝ մադրասէներում։ Այլ և այն բաղմաթիւ դեմորոյի (մայասիլի)

և նիկրիսի Հիւանդութիւնները նոյնպէս մազրասէների ծնունդ է, երեխանների գետնի վերայ ծալապատիկ նստելուց:

Այդ բոլորը մարդկանց մեզքերիցն է, ասաց մօլան, ոռովհետեւ նրանք չեն կարգում Աստուծոյ զրքերը:

Ես նկատելով, որ մօլայի համոզմունքը աւելի պինդ էր, քան թէ նրա առաջ զրած քարը, (որի վերայ նոյն բռպէին նա որոնում էր իւր. . . .) թողեցի այդ խօսակցութիւնը, և Հետաքրքրուեցայ տեղեկանալ նրա մանկավարժական մէժողին:

Ես նկատեցի, որ մանկավարժութիւնը պարսիկների մէջ գտանվում էր ամենաթշուառ զրութեան մէջ. ոչ միայն գասատութեան համար, այլ նոյն իսկ ընթերցանութեան համար պարսից զրերն անմտաշելի են:

Պարսիկները այժմ սեպհուկան տառեր չունին, նրանք գործ են ածում արտբական տառեր, որի թէ զրութեան ձեւ և թէ կարգալու գժուարութիւնը, ամբողջ տարիներով մաշում է խեղճ երեխաններին, մինչև որ նրանք կարողանում են հասարակ ընթերցանութիւնը սովորել:

Ես տեսայ մի քանի երեխաններ, որ չըս տարի մազրամէի հասիրների վրայ չքած, սրբազն տառերին երկսպազութիւն էին տալիս և տակաւին հասարակ ընթերցանութիւնը չդիտէին:

Այլբենարանը (ալիֆ-բէյլ) վերջացնելուց յետոյ իսկոյն երեխայի ձեռքը տալիս են զօրանը, որի ձայնաւորի նշանները (զարար, զեր, գուլ և այլն) զրուած լինելով, իբր թէ, Հեշտանում է ընթերցանութիւնը: Դորանի վերայ, որի միտքը ինքն մօլան չէ կարող հասկանալ, երեխան տանիջվումէ ամբողջ տարիներ, մինչև նա փոքր ի շատէ ընթերցանութեան ընտելանում է. ապա տալիս են նրան պարսկերէն զրքեր, (մէծ մասամբ հաղիսների, այսինքն կրօնական աւանդութիւնների զրքեր), որոնք բոլորն զրուած են առանց ձայնաւոր նշանների: Երեխան մի քանի տարի չարչարուելով հաղեւ ուսանում է ընթերցանութիւնը այն էլ զրութեան մի քանի ձեռքով միայն; որովհետեւ զրութեան ձեւին

այնքան շատ են, որ ամբողջ կեանկում պէտք է սովորել \*):

Մի խօսքով ամբողջ տասն տարում երեխան հազիւ թէ կարողանայ սովորել դրութեան մի քանի ձևերն: Սա Պարսկաստանի մէջ լուսաւորութիւն տարածելու զիսաւոր արգելքներից մինն է:

Այդ հասկանալի է, որ արարական գրութեան սյդպիսի կրծատեալ ձեն առաջ է եկել գրութեան նիւթերի չը լինելուց: Նորանի այէթներն առաջին անգամ գրուեցան ոչխարի թիակների վերայ: Իսկ թղթի արուեստադործուելուց յետոյ պարսիկները դարձեալ չեն մտածում փոխել գրութեան ձևերըն, կամ թէ ընդունել մի այլ ազգի այբուբենը: Այդ մասին շատ յարմար է հայոց այբուբէնը, որ բոլորովին կարող է համապատասխանել պարսից և թուրքերի լեզուի հընչումներին:

Պարսից գրութեան ձևերը ոչ միայն գժուարացնում են ընթերցանութիւնը այլ և տպագրութիւնը: Մինչև ցայժմ՝ Պարսկաստանը չունի գեռ ոչ մի տպարան և նրանք վարվում են ձեռագիր գրքերով: Վիմագրութիւնը գեռ նոր է մասել նրանց մէջ: Զը նայելով որ պարսից գրականութիւնը իւր հարստութեամբ գերազանցում է շատ արեելան և առհասրակ ասիսկան ազգերի գրականութիւնից:

Ամբողջ Պարսկաստանի մագրասէները ժողովրդական են, մօլաների հսկողութեան տակ: Եւ այս մագրասէներից ոչ մինում չէք կարող գտնել, որ ուսուցանէին բայց պարսկերէնից օտարազդի լեզուներ: Արաբերէն սովորում են միմեայն ընթերցանութիւնը՝ զորանը կարդալու համար, բայց ոչ լեզուն: Արարական լեզուն սովորում են մասնաւորապէս նրանք, որոնք պատրաստվում են մօլայ լինել:

Կառավարութիւնը իւր կողմից չունի հիմնած դեռ ոչ մի ուսումնարան: Ինձ ասացին, թէ Շահը քանի տարի առաջ թաւրիզում հիմնեց ուսումնարան, որ կոչվում է մուալիմսա-

\*.) Գրութեան նշանաւոր ձևերն են,—խաթթի զորանի, նասթալիս, շըքասասայ, դիւանի, խաթթի քուֆի:

նայ, և մի ուսումնարան Թէհրանում որ կոչվում է եարբ-  
ֆընշան: Նա հրատիրեց եւրոպացի ուսուցիչներ, եւրոպական  
լեզուներ և զիտութիւններ ուսուցանելու: Այդ ուսումնա-  
րաններում ընդունվում էին աշակերտներ և օտար ազգերից:

Բայց մուալիմսանաները տեսում են մի քանի տարի  
միայն: Մօլլաների մոլի նախանձը խափանում է այդ օգտա-  
ւէտ հիմնարկութիւնները: Մուշտայիղի մինը (գլխաւոր մօլ-  
լոյ) բարձրանում է ամբիոնի վերայ և ժողովրդին տալիս է  
մի այսպիսի քարոզ: «Ճեր որդիքը այդ մուալիմսանաների  
մէջ ուսանելով ֆրանկների լեզուներ և զիտութիւն՝ հոգւով  
և մորով կինին ֆրանկներ և կորկուեն խլամի սրբազնն  
լեզուից, արաբերէնից: Եւ նրանք մեռանելու ժամանակ երբ  
նենքիր մունքիրը \*) կդան նրանցից հարցնելու նրանց ազդը  
և կրօնքը՝ նրանք չգիտենալով արաբերէնը՝ կսկսեն ֆրանզի  
լեզուով պատասխանել: Եւ նենքիր մունքիրը նրանց ֆրանզ-  
ներ կարծելով, կը տանեն գժոխքը, որպէս անհաւատներ»:

Այդ մի քանի խօսքերը բաւական էին յիմարացնելու կոյր  
ժողովուրդը, որ նրանք այլ ևս չխամենան իւրեանց որդիքը  
մուալիմսանայ ուղարկել: Դժբախտաբար սոյն միջոցներում  
Թաւրիզի մուալիմսանայի տան շինուածքի մի կյտը քանդ-  
վում է: Այդ գէսքը վերին զօրութեան վերսուբերելով՝ տա-  
րածվում է լուր, թէ Մուհամէզը չէ կամենում խլամի մէջ  
ֆրանզների լեզու և զիտութիւն մտցնել: Եւ մուալիմսա-  
նաները թէ Թաւրիզում և թէ Թէհրանում արդելվում են:

Պարսից զրականութիւնը յատկանում է իւր բանաս-  
տեղծական ողւով. կարծես գործնական և իրողական մտա-  
ծութիւնը երբէք չէ սովորել այդ ազգը: Արբեցած զէյլանի  
ծխով իւր ուղեղը բորբոքած աֆիօնի թմրութեամբ, ցօղուն

\*) Նենքիր մունքիրը՝ այն հրեշտակներն են, որ գալիս  
են մեռանող մահմետականի մօտ, երբ նրա հոգին տակաւին  
չէ բաժանուած մարմինց: Որովհետեւ երկնքի լեզուն արաբե-  
րէն է՝ նրանք ևս նոյն լեզուով հարցնում են մեռանողից  
քալմէի շահագաթը, այսինքն նրա հանգանակ հաւատոյն և  
մեռանողը պիտի պատասխանե՝ նոյն լեզուով:

շաղրուանի մօտ, ողկուզիների հովանիների տակ, միշտ իւր կիսամերկ հարեմների քնքշութեամբ հրապուրուած պարսիկը, արդարեւ չէր կարող գործնական կերպով մտածող մարդ լինել, նա բնականապէս լինում է երեւակայող: Այդ պատճառաւ պարսիկների բանաստեղծութիւնը առաւել երեւակայական է, քան թէ բնական: Բնութիւնը զգալի չէ պարսիկներին, ոչ միայն բանաստեղծութեան մէջ, այլ և նկարչութեան գեղարուեսից մէջ:

Հաֆիսի երգերը հնչում են աւելի քաղցր քան թէ Շիրազի գեղեցկուհիների քամահը, բայց նրա հերոսուհիները ապրում են աւելի նրա զլիում, կամ հրձվում են արմաւենի ծառերի տակ ճէննաթի հուրիների հետ:

Ֆիրդովսու հրաշալի գործը, Շահնամէն, այդ անմահ արձանագրութիւնը ժողովրդական վիպասանութեան, թէ և նո չունի Վալտէր-Սկօտի պատմական ճշառութիւնները, բայց նրա վիպասանական ճարտարութիւնը, գերազանցվում է Հոմերոսի Եղիականից: Ֆիրդովսու հերոսները երեսում են հրսկայական զօրութիւնով, նրանք ներկայացնում են տիտանական ուժեր, հերքուեաներ, աջէմի փաշլավաններ. իսկ մարդու հոգեկան յատկութիւնները, բարեայ աղնիւ մնապատկերներով պահպանուած են նրանց մէջ ամենայն ճշառութեամբ:

Մասնաւի հեղինակը իւր երգերի մէջ անձնատուր է լինում առաւելապէս սովիեստականութեան. դա միակ գիրքն է, որ իւր սուր, միստիկական ոճով փշում է իսլամի կրօնական մոլեւանդութիւնները: Մասնաւին թէ և չունի Վօլտէրի սիստեման իւր փիլիսոփայութեան մէջ, այսուամենայնիւ նա կարող է առաջին աղաս հեղինակութիւնը համարուիլ ընդդէմ իսլամի սնութիազաշտութեանց:

Մասդիի առակները առաջին աեղն են բռնում բարոյապատում զրուածքների մէջ: Նրա առարկաները չունին, ոչ եղովասի, ոչ կոիլովի և ոչ Լաֆօնաէնի առակների ձևերը—անշունչ անկեղու առարկաների խօսակցութեամբ գուրս բերել բարոյականութիւն: Մասդիի առակները առնուած են կենդանի տիտերից, այդ պատճառաւ նրանց աւելի յարմար է:

փոքրիկ վէպիկներ կոչել, քան թէ առակներ: Նրա Գուլիստանը և Բօստանը կարող են համարուիլ արեւելեան կեանքի Ճիշտ պատկերները:

Ղազանիի, աւելի նոր բանաստեղծի երգերը, նշանաւոր են իւրեանց երգիծական և պարսաւաբանական ոճով, թէ նրանք զուրկ են չենի նուրբ սրախօսութիւններից:

Պարսկաստանը չունի թատրոններ, և բեմական արշեալ նրանց մէջ գեռ անծանօթ է: Խմանների նահատակութիւնը մուհարլէմի ներկայացումների մէջ, փոխարինում են բեմական եղերերգութիւնը և օյխապների ծիծաղաշարժ օյխները (ներկայացումները) հարսանիքներում՝ փոխարինում են կատակերգական պիեսները:

Պատմական գրուածքները, ըստ մեծի մասին կրում են իւրեանց վերայ սլարսից հաճոյամնը բառառուկի կեղծեալ կնիքը: Նրանց զրոյները եղել են կամ թագաւորներին ժամանակակից մարդիկ, և կամ նրանց խիստ մերձաւորը: Այդ պատճառաւ նրանք աւելի գովասնական են, քան թէ պահպանում են պատմական ճշտութիւններ: Որպիս Միրզայ Մուստաֆայ-խանը, Նազիր-Շահի քարառւղարը, զրեց նրա պատմութիւնը Թարիխ-Նազիր անունով:

Գիտնական և արշեստական զրքերը այնքան աննշան են, որքան որ յետ է մնացել Պարսկաստանը գիտութեան և արշեատի մէջ. գրանց փոխարէն պարսիկները խիստ հարուստ են արձակ և ոտանաւոր վիպասանական և ոօմնանական բանաստեղծութիւններով, որպիսի են Խամսէի-Նիզամին, Ղազրաման նամէ և այլն:

Տիպերը այդ վիպասանութիւնների ստեղծուած են զրոյների երեակայութիւնից, քան թէ բնութիւնից. Նրանք որքան ծայրայեղ հրապուրիչ են, այնքան էլ մտացածին առասպեկտական են:

Պարսից զրականութեան մէջ առաջին դերն են խաղում՝ Հազիսների զրքերը: Դրանք մի տեսակ ժողովածուներ են կրօնական աւանդութիւնների, որոնք համապատասխանում են քրիստոնեանների «վարք սրբոց» կոչեցեալ զրքերին, թէ կ

Հասիսները իւրեանց առասպելներով դերազանցում են բոլոր դիւցաբանական ասացուածներից, թէ յունական և թէ հռովմէական:

Եյդ հատիսների մէջ գուք կը տեսնէք ուջիբնիչներ, որոնք, ովկիանոսի մէջ կանգնած, կէտ ձուկը հանում են ջրից, ձեռքով խորովում են արեգակի վերայ և ուտում; գուք կը տեսնէք մալայքաներ, ֆրուշտաներ (հրեշտակներ), որոնք երկնքով սլանալու ժամանակ, նրանց մի թեքը սահում է գետնից: Դուք կը տեսնէք հուրիներ, որոնց գէմքը եօթանասուն արեգակի փայլողութիւն ունի, որոնց զլուխը արեելը, իսկ ոտքերը հասնում են արևմուտք...

Տաղիսներն զլիաւոր մանկավարժական գրքերն են մաղրասանների մէջ, որոնք այնքան խորին կերպով տպաւորում են երեխայի թարմ ուղեղի մէջ մոլեուանդ սնահաւատութիւնը, որ պարսիկը դառնում է երեակայական մարդ, և նա իւր կեանքում ընդունակ չէ աղատ մտածելու:

Զը նայելով որ Ատրապատականը մեծ մասամբ ընակեցրած է զանազան թուրքի յեղերով, որոնք խօսում են նոյն ազգի լեզուով, բայց նրանք զուրկ են զրականութիւնից իւրեանց ազգային լեզուաւ: Թուրքերը զրում են և կտրդում են պարսից լեզուով: Միակ բանաստեղծը նաբութին երգեց իւր ողելից տողերը հայրենի լեզուով: Թէև նա իւր երգերի մէջ հետեւած է Հաֆիսին:



Բ.

Պ Ա Ր Ս Կ Ա Կ Ա Ն Ա Ղ Ա Ն Դ Ն Ե Ր

Մարդ այն ժամանակ միայն սկսում է մտածել իւր ազատութեան վերայ՝ երբ նրա ստրկութեան շղթաների ծանրութիւնը աւելի և աւելի զդալի է դառնում։ Մարդ այն ժամանակ միայն սկսում է ազատ կերպով մտածել՝ երբ նրա համոզունքները, կարծիքները, բռնաբարվում են։

Ամեն երկում, ամեն ազգի մէջ, ուր չկայ կրօնքի և խղճի ազատութիւն՝ աղանդները և հերձուածները յայտնվում են աւելի շատ։ Ասածիս ապացոյց է Պարսկաստանը։ Եյստեղ Մուհամեդի վարդապետութիւնը պահպանվում է թէ հոգեոր և թէ քաղաքական կառավարութիւնից ծայրահեղ խօսութեամբ։ Մուհամեդի վարդապետութեան և նրա շարիաթի գէմ որ և իցէ թերահաւատութիւն յայտնողը համարվում է քետֆար (անհաւատ), և գատապարտվում է քարկոծ լինելու։

Եյսուամենայնիւ Պարսկաստանի մէջ աղանդները խիստ շատ են և նրանք աւելանում են օրէցօր։

Երեսուն տարի առաջ Շէյխ Ահմուտ Բաշրէյնցին, այդ համարձակ Լուսերը շիփեան մուսուլմանների, քարոզեց մի այսպիսի վարդապետութիւն, թէ կրօնքը չէ կարող հասնել իւր բարոյական նպատակին, երբ նա պայմանաւորվում է արարաքին ծիսապաշտութիւններով և արարողութիւններով միայն։ Կրօնքը պիտի աղդէ մարդու հոգու և խղճի վերայ։ Նա պիտի սրբէ մարդու սիրար՝ լինելու բարի գէպի Աստուած և սիրով գէպի նրա արարածները։

Եյդ ասացուածի հիման վերայ Շէյխ-Ահմուտ հերքեց շարիաթի օրէնքները, որոնք նիւթապաշտական արարողութիւններով յուսագրում էին հաւատացողներին գտանել հոգու փրկութիւնը։

Նա ասաց, որ հոգու փրկութիւնը կարելի է դանել միմայն Աստուծոյ հետ հաշտուելով։ Եւ Աստուծոյ հետ հաշտուելու

Համար այս և այն իմամը, այս և այն խալեֆան չեն կարող միջնորդ լինել, որովհետեւ նրանք մեզ նման կրքերի տէր մարդիկ են: Միջնորդը Աստուծոյ և մարդկութեան մէջ պիտի լինի մի անձն, որ ծագում էր Աստուծոյ գոյութիւնից:

Սյդ միջնորդը ճանաչեց նա Աքութայիկի որդի Ալիխն, տալով նրան վալեուլսհ (Աստուծոյ գեսպան) անունը:

Շէյխ-Ահմուդը չէր ուրանում Ալիխ մէջ մարդկութիւնը, և չէր ճանաչում նրան իբրև Աստուծոյ անձներից մինը, այլ նա դաւանեց նրան իբրև մի հայելի, որ ցոլացնում էր իւր մէջ աստուածութիւնը իւր ամբողջ բովանդակութեամբ:

Շիփեան աշխարհի մէջ մինչեւ այն օր Ալիխ մասին երդուած բազմաթիւ բանաստեղծական գովասանութիւնքը նրա գործած դերանշրաշ սքանչելիքների մասին, որոնք այնքան խորին կերպով տպաւարուած էին ժողովրդի սրահի մէջ՝ առիթ տուին նրան համակրել Շէյխ-Ահմուդի նոր վարդապետութեանը և նա շուտով ունեցաւ հետեւողներ և կազմեց իւրեան մի կուսակցութիւն, որ կոչուեցաւ նրա անունով Շէյխի:

Շէյխիքը այնքան բազմացան, որ համարեա կէս կիսեցին Շիփների մի մասը և կազմեցին, եթէ կարելի է ասած, մի առանձին եկեղեցի և ունեցան առանձին Մուշտակիդ:

Մնացորդ շեիդները, այսինքն շարիաթի կանոնների հին կուսակիցները, շէյխներից որոշուելու համար, կոչուեցան հաւաշարութիւն, որ նշանակում է շարիաթին հնագանդողներ:

Շէյխին, համեմատելով մութաշառակի հետ, ներկայանում է ազատ բողոքականութիւն ընդգէմ մոլեռանդ կաթոլիկութեան, վերջինը որքան կաշկանդուած է շարիաթի նախապաշտունքներով այնքան էլ ազատ է առաջինը իւր հայեցքների մէջ:

Մութաշառիները ընդգունեցին Շէյխ-Ահմուդի վարդապետութիւնը հիմնուելով՝ այն աւանդութեան վերայ, թէ իսլամի կրօնական վերանորոգութիւնը չէ կարող լինել հասարակ մարդու ձեռքով այլ մի անձի ձեռքով, որ շառաւիդում էր Մարգարէի արիւնից, որին Աստուած նախասահմանել է գրա համար, և որին նա պիտի աշխարհն յուղարկէ:

Այդ անձը, վերջին իմամը — Մէհղին էր, որ և կոչվում է Սահարի Զաման (ժամանակների տէրը), որի գալստեանը շխաները՝ սպասում են այնպիսի մի յուսով, որպէս Խորայէլլ սպասում է Մեսսիային:

Նիմրի և Եազիդի սրից տղատուելով՝ այդ աներեցյթացած իմամը, Մէհղին, թողեց խիստ հրապուրողական հաւատալիքներ իւր մասին, թէ նա մի օր պիտի յայտնուի, և կը բերէ իւր հետ զորանի այն երեք զլուխները, որ գողացաւ Օսմանը, և կը լրացնէ Աստուծոյ խօսքը, կը բայցատրէ զորանի մինչև այն օր անմեխնելի մնացած այաթների խորհուրդը, և կվերանորոգէ Խոլամը, կը տարածէ նրան բոլոր աշխարհի վերայ, և կթագաւորէ մինչև յաւիտեան \*):

Ամեն մի երեցյթ, որի բնական պատճառները մնում էին Նիային անբացատրելի՝ գուշակել էին տալիս նրան Խմամի յայտնութեան մերձակայ լինելը: Այդպիսի երեցյթները շատ անգամ ձգում են Նիային ծիծաղելի մնահաւատատութեան մէջ. օրինակի Համար, քսան տարի առաջ, Թաւրիդ քաղաքում, Սահարի-Զամանի անունով շինուած մէշիդի դրան մէյլանում, մասվաճառը եղը մորթելու միջոցին, յանկարծ խեղճ անսասունը դուրս է պղծնում, փախչում է և ուղղակի մանում է Սահարի-Զամանի մէշիդը, որ շատ մօտ է լինում սպանդարանին:

Որովհետեւ մէշիդը ծառայում էր այդ քաղաքում որպէս աղաստանարան (բաստ), ուր ամեն մի պատուղարուած յանցաւորին չէր կարելի ստիպողական ձեռքով դուրս հանել այդ պատճառով և մասվաճառը չէ Համարձակվում դուրս բերել իւր զոհը: Միայն նա տարածում է ժողովրդի մէջ շատ զարմանալի խօսքեր, թէ երբ նա կամենում եր կարդալու ժամանակ կատարվում են մարդու բոլոր ցանկութիւնները, զօր եթէ նա ասելու լինէր սարերին ուկի դաւնալու, նոքա ոսկի կդառնային:

\*.) Պորանի այդ երեք գլուխների մէջ, շատ զարմանալի բաների հետ գրուած է և այն այէթը, որի մէջ նշանակուել է Խսմիազամը, այսինքն Աստուծոյ խկական անունը, որի կարդալու ժամանակ կատարվում են մարդու բոլոր ցանկութիւնները, զօր եթէ նա ասելու լինէր սարերին ուկի դաւնալու, նոքա ոսկի կդառնային:

և նոյն բոպէին եղան ոտնակապերը բացուեցան և նա վաղեց դէպի մէջդը:

Այդ լուրը տարածվում է բոլոր քաղաքում; և Ստհարի-Զամանի մէջդում ապաստանած եղը կատարելապէս վայելում է եգիպտական ապիսի փառքը: Նրա ոտքերի տակ տարածվում են թանկաղին խոլիչաներ և կերակրում են քիշմիշով ու արմաւով: Նրա ամեն մի մաղերը բաժանվում են որպէս սրբութիւն, և ամեն կողմից դիմում են դէպի նացաւաղարների ամբոխը:

Այդպիսի սնապաշտական դէպքերը պատահում էին շիդեան աշխարհում խիստ շտա, մինչեւ 18—\*) թուին յայտնվում է Սէիդ-Ալ-Մուհամէդ Շիրազին, մինը գլխաւոր աշակերտներից Շէյխ-Ահմուդ բաշրէյնցու:

Նա յայտնեց իւր մասին, թէ ինքն էր վերջին իմամը-Մէհմին, որը պիտի աշխարհ դար, և կոչեց իւրեան բար (գոււոն) այն մտքով որ այդ գոնով միայն կարելի էր մտնել Ամիրալ-Մօմի (Ալիի) վելայիթը, այսինքն նրա արքայութեան մէջ:

Բարը ներկայացրեց իւրեան իրեւ աշխարհային տեղապահ Ալիի, Աստծոյ միջնորդի, որի մասին Շէյխ-Ահմուդը ոչ մի անձն չէր ցոյց տուել:

Բարը ունեցաւ շատ հետեւողներ, որոնք կոչուեցան բարի: Խիստ կարծ ժամանակում նրա ուսմունքը տարածուեցաւ Պարսկաստանի ամեն մի անկիւնում, առաւելապէս Ղաղփնում, Զանդանում և Թէհրանում:

Բարիութիւնը, թէև երեցաւ կրօնական կերպարանքով, հիմուած Շիաների փայլուն աւանդութիւնների վերաց Ալիի և Մէհմիի մասին, բայց նրա գաղտնի նպատակը և ներքին կաղմակերպութիւնը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ կօմունայի համապատկերը:

Բարը քարոզում էր աղատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն: Նա հերքում էր սեպհականութեան իրաւունք

\*) Ինագրում լրացրած չէ թուականը: Խմբ:

ունենալ: Նա զինաւորվում էր Խոլամի հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնների դէմ:

Մի այդպիսի վարդապետութիւն, որքան համակրութիւն ստացաւ ստրուկ, յաղթահարուած ժողովրդի մէջ՝ այնքան էլ գրգռեց Շահի և մօլլաների բարկութիւնը, որոնք շուտով բարձրացրին բարիների դէմ ամենասարսափելի հալածանքներ: Երեւցան նահատակներ և զոհերի թիւը օր ըստ օրէ սկսեց բազմանալ \*): Զանգանի կոտորածի բազմաթիւ նահատակները իւրեանց արիւնով կնքեցին նորածին վարդապետութիւնը:

Ինքը բարը բռնվում է, և առ ժամանակ Սալմաստայ Զահրիի բերդումը պահուելով, Թաւրիզում դատի է կանչվում զլսաւոր մօլլայներից կազմուած մի ժողովքի մէջ: Եէյխիների մուշապյիդը չէ ներկայանում ժողովքին: Եւ մութաշարիֆը դատապարտում է նրան մահուան պատժի: Եւ բար նոյն քաղաքի Ալաղափուի բակումը, իւր երկու աշակերտների հետ հրացանազարկ է լինում:

Մինչեւ վերջին շունը նա մնում է հաստատ իւր համոզունքի վերայ: Նա մեռնում է փառաւոր մահուամբ: բայց բարիութիւնը մնում է կենդանի նրա հետեղների մէջ:

Բայցի բարիութիւնը, Պարսկաստանում շատ է և այլ աղանդների թիւը: Բայց դրանց հետեղները այնքան ծածուկ են պահում իւրեանց վարդապետութեան խսկական խորհուրդը, որ շատ գժուար է նրանց մասին որոշակի տեղեկութիւն ստանալ: Պարսկաց դրականութիւնը անզամ չէ տալիս նրանց մասին պարզ տեղեկութիւններ: Եղած զրքերը դրուած են, կամ շափազանց կրքերով, և կամ աւելորդ զըրպարատութիւններով:

\*.) Տարիների նահատակների մէջ նշանաւոր եղան Վալլայ Վամաս Վլի Զանգանցին, որ իւր կուսակիցներով պատերազմեց Շահի զօրքերի հետ, Լշահեայ-խանը, Երեւելի կալրւածատէրը որին թէհրանում սպանեցին կենդանւոյն նրա մարմնի մեջ վառած պատրոյդներ անցուցանելով: Լանանց մէջ նշանաւոր եղաւ Պուրլաթուլ էյն (աչքի լոյս) կոչուած վկայուհին, Տարիի սիրելին:

Մի քանի աեղեկութիւններ, որոնք ես կարողացայ հաւաքել զանազան ազանդաւորների ներկայացուցիչներից՝ հազորդում եմ քեզ թէև նրանք չեն այնքան լիտկատար:

Պարսկատանի բարձր իմաստութիւն ունեցող գասի մէջ տարածուած է Սո-ֆի կոչուած ազանդը: Դա մի տեսակ փիլխոփացութիւն է, որ յիշեցնում է Յունաստանի սովիսատութիւնները: Սուփիները հերքում են կրօնական վարդապետութիւնները, համարելով նրանց մարդու անհատական զարգացմանը վնասակար: Նրանք ներողալիտ են գեղի ամենայն աղջ, համարելով բոլորին իւրեանց եղբայրներ:

Սուփիները հաւատում են մի գերազյն էակի, որ տարածուած է բոլոր տռարկաների մէջ, թէ երկնային, և թէ երկրային: Նա իւր ստեղծագործող զօրութեամբ կեանք է տալիս նրանց, ձևափոխում է և կառավարում է: Ամենաըշխն ծաղկից սկսեալ մինչև փոքրիկ զեռունը, կրում են իւրեանց մէջ նրա էութիւնիւնից: Եցդ պատճառաւ տիեզերքի մէջ ոչինչ բան պիզծ չէ: Եյլ ամեն մի երեսյթ և ուժայն գերազյն էակի յայտնութիւնն է:

Մարդը, իբրև ստեղծագործուած տռարկաների մի մասը, նոյնպէս ունի իւր մէջ նոյն զերազյն էութիւնից: Եւ մարդու բոլոր գործունէութիւնը պայմանաւորվում են նոյն էութեան զօրութեամբը: Ուրեմն նա պիտի լինի ազատ և ոչինչ օրէնքներ չպիտի սահմանափակեն նրա ձգտութիւնները:

Դահները, որ նշանակում է ժամանակականք Սուփիներին, բոլորովին հակառակ փիլխոփացութիւն ունին: Նրանք չեն հաւատում ոչինչ զերազյն էակի և համարում են տիեզերքն ժամանակի ծնունդ,—տարերքի փիլխական և քիմիական միաւորութեան արտադրութիւն: Նրանք հերքում են տատուածութիւնը և հոգու անմահութիւնը և մարդու կեանքը գոնում են միայն այս աշխարհում, քանի նա ապրում է, քանի նրա մարմի շինուածքը խանդարուելով, չէ գարձել իւր բաղադրութեան տարրերքին:

Դահրին ասում է, թէ ամեն կենդանի մեր հողագնդի արարած է: Նա իւր դոյութիւնը պահպանելու համար, բա-

ժանորդ պիտի լինի երկրին, այդ հասարակաց սեղանին, նրանից իւր ապրուսուր ձարելու համար: Զօրեղ ձեռքով սեպ-հականել իւրեան աւելի շատ հող քան որ բաւական է մի մարդու պիտոցքներին՝ դա հասարակաց ընչե յափշտակութիւն է: Իսկ տիրել իւր նման մարդկանց վերայ, և ձնշել նրանց իրաւունքը, դա ծայրացեղ բռնսկալութիւն է:

Պարսկաստանում կան և Վահագա՞ն-աղջճութէ կոչուած աղանդաւորները: Դրանք հաւատում են մարդկանց մահից յետոյ հողիների զանազան կենդանիների մէջ տեղափոխուելուն:

Պարսկաստանի մէջ մինչեւ այսօր զանփում են հետեղներ հին զբաղաշտական կրօնի: Նրանք կոչվում են Գանչ: Ձենդավանն զեռ կարդացվում է նրանց մէջ, որպէս սուրբ գիրք:

Պարսիկների մէջ կայ և մի տեսակ ծածուկ կրօնք, որի հետեղները իւրեանց կոչում են Դաստութէ: Դրանք իւրեանց համարում են Դաւիթ Սարդարէի աշակերտներ և կարդում են Սաղմոս, թէե նրանց ծէսերը և աւանդութիւնները շատ տարբեր են հրէաներից:

Մի քանի նոր մաքեր և փիլիսոփայութիւններ մայրին Պարսկաստանում այն պարսիկ ուսանողները, որոնց նահը հարիւր յիսուն հոգու շափ ուղարկեց Փարիզ կրթութեան համար: Այդ ուսանողներից թէե չծնեց ոչ մի հանձար և ոչ մի տաղանդ՝ այսուամենացնիւ նրանք ձգեցին Պարսկաստանում մի փոքրիկ լոյս եւրոպական կրթութեան և ձնաւագարհ բաց արին եւրոպական կրթութիւնը իւրեանց աշխարհում մտնելու:

Բայց մօտ է ժամանակը: Պարսկաստանը երկար չպիտի մնայ իւր խաւարի մէջ: Մածուկ աղանդները արդէն ձգել են իսլամի կազմուածքի մէջ զանազան կայծեր, կայծեր, որոնք մի աղատ քամու են կարօտ, որ յանկարծ բռնկեն և հրդեհն նրա գոյութիւնը...

Գ.

Դ Ե Ր Վ Ի Շ

Պարսկաստանի մտաւոր կեանքի մէջ մէծ դեր են խաղում նաև դէրվիշները: Նրանք կոչվում են՝ և ֆաժիլ, պալատար, որոնք նշանակում են խեղճեր:

Դէրվիշն հեշտ է ճանաչել իւր արտաքին կերպարանքից անդամ: Դու տեսնում ես մի մարդ երկայն, չխուզուած մաղերով որոնք կապած են, կամ ու թելերից վարսակալով, կամ պլիխն դրած ունի կարմիր և զանազան թալիսմանական գրուածքներով ասղնեգործած մի թագ: Նա հագած ունի միայն մի շապիկ սպիտակ կտաւից, որ հասնում է մինչև նրա մերկ ոտքերը: Եւ մէջքը պնդել է նցյնպէս թալիսմանական տառերով վարդարած լայն գոտիով: Նա ձգած ունի իւր ուսին ընձու կամ առիւծի մորթի և մերկ բաղուկից քարշ է տուած հնդկարներովց շենած գուշտուլը—իւր միակ ամմանը, որ նա մնն է ածում իւր հետ: Նա իւր ձեռքին ունի մի ահագին մահակ կոճղնաւոր բամբակի ծառից և կողքից քարշ է տուած իւր եղջերափողը (նաֆիր): Պարսկաստանի բոլոր բաղաքներում դու հանդիդում ես այդպիսի մարդկանց, շատ անդամ բոլորովին մերկ, սփածանելիք միայն գոտիից մինչև սրունքները կապած,— այդ մարդիկը դէրվիշներ են:

Դէրվիշը ամեն մարդու բարեկամ է: Նա հանգիպելով քեզ՝ իսկոյն իւր աջը դէպի ծակատն է տանում և ասում է: «Եյ վուլսհ» կամ «Եմ հու հաչ»:

Դու կը հանդիպես նրան, երբ ծանր քայլերով գնում է նա փողոցի ծածկուած չարսիի միջով: Նա երգում է, կամ Հաֆիսից, կամ Մասնաւիից և կամ Ամիր-ուլ-Մօմինի հրաշքները: Նա բանաստեղծ է, նա երգում է սէր: Նրա ձայնը քաղցր մեղեղիներով հնչվում են չարսիի դմբէթայարկ կամարների տակ:

Խանութպանները սիրում են իրենց երդին և նրանցից ամեն մինը ձգում է նրա գուշտուլը մէջ մի ու փող:

Դէրվիշը, իւր գուշանը (շրջանը) կատարելուց յետոյ,  
զուրս է գաղիս բազարից, հաւաքած փողերից վեր և առ-  
նում այնքան, որքան ովեաք է նրա նոյն տւուր ապրուսոյ  
համար, իսկ մնացորդը բաժանում է նոտ իրենից աւելի խեղ-  
ձերին: Երեկյեան գէրվիշը աղքատ է և մի սե փող չունի:

Դէրվիշը տուն, աեղ, ընտանիք և հայրենիք—ոչինչ չու-  
նի: Նրա հայրենիքը բոլոր աշխարհն է, նրա ընտանիքը—  
ամբողջ մարդկութիւնը: Նոտ երգելով թափառում է երկրից  
երկիր և ամեն տեղ քայ է, նրա առջև Աստուծոյ սեղանիը:

Սյդ կիսամերկ, մոլորաշրջեկ թափառականները, գոնում  
են արժանաւոր ընդունելութիւն, թէ ամենահարուստ հաջեի  
տան մէջ և թէ բարձրաստիճան խանի ապարանքում: Ամեն  
մարդ ցանկանում է լսել գէրվիշը իմաստութիւնը և իւր  
խալիների վրայ տեղ է տալիս նրան: Բայց գէրվիշը փառա-  
սէր չէ, նոտ չէ սիրում շքեղ ապարանքները, նոտ այցելութիւն  
է անում ազգաստների խրճիթներին, նոտ անցուցանում է իւր  
զիշերը փողոցներում փլատակուած շինուածքներում: Նոտ  
քնում է ամեն տեղ, ուր օրը մթնում է նրա վրայ:

Դէրվիշը կօմունիսա է: Նօվրուզի տօնից մի քանի ա-  
միս առաջ նոտ իւր փոքրիկ վրանը կազմում է մի հարստի  
զրան հանդէպ: Նոտ պահանջում է նրանից նրա հարստու-  
թեան մի մասն, որ յափշտակել էր հասարակաց սեպհակա-  
նութիւնից: Հարուսար իրաւունք չունի հեռացնել նրան իւր  
գոնից, մինչեւ չը լրացնէ նրա պահանջը (թալար): Անյնե-  
լով թալարի նստած գէրվիշների վրանների մօտից՝ մարդ  
իսկոյն մտաբերում է Դիոզինէսը իւր կարասի մէջ նստած:

Դէրվիշներից ոմանք արհեստաւորներ են և ապրում են  
իւրեանց ձեռագործներով: Կան նրանց մէջ բժիշկներ, քան-  
դակագործներ, զեղարարներ, պատկերահաններ և զեղաղիրներ,  
որոնց մի կտոր վայելչափրութեան օրինակը մեծ զին է բերում:

Նրանից ոմանք անձնաստուր են եղած էլչուչչի—միջնա-  
դարեան փիլիսոփայական քարի զիւտին և այրում են մողիկ,  
ծծումբ, մկնդեղ և այլ հանքային մարմիններ, ոսկու սարեր  
դոյացնելու փափագով:

Պարսկաստանի քաղաքներում գերվիշների համար շենած են առանձին օթևաններ, որ կոչում են թափիա: Ես կը զբեմ քեզ իմ այցելութիւնս այդ թաքիաներից մինին Շիրազ քաղաքում: Թաքիան ամֆիթատրօնի ձեռվ մի բաց շինուածք է, վոքրիկ քառանկիւնի բակով, որ շրջապատուած է զանազան միմեանցից բաժնուած կրպակներով: Այդ կրպակների մէջ իջևանում են գերվիշները:

Ես ներս մասց այդ կրպակների մինի մէջ, ուր ինձ ասացին, թէ բնակվում էր գերվիշների մուրշիլը, այսինքն նրանց վարդապեար:

Չմեռ էր: Կրպակի գուռը բացուելուն պէս իմ գլուխս զարկեց խիստ անախորժ և կծու հոտ: Ես կարծում էի, թէ մտնում եմ Խտալիսյի Շնական կոշուած այրը: Այդ հոտը հաւաքուել էր այնտեղ բռնզի, աֆիօնի և զանազան արբեցուցիւնիւթերի ստէպ ծխելուց: Ես խնդրեցի բաց թողնել կրպակի գուռը օդը փոքր ինչ մաքրուելու համար:

— Հիւրի պատիւը միշայարգելի է, ասաց գերվիշներից մինը և բաց թողեց գուռը, թէ և սաստիկ ցուրտ էր:

Նրանք թուով ըրս էին: Ինքը մուրշիլը նստած էր ընծու մորթի վրայ, իսկ մնացածներից ամեն մինը ձգած ունէր իւր տակին տաիւծի, վազրի և զանազան գաղանների մորթիք: Նրանցից մինը տուաւ ինձ իւր մորթը, ես նոյն պէս նստեցի:

Այդ գերվիշներից ամեն մինը պատկանում էր առանձին ազգի, առանձին ախակերի: Մուրշիլը պարսիկ էր, միջին տարիքով նա էր մի բարձրահասակ և ցանաք մարդ, արելից այրուած երկար ճանապարհորդութեան մէջ: Նրա սեռուկ գեմքը, թուլի, վառվուուն աչքերը բացատրում էին հանճար և զարհուրանք:

Մինը խափշեկ էր, մի երիտասարդ, բոլորովին մերկ, միայն սպիտակ կտաւէ վարտիքով, որ սև լնձու նման, պառկած մի անկիւնում՝ խորին կերպով մրափում էր: Նրա սև կերպարանքը, միախառնուելով կրպակի մթութեան հետ, մնում էին աննշմարելի, միայն աչքերի սպիտակոյը և Ճեր-

մակ ատամները երբեմն փայլում էին խաւարի մէջ, երբ նրա դէմքը ցնցվում էր սարսափելի ծիծաղով: Երևում էր, որ երիսասարդը, թմրած աֆիօնի արքեցուցիչ զօրութիւնից՝ հրապուրվում էր գեղեցիկ երազներով:

Միւսը աւզան էր, մի փոքրիկ մարդ, կարձլեկ հասակով, թաւ սև սաթի նման մազերով, զորշ դէմքով և նեղ պսպղուն աչքերով:

Իսկ չորրորդը հնդիկ էր. լերկ պղնձաղոյն դէմքով և երկայն, փափուկ մազերով:

Կրտսակի մէջ տեղում զրած էր մանղալ շեկացրած ածուխներով. նրանք բոլորեւ էին նրա շուջը:

— ի՞նչ բան բերեց ձեզ, տէր իմ, խեղձերի կացարանը, հարցրեց ինձանից մուրշեղը:

— Ես էլ ձեզ նման գէրվիշ եմ, ասացի նրան, և թափառում եմ երկրէ երկիր, ինձ ցանկալի էր հարցասիրեւ իմ համավիճակների կեանք:

— Եյ վուլլահ. ձայն տուաւ մուրշեղը, ուրեմն մենք եղբայր ենք: Եւ ձեռքը իմ ձեռքին տալով, յետոյ դէպի բերանը և ձականը տարաւ:

— ի՞նչ ազգից ես, հարցրեց նա ինձանից:

— Ազգաւ հայ եմ, պատասխանեցի ես:

— Իսկ կրօնքով:

— Քրիստոնեայ:

Վերջին խօսքերը շարժեցին մուրշեղի ուռած շրթունքները հեղնական ծիծաղով, և նա ասաց.

— Դուք խոստովանուեցաք, թէ գէրվիշ էք, բայց գէրվիշները ազգ և կրօնք չունեն:

Ես զգացի սխալմունքը իմ խօսքի մէջ, և պատասխանեցի.

— Մենք այդ տեսակ գէրվիշներ ենք:

— Բայց քրիստոնեաների կրօնքի վարդապետը, Մեսեան, կատարեալ գէրվիշ էր, նա պատկանում էր աշխարհէթներին (սիրոյ ժողովրդին, կամ սիրոյ նպատակին). նա ասում էր հարստութիւնը, նա բարեկամ էր աղքատներին և սրբում էր նեղացածների արտասուքը:

— Այո՛, նա քարոզում էր սէր, նա աշխատում էր բառ-նալ ստրուկի ծանր լուծը, ասայի ես:

— Իսկ նրա յաջորդները, ձեր խալիքաները (եկեղեցականներ) չեղան իւրեանց վարդապետին արժանաւոր աշտկերտներ: Նրանք սիրեցին աշխարհը և նրա փառքերը և ամենայն սրբութիւնն զոհեցին իւրեանց կրքերին...

Մեր խօսակյութիւնը ընդհատեց խափշեկը, որ պառկած էր կրպակի անկիւնում: Մի երգով, որ նա յանկարծ եղանակեց քնի մեջ:

— Այս զիշեր բռնկը շատ ներգործեց մեր եղբօր վերայ, ասոյ մուրշեղը: Նա տակաւին հրապուրվում է երազներով:

Իսկ հնդիկը նոյն միջոցին հանեց իւր մախաղից (ջուլթէնդ) մի երկայն կտոր աֆիօն, կարառեց և ափի մէջ լցնելով, բերանը ձգեց, և բոլորն միտնգամնվ կուլ տուաւ: Ես զարմացայ, աֆիօնի ամեն մի կտորը բաւական էր թունաւորելու ամենաառողջ աղամարդուն, բայց նա կերաւ նրանց, որպէս շաքար, առանց մի զգուանք զգալու:

Իսկ մուրշեղը վառեց իւր գգմասրուսակից շնուած փոքրիկ զէյլսնը, և մի կտոր բանգ նրա պիսին գնելով, սկսաւ ծխել: Միւսները նոյնապէս սկսեցին աֆիօն ուտել և ծխել: Եւ մի քանի ըստէից յետոյ փոքրիկ սենեակը դարձեալ լցուաւ խեղզող ծխով:

Բռնկի և աֆիօնի արբեցուցիչ զօրութիւնը սկսաւ իւր ներգործութիւնը անել: Դէրվեչները հետղճետէ զուարթանում էին և ողեորվում: Նրանք ինձ ևս առաջարկեցին ծխել իւրեանց զէյլանից, բայց ես հրաժարուեցայ, ասելով թէ սովոր չեմ, և վառեցի իմ սիգարը:

Մեր խօսակյութիւնը տեսեց երկար: Ես նկատեցի, որ այդ զէրվեչները պատկանում էին մի վարդապետութեան, որ կոչվում էր ահլհազիպաթ, որ նշանակում է ծշմարասութեան հետեւողներ:

Դրանք ոչինչ ծշմարասութիւն չեն ընդունում, եթէ նա իրանց յայտնուած չէ որ և իցէ զերենական զօրութիւնից: Դրան հասնելու համար, նրանք պիտի անցնեն հետեւեալ եր-

կու աստիճանները առաջին, սէր (մուշաբաթ), որի վերայ գնում են ամենայն բարոյականութեան հիմքը, երկրորդ թարիկաթ (ծէսեր), երբ տեսակ տեսակ սարսափելի ճգնութիւններով մարդը աշխատում է մուցնել իւր մէջ ամենայն մարմարականութիւն (ջամբէի հեյվանեաթ), և մաքրուիլ սրբուիլ և բոլորովին հողիանալ (ջամբէի բուշանեաթ), այն ժամանակ ինքնուրոյն հասնում է հաղիպաթին, այսինքն Ճշմարտութեանը:

Դէրվիշներից շատերը պատկանում են զանազան այլ աղանդների, ինչպէս են գահրի, սուֆի, բարի, ուրաֆայ և այլն, որոնց մասին առաջին նամակումն զրած եմ քեզ: Այլ և կան նրանց մէջ շատ խաբեբաներ, որոնք պարապում են կախարդութիւնով, առազած հմայութիւնով և թովութիւնով:

Դէրվիշներին չեն սիրում մօլլաները, համարելով նրանց անհաւասաներ, որովհետեւ նրանք չեն կատարում շարիաթի կանոնները: Բայց ժողովրդի բարձր գասը, աղնուականները, պատվում են նրանց և սիրում են լսել նրանց իմաստութիւնը:

Դէրվիշները, այդ իմաստութեան թափառական միսսիօնարները, կարող են օգտառէա լինել Պարսկաստանի մէջ նոր մոքեր ուարածելու, թէև նրանք մի որոշակի ուղղութիւն չունեն, այլ իւրաքանչիւրը ունի իւր առանձին համոզմունքները և կարծիքները, այսու ամենայնիւ նրանց մէջ կայ աղատ մտածողութիւն:



## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԱՐԵԿ“

Ի՞նչ եղար, մէկ դուրս արի, չայց արեգակ, ի՞նչ եղար.  
Թռղնելով որդիքներդ խաւար մութի տակ, ի՞նչ եղար:  
Բաւականին ժամանակ է հեռանալդ մեղանից,  
Ապրում ենք առանց լուսոյ այսքան ժամանակ, ի՞նչ եղար...

\* \*

Մասնաւոր շառաւիղդ մօտ տարիներս ցոյց տուիր,  
Աղջի մէջ բարձրացուրիր աղմուկ աղաղակ, ի՞նչ եղար:  
Քո դիցաղուն անարատ մանուկներդ ոյսքան տարի  
Խաւարի որդիքներուն թռղիր հպատակ, ի՞նչ եղար...

\* \*

Սառեցաւ մեր արիւնը ցուրտ հողմային պաղութիւնից,  
Եկ համի՛ր, լոյս ջերմարար, կենդանի կրակ, ի՞նչ եղար:  
Լուսաւոր աշխարհներից նոր դուրս գալող արեկ պէս  
Մէկ դուն էլ խիզի արի ցոյց տուր նշանակ, ի՞նչ եղար...

\* \*

Ափսոս ենք մենք, խղճա՛ մեզ աղնիւ լուսարար թագուհի,  
Ընծայէ մանուկներիս արժանի պսակ, ի՞նչ եղար...  
Կեսնք կուտան ողջ մարդիկը, Զիւանին էլ քեզի համար,  
Դուրս արի պայծառ լուսով աղատ համարձակ, ի՞նչ եղար:

---

ԱՆ-ԲՍԱՆԴՐՈՊՈԼ

1883 թ., 15 Մայիսի.

Ա. Հ. Ջ. Հ. Ա. Հ.





*Արքայի լուսապատճեն*

Саркисъ Саркисянъ.

Автотипія Эл. Гонне.

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑ

[† 30 Մարտի, 1892 թ.]:

Մարտի 30-ին, կարձատե հիւսնդութենից յետոյ վախանուեց Մոսկուայում յայտնի երիտասարդ լեզուագէտ Սարդիս Սարգսեանց:

Հանդուցեալն Ազուլիս ծնուած՝ մանուկ հաստկում Մոսկուայ էր տարուած և այնտեղ մեծ աջողութեամբ տւարտած թէ զիմազիօնը և թէ համալսարանը (1878 թ.), որի պատմական-բանասիրական բաժինը իւր մասնազիտական առարկան էր ընտրել: Այնուշեամ մի-երկու տարի անցընում է նա Կովկաս՝ ցանկանալով առ միշտ հաստատուել այնտեղ և իւր սիրած մասնազիտութեամբ՝ հայերէն լեզուով պարտպել: Բայց անցածող հանգամանքների շնորհիւ նա վերագտնում է հիւսիս և կլասսիկական լեզուների ուսուցիչ է նշանակվում Բրեանսկ գաւառական քաղաքի պրօգիմնազիօնում, ուր և մնում է մինչև 1889: Այդ իսկ քաղաքում զրում է նա և իւր նշանաւոր գործը՝ «Ազուլեցոց բարբառը», որ լսու ահաւ 1883 թ.: Պրօգիմնազիօնի անտինկալ փակուելով Ս. Սարգսեանց տարու չափ հայրենիքում անցընեց՝ զլսաւորապէս Թիֆլիս, մասպիր լինելով պանսիօն բանալ այլակեղ՝ մի ձեռնարկութիւն, որ դարձեալ անցածողութիւնների էր հանդիպում ըստ երեցին. Բայց այդ միջոցին նա հրաւեր ստացաւ Լազարեան ձեմարանի վարչութենից հայերէն լեզուի գասատութեան, որ և ընդունեց մեծ հաճութեամբ՝ հաւատացած լինելով, որ արդէն վերջացել են բոլոր իւր ձոնձրալի թափառումները և հասել է ժամը իսպաղ և հանդիսավոր կերպով նուիրելու իրեն զիտութեան, իւր սիրած

մասնագիտութեան։ Բայց բազզը այլապէս էր որոշել...

Ս. Սարգսեանցը պատկանում էր մեր երիտասարդութեան այն փաքրաթիւ խմբին, որի համար հայ լեզուի, պրականութեան և պատմութեան ուսումնափրութիւնը մի սիրելի, սրաին մօս առարկայ է, անգամ և նպաստակ կեանքի, և որը նորա մահուամբ աւելի ևս փոքրացաւ, որովհետեւ լեզուագիտութիւնը, որի պարագութիւն էր նա համարվում, այժմ մնում է մեր մէջ առանց արժանաւոր ներկայացուցչի։ Հայ գիտութիւնը կորցրեց մի շատ համակրելի և շնորհալի տաղանդ, որ՝ «նայելով իւր կարծատե, անբարեպատեհ հանգամանկներով շրջապատուած գործունելութեան, խոշոր ծառայութիւն է մատուցել մայրենի լեզուի ուսումնափրութեան իւր ծանրակշիռ քննական հետազօտութեամբ» Ավուլեցոց բարբառի» մասին։ Այս վաղահաս, ակնակրնկուլ կորուսար աւելի ևս զգալի է գառնում, երբ նկատի առնենք, որ հանգուցեալը՝ արդէն լիովին հասունացած լինելով գիտութեամբ և փորձառութեամբ, գեղեցիկ մաքեր ու խորհուրդներ էր յղանում իւր մասնագիտութեան վերաբերմանը, մասձում, զբաղվում և արդէն իրազործելու պատրաստում մի շարք վերին աստիճանի հետաքրքրական կարեոր երկասիրութիւններ մեր բարբառների հետազօտութեան, աշխարհիկ լեզուի քերականութեան և մանաւանդ նորա քննական պատմութեան մասին։ Աշխարհիկ «Հայերէն-Խուսերէն բառարանի» հմտալից և օրինակելի քննագատութիւնը, որ լոյս էր տեսնում «Մուրճի» մէջ նորա կարապի երգն եղաւ։

Ս. Սարգսեանցի կորուսար ոչ միայն հայ բանասէրները պիտի ողբան, նորա մահը մեծ յաւ է և մեր կրթուած երիտասարդութեան լրջամիա գասին, որի մէջ նա նկատելի տեղ էր բռնում իւր բազմակողմանի կրթութեամբ, համակրելի հայեացքներով, համեստ բնաւորութեամբ և այն աղնիւ սրաով ուր ջերմ արձագանդ էին գտնում ամեն մի հասարակական և ազգային կենսական խնդիրներ... Օրէնուանձ լինի նորա յիշտատակը։

ԲԱՆԱՏԵՎԵՐԻՆԻՒՆԵՐ

ի Մ  
ԹԱԳԱՀՈՒՅՈՒՆ  
ԹԻԿԻՆԸ

Կհառի պէս, ի՞մ սի-  
րուհի,

Զեմ փառամնը ունայն սնո-  
ախ.

Զեմ կամենում ամբողջ  
աշխարհ

Վոնել ինչպէս մեծ զօ-  
քավար:

\* \*

Վյլ ոչ միայն ես առաջինն,

Վինեմ սրառւմի, այլ և վերջինն.

և ազատ արձակ այնտեղ միակ,

Համ թագաւոր համ հրպատակ:

Հայ-Արքան



Կ Ա Ղ Ն Ի

Անտառի տիկին հպարտ, անսասան  
Կանգնած էր մի մեծ ալեոր կաղնի  
Անյաղթ, վեթխարի, հսկայի նման՝  
Կարծես աէր լիներ բոլոր աշխարհի:

\* \* \*

Ետտ քաջ որսորդներ և անհոգ հովեւ  
Ուզել են իրանց բաղուկը փորձել  
Եւ վառ դնդակի, սուր կացնի անթիւ  
Վէրքերով նորա հաստ բունը ծածկել:

\* \* \*

Արհամարհելով շանթեր ու կայծակ՝  
Ժէռ քարի նման ամուր կուրծքը բոյ,  
Բնդունում էր նա անվախ, համարձակ  
Գլխին տեղացող ամեն մի հարուած:

\* \* \*

Փչում էր մրրիկ, զետին տառալում  
Հին ու նոր անթիւ ծառեր: Անդադար  
Դարեռը կաղնին առաջ էր աճում՝  
Մաքում ծաղքելով հողմ ու ողջ աշխարհ:

\* \* \*

Բայց հսկայ կաղնու պինդ կեղեփ տակ  
Ամրակազմ կրծքում որդներ ծնեցին  
Եւ նորա ամուր շնչքը շարունակ  
Անխնայօրէն կերան մաշեցին:

\* \* \*

Էլի քիչ տարի և... «Մնաք բարե»,  
Մնաց, օրօրուեց ու... հսկան ընկաւ.  
Կառաղի քամին ճիւղեր ու տերե  
Սրբեց ու տարաւ աշխարհով արաւ:



## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԻ ԴՈՒԻԳՆԵՐ \*

Հայդուկ բառը չէ նշանակում գող, աւազակ, կամ վտարանդի ելուզակներ. գտ նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ էին Յունաց կլիֆաները նրանց ապստամբութեան ժամանակ, կամ. . . . .\*\*) սուլիունները: Հայդուկը բնական արայյառութիւն է բոնակարութեան լծի առկ ճնշուած, հարստահարութիւնից տանջուած և իւր մարդկային բոլոր իրաւունքները կորցրած ժողովրդի կեանքի: Հայդուկը սարուկի բողոքն է իշխողի բարբարոսութեան վիճ: Նա թողնում է ընտանեկան օջախը, որ իր համար պղծուած էր, նա թողնում է իւր հասարակութիւնը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում, և այնտեղ որպէս մի փոքրիկ թագաւոր, լեռների աղաս որդին, սկսում է տիրել ամայութեան վրայ: Բնութիւնը մեռնում է յաջող ձեռքի հետ, և Հայդուկը իր որջեց մոհ և սարսափ է սպառնում իր շրջակայքի վրայ: Իրաւ, նա մորթում է, կողոպտառում է, այրում է մարդկանց բնակարանները, բայց այդ բոլորը զործում է, որպէս նեղուած ժողովրդի բարկութեան ողին, որ վրէժինդրութեան մէջ բաւականութիւն է դանում:

\*) Այս դրականական բեկորն, որը մեծ սիրով զիջեց մեղ տպագրելու հանդ. Ծափփու մեծարդի այրին, երեկի հանդուցեալից նշանակուած է եղել, իբրև յառաջարան մի ընդարձակ վեպի, որ լցու չէ տեսել գուցէ այդ վեպը լինի հոչակաւոր «Լայծերը»:

\*\*) Բնագրում պակասում է մի բառ:

Հայդուզը հասարակ աւազակից որոշվում է զլխաւորապես նրանով, որ նա ոչ թէ յափշտակութեան ազահութիւնից զրդուած, կամ հանգամնաքներից ստիպուած է զործադրում իր արիւնահեղ արհեսար,—այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային զգացմունք և ազատութեան բաղձանք: Հայդուզի զործունեութիւնը յեղափոխական բնաւորութիւն է ստանում այս կողմից, որովհետեւ նա իր սրով պաշտպան է հանգիսանում նեղեալին, և ուխտում է անզթարար պատժել անիրաւութիւնը: Իր սիրելի հայրենիքը ազատուած տեսնել աիրանի Ճնշումից, իր արիւնակից եղբայրներին փըրկել բարբարոս ձեռքից—ահա դրանք են նրա ցանկութիւնները. սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոյներ:

Մեղանում գեռ զրականութիւնն ուշադրութիւն չէ զարձրել այս տեսակ երևոյթների վրայ. Հայդուզները, աւազակները մեզ մօտ գեռ չեն մասել վապերի կամ բեմական զրուածքների մէջ, թէև նրանք խիստ յաճախ յայտնուել են և անհետացել ժամանակի հրամանքի հետո: Հայդուզը և աւազակը չեն ճանաչուել մեղանում, որպէս պատմական անձնուրութիւններ,—որպէս յանկարծ ցայտող կայծեր ժողովրդի հանդած քաջազնական կեանքից:

Մի զբող միայն, հանգուցեալ Արովեանը, իր զբքի մէջ դուրս բերեց այդ կենդանի ժողովրդական տարրը,—նրա Աղասին իր խմբով ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ հայդուզների մի հրոսակ:

Դեռ ևս մօտ ժամանակներում յայտնուեցան եթէ ոչ Հայդուզներ, բայց նշանաւոր աւազակներ, որպէս էին՝ Ղարաբաղի Քէշիշօղլին, երևելի Աղիկիւպէլ պարսկի ընկերը, Եղիկը, Եղնակը, Քոչոն, Աստո-Քէկի ընկերը: Դրանց զործերի մէջ որքան լսել եմ, կայ շտա ինչ բանատեղծական և վիպական: Բայց նրանց մօտ ծանօթները զոնեա չգրեցին նրանց կենսազրութիւնը: Հայ աւազակապետները ուսւաց և պարսից պատերազմի ժամանակ, ուսւաց և տաճկաց պատերազմների ժամանակ, միշտ մեծ դեր են խա-

ղայցել հայ զեներալների ձեռքի տակ, որպէս էին Մադաթովը, Բերութովը, և այս վերջին պատերազմում Լօրիս Մելիքովը ու Տէր-Ղուկասովը:

Տեսնելով, թէ ինչ տպաւորութիւն զործեց իմ «Զալաւդգին» փոքրիկ վէպիկը ընթերցողների վրայ, և քաջալերուեցայ իմ վաղուայ զրած մի աշխատութիւնը լոյս ընծայել, որ կրում է անունս «Հայզուգներ»։ Դա, որպէս կուսնի ընթերցողը՝ Հայզուգների մի խռոմի յիշատակարան է, որ գյուղութիւն է ունեցել մօտ 70 տարի առաջ, որի մասին գեռ երեխայութիւնից և շատ աւանդութիւններ էի լսել իմ Հայրենիքում, և որի մասին աեզական լեզենդական զսոյցները գեռ չեն կորել վասպուրականի հայ ժողովրդի բերանից։

Ես նպատակ չունեի այսպէս շուտ հրատարակել այս աշխատութիւնը, ի նկատի ունենալով մի քանի թերութիւններ, որ պէտք էր լրացնել, կրկին Ճանապարհորդելով Վանի, Մուշի և առհասարակի Վասպուրականի կողմերը, ուր Հանդիսանում են մեր Հայզուգները, ինձ պէտք էին մի քանի վեպազրական ճիշտ տեղեկութիւններ, որոնք թռել էին իմ յիշողութիւնից, գեռ 15 տարի առաջ Ճանապարհորդած լենելով այն կողմերում։ Իսկ այսքանն էլ բաւական է ցոյց տալու համար, թէ մեղանում պակաս չեն եղել աղամարզիկի, որ զգացին թուրքերի լծի գառնութիւնը, և չաշխատէին ազատ լինել։

Ես իմ աշխատութեանը յիշատակարանի ձև տուի, որովհետեւ նրանք քաղել եմ մի իննսունամեայ ծերունու պատմութիւնից, որ պահուած էր նրա յիշողութեան մէջ, և որ ինքն իմ նկարազրած խմբի նշանաւոր անդամներից մէկն է եղել։

Ծ Ա Ֆ Ֆ Ի



## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

\* \* \*

(ԼԵՐՄՈՆՑՈՎԻՑ)

Երբ ալեկոծվում է արտը գեղնած  
Եւ անտառումը թաւ քամուց շշնչում,  
Պարտիզում թաքչում սալորը հասած  
Զովարար կանաչ տերեկի շուաքում:

Երբ անուշահոտ ցօղով սրսկուած  
Վառ երեկոյին կամ առաւօտուն  
Գեղեցիկ ժամին, թփում ծածկուած  
Արծաթէ շուշանն ինձ իւր մօտ կանչում:

Երբ սառը վտակ խաղում է ձորում  
Եւ խորասուզուած խառն անուրջի մէջ  
Դիւցակնական տաղ է ինձ մրմնջում  
Այն երկրից, ուսկից հոսում է անվերջ

Յայնժամ հանդարգում է հոգուս յուզում,  
Ցրվում են ճակ' տիս կնճիռները զիզուած,  
Եւ երջանկութիւն գտնում եմ երկրում,  
Եւ երկնքի մէջ տեսնում եմ Աստուած...

Յանձնանես Մայրանեանց



# ՄԱՏԵՆԱԻՕՍԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

ՌԱԺՖԻՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Մեր ներկայ գրութեան նիւթը լինելու է Բաֆֆիի  
նշանակութիւնը՝ արդի հայ զրականութեան տեսակէտից։ Այս  
տեսակ հարցերի հետազոտողի առաջ դրուած է երկու տե-  
սակ կրիտիկայ։ Առաջին կրիտիկան ընդհանուր է և պարու-  
նակում է իւր մէջ հետեւեալ հարցերը՝ թէ որքան այս կամ  
այն հեղինակութիւնը համաձայն է ընդհանուր գեղարուես-  
տական խսկական պայմաններին, թէ հեղինակութեան մէջ  
պարունակուող իմաստները զուտ իմաստներ են, թէ ժամա-  
նակի այս կամ այն տարօրինակ երեսյթի կամ հանգամանքի  
արգասիք, որոնք կրում են իրենց վրայ ճշմարտութիւնը  
այնքան ժամանակ, որքան որ հասարակութեան մէջ տիրում  
է այս տարօրինակ զրութիւնը, այնուհետեւ, հասարակական  
կենսքը բուժելու այս կամ այն դարման անխափ ամէն գէպ-  
քերում և ժամանակներում գործածելու է, թէ միայն բա-  
ցառիկ գէպքերում և այլն։ Երկրորդ կրիտիկան կօչվում է  
պատմական կրիտիկայ. սա առաջնի նման խիստ չէ, բայց  
միենոյն ժամանակ անսարբեր էլ չէ, սա հետազոտած նիւ-  
թի պահանութիւնները գիտէ վերադրել ժամանակի ոգուն  
և հանգամանքների գրութեան, հեղինակի բնաւորութեան  
առանձին յատկութիւններին և մեկնել շատ բան ժամանա-

կակիցների կենցաղավարութեան պայմանների տեսակէաից, մի և նցն ժամանակը առանց ներելու հեղինակին իւր երկասիրութեան մէջ զանուած անբարօյականացնող տարրերը կամ իմաստները, և առաքինութեան զիմուկով սքօղած տղիտութիւնը և անբարօյականութիւնը, եթէ միայն այս ամենը կայ: Մինչ գեռ այս երկու տեսակ կրիտիկան գոյութիւն ունի, սրանց գոյութեան նպատակը միմեանց ոչնչացնելը չէ, ինչպէս առաջին անգամից կ'երեայ, այլ միմեանց լրացնելն ու լուսաբանելն է. մէկը առանց մրւսի չէ կարող լինել, երկումն էլ յենուած են բարւոյ և գեղեցկի պաղափարի վրայ:

Խօսելով Բաֆֆիի մասին, մեզ անշրաժեշտ է ենթարկել նրա երկերը պատմական կրիտիկային, որովհետեւ մեր կեանքը իւր յայտնի ուղղութիւնների մէջ կատարելապէս չէ վերջացրել իւր շըջանը, և արդի հայ զրականութիւնը գեռես շարունակում է իւր գնացքը: Աւրեմն, ապագայ քննադատն, որն աւելի աղաս կը լինի մեր ժամանակի կրքերից և կուսակցական ձգտութիւններից մեր կեանքի գուցէ ծուռ և տարօրինակ ուղղութիւնից, որը մեզ գուցէ շատ գեպքերում նկատելի չէ, աւելի անազառ կերպով կ'ուսութեասիրի Բաֆֆիի երկասիրութիւնը և ըստ արժանւոյն կ'զնահատի այս մեծ բանաստեղծի գործունէութիւնը, իբրև վեպասանի, իբրև հրապարակախօսի, իբրև հայ մարդի և ամենապլիսաւորը՝ իբրև ազգային թմրած հոգին զարթեցնող մի անձնաւորութեան: Խօսիկ անցեալը լաւ հետազոտել պակասութիւնները իմանալ և աեսնել նշանակութիւնը ճանաչել նոյնքան զրժուար է, որքան գժուար է մի առարկայ լաւ տեսնելու համար, չոփից գուրս աչքիդ մօտ ըերելը կամ մի որեւ է հեղուկի հոտը իմանալու համար, այդ հեղուկը քթի մէջ լըցնելը, մինչ գեռ և առարկան աեսնելու և հեղուկի հոտը իմանալու համար անշրաժեշտ է որոշ հեռաւորութիւն:

Դեռ Բաֆֆիի կենդանութեան ժամանակ քանկիցս՝ մերթ մասնաւոր խօսակցութեան ժամանակ, մերթ պարբերական թերթերի մէջ, երբ գուրս եկան ոռուսերէն թարգմանութեամբ այս բանաստեղծի երկասիրութիւնները, եղել են վե-

Ճեր և յարուցուել են հարցեր, թէ Բաֆֆին ո՞ր հեղինակին է աւելի նմանում: Մէկը ասել է Տուրգենեվին, միւսը՝ Վալթր Սկօախն, երրորդը՝ մի ուրիշն և այլն: Ինքը հանդուցեալը խիստ սիրում էր, երբ իրեն Տուրգենեվին էին նմանեցնում: Իմ կարծիքով այս հարցը աւելորդ հարց է և միայն ցոյց է տալիս հայ ազգին յատուկ՝ Քոիլովի առակների մէջ զտնուած անասուններից մէկի յատկութիւնը, այն է անպատճառ մի որ և է ուղղութիւն նմանեցնել եւրոպականին, մի երեսյթ՝ եւրոպական երեսյթի: Դժբախտաբար այս նմանել ցանկացողները մի ժամանակ ծաղրալի պիտի դառնան իրենց զուիցերական, գերմանական և այլն ուղղութիւններով և հակումներով գէպի այս կամ այն աղջը:

Ես կասեմ, որ Բաֆֆին, միայն ազատամիտ լինելով, ինչ որ հայինն է, այն երկնքիցն է չասկելով իրեն նախորդ գործիչների նման, Տուրգենեվ չէ կարող լինել և ոչ Սամուել կամ Դաւիթ բէկ զրելով Վալթր Սկօտ չէ կարող կոչուիլ: Բաֆֆին ինքնուրցն է, Բաֆֆին հայկական կեանքի ծնունդ է, նա աւելի հրապարակախօս է, քան թէ բանաստեղծ, բառի բուն նշանակութեամբ, իսկ հրապարակախօս լինելու համար նա չէր կարող միայն Տուրգենեվ կամ Վալթր Սկօտ լինելով բաւականանալ: Ճշմարիտ է, նորա երկասիրութիւնների մէջ կան տեղեր, որոնք ոչ միայն Տուրգենեվին կամ Վալթր Սկօտին են յիշեցնում, այլ և Վ. Հիւզոյին, Ժորժ Սանտին և ուրիշներին և գարձեալ նա սոցա այնքան է նմանում, որքան իւրաքանչիւր հեղինակ, կրթուելով մեծ մատենագրաց երկասիրութիւններով, տեղ տեղ նմանում է սորան կամ նորան:

Խօսելով Բաֆֆիի նշանակութեան մասին, անհրաժեշտ է մի ակնարկ ձգել մեր նոր գրականութեան վերայ: Հայոց գեղարուեստական գրականութիւնը նոր է: Նա ուրիշ աղղերի գրականութեանց նմոն՝ չ ունեցել զանազան ժամանակ այս կամ այն ուղղութիւնը. նա, կեանք չ ունենալով, ունեցած չ եւրոպականի Փալերը: Եթէ պատահմամբ երեսցել է այս կամ այն ուղղութիւնը հատուկոր բանաստեղծութիւնների մէջ, սա հայկական կեանքի և բանաստեղծու-

թեան բնական ծնունդ չէ, այլ հեղինակի առանձին հակումըն գէպի այս ուղղութիւնը, ամեն հայերի համար մի ժամանակ եղած չէ: Մի տեղ երևացել է հետեղութիւն սէնտիմենտալ՝ ուղղութեան, նոյն ժամանակ ուրիշ տեղ՝ քօմանտիզմին, երրորդ տեղ վերածնել է միջնադարեան միստերիան. իսկ կեղծ կլտուիքական երգը (օձա) մինչև այսօր գոյութիւն ունի նորադոյն մատենագրութեան մէջ. ասել կուզեմ, որ հայ ընթերցող հասարակութիւնը միասին, մի ճաշակով չէ ընթանում գեղարուհտական դրականութեան մէջ: Ուրիշ տեսակ էլ չէ կարող լինել հայերը, իրարից բաժան բաժան ապրելով ընդհանուր հասարակական կեանք, ձգութիւնը, քաղաքականութիւնը չունեն. ենթարկուած են այն ազգերի ազգեցութեանը, որոնց հետ ապրում են, նոքա իրենց կեանքի ամէն տեսակ երեցիթներով նմանում են իրենց տիրողին: Իսկ ուր չկայ ինքնուրոյն կեանք, այնտեղ չէ կարող լինել ինքնուրոյն դրականութիւն: Ուրեմն քաղաքական կեանք չունենալը հայ դրականութեան աղքատ լինելու պատճառներից մէկն է: Սորան ապացոյց կարող է լինել հետեւեալ պատմական երեցիթը: Գերմանական գրականութիւնը եօթնամեայ պատերազմից առաջ ոչինչ մի նշանաւոր բան չէր ներկայացնում: Գերմանական լեզուն չկար. բանաստեղծութեան մէջ գործածական էր միայն ֆրանսիականը և ֆրանսիացիների ճաշակը, որ խեղզել էր գերմանական ինքնուրոյնութիւնը. իսկ դիտնական լեզուն լատիներէնն էր: Բայց եօթնամեայ պատերազմից յետոյ, որը զարկ տուաւ գերմանական ինքնաճանաչութեանը, և բարոյապէս կապեց իրար հետ բաժանուած գերմանական ազգերին, գրականութիւնը բարձրացաւ և ընդ միշտ անջատուելով կեղծ կլասիքական ճաշակից, հիմնուեցաւ բուն ազգային կեանքի և անցեալի վերայ և նորա մէջ փայլեցին Շիլէրը, Գեօթէն, Հերդէրը, Լեսինզը և ուրիշները:

Երկրորդ մեծ պատճառը մի որ և է ազգի գրականութեան ծաղկելուն՝ հետեւեալ ընդհանրացած թեզիսն է. միայն մեծ գործերից յետոյ կարող է գրականութիւնը ծաղկել:

Աթէնքի մէջ բանաստեղծութիւնը հասնում է իւր փառաւոր կէտին պարսկական պատերազմներից յետոյ. Հռովմում Օգոստոս կայսեր ժամանակ միայն փայլեցին երևելի բանաստեղծները, երբ Հռովմը վերջացրել էր իւր քաղաքական խնդիրները, արշաւանքները և ազգերի նուածումները և իւր հերոսների քաջութեամբ և առաքինութեամբ քաղած պառուղների միջոցաւ վայելում էր հանդիսա կեանք և բարօրութիւն: Միջին դարերը ծաղկեցրին իրենց գրականութիւնը խաչակիր պատերազմներից յետոյ: Շէքսպիրը երևաց Եղիսաբէթ թագուհու հռչակաւոր թագաւորութեան ժամանակ. իսկ Գրանսիական կլասիքները երևան եկան Լուգովիկոս ԽՎԻ-ի շքեղ թագաւորութեան օրով: Ծուսաստանում բանաստեղծութիւնը ծնուր կատարինէ Մեծի ժամանակ: Այսպէս օրինակներ շատ կարելի է բերել:

Այս ամենը տեսնելով շատ հեշտ կարելի է իմանալ, թէ ինչո՞ւ հայ գրականութիւնը աղքատ է. այժմեան հայկական կեանքը ոչինչ փայլուն և երևելի բան ունեցած չէ իւր մռայլ հորիզոնի վերայ: Հայ ազգը գարէզար անմիտթար յիշել է իւր անցեալը, իւր փառքը. ներկան դառն լինելով ապազյումն էլ յոյս չունենալով, նա ծերունի մարդու նման սովորել է իւր հայեացքը յետ գարձնել: Նա զգացել է զղուանք զէպի ներկան, անվատահութիւն զէպի իւր ցյժերը և այս ամենը նորա բնաւորութեան մէջ ձգել են անխանդութիւն, իսկ նորա բանաստեղծութեան մէջ նեղ ազգասիրական քնարերգութիւն, լի ծանր հառաջանքներով և լացով:

Մեր նոր գրականութեան մէջ բանաստեղծութեան միայն այս տեսակը ամենից աւելի շատ է: Սոցա թիւը անհամար է և մի բանաստեղծ եղած չէ, որ իւր առատ լուման տուած չինի բանաստեղծութեան այս տեսակին: Թուով թէե շատ են սոքա, բայց գեղեցկութեամբ քիչ: Տաճկաստանում այս քնարերգութեան ներկայացուցիչները զլիսաւորապէս եղել են Մինիթարեան հարք, իսկ Ծուսաստանում ամենամեծ ձաշակովը եղել է Գամառ-Քաթիպան: Եւ յիրաւի, իւրեանց ազգասիրական քնարերգութեան քանակութիւնով և գեղեց-

կութիւնով հայերի հետ միայն իտալացիք կարող են համեմատուել, որովհետեւ դոքա ևս հայերի նման իրարից երկար տարիներ բաժանուած են եղել և քաշել են օտար լծի ծանրութիւնը: Ինչ ասել կուզէ, որ ինչքան էլ լաւ լինէր բանաստեղծութեան այդ տեսակը հայերի մէջ, ինչքան էլ որ հարուստ լինէր, նա իւր միակերպութեամբ չէր կարող բաւականութիւն տալ մի ազգի, որն ապրելով 19 դարում, ընդունելով միւս լուսաւորուած դրացի ազգերի քաղաքակրթութիւնը, ակամայ պէտք է հետեւէր նոցա իւր գրական կեանքի մէջ, ակամայ պիտի փնտուէր մի ուրիշ նիւթ իւր գեղարուեստական ձաշակը յաղեցնելու համար, եթէ միայն այս ազգը զարգանալու և քաղաքակիրթ լինելու ընդունակութիւն ունենար: Խոկ հայոց ազգը ընդունակ ազգ է, ինչ պէս շատերը վկայում են և մենք էլ տեսնում ենք: Նա նման չէ իւր ասիացի բարեարոս և անկիրթ դրացիներին, նա սիրով ընդունում է եւրոպական քաղաքակրթութիւնը և ուրեմն չէ կարող հակառակ իւր այդ լաւ յատկութեան, անտարբեր մնալ դէպի կեանքը բարւոքող նորագոյն հոսանքները: 50—60 թուականներին նա եւրոպական ազգերի մէջ ազգայնութեան գաղափարի տարածուելու ազգեցութեան ներքոյ մի քիչ արթնանում է իւր քնից և սկսում է հետեւէլ լուսաւորեալ ազգերին: (Տաճկահայոց սահմանադրութիւնը): Երեան են գալիս հայկական թերթեր, թէատրօն, վարժատուններ, ուղարկվում են արտասահման երիտասարդների խմբեր ուսումն և կրթութիւն ստանալու, զբականութիւնը դուրս է գալիս իւր նեղ շրջանից, թարգմանվում են օտարազգի բանաստեղծներ: Ռուսահայոց կեանքի մէջ կատարվում են մեծ մեծ փոփոխութիւններ 60-ական թուականների ուսւահապարակախոսների ազգեցութեան ներքոյ, չեղելի և Գէօթէի իդէալականութիւնը հէնց այս ժամանակներում փոխվում է ազգասիրական, սիրոյ, արիականութեան գաղափարի և այս շարժման ժամանակ երեսում է «Հիւսիսափայլի» էջերի վերայ Բաֆֆիի անունը, որը յափշտակուած իւր ազգի անցեալով վճռում է ձանապարհորդութիւն անել Տաճկական հայաս-

տանում և Պարսկաստանի մի քանի մասերում, ուր նա զըտ-նում է հայ աղջի փառաւոր անցեալի բեկորները, ուսումնա-սիրում է և նոցանով սկսում է ոգեսորել հայ հասարակու-թիւնը: Խոկոյն և եթ իւր ձանապարհորդութիւնից յետոյ դուրս են գալիս նորա այս կամ այն տեղի նկարագրութիւն-ները, որոնք լեզուի պարզ գեղեցկութեամբ, յաջող համե-մատութիւններով շափած և կըռած պարբերութեան մաս-ներով, գողարիկ և սիրուն ոճերով այնքան տպաւորութիւն-ն են թողնում ընթերցողի վերայ, որ կարդալիս ոչ միայն այն ժամանակուայ ընթերցողը, այլ և այժմեանը, որի ձաշակը աւելի զարգայած է, ենթարկվում է մի տեսակ իերաժշատ-կան տպաւորութեան: Բոլոր նորա նկարագրութիւնները սքանչելի են և ունեն գեղարուեստի բարձր արժեքը: Ինչ պիսի ընդունելութիւն գտաւ ոռւս հասարակութեան մէջ նորա «Հարկմ» երկասիրութիւնը, այդ ամէնքս էլ կ'յիշենք: Նորա «Փունջերը» գեռ եօթանասնական թուականների վեր-ջերում, յիշում եմ, մեծ համակրութիւն էին վայելում մին-չե անգամ վերախօս թիֆլիսիների կողմից, թողնում եմ ու-րիշ հայաբնակ քաղաքները. և ի՞նչպիսի անհամբերութեամբ սպասում էին հայերը նորա իւրաքանչեւր երկասիրութեան երեան զալուն: Բայց այս ժամանակները նորա տաղանդը գեռ որոշ ուղղութիւն ստացած չէր. նա շըջում էր բանաս-տեղծութեան զանազան տեսակների մէջ, լի աղջասիրութեան կայծերով իւր սրտում: 1877 թիւը շատ բարեբաստիկ էր նորա համար ոռւս տաճկական պատերազմի վերաբերմամբ: Այս պատերազմը մեծ նշանակութիւն ունէր նորա աչքում: Թէ այս պատերազմը, ասում էր նա, մղուած է սլաւոն բրիս-տոնեանների աղասութեան համար, բայց հայերի համար էլ մեծ նշանակութիւն պիտի ունենայ մինչեւ անգամ ապազա-յում: Բնիկ ժողովուրդը հայ, քաղաքները հայաբնակ, զինուո-րականների մէջ հայեր, պաշարը հայերի. ուրեմն հայը ա-կամայ պիտի եւրոպացիների ուշագրութիւնը իւր վերայ դարձնել տար և ցցից տար իւր գերազանցութիւնը բարբա-րոս տաճիկների և քրդերի համեմատութեամբ:

Վերջապէս թմրած հայերը պիտի այս պատերազմի աղ-  
գեցութեան ներքոյ շարժուէին և օգնելով ռուսաց զօրքե-  
րին սովորէին պատերազմելու իւրեանց հարստահարչի դէմ:  
Եթէ Սան Ստեփանոյի կամ Բերլինի դաշնադրութեան յօ-  
դուածները մեռած զրեր մնացին հայոց համար, դարձեալ  
Ռաֆֆիի կարծիքով այս պատերազմը աւելի օգուտ պիտի  
տայ ապագայում հայերին քան թէ վեաս: Նորա միջոցաւ  
եւրոպացին ճանաչեց հային և առաջին անդամ հայի ինք-  
նավարութեան ինդիրը դրեց մեծ պետութեանց դատաս-  
տանի առաջ:

Այս պատերազմի անցքերը տուին Ռաֆֆիին «Խենթ»  
կոչուած վիպասանութեան նիւթ, որի շնորհիւ նա բացեց  
ընթերցող հասարակութեան առաջ տաճկահայերի և մասամբ  
ռուսահայերի առօրեայ կեանքը, ընտանեկան զրութիւնը,  
կնոջ զրութիւնը, պարագմանքները և այլն և այլն ոչ լոկ  
նկարագիրներով և պատկերներով, այլ հետաքրքիր անցքերի  
հիւսուածքով, ուր մի և նոյն ժամանակ ամփոփած են բոլոր  
հայերի իդէալները, բաղձանքը: Այստեղ մենք հեաւեալ նկա-  
տողութիւնը պիտի անենք, որպէս զի Ռաֆֆիի նշանակու-  
թիւնն աւելի պարզ երևայ:

Ինձ կասեն, ուրեմն, Ռաֆֆիից յետոյ էլ մեր մատենա-  
գրութեան նիւթը դարձեալ հայն է և հայաստանը, ինչպէս  
և Ռաֆֆիից առաջ: Պատասխանը հեշտ է տալ: Այն, հայն  
է և հայաստանը. բայց այս երկու ժամանակների բանտս-  
տեղծութիւնը անհամեմատ տարբեր են իրարից: Վերը յի-  
շած աղքասիրական քնարերգութիւնը թէե զեղեցիկ է, սա-  
կայն լի է սոսկ բացազանչութիւններով, հռեաորական հար-  
ցերով և այլն. իսկ ազգային վիպասանութիւնը, ինչպէս  
Ռաֆֆիինը, կենդանի պատկեր է ներկայի կամ անցեալի,  
հայի կեանքն է իւր մանր մունը ընտանեկան և հասարա-  
կական հարցերով, իւր լաւն ու վատով, դա միւնյն ժամա-  
նակ խրատ է նոր սերնդի համար: Առաջին տեսակը—քնա-  
րերգութիւնը, աղջում է մեր զգայնութեան վերայ, երկրո-  
ղը զգայնութիւնից զատ, մեր խելքի ու մաքի վերայ:

Խօսելով «Խենթ» կոչուած վէպի մասին, պէտք է նոյն պէս հետեւալ երևոյթի վերայ ուշաղրութիւն դարձնել որպէս զի Մաֆֆիին յարգողների և հետեւզների կողմից թիւրիմացութիւն չլինի. Նա մանաւանդ, որ հս ինքս նորա հետայս մասին խօսել եմ և իմ տսածս, իրբե ժամանակակցի տսած, նշանակութիւն կունենայ: Երբ, ինչպէս վերը յիշեցի, յիսնական թուականների վերջերում և վաթսնական թուականներում մի տեսակ շարժում է երեւում հայ աղջի մէջ երիտասարդութեան մէծադրյն մասը դիմում է օտար աշխարհներ և զլխաւորապէս Գերմանիա և ովեորուած դերմանացւոց շարժումնվ բերում է այնտեղից այն աղջի ինքնաճանաչութեան նպաստող գաղափարները և տարածում է նոցա պարբերական թիրթերի և զրականութեան միջոցաւ— հայ աղջի մէջ: Հայ լուսաւորեալ գասակարդի մի մասը այնքան զրաւգում է գերմանականութիւնով, որ վերջը ծայրահեղութեանն է հասնում: Հայերի մէջ կրօնական հարցերի վերաբերմամբ կատարվում է այն, ինչ որ աեղի էր ունեցել մի ժամանակ գերմանացի բանաստեղծների մէջ կեղծ բոմանտիզմի օրով: Կեղծ բոմանտիկները այն աստիճան զրաւվեցան միջին գարերով, ուր միայն նոքա կարողանում էին գանել բարոյականութեան կերակուր իրենց բանաստեղծութեան համար, որ արհամարհնեցին ներկան, անստարբեր մնացին և դէպի ապագան, անարժան գտնելով բանաստեղծութեան բարձր գաղափարների համար և իրենց հայեացքը դարձրին դէպի միջին գարերը, իբրև իրենց կեանքի և բանաստեղծութեան միակ աղքիւրի: Բայց որովհետեւ միջին գարերը կաթոլիկութեան դարեր էին, նոցանից շատերն էլ աւելի հեաեղող լենելու համար մտան կաթոլիկ եկեղեցւոյ զիրկը, առևին բանաստեղծութեանը միստիք կերպարանը, իսկ իրենք դարձան կրօնամոլ և վերջացրին իրենց բանաստեղծական ասպարեզը հոռվմայ վաներերի և Ճիզուիթների խուցերի մէջ: Այս աղեղերեցոյթը, ինչ ասել կուղէ, շուտով ընկաւ հակառակ կուռակցութեան ացքը, այդ կուսակցութիւնը աւելի խելացի զիրք էր բռնել և այս պատճառով սոքա, որոնք առաջ էլ չեն

սիրում՝ իրենց նախնեաց կրօնը, որն այնքան դար կապել կաշկանդել էր ավատ միտքը և խելքի բարձր թռիչքները, ատեցին կաթողիկութիւնը և սկսեցին գովաբանել Լութերի ուսմունքը, իբրև մի կրօնք, որի ծագման օրից սկսել են ծաղկել զիտութիւնը, բանաստեղծութիւնը, գեղարուեստը և որը թոյլ է տալիս ամէն տեսակ ազատ մտածմունք և խղճի արտայայտութիւն։ Հէնց այդ ժամանակները մեր աղջային երիտասարդութիւնն էլ գրաւվեցաւ Լութերի ուսմունքից։ Նա կարծեց, որ մեր եկեղեցին ևս լինելով հին քրիստոնեայ եկեղեցի, պատճառ է եղել և հիմա էլ է, ժողովրդի մտքի թմրութեան և ազգի խաւարամտութեան։ Եւ ահա սկսուեցան լսուել ձայներ՝ «Հայոց եկեղեցւոյն վերեից մինչև վայր ըէֆորմ պիտոյ է»։

Այս ձայնը շատ հետևողներ գտաւ հայերի մէջ և ահա սկսում են անվերջ վէճեր և բանակոփառութեան մէջ։ Շատերը այս սխալ համոզմունքը իրենց հետ գերեզման տարան, միւսները մինչեւ այս օր էլ հաւատարիմ մնացին իրենց սկզբունքին, երրորդները, և մեծագոյն մասը, միայն վերջին ժամանակներս իմացան իրենց սխալը և կարծիքները փոխեցին։ Հիմա, ժամանակիս նայելով, ամենքիս ակներեցայտնի ճշմարտութիւն դարձաւ, որ ճշմարիտ հայ լինելու համար լուսաւորչական պէտք է լինես։ Առ այժմ դժբախտապէս այսպէս է, ի՞նչ ապադայում կլինի, այս մի ուրիշ խնդիր է։ Ես այս ասում եմ նորա համար, որ, անձամբ զիտնալով Բաֆֆին, պարզեմ նորա հայեացքը հայ հասարակութեան առաջ եկեղեցական ըէֆորմի վերաբերմամբ։

«Խենթ» կոչուած վէպի մէջ Բաֆֆին զետեղել է մի ռանձին զլուխ, ուր նա Վարդանին տեսնել է տալիս երազում Հայաստանի ապագայ բարօրութիւնը։ Այս երազը Բաֆֆիի իրեն իդէալն է հայ ազգի վերաբերմամբ։ Ուրիշ շատ գովելի Բաֆֆիի բաղձանքների մէջ, որին կ'փափազի ամէն մի հայ, այս կտորն էլ կայ, թէ Վարդանը տեսնում է նոր հայոց եկեղեցին, որը հինին, ամենեխն նման չէ, քահանան աշխարհականի նման է, դիպակներ վրան չկան, նա ամբիո-

նից քարոզ է ասում, սրբոց պատկերներ, լուսաւորչեց զատ, չկան, պատարագը բաղկացած է քարոզից և սաղմոսից, երգեհոնը նուազում է, ժողովուրդը նստած է երկայն նստարանների վերայ: Աւելորդ է ասել, որ այս նկարագրութիւնը յիշեցնում է լութերական եկեղեցին: .Ուրեմն, Լութերի ուսմունքը և եկեղեցին հայոց համար իդէալ է, և հայը պիտի գտնի նորան: Ի՞նչպիսի թիւրիմացութիւն: Նա, ինչպէս այս երկում էր վերջերը մասնաւոր խօսակցութիւնից, ուշ հասկացաւ, որ հայոց աղջի բարօրութիւնը և պայծառութիւնը ոչ գիպակեայ շուրջառներից, հինսաւուրց պաճուծանքից և սրբոց պատկերներից է վնաս կրում, և ոչ օրգանից, երկայն նստարաններից, պատկերներ չկանուց օգուտ պիտի տեսնէ. նորա բարօրութիւնը, ինքնաձանաչութեան, ազգասիրութեան, կրթութեան, աղգային լեզուի դիտութեան մէջն է և «ՆԵՐ-ԱՀԵ-ԱՅ-Ռ» վերանորոշու-Աւան մէջ, որսնիւտու հայոց ԵԿԵՂԵՑ ին հայոց ԵԿԵՂԵՑ-ԱՅՆ պէս ԵՐԵՒ+ ի-Ռ ԳԱՅ-ԱՎԱՆ և «Ն մի Ժանանակամիջա- Յ-Մ ԽԵՑ» աղանդու-ԱՎԱՆ, ԽԵՑԻ, ՏԱՐ+Ի, ԳԵՎԻ-ԱՎԱՆը ԽԵՑԴ-ԱՎԱ-ՆԵՐ և արգելունել դրած լունի: Նա յանուն Քրիստոսի սիրոցն խարոյկներ վառած չէ իւր դիտնականներին, ուսուցիչներին այրելու: Իւր գործունէութեան վերջերը, իւր երկասիրութիւնների մէջ, ուր շատ անգամ գարձեալ նա իւր իդէալներն է յայտնում, նա եկեղեցւոյ մասին մի անգամ և եթ կրկնած չէ այն, ինչ ասել էր «ԽԵՆԹԻՄ»: «ԽԵՆԹԻԳ» յետոյ զրած վէպերում, օր. «Կայծեր», «Դաւիթ բէկ», «Սամուէլ», արդէն յայտնվում է Բաֆֆիի ուղղութիւնը, որ մեզ ամենքիս լաւ յայտնի է: Բաֆֆին տեսնում է իւր Ճանապարհորդութեան ժամանակ, որ հայտառանը աննախանձելի դրութեան մէջ է, ժողովուրդը տգէտ, հարատահարուած, ստրուկ, նա կորցրել է իւր նախնեաց քաջութիւնը, վախսկոտ է, ժուլամորթ, իւր անցեալը և լեզուն չփիտցող յուսահատ, հոգեորականութիւնը ընկած, ժողովրդի աչքում հեղինակութիւնից զըկուած. նորա սիրտը ցաւում է և ահա նոր վէպերը աւելի և աւելի ձեակերպուելով հասնում են այն կէտին, որ ոգեսրում են ընթերցողին իրենց ազգասիրական ձգտումներով: Բաֆ-

ֆին իւր բանաստեղծական բարձր նկարագրութիւններով պատկերացնում է մեզ հայ զիւղացու կեանքը, նորա առօրեայ ինտերենները, նորա ձգտումները, նորա առաքինութիւնը և պակասութիւնները, պարզութիւնը և զիտութիւնը, նորա քաշած ձնշումները, և առհասարակ նորա տնային կեանքը: «Կայծերում» նա քարոզում է հայ երիտասարդներին այն բարձր գաղափարները, որոնք միակ միջոցներ կարող են լինել Տաճկաստանի հայոց փրկութեան բարբարոս տէրութեան ձեռքից: Քանի, քանի հայ երիտասարդներ ոգեստուած չեն Բաֆֆիի այս վէսի վառվուուն և քաջալերական էջերից: Ո՞ր հայ երիտասարդը սրտով վշտացած չէ կարգալով այն դառն ու դժուար դրութեան մասին, որի մէջ ընկած է Տաճկահայաստանի հայը այն ձնշումների և հարստարութիւնների մասին, որ տաճիկ աէրութիւնը տմարդի կերպով գործ է դրել իւր անոպաշտան ստորագրեալի վերայ: Բաֆֆին տեսնում է, որ հինաւուրց հայերի դէվեզը «սուրբ ձեր և պարանոցք մեր» չեն կարող փրկել Տաճկահայաստանը. նա հասկանում է արդի դարուս ողին, որ գայլի հետ գայլ պէտք է լինել և նայելով Տաճկահայաստանի փոքրը սլատօնական ազգերի անկախ դրութիւնը ուզում է, որ հայերն էլ այս ազգերի օրինակին հետեւն: Իսկապէս հէնց այս էր պատճառը, որ ոչ մի հեղինակ հայ զրականութեան մէջ այնքան սէր չվայելեց ընթերցող հասարակութեան և տաճկաստանցի հայ մշակների կողմից, որքան Բաֆֆին. այս չչը պատճառը, որ նորա թաղմանը ուղեկցում էր ոչ միայն կրթուած գասակարզը, այլ և մշակների ահազին մի բազմութիւն, որոնց բանաստեղծն էր ինքը, որոնց սրտի դարդ ու դարմանը ինքն էր հասկացնում հայ հասարակութեան: Այս վերջինս հիմա ունի իւր առաջ մի քանի բանաստեղծական հասորներ, որոնց մէջ պատկերացրած է հայի անցած փառքի յիշատակը, ներկան, և միւնցն ժամանակ իրեն անելիքը ապագայում: Ինչքան որ մէր հին մատենալիրները հաղորդել են մեղ աեղեկութիւններ հին հայստանի մասին, այն քան էլ Բաֆֆին տուել է մեղ տեղեկութիւններ այժմեան

տաձկահաշյոց մասին։ Իւր վէպի միջոցաւ նա մեր եղբայրակիցների կեանքը մեղ համար հետաքրքիր է դարձրել։ Ինչպիսի անհամբերութեամբ հայ հասարակութիւնը սպասում էր նորա մի որ և է նոր վէպի և ի՞նչպիսի ուրախութեամբ մէկը միւսին հազորզում էր, թէ այս ինչ վէպը, այս ինչ մասը կամ մի ուրիշ վէպ մամուլի տակն է և շուտով լոյս կտեսնի։ Այս ամենը տեսնելով, ի՞նչպէս չասես, որ Ռաֆֆին սաստիկ նպաստեց ընթերցանութեանը հայ հասարակութեան մէջ։ Ի հարկէ չէ կարելի ուրանալ, որ մեր միւս բանաստեղծներն էլ ոչ պակաս նպաստեցին ընթերցասիրութեանը, բայց նոքա անդադար պտտելով հայի տնային կեանքի շրջանի մէջ, այն չարին, ինչ որ Ռաֆֆին արաւ։ Նա իւր ժամանակակից վիպասաններից աւելի լու հասկացաւ, որ այժմեան կրիստիկան իւրաքանչիւր բանաստեղծական երկասիրութիւններից, գեղարուեստական պայմաններից զատ, պահանջում է պօէտից բարձր գաղափարներ և արդիւնաւոր ձգտութներ (աէնդէնցիա)։ Այս բարձր գաղափարները և ձգտութները աւելի օգտակար անելու համար, նա գուրս եկաւ ընտանեկան նեղ շրջանից, մասնաւոր մարդու կեանքից և անցաւ դէպի աւելի լայնը—ընդհանուրը, որին միւսոյն ժամանակ նա հազորզեց իւր քաղաքական հայեացքները։ Նա ուրեմն շօշափեց հայի սրախ ամենաքնքուշ լարերը և հայը սիրեց նորան։

Չբաւականանսալով միայն ներկայ կեանքից, նա պօտեկց իւր վիպասանութիւնները մի պատմական վէպով, որը «Սամուէլն» է։ Այստեղ ևս նա հաւատարիմ մնաց իւր սիրելի աղքայնութեան գաղափարին։ Հին հերոսի աղքասիրութեանը հետեւելու համար, նա իւր բանաստեղծական դրուածքի մէջ քարոզ է կարդում հայ աղքի երիտասարդներին։ Ինչքան մեծ և վառ պէտք է լինէր Ռաֆֆիի երկակայութիւնը, որ Փաւստոս Բիւզանդացւոյ այս փոքր կտորից նա ստեղծել է մի ահազին համար և տուել է իւր աղքին։ Այս կտորը, որ տպուած է նորա «Սամուէլի» մէջ իրեւ էպիգրաֆ, հետեւալն է։ «Այնուշետե Վահան Մամիկոնեանը և Մերուժան Արծրունին, որոնք, երկուսն էլ անօրէն և պիղծ լինելով աստուած-

պաշտութեան ուխտից ապստամբելով, պաշտեցին Մազգեղանց անաստուած աղանդն սկսեցին աւերել հայոց եկեղեցիները և քրիստոնէից աղօթատեղիները. մեջեաններ էին շենում շատ տեղ և մարդիկ հնազանդում էին Մազգեղանց օրէնքին և իրանց որդոցը և ազգականներին տալիս էին կրթութեան Մազգեղանց: Ապա Վահանայ որդիներից մինը, Սամուէլ անունով, սպանեց իւր հայր Վահանին և իւր մայր Որմիզդութիւնն, որը պարսից թագաւոր Շապուհի քյորն էր»: Իւր այս վէպի մասին Ռաֆֆին այս նշանաւոր միտքն է յայտնում իւր յառաջաբանի մէջ: «Բայց Սամուէլը վաղուց իմ մոտածութիւնների առարկան էր դարձել: Խրախուսուելով այն գաղափարով, թէ որքան մէծ կրթողական ազգեցութիւն ունի պատմական վէպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է իւր նախնեաց մեծագործութիւնները և աշխատում է հետևել նրանց առաքինութիւններին, տեսնում է նրանց մոլորութիւնները, աշխատում է հեռու պաշել իրեն նրանց կատարած մխաներից,—այս միաքը քաջալերեց ինձ: Իսկ ես կ'աւելացնեմ, որ այս վէպով նա այլևս տուել է մեզ մեր նախնեաց առօրեայ կեանքի պատկերը, որ ոչ մի պատմութեան միջոցաւ չէ կարող այնքան տպաւորուել մեր մոքի մէջ որքան այնպիսի վեպասանութեամբ, ինչպիսին «Սամուէլն» է: Միւս իւր հեղինակութիւնների վերարերմամբ Ռաֆֆիի նշանակութիւնը այնքան է, որքան առհասարակ կարող է ունենալ ամէն մի բանաստեղծ, որովհետեւ այս երկասիրութիւնները ունեն միայն գրական գեղարուեստական ձաշակը զարդացնելու նպատակ, և սոսկ գրական նշանակութիւն:

Այս երկասիրութիւններն են՝ «Ոսկի աքաղաղ», «Մինը այսպէս, միւսը այնպէս», «Փունջերն», «Խաչագողի յիշատակարանը»: Ինչ կվերաբերի «Խամսայի մելիքութիւններին», նա պատմաբանների համար թանկաղին նիւթ է ներկայացնում, իբրև առաջին փորձ Ղաղաբաղի մելիքութիւնների պատմութեան:

Այսքանն ասելով Ռաֆֆիի նշանակութեան մասին արդի հայ գրականութեան տեսակէտից, մենք մի կողմն ենք թող-

նում նորա երկասիրութեանց զուտ գրական գեղարուեստական քննութիւնը, թէ որքան հոգեբանական տեսակէտից Բաֆֆին ճշմարիտ բանաստեղծ է, և նորա հերոսները համապատասխանում են գեղարուեստի պահանջներին, այս դուրս է մեր նպատակից և կարող է միայն Բաֆֆիի կրիտիկոսին զբաղեցնել:

Վերջացնելով մեր գրութիւնը, մենք ընթերցողի առաջ կդնենք այն թեղիսները, որ հանում ենք մեր աշխատութիւնիցը Բաֆֆիի նշանակութիւնը ցոյց տալու համար:

ա) Գեղեցիկ նկարագրութիւններ, որոնց նմանը կարելի է ասել ոչ մի բանաստեղծ չունեցած. այս նկարագրութիւնները զարգացնում են հասարակութեան ձաշակը աղքային նիւթերի միջոցով և կարող են զարգարել մեր աղքատ ընտիր հատուածների (քրոմատիա) երեսները:

բ) Եւրոպացի ազգերը մի անգամ ես իմացան, որ հայ ազգը ունի ընտիր բանաստեղծներ և Բաֆֆիի շնորհիւ ծանօթացաւ մեղ հետ, (օր. Լեյստ և ոռու գրականութիւնը):

գ) Բաֆֆին տարածեց մեր մէջ ընթերցասիրութիւն, հարստացնելով աղքատ հայ վիպասանութիւնն իւր գեղեցիկ ազգասիրական վէպերով և ստեղծելով ընթերցողների մի ամբողջ հասարակութիւն, որը մինչեւ այժմ չէր հետաքրքրվում իւր մայրենի գրականութիւնովն ու լեզուովը:

դ) Բաֆֆին ծանօթացրեց մեղ մեր հեռաւոր եղբայրների հետ և նկարեց մեր առաջ նոյցա թշուառ կեանքը. իսկ իւր պատմական վէպերով բացեց մեր նախնեաց կեանքը, իսրախուսելով մեղ նոյցա նման լինել:

ե) Նա իւր զբով ոգևորեց հայ երիտասարդութիւնը: Այս շատ պարզ է և աւելորդ է մինչեւ անգամ խօսել:

շ) Առ հասարակ նա իւր զրուածներով տարածեց հայերի մէջ ինքնածանաչութեան գաղափարը, որն ամենակարեռը բանն է հայերի համար:

է) Գալով արարատեան լեզուին, նա զրելով ընտիր արարատեան բարբառով իր վէպերը, մաքրեց ու մշակեց նորան:

Այս կարճ վրոյցը Բաֆֆիի մասին ցոյց է տալիս թէ  
ի՞նչքան արդիւնաւոր է եղել նորա կեանքը հայ ազգի և  
զրականութեան համար: Եթէ մերոնք նորան նիւթապէս ա-  
պահոված լինէին և նա կեանքի միջոց փնտուելու համար  
ուսուցչական փոքր ռոճկով ապրած չ'լինէր, ի՞նչքան զեղե-  
ցիկ և օպտակար հասորներ նա տուած կլինէր իւր ազգին  
և որքան միջոցներ պիտի ունենար իւր աղքատ և առօրեայ  
կեանքում իւր սիրած ասպարիզի մշջ աւելի ևս փայլելու  
համար: Նա կարծես առաջուց իմացաւ, որ կեանքը ապա-  
գայում նորան ժպտելու չէ, և իւր ասպարիզի ճամբան նեղ է  
ու փշոտ և գեռ 1860 թուին ասաց՝

Ի՞նչ զուարձութեամբ սահում են ժամեր  
Գեղեցկափիթիթ իմ կեանքիս գարնան,  
Ի՞նչ անուշաշոտ ծաղկում են վարդեր,  
Զարդարում եղեմ անհոգ մանկութեան:

Սահում են ժամեր, վազում ժամանակ՝  
Բայց Կոռնոսի անիրաւ ձեռքեր՝  
Ամէն մի րոպէ քաղում են անցագ՝  
Կեանքիս զըսախտէն զեղեցիկ վարդեր:

Տիրում է սարսափ՝ զարշուրանք և դողը  
Երբ մտածում եմ, ամէն մի վայրիեան՝  
Քանի քայլ առաջ դիմում դէպի հող՝  
Ուր մարդիկ անդարձ իջան զերեղման:

Ի՞նչ է իմ կեանք՝ ուրեմն մի ծաղեկ՝  
Գարնան ողիով բացուած զեղեցիկ՝  
Գալիս է աշուն՝ տերեւը թառամում՝  
Փշում է հողմը՝ փոշի է դառնում:

Ա. Թանգեանց

1891 թ. 8 Կոյեմբերի.

Նույնականացնելուն.



Voyage en Turquie d'Asie. Arménie, Kurdistan et Mésopotamie par le compte de Cholet lieutenant, au 76-e Régiment d'infanterie. Ouvrage accompagné de gravures et d'une carte. Paris, librairie E. Plon, 1892.

Ճանապարհորդութիւն Փոքր Ասիայում. Հայաստան, Քըրդաստան և Միջագետք: Աշխատասիրութիւն Կոմա զլ Շոլէի, Նկարներով և աշխարհագրական քարտեզով: Փարիզ, 1892 թ.:

Մինչև այժմ ոչ մի եւրոպացի ուղեոր այնքան աննպաստ, կծու և գառը լեզու զործածած չէ հայերի մասին, որքան Փրանսիացի Շոլէ զենուորականը իր վերոյիշեալ զբքում: Թըրքասէր այս Փրանսիացին մանրամասնօրէն նկարագրումէ, իր Ճանապարհորդութիւնը Հայաստանում և մի առ մի յիշումէ այն տպաւորութիւնները, որոնք թողած են նորա վերաց տաճկահայերը Փոքր Ասիայում: Կոմա Շոլէն չէ սիրում հայերին և չէ ել համակրում մեր ցեղին, որովհետեւ նա ամենուրեք իր ուղեորդութեան ժամանակ հայերի մէջ իբր նկատած է այնպիսի ստոր, զզուելի յատկանիներ, որ առանց առելութեան և անսղօրմ խսառութեան չէ կարողանում պատմել հայոց մասին: Մենք առայժմ մէջ կըերենք բառացի թարգմանութեամբ միսցն այն կտորները, որոնց մէջ աւելի խսորէն և համարձակութեամբ խօսում է մերոնց տղեղ ախտերի և յատկութիւնների վերայ Փրանսիացի Ճանապարհորդը:

Ահա ինչպէս է սկսում Շոլէն նկարագրել հայերին՝ «Պարսիկներից յետոյ Արէքսանդրիայի յոյները, յետոյ Հռովմացեցիք իրենց լէզեռներով և Բիւզանդիոնը հերթով զբաւեցին Հայաստանը մինչև Խոլամաց յաղթութեան երեան գալը. այնպէս որ բազմագրեան ծառայութեան վարժուած լինելով թշուառ հայերը երբէք անկախութեան երես չեն տեսել և զարգացել են որպէս Ճորտ կամ հարկատու մի տարր: Ուրեմն, միթէ զարմանալի է, որ ամեն կողմից շըջապատռւած դոլով քաջ և խրոխտ ցեղերից, հայերը դեռ մնում են

Ասիսյում իրենց վատութիւնով և երկչուութիւնով, նեն-  
գութիւնով և երկեզվութիւնով, որպէս մի արտօ: Սողալու  
վարժուած լինելով, կարող չեն այլ ևս զլուխները բարձրաց-  
նել. շարունակ լծի ներքեւ ճնշուած, իրենց ողն ծռուել է  
ամեն տեսակ ցածութիւններ անելուց: Ապրուստ ճարելու  
համար երկար ժամանակներով դժուարագրյն և զզուելի տե-  
սակ աշխատութիւններ յանձն առնելով, ճարպիկութեան մաս-  
նաւոր յատկութիւններն են իւրացրած և այդպիսով հարրա-  
տացրած, լինելով միւնոյն ժամանակ բարոյական զդացումից  
կատարելապէս զուրկ, այնպէս որ դոցա երկիրը ճանապար-  
հորդելով ուղեսորին ոչինչ չէ մնում, եթէ ոչ միայն խիստ  
արհամարհանք տածել դէպի բովանդակ այս ցեղը»:

«Այերի մասին այս խիստ եղակացութիւնն անելուց յե-  
տոյ, ֆրանսիացի զինուորականը նկարագրումէ մերոնց վար-  
մունքը միմեանց հետ, այսպէս՝

«Միմեանց նախանձու վերջին աստիճան և միմեանց  
վեասելու առիթ չփախցնելով, խորապէս պառակտուած հին  
թշնամութեամբ, հայերը երբէք չեն կարողացել միմեանց մօ-  
տենալ իրարու հետ միանալ իրենց հարստահարչին զի-  
մարդրելու կամ իրենց կացութիւնը բարւոքելու համար: Քա-  
ղաքներում շատ հարուստ, իսկ գիւղերում վերին աստիճանի  
խեղճ, միմեանց երբէք օգնութիւն չեն անում: Թուրք կա-  
ռավարութիւնն ի զուր տեղը դոցա արգելած է զէնք կրելու,  
որովհետեւ, անշուշտ, նոքա զէնք գործածել չին կարող»:

Մեր հայերը, որոնք սիրում են շարունակ նպաստաւոր  
գովեստներ լսելու օտարից, կարծում ենք վատ չէր լինի  
տրամադրութիւն ունենային լսելու այս անդամ և իրենց  
բնաւորութեան մասին յայտնած հակառակ յատկանիները  
թէեւ ընդհանուրի վերաբերմամբ միանդամայն անտեղի և  
խիստ չտփազանցրած: Աւելի վատ և արհամարելի ցոյց տա-  
լու նպատակով մերոնց, կոմս Շոլէն բաղզագում է հայերին  
Բալկանեան ազգերի հետ, այսպէս ահա, նա զրում է.

«Նախընթաց ճանապարհորդութեանս միջոցին, առիթ  
եմ ունեցած այցելու և ուրիշ երկիրներ, որոնք գեռ նոր

Են թօթափել օսմանեան լուծը: Սերբիական և Բոլգարիական զիւղերում երեկոյեանները պատմում էին ինձ Մահիկի բռնապետութեան, փաշաների կաշառակերութեան, սոսկալի չարիքների և նախնիքների վերայ գործադրած տանջանքների պատմութիւնները (այսինքն այն բոլորը՝ որն այժմ տեղի է ունենում Հայաստանում): բայց միեւնոյն ժամանակ նոքա պատմում էին և իրենց քաջութիւնները, կոփւները, իրենց փառաւոր յաղթութիւնները և պարտութիւնները: Եւ ես ըզդում էի այն ժամանակ, որ յաշթուածը երբէք հրաժարուած չէր աղատութեան յշյից, և թէ նեղութիւնների ու աղէտների հակառակ, նա միշտ մաքառած էր իւր անկախութեան համար, հաստատ հաւատ ունենալով վերստին ձեռք բերելու այն: Մակայն այսպիսի բան չկայ Հայաստանում: աղքային զդացումը տեսումէ այնտեղ կրօնական տարբերութեան շնորհիւ, և երբէք բաւական եղած չէ մի որ և է արգիւնք յառաջ բերելու: Մի քանի գաւակցութիւններ կազմուած են եղել Տաճկահայաստանում, բայց բնաւ լուրջ շարժման կերպարանք չեն առած. և գեռ անցեալ տարի եւրոպական զործիներից դրդուած, երգումի և Սերբաստիոյ հայերից ոմանք ջանացին թէև միանալու օսմանեան լուծը թօթափելու համար, սակայն այդ էլ այնպէս զլուխ տարան, որ առանց մի որ և է օրինաւոր գունդ կազմել կարողանալու և մի մի քաղաք ոտքի բարձրացնել կարենալու, միմեանց փօխագարձարար մատնեցին և իրենց ազգակիցների վերայ խստութիւնների կրկնապատճման պատճառ եղան, տեղեք տալով հարաւային Հոյատանի այժմեան կատաղի ճգնաժամին քրգերի և հայերի մէջ:

Այնուշեան Կոմս Շոլին նպատակ ունենալով աւելի որոշ կերպով երեւան հանել հայ ազգի բարոյական տկարութիւնը և մերոնց բնաւորութիւնների մէջ ընտիր բարեմտսնութիւնների բացակայութիւնը, որպէս զի հաստատած լինի իր վերոյիշեալ խիստ դաստավճիռը տաճկահայոց մասին, այս տողերն է մէջ բերում:

«Մակայն պէտք չէ կարծել, որ հայերի համար մեծ դժուարութիւն կլինէր միմեանց աջակցելով ձեռք բերել  
«Արագ»

բոլորովին ուրիշ արդիւնք: Իրենց մերձաւոր զրացիները, նեստորականք, մի շատ լաւ օրինակ կարող են ծառայել: Ամենաշատը երեսուն հազար հոգի են նոքա (մինչդեռ հայերը երեք միլիոն են հաշվում՝ թուրքիայում), և Վանաց լճի հարաւային կողմը մահմեատական երկրում ապաստանելով լեռների մէջ անառիկ դիրք ունեն բռնած: Նրջապատուած խիստ մոլուանդ և աւազակ քրածերով, կարողացել են նոքա մէկ տեղ կենարոնանալով ու համակերպուելով, իրենց զրացիներին խելքի բերել և շատ լաւ զիտեն, որ եթէ իրենց զիւղերից մէկը յարձակման զոհ երթայ, խակոյն իրենք ևս կերթան այրելու իրենց թշնամիների երկու երեք զիւղերը և իրանցից յափշտակուածի կրինը կառեանզեն թէ կին և թէ անասուն: Կառավարութիւնն այնպէս լաւ զիտէ նոցա քաջութիւնը, որ չի համարձակվում նոցա մէջ ուղարկել մի որ և է պաշտօնեայ, և զոհ է, որ տուրքերը ճշտիւ ընդունում է հալիսկոպոսների միջոցաւ: Տաւրոսի քրիստոնեայ ասորիները, կիբանանու մարոնիտները նոյնպէս իրենց կորովով, քաջութիւնով և ընթացքով յաջողել են ոչ միայն բարւոքելու իրենց վիճակը, այլ և ձեռք բերել կէս անկախութիւն, որով զարդանում և բարգաւաճում են, ու օտարներից էլ մեծ յարգանք վայելում: Հայերն ընդհակառակը, թէե հարիւրապատիկ աւելի բազմաթիւ, աւելի հարուստ, աւելի կռնակ ունեցող սակայն չեն կարողանում և որ հաւանական է չեն էլ կարող ո և է մի բան ձեռք բերել: Նոքա զուրկ են պատերազմական ողուց, ապստամբական զբացումից, որոնք կարող էին նոցա բարձրացնել և երբ այն զիւղերի մէջ, որտեղ ծայրայեղ թշուառութիւնը և չբաւորութիւնն է տիրում, հարցնում էինք նոցանից, թէ ի՞նչ են անելու վերջապէս, ի՞նչ մտադրութիւն ունեն, փոխանակ սարսեցնելու մաքով մէզ իրենց բազուկները ցոյց տային, փոխանակ մատածելու թէ թերեւ մի օր կարող պիտի լինեն ամենը միասին դէմ գնել իրենց չարչարող քրածերին և իրենց արեան գնով եթէ հարկ լինէր, վշտի ամոքում և մի որոշ ազատութիւն ձեռք բերէին, պատասխանում էին մեզ վախով ու վախսկութիւ-

նով թէ Աստուած իրենց իր երեսից ձգել է և թէ սյլ ևս ոչինչ յոյս չունեն. և թէ, եթէ իրերի վիճակը այդպէս շարունակու՞ի, պէտք է մի օր թողնեն իրենց բնակավայրը և երթան Ռուսահայաստան, այնուեղ աւելի լաւ ապրուստ և հանգստութիւն գտնելու համար»:

\* \* \*

Սյս զիրքը հայոց նկատմամբ այնքան հետաքրքրական կտորներ է պարունակում իր մէջ, որ խսկապէս ասած, արժէր նորան ծայրէծայր հայերէնի վերածել սոսկ մի որոշ գաղափար տալու մերնոց, թէ հայկական ինդրի երեան գալուց յետոյ, երբ հայաստանով հետաքրքրուող եւրոպացոց թիւը աճում է օր օրի վերայ, ի՞նչ աչքով են նայում և ի՞նչ գաղափար են կաղմում մեղ վերայ մի կարդ եւրոպացի ուղեւորներ, որոնք անձամբ անձին ձանապարհորդում են մեր երկիրը: Սակայն այդ մենք չենք կարող անել ուստի և բաւականանք միայն այն քաղուածքով, որ մէջ ենք բերել յիշեալ զրքի 83—85 երեսներից:

Կինում են պարագաներ, երբ հայոց մասին աննպաստ գրուածները նշանակութիւն չպէտք է ունենային և պէտք էր անուշագիր թողնել նոցա, սակայն սյժմ, երբ մեղ համար շատ կարեռ է Եւրոպից հասարակական կարծիքը որը, ով զիտէ, դէմքերի բերմամբ, ի՞նչ նշանաւոր դեր կարող է խաղալ տաճկահայոց վերածնութեան ինդրում, խիստ ցաւալի է տեսնել, որ տամնեակ հաղարաւոր օրինակներում հայ աղքայնութիւնը ներկայացրած է որպէս զգուելի և անպիտան մի տարր: Սյսպիսի հրատարակութիւնները, անշուշտ, նոյն խկ հայասէր եւրոպացու վերայ վատ աղղեցութիւն կարող են թողնել ապա ի՞նչ ասել հայութեան հետ մօտիկից անծանօթ մեծ բաղմութեան համար: Անկասկած, եթէ այսպիսի հրատարակութիւններ սկսեն աւելի յաճախ երեալ, այն ժամանակ, բնական է, թէ ի՞նչպէս կարելի կրլինի փոքր առ փոքր կորցնել Եւրոպից հասարակական կարծիքի առաջ և այն գեռ նոր ի նորոյ կաղմուած ընդհանրութեան համակրանքը, որի

ստեղծելու համար տասնեակ տարիներ քիչ թշուառութիւն  
և տառապանք չեն կրած զլսաւորապէս այն մի բուռը  
հայերն, որոնք բերանացի թէ զրով, սեպհական օրգաննե-  
րով թէ դասախոսութիւններով այնքան բարձր են պահած  
հայութեան անունը Եւրոպիոյ երեկո կեղրոններում: Մենք  
մեր այս մի երկու խօսքերով կամեցանք ցոյց տալ միայն, թէ  
ի՞նչ նշանակութիւն ունի և կարող է ունենալ այնպիսի մի  
հրատարակութիւն, ինչպիսին է Շոլէնը, մանաւանդ որ  
այս անձնաւորութիւնը իւր մի կարգ ճանապարհորդական  
յիշատակարաններով այլ երկիրների մասին անծանօթ հեղե-  
նակ չէ ներկայանում ֆրանսիացի ընթերցողին: Այժմ անց-  
նենք բուն խնդրին:

\* \* \*

Եթէ Շոլէն իր զրքում ներկայանար որպէս սոսկ ու-  
ղեոր ու պատմէր միայն իր այն տպաւորութիւնները, որոնք  
թողած են նորա վերայ այցելած հայաբնակ վասրերը, այն  
ժամանակ մենք այլապէս կ'նայէինք նորա զրութեան վերայ,  
բայց երբ նա աւելի յաճախ խորհրդածութիւններ է անում  
հայոց անցեալի, ներկայի և ապագայի մասին և սխալ են-  
թազրութիւնների վերայ հիմուելով տեղի անտեղի անողոք  
դադավճէռներ կարգում մեր ազգայնութեանը, որը միանդա-  
մայն դուրս պէտք է լինէր ուղեորի ծրագրից, այդ զէպ-  
քում մենք ստիպուած ենք դէթ մի քանի կարեոր նկատո-  
ղութիւններ անել նորան:

Շոլէն հայոց անուանում է սարուկ, վախկոտ, լալկան  
մի ցեղ որը զուրկ է միանդամայն թէ բարոյտկան զգացմուն-  
քից և թէ պատերազմական ոգուց: Սորան իւր ապացոյց,  
նա հայերին համեմատում է թէ մարոնիաների և ասորինե-  
րի և թէ բալկանեան ցեղերի հետ: Պատմում է, թէ ի՞նչպէս  
մի բուռն նեստորականներ Վանայ լճի հարաւային կողմում,  
խկ քրիստոնեայ ասորիները Տաւրոսում և մարոնիաները Լի-  
բանանում իրենց քաջութեամբը և կորովովը ձեռք են բերած  
համարեա կէս-անկախութիւն, որը և միջոց է տալիս նոյա

Փիղիքապէս և բարոյապէս բարդաւաճելու, որպէս երջանիկ ցեղեր: Կոմս Շոլէի բերած այս իբր թէ համովեցուցիչ փաստերը այնքան թոյլ և խղճալի են, որ մնում է միայն զարմանալ, թէ ի՞նչպէս մի մարդ, այն էլ իր վերայ մեծ յաւակնութիւն ունեցող ուսեալ ֆրանսիացի, կարող է այսպիսի երեխայի կարող են շարժել: Նախ քան այս կարծեցեալ համովեցուցիչ փաստերը ջրելու, հետաքրքրական էր իմանում թէ նոյն ինքը Պ. Շոլէն, ի՞նչ անուն կ'տար այն մարդին, որը մի առարկայի վերայ բնաւ դաղափար չունենալով, առանց նորան ուսումնասիրելու և ծանօթ լինելու, յանդգնէր այդ առարկայի մասին մեծ հեղինակաւոր անձի անձնավստահութեամբ խօսել: Դժբաղլաբար այդպիսի մի խղճալի դեր խաղում է նոյն ինքը Շոլէն հայ աղքի նկատմամբ: Թողնենք դեռ մի կողմը, որ մի աղքի մասին յանդգնօրէն խօսող ֆրանսիացի զինուորականը պարտաւոր էր ուսումնասիրել այդ աղքի անցեալը, նորա խորհրդաւոր պատմական շըանները երբ նոյն իսկ զօրաւոր աղքութիւնները անկարող են եղել ժամանակի հոսանքին դիմագրելու, թողնենք և այն, որ ֆրանսիացի կոմսը բնաւ ծանօթութիւն չունի հայ աղքի կուլտուրական ծառայութեան մասին խաւարամիտ և բարբարոս ցեղերի ու օրդաների մէջ, նա գէթ չէ էլ ծանաչում և այժմեան ոչ միայն բովանդակ հայ աղքը իր քաղաքակրթական ձառնութերով, այլ նոյն իսկ տաճկահայոց վերայ ուղեւորի չափ անդամ մի թեթև տեղեկութիւն չունի. այլապէս, ի՞նչպէս բացատրենք մի կարգ այլ նշանաւոր երեսոյթների մասին լուելը և նոյն իսկ ծաւրոսի մասին խօսելուս նորա անդիտենալը, որ այդ լեռների միակ խրոխա ու քաջարի զաւակները հայ աղքի նշանաւոր մի մասն են կաղմնաւմ, որոնք մինչեւ վաթսունական թուականները ոչ միայն կէս անկախութիւն էին վայելում, այլ կատարեալ անկախութիւն, ունենալով իրենց իշխանները ու պատերազմի ժամանակ նաև զօրքերը: Ի՞նչպէս կարելի է մի թարմ մարդ չողեսրուի հայ աղքի այդ խրոխա անդամների քաջութիւնով և դիւցաղնական գործերով, որոնք իրենց ա-

զատութիւնը պահպանելու համար ի՞նչ մեծ կռիւներ ու արիւնարբու պատերազմներ են մղել շրջակայ ցեղերի և նոյն իսկ տիրող կառավարութիւն գունդերի գէմ ու միշտ յաղթութիւն աարել որպէս լեռների խրոխա զաւակներ:

Աշա ի՞նչպէս է նկարագրում այս դէյթունցոց նոյն իսկ մի ամերիկացի միսիոնար, որն երկար ժամանակ ապրելով Կիլիկիա, ուսումնասիրած է մեր աղջայնոց բաւականին մօաից:

«Ամեն մի տարիքու զէյթունցի, այսպէս է սկսում իր դրութիւնը ամերիկացի միսիոնարը, կարող է ձեղ պատմել, որ յաջորդաբար վեց անգամ բանակներ են եկել ապստամբքաղաքը ջախջախնելու ու տիրապետելու, սակայն բոլոր ժողովուրդը միանալով չախմախլու հրացաններով զինուած՝ քշել է նոյն և լեռների անցքերը յարձակողների դիակներով ծածկել:

«Ազատութեան համար մղուած կռուի մէջ քաղաքը շրջապատող բարձր ապառաժները հանդիսատես են եղած շատ թերմոպիլներու և այնպէս ամեն մի ձոր, ամեն մի բլուր ունի իր արիւնուուշտ ճակատամարտների պատմութիւնը: Բաղրում սերունդներէ ի վեր այսպիսի պատերազմական մարզանք ստանալով և բնոււ մասւորական ու բարոյական ազգեցութիւնների տակ չզանուելով զէյթունցիների մէջ աճել ու կազմուել է մի տեսակ բնաւորութիւն, որը մեզ շատ կենդանի յիշեցնումէ Վիլէլմ Թէլը և Ռուպին Հուարը:

«Երբ գծուծ սարկութիւնը ընդհանուր կերպարանք է առած երկրի մէջ, խիստ կազմուրիչ է տեսնել այս լեռնականների աղաւ և անկախ դէմքն ու կեցուածքը:

Նոյնպէս ոչ պակաս յայսնի են իրենց քաջութիւնով ու յաղթական ողով լեռնուա Սասունի խրոխա հայերը, որոնք երկար գարերի ընթացքում գէմ գնելով բարբարոս ցեղերի յարձակութիւն՝ պահպանած են եղել իրենց աղատութիւնը. բայց թէ ինչու սոցա մասին ոչ մի խօսք չէ ասում Շոլէն, այլ մոռացութեան տալով անձնապաշտպան և կորովի հայ լեռնականներին, միայն խեղճութեան մէջ տառապած հայերի վերայ է մատնացցյա անում, այդ էլ շատ հասկանալի է, թէ ինչ ինչ աղքիւրներից է բղխում: Շոլէն խկապէս եթէ ու-

զենար տաճկահպատակ աղգերին Համեմատելով միմեանց հետ  
նոյս արժանաւորութիւնն ու թերութիւններն որոշել, կար-  
ծում ենք, նա Համեմատութեան Համար վեր էր առնելու այդ  
աղջերին միևնոյն պայմանների մէջ. թէ չ, եթէ մարօնիա-  
ները ներկայ դարու վաթսունական թուականներին նապոլէոն  
կայսրի նման աջակցի պաշտպանութիւնը՝ ունենային, տես-  
նենք, կարող էին կամ թէ դոքա կ'յանդինեին անդամ երբ  
և իցէ այնպիսի դիմադրութիւն ցոյց տալու տաճկաց և յու-  
սալ ինքնավարութիւն ունենալու:

Բոլորովին անհասկանալի է. փոխանակ սքանչանալու մի  
ժողովրդի բարոյական ոյժի վերայ, որով նա մինչեւ անդամ  
այնպիսի փոթորկալից ժամանակներում, երբ Ասիոյ բարբա-  
րոս ցեղերի հրոսակները Փոքր Ասիան արիւնով ներկելուց յե-  
տոյ հեղեղում էին նաև Եւրոպիոյ դաշտերը արեան դետե-  
րով, միաք անգամ յդացած չ տմարգորէն ձգել իւր հայրենի  
մոխրակոյար կամ ընկճուելով բռնի ոյժից ձուլուել զօրեղի  
հետ, որպիսի միջոցների դիմել են շատ մեծ աղջութիւններ.  
փոխանակ ողեարուելու այն զաղավարով, որ այդ միջոցնե-  
րում իսկ հայաստանի խուլ մենաստաններն անգամ դադարած  
չն եղել ծառայելու որպէս լուսոյ փարոսներ, իսկ «անար-  
դուած» հայերի հոգեորականները փայլած են այդ բարբարոս  
ցեղերի մէջ, որպէս մի լոյս սփոռող մէտեօր, որի ճաճանչնե-  
րը խիստ հեռու են տարածուել և աղջուապէս խրախուսել  
աղջի մէջ ներքին ոյժը. փոխանակ երախտապարատութեամբ  
յիշելու հայոց արած ծառայութիւնը նաև խաչակիրներին  
և վերջապէս՝ փոխանակ զնահատելու այս աղջի ինքնաճանա-  
չութեան կայծը, որն երբեմն փայլած է առ երեսյթ հանդըղ  
մախրի տակից մի առանձին լուսով որ և պահպանած է հայ  
աղջի գոյութիւնը այնքան մեծամեծ պատմուկան յեղաշրջում-  
ներից յետոյ, կոմն Շոլէն գալիս և զեռ անուանարկում է այս  
աղջը. մի արարմունք՝ որ փոքրովի կրօնամոլ մարդին է միայն  
յատուկ: Իսկ թէ ինչո՞ւ հայերը մինչեւ վերջերս լոել են և  
զեռ լուսում են բռնի գործողութիւնների առաջ, դա էլ ունի  
իր շատ հետաքրքրական և հասկանալի կողմերը. բայց վեր-

ջառէս ի՞նչ կարող է անել այս անտէր ու անտիրական ժողովուրդը ամեն կողմից տեղացող հարուածների առաջ, երբ հայոց վերայ, նորա լուսաւորութեան դիմելուն համար, խրստութիւնները վերին ստուխճանին են համում, սկսած տընտեսական կողմից մինչև վարչական օրէնքները: Մի պարզ օրինակ կարող են ծառայել հենց վերջին արկածներն եւ. երբ հայերը ցանկանալով յենուիլ իրենց ոյժի վերայ ուղեցին բարւոքել իրենց վիճակը, այդ ժամանակ նոյն խկ այն հանրապետութիւնը, որի սկզբունքն է թոյլերի իրաւունքները պաշտպանել զօրեղի գէմ, երեսը շուռ առեց հայերից և իր աջակցութիւնը թուրքերին ընձեռեց: Միթէ ֆրանսիոյ արդի կառավարութեան ստեղծողները սորա համար հիմնեցին այս հանրապետութիւնը, սակայն գառնանկը նոյէի խօսքերին:

Եթէ Զիւլամերկի նեստորականները, Զէյթունցիք, Սասունցիք կամ Նարադաղցիք կարողացել են իրենց գիւցազնական համբաւը և կիսակախութիւնը պահել խկ բովանդակ երկրի միւս բնակիչներին այդ չէ յաջողել, զորան նպաստած են երկրի այն տնառիկ գիրքերը և զօրաւոր տեղադրութիւնն, որին կարողացել են նոքա ապաստանել այդ անկախութիւնը պաշտպանելու համար: Լիբանանի քրիստոնեաներն եւ, ինչպէս ասեցինք, եթէ կարողացան իրենց այժմեան ինքնավարութիւնը ձեռք բերել այդ էլ եղաւ սոսկ շնորհիւ միայն Լուգովիկոս Նապուլէնի սիրիական ափերը հանած ֆրանսիական զօրաբանակին, 1863 թուականի եղերական կոտորածի ժամանակ, որ կատարում էին դրիւղիները և արարները մարոնիաների և քրիստոնեայ արաբների վերայ: Բայց թող ասէ ձրիախօս ֆրանսիացի սպան, ով եղաւ մինչև այսօր տաճկահայոց հենց մի փոքր թե ու թիկունք կանդնող կամ թէ ի՞նչ դիրքերին կարողացան ապաստանել այն երեւ մէլլիա «ստրկաբարոյ» «ցած» և «լալկան» հայերը, որոնց փոքրհոգութիւնից զըլուանք է զգում ֆրանսիացի քաջաղէն սպան, այն սպան, որը պտտելով Փոքր Ասիայ ֆրանսիական գեսպանի յատուկ պաշտպանութեան տակ և վալիներին տուած եպարքոսական հրամանագիրը ձեռին, գարձեալ ի՞նչ ահ ու դողեր է քաշում

մինչև «խուժադուժ աղջերի միջեց ողջ առողջ պրծնիլը. . .» հապա ի՞նչ հողը տան իրենց զլիներին չարաբախտ հայերը, որոնք ամբողջ վեց, եօթ գարեր են ապրում այդ խուժադուժ աղջերի մէջ, որոնց հետ համերաշխ է եղել միշտ և կառավարութիւնը... Այդպիսի պայմանների մէջ այդքափ գարեր լեզուն, կրօնը և ազգութիւնը պահելը ոչինչ բան է համարում մեծախօս սպան և գեռ հայերից խրոխտ ձեեր և համարձակ լեզու տեսնել և լսել է փափազում... Ի՞նչ Փրանսիական թեթև մտածութիւն, ի՞նչ միակողմանի հայեացք: «Յիրաւի, եթէ այդ պայմանների մէջ այդքափ գիւրին է եղել միշտ «անվեհեր դիւցազներ» մնալը, հապա ի՞նչո՞ւ մի որեւէ Ռավաշօլի երկու երեք հարիւր կուսակիցների սպառնալիքից այս օրերս ամբողջ երեք միլիոնաւոր Փարիզը պատի ծակը մտաւ, իլ չնոնք ասում որ երգուեալ դատաւորները իրենց երգմանը զրժեցին առ ահու և սարսափի, ազատելով Ռավաշօլին զլիստման պատժից: Ապա ի՞նչ անեն խեղճ՝ հայերը, երբ իրենց շըջապատճ ռավաշօների թիւը միլիոնաւոր է եղել, այն ևս ունենալով, ինչպէս ասինք, նոցա հետ և կառավարութեան աջակցութիւնը... Այս ամենից յետոյ պ. Շոլէն կուղէ դեռ իր առաջ մի մի բյուարներ տեսնելու... Ի՞նչ այլանդակ մտածութիւն և ի՞նչ անհեթեթ պահանջ...

Այս ամենը հերիք չէ կարծես խակ դատողութիւնների և հակասական տրամաբանութեան մէջ խճճուելու համար, այլ և իր ուրիշ տկար կողմերն էլ է ներկայացնում այնպիսի պարզամիտ խոսառվանութեամբ, որ ճշմարիտ, կարծես գիմացդ մի լրջամիտ անձ չլինի, այլ quartier latin-ի համբակ գպրոցականերից մինը, հեռաւոր հայաստանին այցի ելած: Եւ արգարե, պ. Շոլէն մէջ է բերում մի հայ կաթոլիկի հետեւեալ խօսքերը, որ սա ուղղում է իր լուսաւորչական արիւնակցին. «Իս ամաչելով ամաջում եմ հայ լինելուս համար, որովհետեւ զուք լուսաւորչական հայերդ այնպիսի վաս արարածներ էք, որ եթէ թուրքը ջուր ցոյց տայ ձեզ խկոյն ձուկ կ'կարուեք ու ջուրի մէջ կ'թափուեք. եթէ խոտ ածէ ձեր առաջը, էշ կ'գառնաք ու կ'սկսէք խոտ ուտել, իսկ եթէ թուրք հանէ,

իսկոյն հաւատներդ կ' փոխէք»։ Հարկ համարելով հայի իսկ խօսքերով մինչև սյս աստիճանն ստորացնել յարգելի սպան չկարողացաւ մտածել անդամ, որ այդ չափ քաջութեամբ խօսողը նոյն հայն է, որի վախկոտութիւնը զվուանք է պատճառում իրեն, բայց այդ հայը լինելով կաթոլիկ և ունենալով դիմայն էլ Շօլէի պէս մի պաշտպան կրօնակից, կարողանում է իսկոյն այդքանի քաջասիրա մէկը դառնալ (այն ևս իր եղայրների հետ Քայն), իսկ լուսաւորչական հայերը, աւենելով իրենց առաջ աղատամիտ Փրանսիացի կրօնամոլ մի զաւակը, կամայ ակամայ զդոյշ և ակնածական կերպով են խօսում նորա հետ, վախենալով որ այդ քաջազէն «քրիստոնեայ եղայրը» որևէ իրենց անզգոյշ խօսքից օգուտ քաղելով ցոյց չափ նոցա այն «եղայրութիւնը», որ անում են նոցա պ. Շօլէին ամեն ուրեք զեկավարող և լուսարանող եղութա պատերները, Փրանսիայից արտաքսուած այդ գարշելի վամպիրները... Ահա թէ որոնց անուններն է տալիս պ. սպան ամեն մի քայլափոխում ապացուցանելու համար հայոց «խարդախութիւնը, ստորութիւնը» և այլն։ Գէշ աղբիւրներ չեն, ի՞նչ ասել կ' ուզէ և խիստ պատուաբեր Փրանսիական հանրապետութեան բանակին պատկանող սպայի համար . . .

Եյսպէս շատ բաներ կարող էինք յառաջ բերել յենուելով նոյն իսկ իրեն՝ սպայի խօսքերի վերայ, բայց բաւականանք այնշափն ասելով, որ այդքանի տաճկամէր և կրօնամոլ մէկը լինելով եթէ պ. Շօլէն նորէն չկարողացաւ թագցնել տաճիկ կառավարութեան և քուրդերի այն ահռելի զեղծումները և խժդժութիւնները հայոց նկատմամբ, որոնց նկարագրութեանը նուիրում է նա մի քանի էջեր, էլ կարելի է երեակայել յիրաւի թէ ոքչոփ արդահատելի և գմնդակ վիճակի մէջ պիտի լինեն մեր նահատակ արիւնակիցները, որոնց քաշած տառապանքների վարձատրութիւն էլ պ. Շօլէն «զգուանքով և ատելութեամբ» է միայն յիշում, ինչպէս որ երեխ սովորացրել են նորան Քրիստոսի «հարազատ փոխանորդ» հոռմի պապի հողաթափները հոտհոտացող «սրբազնաուրբ» հայրերը, պատերները և Փրերները, պ. Շօլէի և նո-

րա նմանների գաստիարակները... Ավոսս Փրանսիացի առուան, ափսոս զինուորականի պատուին... Եւ վերջապէս, միթէ ֆրանսիացի զինուորականը մոռանում է իր զօրաւոր հայրենիքի այն ստորացուցիչ վիճակը, որ նա բռնած ունի այժմ հանդէպ այլ կառավարութիւնների։ Դեռ ինչ էր ֆրանք-Պրուսական պատերազմը հայաստանում տեղի ունեցած դժոխային կոտորածների առաջ, որից յետոյ Ֆրանսիան այնպիսի գիրք է բռնած Գերմանիոյ հանդէպ, որ ձայնը ծակը մնած վախկոսի ձայնի է նմանում, այնքան Շոլէի հայրենիքը զեռ անցեալ պարտութիւնից իրան չէ եկել։ Վերջացնելով հայ աղջի նկատմամբ մեր այս արած մի կարդ նկատղութիւնները, այժմ անցնենք մասնաւոր երեսյթներին, որոնց իւստ որոշ զոյներով արտայայտած է նոյնպէս Շոլէն իր տապաւորութիւնների մէջ և որոնցից շատերի հետ չենք կարող չամաձայնել։ Որպէս ուղենոր, պ. Շոլէին աւելի պատշաճաւոր կլիներ այս մասին միայն խօսել այլ ոչ թոյլ տալ իրեն բովանդակ ազգի բարոյականի մասին այն պոռոտախօսութիւններն, որոնց վերայ մենք այնքան կանգ տռանկք։

---

Մեր մէջ բերած քաղուածքից ընթերցողն արդէն տեսաւ, որ պ. Շոլէն հայոց միմեանց հետ ունեցած փոխադարձ յարաբերութիւնները նկարագրում է չափաղանց տխուր զոյներով։ Նո տառում է, որ հայերը միմեանց նախանձու, թշնամի, մինը միւսի տունը քանդող և վերջապէս յարմար առթիւ նաև մատնութեամբ գործանող անձինք են։

Որքան էլ մեր պարաւականութիւնն է ազգի պատիւր պաշտպանել յանիրաւից յարձակողների գէմ, այնչափ էլ անկարող ենք քօղարկել մասնաւորների վատ արարքները ի վկաս նշն տարաբախտ ազգի։ Եւ զարմանալի այն է, որ այդ ապիրատ անձինք իրենց անարդ գործերով երեան են դալիս մեծ մասամբ ոչ խաւար, Ճնշուած ու ընծկուած դասակարգերի միջեց—որ դուցէ աւելի բնական պէտք էր համարել— այլ «զարդացած», «լուսամիտ» և մինչեւ անդամ՝ «զեկավարող» իսկ անձանց միջեց։ Տարիների ընթացքում հասարա-

կութեան աչքում հասնելով որոշ դիրքի և ազգեցութեան...., այդ մարդիկ ազդային գործերի մէջ են մզվում ոչ թէ անշահասիրական, թող թէ իսկական շարժառիթներից վրդուած, այլ միմեայն և եթ աղքատիկ ժողովրդի նեղ պարագաները և տառապեալ վիճակը յօդուտ իրենց անձնականին շահագործելու նպատակաւ: Աչա սոքա են ամեն զէնք և սարսափ տարածողները այնպիսիների դէմ, որոնք յանդգնում են մի թոյլ ձայն անդամ բարձրացնել ընդդէմ դոյտ և ի շահ հասարակութեան, մտտնութիւն, դուռ, զբուարատութիւն, ծաղը և ամեն տեսակ հալածանք կլինեն իսկոյն վերջինների վարձատրութիւնը: Եւ այսպիսով ի՞նչպէս կարող է որ և է մի դործ առաջ գնալ երբ շատ աղնիւների ձայնը մէկ զօրաւոր վատի ոյժից կարող է խեղզուել, ահա սոքա են իսկ աղդի այն ցեցերը, որոնք և աչքի են զարնվում այնպիսի անձանց, ինչպիսին է և պ. Շոլէն: Բայց մէնք հաւաստի զիտենք, որ բարեմիտ ուղեսորների միտքն անդամ պղառողներն և ամեն նախապաշարում ազգի դէմ ներշնչողները լինում են յաճախ նոյն իսկ այդ զօրաւոր մարդիկներից: Սոյա թեփ տակ մանելը իրենց համար պատիւ համարելով շատ թարմ ոյժեր ևս այնափ լրբանում են, որ համելով սանձարձակութեան վերջին աստիճաննին, խոշընդուներ են ներկայանում ամեն մի առթիւ, երբ առանձին անհատներ մէկ մէկ արիութիւն են ունենում գիմարդութիւն անել հզօր խարուախների այլ և այլ շահագիտական ձգտումների դէմ: Այսպէս կաղմուած սերունդը մեր մէջ, գժբախտաբար, օր աւուր բազմանում է. նա ընդունակ է դարձել ամեն տեսակ ստորութիւնների և յանդգնօրէն արատաւորելու ամեն մի անշահասէր համեստ անձի անունն առանց խղճահարուելու: Ուստի այս կետում չենք կարող համաձայնել Շոլէն մի կարգ վճիռներին մերոնց նկատմամբ, որքան էլ նրանց ուղենայինք մեղմացնել մասնաւորների վերաբերմամբ: Այսպէս, մեր կատաղի թշնամին ոչ թէ զրսիցն է, ինչպէս շարունակ մենք մեզ խարում ենք, այլ ներսիցն է, մեր միջիցն և նոյն իսկ մեր սրտի խորքերիցն:

Իրական կեանքի նուազներ. Միհրան Յովհաննէսեան, Փորա-  
գրիչ Սերվեէնի տպագրութիւն և վիմագրութիւն, Կ. Պոլիս,  
1892. փոքրադիր 8-ածալ 3 թերթ:

Սուազները տասնուվեց հատ են, մեծ մասամբ կարծ, բայցի վերջինից, «Սրբուհի մայրապետ» վերնագրով որ ութ երես է բռնում: զրուած են Պոլսի մաքուր աշխարհաբարով, որ վերջին ժամանակներս փոքր առ փոքր մուտք է դործում Պոլսի հայոց զրականութեան մէջ կոկուած ու մշակուած ձեռով ինչպէս որ այդ տեսնում ենք նաև այս փոքրիկ ժողովածուից, հակառակ ժողովրդին անհասկանալի այն բարբառի, որ տիրապետում էր Պոլսի հայոց զրականութեան մէջ քառասնական թուականներից ի վեր: «Նուազների» մոտիւները մեծ մասամբ վերցրած են տեղական հայոց ստորին դասակարդի ընտանեկան կեանքից, որի տրամութիւններով և ուրախութիւններով՝ ըստ երեսյթին՝ զեղինակը ապրել է լիովին և որը ներկայացնում է իր բանաստեղծութիւններում այնպէս դիւրեկան և համակրելի, որ մարդու սիրաը շարժվում է կարդալիս: Առանձնապէս աչքի են ընկնում հետեւեալ մոտիւները—ամուսնական հաւատարիմ սէրը (Առջենեկի, չինաւուրց զայդ մը աղքատիկ թինթիններ, Շահածուկին գովասանքը, Մնանիկութեան արձագանքը ընտանի յարկին տակ, ժողովրդեան զաւկին օրօրը), իսկ անհաւատարմութեան գէպքում արիւնալի վրէժիննդրութիւն (Նաւազար Գիրզոր), ամուսնական սէր՝ կապուած ժրածան աշխատութեան հետ ամուսինների երկու կողմից էլ հօրն ու մօր ջերմ սէրը գէպի իրենց զաւակը, մանաւանդ կորցրած զաւակը (Մէն մէն տատիս, Տանաան, Ոլբումն մօրկան), Սէր երիտասարդի և օրիորդի մէջ նյու ստորին ժողովրդի կեանքից (Երթանք ծերուկ տէրտէրին, Սիրահար Կիկօն): Այս բանաստեղծութիւնների մէջ առանձնապէս աչքի է ընկնում զեղինակի դիտումը զեղեցիկ ցոյց տալ աղքային ջերմ կրօնասիրութիւնը, աղջեկների հաւատարմութիւնը իրենց ամուսնուն, մի խօսքով

ընտանեկան կեանքի գեղեցկութիւնը, այդ բոլորը հակադրելով օտարի փշտինող, անբարոյականայնով աղբեցութեանը, որ անշուշտ մեծ գեր կարող է խաղալ Պոլսոյ հայերի կեանքում: Իբրև այդ գիտմունքի յայտարար, բերում ենք այս տունը, որով մնանկացած ծեր ամուսինը գոհունակութիւն է յայտնում; որ իր կինը ուրախութեամբ բաժանում է նրա հետ նրա վշտերը.

Փառք քեզ Աստուած, որ օտար կին չառի,  
Բայց աղնիւ աղջիս աղջիկ մը բարի.  
Հայ աղջիկներուն պատիւն է պրսակ,  
Էրիկ կը յարդին լի թէ սին քըսակ:

Մի ուրիշ ոտանաւոր (Յահածուկին գովասանքը),

Փառք քեզ Աստուած . . . . .  
Աղնիւ աղջիս զաւկըներուն  
Ասանկ հարսեր տուր կարգաւ:

Մեզ մասնաւորապէս զուր եկան այս ոտանաւորների մէջ իրենց անկեղծ, անպաճյմ ու թարմ աւիւնով կետեեալ երկուսը, իբրև տաճկահայ գաղթական դիւղացու հոգեկան տրամադրութեան յայտարարներ զրուած Վասպուրականի ժողովրդական բարբառով, որ մէջ ենք բերում այստեղ ամբողջութեամբ:

### ՍԻՐԱՀԱՐ ԿԻԿՈՆ

ԲԱԼԲՈՒ Թառաւ բանձը քարին,  
Կիւլայ դարգեր իւր Ճիկերին,  
Ես լը զուրբան կեղնիմ եարին,  
Շօհ մօտ տարեք Աիսինա սարին:

Աիսինա սարը տուման մըժ է,  
Ես ան կէնէմ, էն լէ փօշ է,  
Կասեն արախ դարդին խօշ է,  
Լըպէթ կիկօն Ճիպ սէրիսօշ է:

Ես սէրիսօշ էմ սիրով էնջախ,  
Վու ու ջահնամ էղնի արախ.  
Եար, դիւ մարես իմ տան օջախ,  
Վեղնից մահրում կէնէմ ախվախ:  
  
Ուլոտիկ գլոտէք բըլլուլ զուշեր,  
Վընց զըմեն եար իմն անուշ էր,  
Թուշն էլ խնձոր աչք լէ նուշ էր,  
Ալոր իւր ծոցի խով մըշմըշեր:  
  
Հենց որ կելնէր, կիջնէր պաղջան,  
Կու սարսըռար ճայտին մախջան,  
Աչից շողքէն խոցվաւ իմ ջան,  
Իմ հեշտ կեանքի տուեց վախճան:  
  
Լի գեամ, եարուկ, նստիր խոտին,  
Շուշան ցէնէմ էս քէօ ոտին,  
Թեւքըս կեղնին մէջիցդ գոտին,  
Տէրտէ կօխնա մըր նէրոտին:

ԿԻԿՈՆ Ի ԳԱՍԸՄ-ԲԱՇԱ.

Լէ, լէ՛ լէ, լէ՛ խըրական է,  
Խասըմ—բաշա մէյտանէ.  
Օխտը զուրուշ կունդէլիք,  
Վիրէճ—խանէն կու պանէ:  
  
Ուլոր խօր, պապկէ գերեղման  
Թողի, ֆէս տեղ կի գեամ ման.  
Խողիս կելնէ եռքի տակ,  
Խաւտա, դիժար ա վաստակ:  
  
Վանի զուրպէթն եմ ընկեր,  
Մէջից կօտին չըմ քակեր.  
Խարսնուկ անուշ անթառամ,  
Վեղնից զատ կինն է հառամ:  
  
Ա՛լս, իմ աղբերք, Խստամբօլ  
Կասէք, Ճող է, փարան բօլ  
Խասրէթ մ'անէք, մեղ հալալ  
Ուլոր խօր մուլքն ա ու մալալ:

Լ է, լ է, լ է, լ է, ի սըպան է,  
Խոասըմ—Բաշա մէյտանէ.  
Օխտը զուրուշ կունդէլիք,  
Վիրէճ—խանէն կու պանէ:

Հիմիկ լաձերս ի՞նչքան էն,  
Առուէջ էն, կորան, ի՞նչ կանեն:  
Կըրպօն, Մըրտօն խորոտիկ,  
Արորուն Շոշան նէրոտիկ:

Հիմիկ իմ արտ ի՞նչ կեղնի.  
Խնձնից մահրում կու գեղնի:  
Յամիքի ռահան, նունուֆար,  
Գոմից պակսի մըս գուվար:

Հիմիկ էս տեղ, էնօթի,  
Խայնիմ կապա հընոտի.  
Խսկի երդեմ երդ ռամկին,  
Եշիցս արցունք հէնց ցամքին:

Լ է, լ է, լ է, լ է, ի սըպան է,  
Խոասըմ—Բաշա մէյտանէ.  
Օխտը զուրուշ կունդէլիք,  
Վիրէճ—խանէն կու պանէ:

Արե շողցեր է պօծառ,  
Կաշխուն ա գաշտ ճիեղն ու ծառ:  
Երդիս վիերեւ են հաւքեր,  
Կու ճըվըլան մըս խաւքեր:

Դի՛, նա, առաջքս են լաձեր,  
Խնչքան բօյ բօսն են աճեր,  
Բարով, կասեն, ի մեր սար,  
Մըզ՝ գալդ երկնից է խաւսար:

Ե՛լո, շաշխուն էմ, ի՞նչ էրի,  
Դարիալ ելէ, սիրսս կիշրի.  
Լուռ կաց, աշուղ, ի՞նչ պէտք երդ,  
Կիդեամ, կիգեամ իմ տիղերք:

Աւելորդ չի լինի ուշադրութիւն գարձնել, որ ինչպէս  
նկատելի է, մեր ժողովրդական երգերի տաղաչափութիւնը  
ձայնական է (тонический), այսինքն շեշտաւոր, և որ, ուրեմն  
հայ ժողովրդական բառերի շեշտար զանազան վանկերի վերայ  
է լինում: Իբրև օրինակ անդամատենք այս ոտանաւորի տ-  
ռաջին տունը:

Բըլըուլ | թառաւ | բանձըր | քարին,  
Կիւլըայ | դարդեր | իւր Ճի | կերին.  
Ես լէ | զուրբան | կեղնիմ | եարին,  
Ծի մօտ | տարէք | Սիփնա | սարին, և այլն:

Այս տաղաչափութիւնը համապտասախան է ուռսայ ուստ-  
նաւորների հօրեա չափին, որ հայերէն կոչում էր մեծասար:  
Հեղինակի միւս ոտանաւորներից աւելի աչքի են զար-  
նում իրենց անկեղծ զզացմունքով «Թրախօմային զոհը»,  
«Հինաւուրց զոյդ մը աղքատիկ թինթիններ», «Երթանք  
ծերուկ տէրտէրին» և «Ողբումն մօրկան»: Ինչ ասել կ'ուզի  
որ «նուազների» լեզուն աչքի է ընկնում իր օրինակելի զե-  
ղեցկութեամբ, յանդերը լի և հարուստ, որ օրինակ կարող  
էր ծառայել ուռսահայ բանաստեղծներին, տաղաչափութիւ-  
նը պէս-պէս ձեւրով, թուղթը և տաղադրութիւնը գեղեցիկ  
և համարեա զերծ տպագրական սխալներից:

Ցանկալի է, որ Պոլսի հայ զրադէտները աւելի և աւելի  
մերձենային ժողովրդական կեանքի, սաեղծագործութեան և  
լեզուի բուն աղբիւրին, աւելի ևս ծանօթանային դոյտ և  
առատ ձեռքով օզուտ քաղէին սցդ թէե վշտերով լի, բայց  
քաղցր աղբիւրից, որով աւելի ու աւելի հետաքրքիր կը  
գարձնեն իրենց բանաստեղծութիւնները: Այս տեսակէտից  
ահա մենք չերմ կերպով շնորհաւորում ենք ալ. Յովհան-  
նիսեանին, նորա վստահ քայլառութեան համար դէպի ժո-  
ղովրդական բարբառի մշակումը և նորա ժողովրդականա-  
ցումը տաճկահայ դրականութեան մէջ:

Ժողովրդի կրթութեան գործը մեզանում. Լևոն Սարգսեան,  
Մոսկուա, 1892, 8° էջ 41:

Այս բրոշեւրը հիմնուած լինելով Ճիշտ թուերի և  
վիճակագրական տեղեկութիւնների վերայ, ամենահամոզե-  
ցուցիչ փաստեր է ներկայացնում մեր ժողովրդի կրթութեան  
մասին, որ՝ ըստ երեսոյթին, աւելի անմիտմար վիճակի մէջ է  
երեսում, քան թէ սովոր ենք կարծել: Պ. Սարգսեան՝ քաղելով  
իւր փաստերը պաշտօնական ազբիւրներից («Վիճակագր. Տե-  
ղեկութիւնք Եկեղեց. Ծիսական Ուսումնարանաց Հայոց, 1888  
—89 և 90 թ»). Վաղարշապատ. 1890 թ. և Օտчетը ուսու-  
թանական Կավեազ. Սպեց. Օկրուգա զայ արական և իդական ուսումնարանների սովորող-  
ների թուերը հանդերձ խիստ հետաքրքրական բաղդատու-  
թիւններով այնուշետե մի քանի գիտողութիւններ ուսումնա-  
րանների ապահովութեան և վերջապէս ուսուցիչների ան-  
նախանձելի վիճակի մասին, արժանի խորին ուշագրութեան:  
Ինչպէս երեսում է բրոշեւրից մեր ծխական ուսումնարան-  
ների թիւը, սկսած 1886-ից մինչև 1889 թ. աստիճանաբար  
աւելացել է և հասել 168-ի. իսկ 1889—1890 թ. ուսումնա-  
կան տարում այդ թիւը յանկարծ իջնում է 156-ի (108  
տղայոց և 48 աղջկանց) — ի միջեւ այլոց՝ գուցէ եկամուտնե-  
րի նուազութեան պատճառով: Հաշուելով 995 հազար Ան-  
դրկովկասի հայ ազգաբնակութեան թիւը — 1 ծխակ. ուսում-  
նարան ընկնում է 5783 հայ բնակչի. իսկ իւրաքանչիւր  
տարի սովորողների թիւը միջին թուով (թէ՝ տղայ — 6274  
և թէ՝ աղջիկ — 3750) 10,024 հոգի և կամ իւրաքանչիւր  
սումնարանում միջին թուով 68 հոգի երկսեռ սովորող: Մեր  
սովորող օրիորդների թիւը լիակատար կ'լինի եթէ ծխական  
ուսումնարաններում սովորողների վերայ — 3750-ին աւելցնենք  
նաև պետական և մասնաւոր գպրոյներինը — 900 — 4650 տա-  
րեկան սովորող օրիորդ, որ խսկապէս շատ չնչին թիւ է՝ հա-  
մեմատած հայ ազգաբնակութեան իդական սեռի ընդհանուր  
թուի հետ, այն է, որ «նոյն իսկ հայաշատ Երևաննեան նահան-

գում, ինչպէսն կատումէ հեղինակը, իւրաքանչիւր 100 «փափասուն տիկիններից» 96-ը դրել կարդալ պէտք է չիմանան:

Անցնելով ուսումնարանների նիւթական դրութեան՝ տեսնում ենք, որ մի տարում մօտ 176,075 ր. ծախք է լինում 156 դպրոցի վերայ, որ ասել է՝ թէ միջին թուով իւրաքանչիւրին 1206 ր. է ընկնում և կամ ամեն մի սովորողին 17 ր. 50 կ.: «Թէ բոլոր ուսումնարանների եկամուտները միասին առած, առում է պ. Սարգսեան, աւելի են, քան նոցա վերայ արած ծախքը, որ. 1888—89 թ. տարեկան մուտքն էր 229,000, իսկ ծախքը 204,823, բայց առանձին վերցրած՝ կան ուսումնարաններ, որոնց եկամուտները այնքան նուազ են, որ հազիւ են ծածկում իրանց ծախքը, այն էլ ստիպուած են լինում վարձել մի անձարացած ուսուցիչ 100 ր. տարեկան ռոճկով...»:

Ծխական ուսումնարանների ուսուցիչների թիւը 1889—90 թ. էր՝ 473, որոնցից 284 ուսուցիչ 109 վարժուհի և 80 քաշանաց էին: Ուսումնական ցենզի տեսակէտից—419 ուսուցիչներից 6 հոգի բարձրագոյն կրթութիւն ունեին, 28 էջմիածնի ձեմարանից, 201 հոյոց թեմական դպրոցներից և 95 հոգի արքունական ուսումնարաններից. մնացեալները «արտօնեալք՝ ՚ի Վեհափառ Տայրապետէն»:—Իսկ ինչ վերաբերում է ուսուցիչների հասարակական և նիւթական դրութեան արգի վիճակին,—ինչպէս երեսում է, շատ անմիտար է: Այնքան անապահով է նա նիւթապէս և այնքան կախուած նորա վիճակը ուրիշների կամայականութենից, որ նա դառնում է մի խեղճ, Ճնշուած արհեստաւոր: Դորապատճառներից մէկն էլ ինչպէս նկատում է հեղինակը, «Կոպարների» ինպիրն է, որի վէմնա արգարացի կերպով բողոքելով և անյարմարութիւնները փաստերով ապացուցանելով վերջացնում է իւր լուրջ գատողութիւնները առաջի կայ համակրելի տողերով:—«մենք աւելի կանգ առանք ուսուցչի նիւթական ապահովութեան ինդրի վերայ, որով հետեւ մինչև այդ չը լուծուի, միւս բոլոր պաշանջները և գանգատները անհետեանք երեմիականներ ենք համարում...: Մինչեւ որ հայ ծխական ուսուցչի վարձը հաւասար կլինի խոհա-

բարի վարձին՝ դժուար է սպասել որ մեր ուսուցչական գասակարգի մտաւոր բարոյական մակերեսյթը յայտնի բարձրութեան վնայ և ընկնիս...: Ի՞նչն է սահպում մեզ ստեղծել այդպիսի պրօլետարիատ ուսուցչական գասում: Միթէ մեր գրամագլուխը, որ ուզում ենք շահեցնել իսկապէս ուսումնարանի փողն է և ոչ կրթուած նոր սերունդը, ժողովրդի լուսաւորութիւնը: Որչափ բարձր լինի և լայնատարած այդ լուսաւորութիւնը, այնչափ մեծ կ'լինի և միսած գրամագլուխ շահը, իսկ այդ տեսակ մեծ շահ ստանալու համար պէտք է ունենալ լաւ պատրաստութիւն ունեցող, նիւթապէս անկախ բանուար-ուսուցիչներ և ոչ պարիաներ»: Գրին.

The Place and Importance of Armenian in Comparative Philology.  
A Paper read before the Philological Society May, 13-th 1892,  
by G. A. Schrumpf.

«Հայերէն լեզուի տեղը և կարեռութիւնը համեմատական բանասիրութեան մէջ», — ընթերցուած Շոռումպֆի՝ Բանասիրական ընկերութեան մէջ, 13 Մայիսի 1892 թ. (Լոնդոն):

Այս վերնագրով ստացանք մենք մի յայտարարութիւն, ուր մանրամասնորէն ցցյց է տուած երիտասարդ հայագէտի ընթերցուածի նիւթը և բովանդակութիւնը՝ բաժանած 3 պլիսաւոր բաժնի. — 1. Հայոց բարբառները և նոցա գրականութիւնը, 2. Հայերէնի քերականական կազմութիւնը և 3. Հայերէնի տեղը համեմատական բանասիրութեան մէջ: — Բանախօսը, ինչպէս երեսում է, լաւ ծանօթ է իւր առարկայի զրականութեան հետ, որ մի առ մի մէջ է բերած յայտարարութեան մէջ, ուր մանաւանդ ուշագրութիւն է գարձնում իւր վերայ գաւառական բարբառների գրականութեան ծանօթութիւնը: — Եղանակացնելով իւր բանախօսութիւնը, պ. Շոռումպֆը կանգ է առնում այն կէտերի վերայ, որոնք կարեոր են Հայագիտութեան յառաջազիմութեան համար. — Խնդիրներ, որոնք գեռ պէտք է լուծուին. — պակասութիւն մասնագէտների և բաշալերութեան. — կարեոր նիւթերի դժուարամատելի լինելը. — արդելքներ, որոնց հեռացնելու է: — Ցանկալի է, որ զիտնական հայագէտը շուտով հրատարակէր իւր զրուածը, որով շատ կ'նպաստէր հայերէնաղիտութեանն Եւրոպայում:

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆՈՐ ՏԵՐՈՒ ԸՆԻԹՈՒՎ

... նեւ շարժմունք մեծամեծք. և ի տեղիս տեղիս  
սովք և սրածութիւնք. եղիցին արհասկրք... մանա-  
ցեն զձեռս իւրեանց ի ձեզ՝ և հալածեցեն և մատ-  
նեցեն ի ժողովուրդս և ի բանուս... նւ յորժամ  
սկսանիցի այս լինել ամբարձչիք և բարձրացուաշիք  
գոլուխս ձեր. զի մերձ է փրկութիւն ձերու:

Աւետարան:

Ա.

Ինչպէս մեռնում է վառ արշալոյսի  
Քաղցր ժաղիար թոշնող կոկնում;  
Ինչպէս սառում է անջատուած կուսի  
Զերմ արցունքները տանջուած աչերում  
Եւ հալվում; մաշվում զովարար ցօղը  
Խնկաբցյր ծաղկանց կիզուած պրակում—  
Նոյնպէս՝ վշտալի կեանքի ու քօղը  
Մի այլ ջինջ կեանքից ինձ է բաժանում;  
Անշող օրերիս պարզ ձանանչները  
Կորչում են խորը՝ կապցյտ եթերում;  
Մատաղ ժամերիս թարմ երազները,  
Ցոյսերը անվերջ վաղուց են մրտփում  
Եւ գոցա սիրուն մեղետիները  
Տակաւ առ տակաւ պազում են, լուսում;  
Ինչպէս սոխակի դարնան երգերը  
Կանաչից զրկուող աւեր պարախղում;  
Ինչպէս ջերմ սիրոյ մարող համբոյրը  
Կարօտով այրուած կուսի շըթերում:

Բ.

Այդպէս մեռնում է, անցնում հին տարին  
ինչպէս մի փայլակ մութ մութ ամպերում:  
Տանում է իր հետ խոստմնած «Նոր բարի»-ն,  
Դեռ մեր յոյսերին չտուած լրում:  
Մեծ մեծ պարզեներ գու մեղ խոստացար—  
Եւ պայծառ գարուն և կեանք փրկարար,  
Անոյշ երազներ թևերիդ վերայ  
Բերեցիր աշխարհ տանջուողի համար...  
Բայց գու դրժեցիր քո խոստումներին,  
Չտալով մեր վառ ըղձին կատարում,  
Արգելք դնելով, վառ ճաճանչներին  
Նոր արշալոյսի, մեր. մութ կամարում...

Գ.

Եւ մեր սե կեանքի օրհասը տխուր—  
Սե սե պատիեր թաղուած վշաերում,  
Կարծես բուսնում են գերեզմանից լուռ,  
Ինչպէս ուրուական շիրիմի եղրում—  
Սովասանջ գեմքեր՝ ծեր ու մանուկներ  
Ընկած են շուրջս յուսահատ, արառում:  
Զայ երկրագործ, գութանը անաէր,  
Ժանդոտ ընկած է անբնակ դաշտում  
Եւ տաք հարաւի գեղանի զարդեր—  
Հայ կնոջ աչեր արցունք են թափում,  
Նոքա կարօտով հայացքում դարդը  
Կաղուց անջատուած մարդուն սպասում...  
Արդէն մամոստել փրլում են տներ.  
Մեռել է կեանքը աւեր խրձիթում,  
Լուռ է ալելուն, մարել են մոմեր  
Հողումը թաղուած սուրբ տաճարներում:  
Լոռում են մարդիկ, ինչպէս թռչնիկը  
Ցինից փախչելիս թաւուա թփերում:  
Թաղջում են, ինչպէս վախկոտ եղնիկը

Նետից խոյս տալիս խուլ անտառներում:  
Մայրենի հողը վշտերում թաղուած՝  
Այրվում է ներքուստ. բայց չէ հառաջում—  
Ոյժ չունի նորա սիրտը թուլացած,  
Նորան անգութիւ շղթան է ձնշում:  
Լուռ են և զետեր. սառել են կարծես  
Իրանց սրբազն ու ջերմ ափերում,  
Քանի որ արեան զետեր յորդապէս  
Խուլ մանչում են հայրենի ձորում:  
Լուռ է չորս կողման. լուռ է և եթեր.  
Վաղեմի վսեմ, վարդագյոն փառքից  
Մնում են միայն չնչին բեկորներ,  
Այն էլ ջնջվում է անողորմ ձեռքից:  
Եւ մեռելային այդ խոր լուսթիւն  
Միայն մենաւոր բուն է վրդովում—  
Չարագյշ ձայնով խուլ ամայութիւն,  
Անշարժ կացութիւն նա է աւետում:

¶

Եւ ահա եկաւ դարձեալ նոր տարի:  
Բայց արգեօք անխօս էլի համբերենք,  
Դարձեամ լուսթեամբ անմիտ ոչսարի՝  
Յշտուր նոր տարուայ տածենք սպասենք:  
Թէ, անվախ պատռենք քօղը թմրանքի,  
Վեհ եղբայրական սիրով զինւորուած՝  
Խլենք բոցավառ շանթը երկնքի,  
Մօտ ապագայով սերտ ոգեսորուած,  
Դուրս գանք ասպարէզ—գաշտը տանջանքի.  
Հալենք այդ բոցով սրտեր կոշտացած,  
Վառենք նոցա մէջ նոր կեանք, նոր հողի,  
Ու այդպէս վերջ տանք տիրող երկնքի....

Գ. Դահ. Մէրտու-Դանց.



## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի տարուց աւելի է անցել սյն օրից, երբ «Արաքսը» սղաց ի Տէր հանգուցեալ Մակար Ա. կաժմողեկոսի մահը: Մերունի հոգուապեար իր արժանընախր յաջորդին թողեց լուծեցու մի շարք բարդ խնդիրներ, որոնք առանձնապէս կնճռոտ կերպարանք էին ստացել նորա կեանքի վերջին տարիներում: Այդ խնդիրներն էին, ի միջի այլոց, ձեմորանի խնդիրը, եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցների, ուսուցիչների և ուսուցչուների հարցը, Ա. էջմիածնի մատակարարութիւնը մասնաւորապէս և հայ հոգեորականութեան հարցը ընդհանրապէս: Այսպիսի հանգամանքներում ազդի առաջ կանգնեց կաթողիկոսական հարցը, և ահա կամայ ակամայ հայութիւնը ստիպուեց մի կողմք թողնել ֆնացած բոլոր հարցերը այդ ամենակարեոր հարցի առաջ, որից շատ կախուած են մնացած բոլոր խնդիրները: Աչքի առաջ ունենալով մանաւանդ կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ վեհարանում տեղի ունեցած յափշտակութեան տիսուր դէսպերը, որոնք պէս-պէս փոփոխութիւններով ու երբեմն չափականցութիւններով տարածուեցան ամբողջ ազդի մէջ մամուլի շնորհիւ, շատ հասկանալի կը լինի թէ ինչո՞ւ մի քանի օրուայ մէջ մէր բոլոր համազգիների ողջ ուշքն ու միաքը դրաւուեց էջմիածնի Աթոռով, բոլորն աչքերը յառեցին այդ թափուր Գահին և տենգոտ անհամբերութեամբ սկսեցին դեղ ու գարման որոնել կակծեցնող վէրքերի համար, սկսեցին մտածել սյն անձի մասին, որ պիտի կարողանար սրբել սյդ վէրքերը իբրև Լուսաւորչի արժանաւոր յաջորդ: Հասկանալի է, թէ ինչո՞ւ այս անդամուայ

ընտրութիւնները կատարուեցան առանձին բուռն ովերութեամբ և կրքերի խիստ յուղմունքով միենոյն ժամանակ այնպէս յաջող վախճան ունեցան և այնքան կրթիչ ու խրատական օրինակներով հարուստ էին: Դիտելով ընտրութիւնների այս նշանակութիւնը թէ իրենց ամբողջութեամբ վեր առած և թէ մասնաւորութիւններին նայելով, մենք իբրև հեռուեց գիտող, մաազիր ենք մեր ընթերցողների հետ համառօտել մի քանի էջերում նոցա պատմութիւնը, որ անշուշտ փայլուն տեղ կը զրաւի դարուս մեր պատմական կեանքում: Մենք մաազիր ենք համառօտ աչքի անցնել ընտրութեան նախապատրաստական գործողութիւնները, այն է պատգամաւորների ընտրութիւնները, և ապա անցնել բուն կաթողիկոսական ընտրութեանը:

Բայց քանի որ հայ մամուլը ջերմ կերպով մասնակցում էր ընտրական բոլոր գործողութիւններին իւր պէս-պէս հայեցակէտներով և իր ոյժին ենթարկելով մաքերը՝ զցն էր տալիս այդ գործողութիւններին, ուսաի մենք ուզում ենք ամեն մի նկարազրից յետոյ հարցին վերաբերող մամուլի տեսութիւն անել մանաւանդ որ այս անզամ մեր հրատարակութիւնները յիշատակութեան և ուշադրութեան արժանի բաւական նիւթ արզիւնաւորեցին, որից դարձեալ և դարձեալ ուստանել և խրատուել երբէք չըպէտք է գանգաղի մասձող հայր:

Պալամենիայի համաձայն՝ էջմիածնի ս. Սինովը իւր 1891 թ. մայիսի 3-ի օրազրութեամբ կաթողիկոսի ընտրութեան ժամանակը որոշեց ձիշտ մի աարի յետոյ, այն է՝ 1892 թ. մայիսի 3-ը, և դորա համար Կովկասի կառավարչապետի ձեռքով ուղարկեց ծանուցողական շըջաբերականներ Ռուսաստանի և արաւասահմաննեան բոլոր թեմական առաջնորդներին, նոյնպէս և Պոլսոյ ու Երուսաղէմի պատրիարքներին և տաճկահայոց բոլոր առաջնորդներին՝ ներկայ գտնուելու ս. էջմիածնում նոր հայրապետի ընտրութեանը անձամբ կամ մի ուրիշին յանձնելով պատղամաւորութիւնը նոյնպէս և հրապիրել վիճակի հայ ժողովրդին, որ ընտրեն իրենց միջից աշխարհական պատղամաւորներ, իբրև իրենց ներկայացուցիչ այս

դէպքում շրջաբերականը պատուիրում է զործել «առանձին իմ ազգասիրական եռանդգեամբ, հոգւով մսիթարութեան, բարեպաշտութեան և սիրոյ». իսկ եթէ ոչ եկեղեցական և ոչ էլ աշխարհական պատգամաւորը կարող են ներկայ գըտնուել որ և է արգելառիթ հանգամանքի պատճառով, նոքա կարող են իրենց կարծիքը գրաւոր ուղարկել կաթողիկոսական արժանաւորագոյն ընտրելիի մասին: Այսպէս սկսվում են պատգամաւորների ընտրութիւնները թէ Ռուսիայում, Թիւրքիայում, Պարսկաստանում և Հնդկաստանում, և թէ էջմիածնի միաբանութեան ու սինողի մէջ: Որովհետեւ ամենից առաջ վերջինում, այսինքն սինողում սկսուեց ընտրողական շարժումն ու պայքարը, և որովհետեւ այդ ատեանը իւր նախագահով միակ զեկավարող հաստատութիւնն է ազգի մի նշանաւոր մասի, ուստահայերի եկեղեցական զործերի՝ գահը թափուր մնացած ժամանակ, այդ պատճառով մենք սկսում ենք պատգամաւորական ընտրութիւնների պատմութիւնը սինողից:

Հստ պալաժենիայի՝ սինողի բոլոր անդամները ընտրողական ձայն ունին, ուրեմն ամենքն էլ սինողի կողմից իրեւ պատգամաւորներ պէտք է ներկայ լինեն ընտրութեանը: Կաթողիկոսի մահից յետոյ սինողը կազմուած էր հետեւեալ անդամներից,—Գեր. Երեմիա եպիսկոպոս Գալստեանց, Սուքիաս եպիս. Պարզեանց, Ներսէս եպիս. Խուզավերդեանց, Արիստակէս եպիս. Դաւթեանց և Սարդիս եպիս. Տէր-Գասպարեանց. պալաժենիայի տրամադրութեան համաձայն պակասում էր երեք անդամ՝ սինողը ամբողջայնելու համար: Կաթողիկոսի մահուան օրը, անցեալ տարի ապրիլի 16-ին, սինողը նիստ գումարելով՝ իր ատենապետի պաշտօնը յանձնեց աւագագոյն եպիսկոպոսին—սրբազնն Երեմիա Գալստեանցին մինչև նորընտիր կաթողիկոսի գահակալութիւնը: Մի առանձին շրջաբերականով սինողը վեճակաւոր առաջնորդներին յայտարարեց այդ նիստի որոշումը, այսինքն՝ որ գեր. Երեմիա եպիսկոպոսը սինողի ատենապետ և կաթողիկոսի տեղակալ է կարդուել պալաժի հիման վերայ, և թէ

կաթողիկոսական իրաւունքներին վերաբերեալ գործերը կը  
մնան անկատար մինչեւ նոր կաթողիկոսի հաստատութիւնը:

Պոլսի պատրիարքարանն էլ գնաց այդ պաշտօնական  
գրութիւնը, որ գրուել էր Հայրապետի մահուան յաջորդ  
օրը, և որը կարդացուեցաւ մայիսի 1-ին Ղալաթիայում  
գումարուած ազգային ժողովի նիստի ժամանակ: Իբրև պա-  
տասխան այդ գրութեան՝ պատրիարքը շնորհաւորեց գեր-  
երեմիա եպիսկոպոսի նոր ստացոնը, տեղակալութիւնը, և  
յօյս յայտնեց, որ նորա ձեռքի տակ Մայր-Աթոռը այնպէս  
կրկառավարուի, որ զգալի չելինի ամենայն հայոց հայրապետի  
բացակայութիւնը: Սինոգի նոյն ապրիլի 16-ի նիստում հարց  
բարձրացաւ սինոգի պակասորդ անդամները լրացնելու մասին.  
սրբազն ատենապետը պատասխանեց, որ ինքը ուր հարկն  
է առաջարկելու է անդամներին հաստատելու համար: Երեխ  
սինոգի մի քանի անդամների կողմից դժողովութիւն յայտ-  
նուեցաւ գեր. Երեմիա որբազնի այդ ընթացքի համար, և  
նոցա կողմից բողոքագիր մէջ եկաւ «տեղակալի կողմից նոր  
սինոգականներ ընտրելու առաջարկը ապարդիւն հանելու»  
մոքով, ինչպէս հաղորդեցին Պոլսի հայ թերթերը («Նոր-  
Դար», № 125, օգոստ.), բայց վերջապէս այդ խուլ դիւա-  
նադիտական պայքարը վախճան ստացաւ նրանով որ սեպ-  
տեմբերի 19-ին տեղի ունեցած Բարձրագոյն հրամանով հաս-  
տատուեցան սինոգի անդամներ՝ Արքատակէս Սեղբակեան և  
Գրիգորիս Աղուանեանց եպիսկոպոսները և Բարգուղիմէոս  
վարդապետ Գէորգեանը, իսկ սինոգի երկու անդամները Սու-  
քիաս և Ներսէս եպիսկոպոսները, ստիպուած եղան անմիջա-  
պէս հեռանալ Ա. Էջմիածնից Ռուսաստան:

Սինոգում կատարուող լուռ մրցման Հետ զուզընթաց  
տեղի էր ունենում հայ մամուլի մէջ «տեղակալական» կոչուած  
աղմկալի, խառնաշփոթ, երբեմն ծայրայեղ կրքոտ բանակուր,  
որ վերջերում բոլորովին տաղտկալի էր դարձել և վախճան  
ստացաւ Էջմիածնում տեղի ունեցած կարեւոր դէպքերի հետ  
գրեթէ միաժամանակ: Թէև մամուլը այս դէպքում միայն  
հարեանցի կերպով կարող էր ներգործութիւն ունենալ կա-

տարուող իրողութիւնների ընթացքի վրայ, մանաւանդ որ  
Ճշմարտութիւնը ծածկվում էր աչքից հարցի մթութեան  
շնորհիւ և զլիսաւոր նիվթից շեղուելով գէպի անձնական  
վերաւորանքները, սակայն աչքի առաջ ունենալով ասպարեզ  
եկած հարցի գրական և պատմական կարեռութիւնը, մենք  
մի համառօտ մամուլի տեսութիւն կ'անենք մի որոշ եզրակա-  
ցութեան յանդելու համար այս հարցի մասին՝ բաւական տեղ  
թողնելով առարկութիւնների և տարակուսանքների համար:  
Բանակռուի նշանը տուեց «Նոր-Դարը», որ տպելով  
(№ 94 յունիսի 6) էջմիածնից սաացած այն լուրը՝ թէ «ս. սի-  
նողի նախանդամ գեր. Երեմիա եպիսկոպոսը առաջարկել է  
ս. սինողի անդամակցութեան համար կանդիդատներ Գրի-  
գորիս և Սեպրակեան եպիսկոպոսներին, նշյնպէս և Անանիա  
և Բարգուղիմէոս վարդապետներին, Սեղրակեան սրբազնի  
խորհրդով», աւելացրեց մի նկատողութիւն, որ ըստ պալա-  
ժենիսյի սինողի գործավարութեան ըրջանից զուրս է կան-  
դիդատներ առաջարկելու գործը, և որ այդ իրաւունքը վե-  
րապահուած է որոշ յօդուածով (պալաժ. յօդ. 34) ամենայն  
հայոց կաթողիկոսին: Այդ նկատողութիւնը գերքելու համար  
հանդէս եկաւ աղ. Գ. Արծրունին իւր «Մշակ» լրագրում  
(№ 64, յունիսի 11) մի վստահ առաջնորդովով ուր ի միջի  
այլ նշանաւոր խօսքերի՝ ասում է, «Ոմանք կարծում են որ  
կաթողիկոսական տեղակալը չ'ունի նշյն իրաւունքները, որ  
ունի կաթողիկոսը, այն ինչ Պօլօմենիէյի 945-րդ յօդուածը  
(Օրէնսդ. XI հասոր, մասն I, 1857 թ.) պարզ ցոյց է աս-  
լիս, որ տեղակալը կատարելապէս նշյն իրաւունքներն է վա-  
յելում: Ինչ որ վայելում է կաթողիկոսը, բացի բուն կրօնա-  
կան իրաւունքներից»: Եւ իբրև բացատրութիւն աւելացնում  
է, որ տեղակալը նշյնն է, ինչ որ կաթողիկոսը, միայն ժամանա-  
կաւոր կաթողիկոս. իբրև վարչական անձն պէտք է վայելէ  
նշյն իրաւունքները և հետեւարար կարող է սինողի նոր ան-  
դամներ առաջարկել և ճեմարանի ուսուցիչներ նշանակել ու  
արձակել: (Այս վերջին ակնարկը վերաբերում է էջմիածնի Ճե-  
մարանում Վեհափառ Հայրապետի մահից յետոյ կատարուած

ուսուցիչների փոփոխութեանը): Ուրեմն առաջին թերթը գերեամբ եղած եղած կոպոսին ընդունում է իրեւ նախանդամ սինոգի, և ոչ տեղակալ, ինչպէս այդ երեւում է լրագրի մէջ շարունակ նորին Սրբազնութեան անուանը կցած տիտղոսից, և ժիտում է նորա սինոգականներ առաջարկելու իրաւունքը, իրեւ զուտ հայրապետական իրաւունքը. երկրորդ թերթը, ընդհակառակը, ոչ միայն համարում է նրան տեղակալ, և այն՝ կաթողիկոսական տեղակալ այլ և նրան ընծայում է բոլոր կաթողիկոսական իրաւունքները՝ բացի զուտ կրօնական իրաւունքներից, այսինքն մեռն օրէնելուց, եպիսկոպոս ձեռնազրելուց, «որևէ փոփոխութիւն մտցնելուց եկեղեցու բուն կրօնական մասում և այն», ինչպէս վերջացնում է պ. Գ. Արծրունին իր միտքը: Եթէ մենք ուղենանք բայցատրել այդ «և այլն»-ը, գուցէ մեզ թշյլ տան յիշած սակաւաթիւ զուտ կաթողիկոսական՝ ուրիշ խօսքով՝ զուտ կրօնական իրաւունքներին աւելացնել և մի երկուսը, այն է՝ պահպանել հայրապետական տիտղոսը, յիշել կաթողիկոսի անունը եկեղեցում, վարձատրել եկեղեցականներին խաչերով, կամիլաւկայով և արախչիններով և ընդհանրական թղթեր գրել. խակ մնացած բոլոր իրաւունքներում սինոգի նախանդամը նոյն է, ինչ որ կաթողիկոսը, այսինքն՝ նա կարող է կաթողիկոսի մահից յետոյ իր ձեռքն առնել լուսաւորչական հայոց եկեղեցու զինաւոր կառավարութիւնը և նորա բոլոր եկեղեցականների վերայ բարձրագոյն հակողութիւն ունենալ շամերներով և պատուաւոր պահնորդներով զուրս դալ էջմիածնի պարսպից, և այն. այս իրաւունքների շարքումն է և սինոգականներ առաջարկելու իրաւունքը և էջմիածնի հոգեորդացոյն՝ այն է՝ ձեմարանի անմիջական տեսչութիւնը: Պ. Գ. Եւանդուլեանցը «Արձագանք» պատկերազրդ շաբաթաթերթում (№ 14 յունիսի 16) ասպարէզ եկաւ մի երկար յօդուածով յարուցուած «նուրբ ու քնքոյշ խնդիրը» հեղինակորէն լուծելու մեր եկեղեցու աւանդութիւնների և գործող օրէնսդրութեան հիմնա վերայ: Պ. յօդուածազիրը նախ կամենում է հերքել «Մշակի» առաջին հիմնական դրութիւնը, այն է՝

գեր. Երեմիա եպիսկոպոսի կաթողիկոսական տեղակալի պաշտօնը, և ցոյց տալով օրինական հիմքի բացակայութիւնը այդ կոչումը՝ ստանձնելու համար՝ հարկաւոր է համարում իբրև անշրաժեցոտ պայման ունենալ կաթողիկոսական կոնդակ յատուկ այդ պաշտօնի համար, ինչպէս պահանջումէ մեր եկեղեցու հին սովորութիւնը. բայց «քանի որ գեր. Երեմիա եպիսկոպոսը կաթողիկոսական կոնդակով չէ նշանակուած տեղակալ, նա մնումէ լոկ իբրև սինօդի նախագահ», եզրակացնումէ պ. Եւանդուլեանը:

Ապա նա անցնումէ հերքելու պ. Գ. Արծրունու երկրորդ հիմնական դրութիւնը, այն է թէ՛ սինոդի նախանդամը իրաւունք չունի կանդիգատներ առաջարկելու և ձեմարանի մէջ փոփոխութիւններ մտցնելու: Սկսելով պայմանիայի 945 յօդուածից, որ պ. Գ. Արծրունու եղբակացութիւնների հիմքն է եղել և ցոյց տալով որ այդուեղ «սինոդի նախագահի» իրաւանց մասին է խօսում, և ոչ թէ կաթողիկոսի պաշտօնակատարի, իսկ սինոդի նախագահը «սինոդից զուրս կամ առանց սինոդի իրաւունք չունի ոչինչ անել և իբրև նախագահ ձայնի առաւելութիւն ունի միայն, մէջ է բերում սինոդի իրաւասութեան շըջանը որոշող պալաժենիայի յօդուածները (938 և 939) և յայտնում է, որ միայն այդ շըջանում սինոդի նախանդամը վայելում է «նախագահի բոլոր իրաւունքները» կաթողիկոսի բացակայութեան ժամանակ, նա վայելում է «նախագահի բոլոր իրաւունքները» բայց զուտ կրօնական գործերից, բայց այս չէ նշանակում որ նա վայելում է կաթողիկոսի բոլոր իրաւունքները բայց բուն կրօնական գործերից, աչքի առաջ ունենալով և այն, որ 945 յօդուածը դանվում է ոչ թէ կաթողիկոսի մասին ճառող գլխում, այլ սինոդի. և որ, ուրեմն, մնացած բոլոր կաթողիկոսական առաւելութիւններն ու իշխանութիւնները թէ՛ մեր սովորութիւններով և թէ՛ դրական օրէնքի զօրութեամբ պատկանում են Ֆմայն կաթողիկոսին. այստեղ են մտնում և սինոդականներ առաջարկելու և ձեմարանի անմիջական տեսչութեան իրաւունքները, որոնք

դրական օրէնքի 937 և 1003 յօդուածներով են որոշուած:

Տեսնում ենք, որ «Արձագանք»-ն ու «Նոր-Դար»-ը այս խնդրում միմևանց համաձայն են, երկուսն էլ ժիտում են սինողի ատենապետի իրաւունքները կանդիգատներ առաջարկելու և Ճեմարանում փոփոխութիւններ անելու, սահմանափակելով նրա իրաւասութիւնը սինողի զործավարութեան շրջանում: Սակայն շաբաթաթերթը՝ մեծ կարեորութիւն տալով «Մշակ»-ի ասած «կաթողիկոսական տեղակալ» բառին, որի իմասար մութն էր նոյն իսկ մեր յարգելի լրագրին, հարկ համարեց բացասել նշյն ատենապետի տեղակալութեան իրաւունքներն էլ երեկի տարակուսելով տեղակալութեան իրաւանց սահմանների մասին, որոնք ոչ թէ օրէնքով այլ մեր եկեղեցական աւանդութիւններով ու սովորութիւններով պիտի որոշուին, և որոնց մէջ մտնում են այդ սովորութիւնների համաձայն բուն կաթողիկոսական շատ իրաւունքներ, և գուցէ՝ նոյն իսկ վիճաբանութեան առարկայ եղող իրաւունքները: Այս է պատճառը, որ բանակուուի նիւթը փոխուեց և հակառակ կողմից սկսեցին ապացուցանել, որ գեր Երեմիա եպիսկոպոսը տեղակալ է այդ բառի նախնական՝ աւանդական իմաստով թէև կոնդակ չ'ունի ի ծէր հանգուցեալ չայրապետից: Պարզ է որ բանակուութը զայրացաւ «տեղակալ» բառի իմաստի շփոթութիւնից, ըստ որում «Մշակ»-ի խմբագիր պէ. Արծրունին գործ էր ածում այդ բառը այլ իմաստով (սինողի նախանդամ, աւագ-լուսարար կամ հանդէսներում կաթողիկոսի պաշտօն կատարող, կամ թէ չէ մէզնում անհասկանալի՝ կաթողիկոսի փոխանորդ, ժամանակա-որ չանուն, վարչական չանողինու բառերի մոգով), մինչդեռ «Արձագանք»-ը ըմբռնում էր բառը իր հին՝ սինողի գոյութիւնից առաջ եղած կիրաւութեամբ (կաթողիկոսից նշանակուած լիազօր պաշտօնակատար մինչեւ յաջորդի ընարութիւնը): Երկու կողմն էլ այնուշենեւ զեր. Արբազանի տեղակալութիւնը ժխտելով կամ հաստատելով հանդէրձ կամաց կամաց մօտենում են բառի բուն իմաստին: Այսպէս «Արձագանք»-ը յաջորդ № 15-ում, յունիսի, 23-ին, ասում է. «միանդամայն

անհիմն է..., թէ տեղակալը իրաւունք ունի լրացնել Սինո-  
դի անդամների թիւը ըստ իւր բարենկատողութեան: «Պա-  
լաժենիսն» վերապահում է այդ իրաւունքները միմիայն կա-  
թողիկոսին» (իշխ. Կ. Բէջբութեան): Ուրեմն եթէ զեր. սրբա-  
զան Երեմիան տեղակալ ևս լինի, այնուամենայնիւ նո չի  
կարող անդամների թիւը լրացնել բայց միենոյն ժամանակ  
պնդում է, որ սրբազանը տեղակալ չէ, քանի որ կաթողիկո-  
սից չէ նշանակուած: Հետեւեալ № 16-ում, յունիսի 30-ին,  
արգեն յօդուածագիրը (Տուտէորդի) ընդունում է սրբազա-  
նին տեղակալ՝ վանահայր կամ աբբայ խօսքի իմաստով, և այն  
ևս սահմանափակ իրաւունքներով, իսկ «սինօդի անդամ  
պէտք է և կարող է միմիայն կաթողիկոսն առաջարկել թէ  
ըստ օրէնսդրութեան և թէ ըստ եկեղեցական տեսակէտի»,  
և բերում է այդ տեսակէտը. «Որովհետեւ սինօդը կաթուղի-  
կոսի խորհրդատու մարմինն է և չէ կարելի մէկին առաջուց  
այնպիսի խորհրդատու մարմին տալ, որի խորհուրդները  
նո չէ կարող իսկ լսել»: Ճեմարանն էլ ենթարկվում է ոչ թէ  
տեղակալնն, այլ սինօդին, իբրև մի վարչական-դասաստանա-  
կան ատեանի, որի նախագահն է տեղակալը. «Գէորգ կաթո-  
ղիկոսի մահուանից յետոյ, զրում է յիշեալ յօդուածագիրը,  
Սրբազան տեղակալը չէր ճեմարանի խումբն արձակողը, այլ  
Սրբազան Սինօդը, և այս անդամին էլ երբ տեղակալի թոյլ-  
տուութեամբ արձակուեցան ուսուցիչները, նրանք բողոքեցին  
Սինօդին և Սինօդն ընդունեց այդ բողոքը ինչպէս իրեն վի-  
րաբերեալ: «Նոր-Դար»ը № 104, յունիսի 21, իւր հերթին  
անտեղի է համարում կաթողիկոսին իրաւունքների կողմից  
համեմատել տեղակալներին, «որոնք երբէք չեն ունեցել մեր  
պատմութեան մէջ այն իրաւունքները, որ ունի կաթողիկոսը».  
ապացոյց՝ որ գահը թափուր մնացած ժամանակ՝ վիճակնե-  
րում տեղակալի անունը երբէք չի յիշվում պատարագին, և  
ուրեմն տեղակալը առաջնորդներից էլ բարձր չէ եկեղեցա-  
կան կարպի մէջ, ուր մնաց որ կաթողիկոսական իրաւունք-  
ներ ունենայ. թող որ «ալալաշենիայով յատուկ կաթողիկո-  
սին է վերաբերուած... թեկնածուներ առաջարկելու իրա-

ւունքը»։ Ուրեմն՝ եթէ տեղակալ էլ լինի գեր։ Երեմիա սրբազնը, նա չի կարող վստել կաթողիկոսական իրաւունքներ։ Լրագիրը համաձայն է Հակոբակ գէպքում կանգիդատներ առաջարկելու իրաւունքը միայն սինողին տալ՝ «իբրև մի կոլեգիալ մարմին», քան թէ նորա նախանդամին առանձին՝ կամ տեղակալին։ Այսուամենայնիւ օրաթերթը պնդում է, որ գեր։ Երեմիա եպիսկոպոսը տեղակալ չէ ոչ պալաժենիայի զօրութեամբ և ոչ մեր եկեղեցու աւանդական կարգով որովհետեւ կաթողիկոսից չէ նշանակուած։ Իսկ մի քանի օրից յետոյ մէջ է բերում № 120, յուլիսի 27, (երբ թերթը խմբագրում էր պ. Մ. Արեգեան), Գէորգ Դ. կաթողիկոսի կոնդակի պատճէնը\*, որով նա տեղապահ էր նշանակում Մակար արքեպիսկոպոսին, և հաստատում է, որ 1836 թուից դէսը կաթողիկոսները կոնդակով են կարգել տեղակալներին և որ դժուար չէ ձեռք բերել կոնդակների պատճէնները։ Ինչ որ վերաբերում է Հնագյն ժամանակներին, այստեղ էլ մեր եկեղեցական աւանդութեամբ կաթողիկոսի բանաւոր կամ գրաւոր հրամաններ հաւասար նշանակութիւն ունի և տեղակալութեան անհրաժեշտ պայմանն է։ «Երբէք չի պատահէլ, որ մէին առանց կաթողիկոսի բանաւոր կամ գրաւոր հրամանի տեղակալ եղած լինի. այդպիսիները եղել են միայն բացառիկ դէպքերում և կամ համարուելու են ընդպղողներ»։

Կոնդակից հետեւեալ կարեոր իրողութիւններն է Հանում «Նոր-Դարը». ա. «Գէորգ Կաթողիկոսը պէտակալ նշանակելու համարում է Կանողիկոսի Հարցեոյ պարտականութիւններից Թէ՛ը, որ մեռնելուց առաջ անպատճառ պիտի կատարէ կաթողիկոսը, բ. տեղակալին է յանձնում լիազօր իրաւունքով Մայր Աթոռի՝ ս. Եջմիածնի (վանական) կառավարութիւնը և դ. տեղակալին է յանձնում նոյնպէս և Գէորգեան ծեմարանի լիազօր իրաւունքով ղեկավարութիւնը»։ Վերջին երկու կարգադրութիւնները կաթողիկոսը անում է այն հիման վրայ, որ

\* Թիւ 405. ի 1 նոյնմբ. 1882 ամի, ըստ Տումարին ՌՅԱԲ.

Վանքի և ծեմարանի ղեկավարութիւնը պալաժենիայով թող-  
նուած են կաթողիկոսին, իբրև ո. էջմիածնի վանահօր. ա-  
հա կաթողիկոսը իւր այդ իրաւունքները լիազօր կերպով  
յանձնում է տեղակալին. նրան է յանձնում իբրև վանահօր  
«վանական կառավարութեան ուրիշ պատուէրների հետ, և  
թանգարանի, ներքին գանձարանի և երկաթեսյ արկղի բա-  
նալիները»: Կոնդակում կաթողիկոսը յայտնում է նաև, որ  
իր նշանակած տեղապահին կարդել է նաև Սինոդի անդամ  
և առաջարկել է ի բարձրագոյն հաստատութիւն. և իբրև  
ապագայ նախագահի՝ յանձնում է նրան նաև Սինոդի խոհեմ  
ղեկավարութիւնը. «Գէորգ կաթողիկոսը Մակար արքեպիս-  
կոպոսին նկատուած ու հասպատուած է առաջակա իսկ Սինոդի  
անդամ լինելու համար, որով և Սինոդի նախանդամութեան  
համար, առաջարկում է նրան, ըստ Պոլուէնիայի, և բարձրա-  
գոյն հասպատուած նկատուած է Սյա կէտից պարզ երեսում է, որ տեղա-  
կալութիւնն և Սինոդի նախագութիւնը տարբեր պաշ-  
տօններ են, առաջինի տեղակալութեան համար կարգողն ու  
հաստատողը ինքը կաթողիկոսն է, իսկ երկրորդի՝ Սինոդի  
անդամութեան, որով և նախանդամութեան համար կարգո-  
ղը դարձեալ կաթողիկոսն է, բայց հաստատութիւնը լինում  
է Բարձրագոյն»: Լրագիրը աւելի հեռու գնալով ենթադրում  
է որ Մակար արքեպիսկոպոսը եթէ ըլհաստատուէր անդամ  
կառավարութիւնից իբրև Սինոդի անդամ, այնուամենայ-  
նիւ նա դարձեալ կը մնար կաթողիկոսական տեղապահ իր  
կոնդակի ղօրութեամբ և կրղեկավարէր Վանքն ու ծեմարա-  
նը, Սինոդին ու նրա նախանդամին թողնելով եկեղեցական  
արտաքին գործերի կառավարութիւնը: «Կաթողիկոսը հին  
սովորութեամբ Վանքի և ծեմարանի կառավարութիւը կա-  
րող է յանձնել որ եպիսկոպոսին որ ուղի, լինի այդ եպիս-  
կոպոսը Սինոդի անդամ, աւագ անդամ, թէ ոչ, այսպէս է  
ձեւաւորում իր միտքը «Նոր-Դարը»: Յաջորդ № 121-ում, մի  
անդամ ևս յայտնելով, որ «Սինոդի նախանդամը լինի Սինոդի  
սոսկ նախանդամ թէ միանդամայն և տեղակալ դրութիւնը  
նոյն է մնում, այն է միայն կաթողիկոսն ունի իրաւունք կան-

զիստաներ առաջարկելու, և ուրիշ ոչ ոք», անցնում է, սակայն պատմական փաստերով ապացուցանելու՝ որ գեր Երեմիա եպիսկոպոսը տեղակալ է։ Իբրև բացատրութիւն կրկին յիշում է, որ կաթողիկոսի բանաւոր հրամանը մեր աւանդականութեամբ հաւասարազօր է զրաւոր հրամանին կամ կոնդակին, որը յետին վարդապետն անգամ կարող է վկայել»։ Նաև աչքի առաջ ունենալու է մանաւանդ, որ «Հին ժամանակներում կոնդակազրութիւնը և առհասարակ զրաւոր կարգադրութիւնները քիչ էին լինում. թագաւոր, կաթողիկոս թէ իշխան իրենց գործերը վարում էին մեծ մասամբ բանաւոր պատուէրներով ու կարգադրութեամբ», որ վերջապէս՝ «մեր Հին պատմական գոկումենտները, կոնդակները մնացած չեն» և հետեարար՝ «ոչ ոք կարող չէ պնդել թէ ո՞ր և ո՞ր տեղակալները կոնդակով են տեղակալ կարգուել»։ այնուհետև անցնում է ապացուցանելու, որ բոլոր տեղակալները կաթողիկոսի կամքով և կարգադրութեամբ են եղել տեղակալ և ոչ թէ ինքնազլուի։ Դորա համար բաւական է միայն թերթել մեր եկեղեցու պատմութիւնը։

Բայց այդ աւելորդ աշխատութիւնից իրեն ազատելու համար՝ թերթը բաւական է համարում յիշել մի քանի տեղակալներին, այն է Մեսրոպ, Յովսէփ Վայոց Զորեցի, Վրթանէս Քերթող, Յովհաննէս Մանաղիկերտցի, Խաչիկ և Մակար տեղակալներին, որոնց մասին մեր պատմիչների բնագիրներից բերում է այսպիսի վկայութիւններ. — «Ղաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրահանաւելանելոյն Մէսրոպայ՝ նորին աշակերտ Յովսէփ»։ Մովսէս կաթողիկոսը «Էտքեաց փոխանորդ իւր իբր ուղղաղահ Աթոռոյ զվկթանէս փարլապեա ոմն Քերթող»։ «Զոր (զիւաչիկ Բ.) ի վաղուց երեւալ էր անդէն նա ինքն Պէտրոս էտնովէկոս (Գետալարձ) եր ուղղաղահ»։ Յովհաննէս Մանաղիկերտայու տեղապահութիւնը բացառիկ պէտք է համարուի. նորան Թէովորոս Խշունի իշխանն է նշանակում՝ յիրաւի՛ երկրի բացառիկ զրութեան պատճառով. Մեսրովպ, պատմութեան վկայութեամբ, «ամոլ» և «գործակից» էր ո. Մահակի բոլոր զոր-

ծունէութեան մէջ հետևաբար նոյն իսկ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ տեղապահ էր: Յովշաննէս Մանազկերտացու գէպքը առիթ է տալիս լրադրին եզրակացնելու, որ «եթէ հարկ լինի առանց կաթողիկոսի տեղակալ նշանակելու, այդ ժամանակ մեր եկեղեցու ընդուղաչան ո՛ժ-ո՛վ պէտք է ընտրել տեղակալ»: իսկ մասնաւորապէս Երեմիա սրբազնի մասին ասում է. «եթէ ս. Երեմիա եպիսկոպոսին հանդ. Մակար կաթողիկոսը մեռնելիս տեղակալ է նշանակել բանաւոր թէ զրաւոր կարգադրութեամբ, Երեմիա եպիսկոպոսը տեղակալ է»: իսկ եթէ ոչ նա կը մնայ միայն սինոդի ատենապետ—ուրիշ ոչինչ:

Սրանով լրագիրը պարզած, վերջացած է Համարում «տեղակալութեան» խնդիրը, որը բուն խնդրից շեղած մի նոր խնդիր էր, աւելի ոչինչ: Սակայն մի քանի օր յետոյ նոյն պարբերական թերթի № 124-ում նոյն հարցի մասին խմբագրութիւնն հրատարակում է Տ ստորագրութեամբ մի յօդուած, որ խմբագրութեանն ուղարկել է «զործին մօտիկ ծանօթ անձն»: դա «Արարատի» խմբագրի նախկին օգնական՝ ս. Էջմիածնից հեռացած՝ պ. Պ. Սիմէօնեանցը պէտք է լինի, ինչպէս վկայում է «Արձագանըր» № 21, զրութեան ոճին նայելով: «Արդէն լուծման հասած խնդիրը» հետեւեալ ձեւաբանն է ընդունել յիշեալ յօդուածում:—Կաթողիկոսի մահից յետոյ հոգեոր բացարձակ իշխանութեան գործադրութիւնը դադարում է մի տարով: Երկրորդական իշխանութիւնը պէտք է ստացած աւանդը պահպանէ: «Այդպէս պէտք է վարուել խոշոր խնդիրներում: իսկ թէ ընթացին զործերը չեն դադարում, դրա ապացոյցն է այժմեան «տեղակալութիւնը», որի մասին լրագիրները սխալ և անհեթեթ տեղեկութիւններ են աւարածում: Ոմանք ով զիսէ, կըկարծեն, իբր թէ սրբազն Երեմիայի իրաւունքները բոնաբարուած են: Իրողութիւնն այս է. նա համարվում է և կոչվում է «տեղակալ», վանքի վանահայր է իւր բոլոր իրաւունքներով, հրամաններ է արձակում մեծին և փոքրին՝ եպիսկոպոսից սկսած մինչև ժամկոչն, վարդապետ կամ եպիսկոպոս պատարգիչը նրան

Է մատուցանում՝ նշխարքը (իսկ կենդանութեան ժամանակ՝ կաթողիկոսին), ամենայն միաբան՝ մինչև իսկ եպիսկոպոս կամ սինոգական՝ նրանից է հրաման առնում վանքից բացայելու համար, մանր ծալքերի կարգադրութիւններ է անում ինքնազլուխ, հիւրեր է ընդունում իբրև ո. Աթոռի գլխաւոր ներկայացուցիչ ճանապարհից եկող հոգեորականը Նազարապատից գուրս չե գալիս՝ մինչև որ նրա կամքը չստանայ, և այլն. այսպէս միւս կարեոր գործքերն էլ շարունակ ընթացքի մէջ են նրա իշխանութեամբ և հոգացողութեամբ»։ Ահա, ուրեմն, տեղակալը Աթոռի թափուր մնացած ժամանակ վարում է ընթացիկ գործերը ոչ թէ օրէնքի որ և է յօդուածի հիման վերայ (օրէնքը լուում է այդ մասին), այլ մեր եկեղեցական աւանդութիւնների զօրութեամբ, որոնք ճանաչուած են օրէնքով. բացի գրանից խոշոր գործերում՝ նոյն աւանդութիւնների համաձայն՝ տեղակալը գործում է աւագագոյն հոգեորականաց խորհրդի հետ ձեռք ձեռքի տուած, խոհեմութեամբ բաժանելով իրար մէջ գործերն ու իրաւունքները. նոյնպիսի խոշոր և դժուարին գործերում հարկ եղած ժամանակ պէտք է նաև առաջնորդներին վիճակներից հրաւիրել այդ խորհրդին. «Այդպէս վարուեցին Գէորգ կաթողիկոսի մահուանից յետոյ», որպէս փաստ է բերում յօդուածագիրը։ Ուրեմն, Գահը թափուր մնացած ժամանակ ծաղած խոշոր, մեծ խնդիրները, որոնց կարգին է պատկանում և սինոգականներ առաջարկելու կամ Ճեմարանի մէջ փոփոխութիւններ անելու հարցերը, եթէ սախաղողական հարկը պահանջում է այդ խնդիրները ըլյետաձդել մինչև նորընտիր քահանայապետի զահակալութիւնը, պէտք է վճռել ոչ թէ ինքնազլուխ, այլ խորհրդակցութեամբ աւագագոյն եկեղեցականների և թեմական առաջնորդների հետ, ինչպէս շատ անգամ վարուել են նոյն իսկ իրենք կաթողիկոսները, ընայելով որ նոքա լիսզօր իրաւունքներ ունին այդպիսի խոշոր խնդիրները ինքնազլուխ վճռել. հակառակ դէպքում պէտք է թողնել իրերի գրութիւնը այնպէս, ինչպէս որ կայ, մինչև որ «Տան Տէրը» գայ։ Տեղակալի իրաւասութեան սահմաննե-

ըի խնդիրը պ. յօդուածագիրը հետեւալ եզրակացութեամբ է վերջացնում։ նա զանազանութիւն է դնում կոնդակով կամ կաթողիկոսից նշանակած և առանց կոնդակի գործող տեղակալի մէջ։ «մէկը լիազօրութիւն ունի կոնդակի մէջ սահմանած չափով (այսինքն ոչ ոքից չը սահմանափակուելով) և չը կաշկանդուելով»), իսկ միւսը—ոչ։ Կաթողիկոսի մահից յետոյ աւագաղջն եպիսկոպոսը վանքի մէջ, առանց կոնդակի տեղակալ կամ էջմիածնի վանահայր է իր բոլոր իրաւունքներով։ իսկ կոնդակով տեղակալ է միայն այն ձարդագոյն կամ Եպիսկոպոսը որին կաթողիկոսը կըբարեհաճի տալ իր լիազօր իրաւունքներից մի քանիսը։

Վերջապէս ինքը գեր. Երեմիա սրբազնը պէտք է կողմակի կերպով միջամտէր՝ խնդիրը վերջնականապէս և հեղենակաւոր աղբիւրի միջոցով լուծելու համար։ Ներսիսեան դպրոցում ստացուեց նորին Սրբազնութեան մի պաշտօնական դրութիւն, որ «Արձագաննքի» խմբագրութեան ձեռքն է ընկնում և որի ճակատին դրուած քեզակալ արձնագիւռն բառերը ցոյց են տալիս, թէ զեր. Սրբազնը «իր իրաւասութեան շրջանը մի կոլլեգիայի ատենապետի փոխարինողի իրաւունքներով» է սահմանափակում (Արձագանք № 21)։— Վերջապէս նոյն թերթի № 22-ում դուրս եկաւ Վաղարշապատից զրած մի թղթակցութիւն Մ. ստորագրութեամբ, որ հերքում էր այն տարածուած լուրը, թէ Մակար արքեպիսկոպոսը կանգիգատներ է առաջարկել Սարգիս և Մամբրէ վարդապետներին (այժմ Եպիսկոպոսներ)։ Թղթակցութեան հաղորդած տեղեկութիւններից երեսում է, որ Մամբրէ վարդապետին ոչ թէ ինքը Մակար արքեպիսկոպոսն է առաջարկել սինովի անդամակցութեան համար, այլ Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը, —իբրև Մակար արքեպիսկոպոսի անձնափոխանորդ։ «ապացոյց այդ իսկութեանց՝ որ, ասում է թըզը թակիցը, Մամբրէ վարդապետի հաստատութեան թղթի մէջ առաջարկութեան յիշաւակութիւն չըկայ»։ Իսկ անդամների պակասութեան հարցը բարձրացրեց կառավարութեան առաջ ոչ թէ ինքը տեղակալ Մակար արքեպիսկոպոսը, այլ

սինողի պրոկուրօր Նիկողայոս Տէր-Յովսէփեանը, որ յոյս ունէր սինողի անդամների կարգում տեսնել իր մտերիմ Սարգիս վարդապետին: Սակայն հանգուցեալ պրոկուրօրը իր նպատակին չըկարողացաւ հասնել, որովհետեւ տեղակալը ըհամաձայնեց առաջարկել Սարգիս վարդապետին՝ իբրև իւր իրաւասութիւնից գուրս մի գործ, մանաւանդ որ յիշեալ վարդապետը ենթակայ էր քննութեան. իսկ այդպիսի մարդոց անդամութեան առաջարկելը հանգուցեալ Կաթողիկոսի զգուշաւորութիւնից ու Խոհականութիւնից շատ հեռու էր: Յօդուածազրի տակը Մամբրէ վարդապետի հաստատութեան թուղթը կրում էր 3033 թիւր, և գրուած էր 1884 թ. մարտի 26-ին: Մէջ է բերուած նաև այն հանգամանքը, որ սինողի հաստատութեան օրից սկսած ոչ մի տեղակալ յաձն չի առել սինողականներ առաջարկելը. իսկ գահը թափուր մնացած ժամանակ պատահել է, որ սինողականների թիւր 5-ից էլ պակաս է եղել և որ այդպիսի կաղմութեամբ գործերը գարձեալ կանոնաւոր են ընթացել և կարող են ընթանալ: «Ուրեմն այժմ ասում է յօդուածազիրը, նորանոր անդամների առաջարկութիւնը ի հաստատութիւն՝ գործի էութեամբ չի պայմանաւորվում, այլ խռճառիչ դէպո-Յնէցով». իսկ եթէ հարկ լինի նոր անդամներ նշանակել, լաւ է որ կառավարութիւնից հաստատուեն այն անձինք, որոնք հանդուցեալ հայրապետից առաջարկուել են իբրև երկրորդ թեհնանածու սինողի անդամութեան համար: Եւ աշա մի քանի օր յետոյ «Նոր-Դարը» (№ 123) լսում է, որ կառավարութիւնից հաստատուած են ոչ թէ գեր. Երեմիայի առաջարկածները, ինչպէս այդ լսել է տեղական մի ռուս թերթ, այլ այն անձինք՝ որոնք հանդուցեալ հայրապետից առաջարկուած են եղել սինողի անդամութեան համար: Միևնույնը հաստատեց և տեղական մի ուրիշ ռուս լրագիր:

Աչքի անցկացնելով այս բանակի ներկայացուցիչների՝ «Արձագանքի» և «Նոր-Դարի»՝ ամբողջ նիւթը այս խնդրի մասին, մենք դալիս ենք հետեւալ եղբակացութեան. — սկզբ բում երկու հրատարակութիւններն ել չեն ընդունում, որ սի-

Նողի նախանդամը միւնոյն ժամանակ տեղակալ է, և հետեաբար նրա իրաւունքը չեն համարում սինողականներ առաջարկել և ձեմարանում փոփոխութիւններ անել: Այսպիսով նոքա կարծես ուզում էին ասել, որ տեղակալներն ունեն յիշեալ իրաւունքները: Բայց փոքր ինչյետոյ սկսում են պնդել, որ և տեղակալները չունեն յիշեալ իրաւունքները: ուրեմն, ընդունելով հանգերձ նախանդամի տեղակալութիւնը, նրա իրաւունքները սահմանափակում են՝ օրէնքի յօդուածների հիման վերայ: Բայցի դրանից, զանազանութիւն էին գնում կոնդակաւոր և անկոնդակ տեղակալների մէջ: առաջինները իրաւասութիւն ունեն կոնդակի ցոյց առուած սահմաններում լիւազօր կերպով (ուրեմն գուցէ և յիշեալ երկու իրաւունքների սահմանում), իսկ երկրորդները—ոչ—Յամենայն դէպս, փոքր ինչ մոււժ էր մնում՝ թէ մեր աւանդութեամբ ո՞րն է իսկապէս տեղապահի իրաւասութեան սահմանը:

Հակառակ բանակում հարցը լուծվումէր այսպէս. «Մուրճ» ամսագլիրը յունիսի գրքում ցոյց է տալիս, որ սինողի նախանդամը օրէնքով կաթողիկոսի փոխարինողն է սինողում, կամ (ինչպէս գրում են պաշտօնական թղթերում) սինողի ատենապետի տեղակալն է. իսկ եթէ կաթողիկոսները 1836 թուից դէպս կոնդակ տալիս էին, այն էլ անպատճառ սինողի նախանդամին էին տալիս, և եթէ չէին էլ տալիս կոնդակ (Մկրտիչ արքեպիսկոպոս Բաբամեան Գէորգ Թ-ի մահից յետոյ), այնուամենայնիւ տեղակալ կոչվում և համարվում էր սինողի նախանդամը: Ամսագլիրը այսպիսով կոնդակին տալիս է «ոչ ներգործական», այլ «չեղոք, զուգահեռապէս ընթացող գործողութեան՝ նշանակութիւն»: և հետեաբար, եղած կամ չեղած միւնոյն է: «Եղբակացութիւն՝ Երեմիա եպիսկոպոսը Տեղակալ է միանդամայն նոյն իրաւունքով ինչ իրաւունքով որ Տեղակալ էին Մակար արքեպիսկոպոսը, Մկրտիչ արքեպ: Բաբամեանցը, Ղուկաս արքեպիսկոպոսը»: Իսկ սինողի ատենապետի տեղակալի իրաւունքով ո՞րո՞նք էն, — աշա զլիսաւոր հարցը: Օրէնքով՝ ի հարկէ սինողին ենթակայ գործերը: Բայց ոչ թէ միայն դոքա: Կան ինդիրներ, որոնք միայն կաթողիկոսին են

պատկանում, բայց որոնցից զուտ կրօնական բնաւորութիւն չունեցող գործերը նոյնպէս սինողի ատենապետի տեղակալի իրաւունքն են կազմում, և այդ ոչ թէ օրէնքի զօրութեամբ (օրէնքը նոյն իսկ բացայացա արգելում է կաթողիկոսին իր արտօնութիւններն ուրիշն աւանդել), այլ հին հայկական աւանդական սովորութեամբ, որի համաձայն՝ եկեղեցու վարչական անիւր գաղարման ըրդատապարտելու համար՝ տեղապահը վայելել է կաթողիկոսական վարչական բոլոր իրաւունքները: Միայն պէտք է այդ սովորութիւնը ըլհակասի օրէնքի դրած յիշեալ արգելքին: Զըհակասելու փաստն ամսագիրը գտնում է ոռուաց կառավարութեան լոելեայն համաձայնութիւնը, երբ սինողի նախանդամը վայելում է կաթողիկոսական իրաւունքներ. իսկ յայտնի է, որ «ինո՞ն» տեղակալին ոչ թէ կաթողիկոսն է նշանակում, այլ տիրող պետութեան օրէնքը. «Օրէնքով որոշուած պաշտօնեան ընտարձակութ է իւր իրաւասութիւնը», և կառավարութիւնը համաձայնութիւն է տալիս դրան: Ամսագիրը բացատրում է մինչեւ անգամ, որ կոնդակով կամ կտակով կաթողիկոսական իրաւունքները յանձնել մէկին, որը նախանդամ չէ, նշանակում է օրէնքը խախտել և կառավարութեան միջամտութեան պատճառ դառնալ: Ինչ ասել կուզի, որ սրանից յետոյ ամսադիրը օժտում է տեղակալին և թեմական դպրոցների ու Գէորգեան Ճեմարանի, և ծխական երկսեռ դպրոցների, և սինողականներ առաջարկելու մասին՝ լիազօր կաթողիկոսական իրաւունքներով. սահմանափակում է միայն նոցա ծաւալը: Մի անյայտ ոմն, որ այս խնդրի համար «քրքրել է բոլոր պաշտօնական թղթերը», ի հարկէ էջմիածնի սինողում, և ուղարկել է «Մուրճի» խմբագրութեանը (№ 7—8), հաստատում է՝ որ 1836-ից սկսած «տեղակալ եղել է միշտ, առանց բացառութեան՝ էջմիածնում ներկայ եղող սինողի անդամներից աւագագոյնը», և այն՝ միշտ և առանց բացառութեան՝ սինողի առանձին օրագրութեամբ, իսկ որևէ կոնդակի յիշատակութիւն չըկայ: «Էնց որ 1882 թ. մեռնում է Գէորգ կաթողիկոսը... իսկոյն սինո-

դում օրագրութեամբ տեղակալ է հրատարակվում Մկրտիչ  
Բաբամեանը, սինողի աւագ անդամը», ընայելով որ Մակար  
արքեպիսկոպոսը կոնդակ էր ստացել Հանգուցեալ հայրապե-  
տից: Երբ որ Մակար արքեպիսկոպոսը՝ հաստատուելով սի-  
նողի անդամ՝ գալիս է էջմիածին, իսկոյն սինողի օրագրու-  
թեամբ հրատարակվում է տեղակալ, իբրև երիցագոյն ան-  
դամ; իսկ կոնդակի մասին յիշատակութիւն ըսկայ բոլորովին  
ոչ պաշտօնական քաղուածքներում («Արարատ» ամսագրի),  
և ոչ օրագրութեան մէջ: Երբ Մակար տեղակալը Աթոռի  
կողմից իբրև ներկայացուցիչ Մոսկուա է զնում Կայսեր թա-  
գագրութեանը ներկայ լինելու, սինողը իսկոյն ժողովում է  
և նորից օրագրութեամբ տեղակալ է ճանաչում ներկայ եղող  
աւագագոյն անդամին, Մկրտիչ արքեպիսկոպոսին: Մակար  
արքեպիսկո. վերաբառնում է Մոսկուայից, և ահա սինողը նո-  
րից օրագրութիւն է կազմում, որով տեղակալութիւնը կրկին  
նրան է անցնում: Ներսէս պատրիարքի ընարութիւնից յե-  
տոյ Մակար տեղակալը գնում է իր թեմը, Քիշնե: Դարձեալ սի-  
նողի օրագրութեամբ տեղակալութիւնը յանձնվում է Մկրտիչ  
արքեպիսկոպոսին: «Ահա այս տեղակալութեան ժամանակ է,  
որ Մկրտիչ արքեպի. արձակում է նահապետեանին Ճեմարա-  
նի տես ըռւթիւնից, և Մակարը իրաւունք ընհամարեց գրա-  
գէմ բողոքելու: «Քոլոր տեղակալները կամ տեղապահները սի-  
նողումլրել են «Տեղակալ Ատենապետի» տիտղոսը, իսկ սի-  
նողից գուրած՝ «Տեղակալ Տեղապահ», Տեղակալ Մայր-Աթո-  
ռոյ, Կաթողիկոսական կամ Հայրապետական տեղակալ», ա-  
ռանց խարութեան, թէ պաշտօնական և թէ ոչ պաշտօնա-  
կան գրութիւնների մէջ»:

Այս տողերը գրող անցայտ անձի մտքերը կրկնում է և  
«Արարատ» ամսագիրը իւր այս տարուայ յունուար ամսա-  
տետրում, երբ Հայոց Մայր-Աթոռի պաշտօնական բերանը՝  
վերջ տալով թէպէտ և ուշ իր լռութեանը,—որ իւր թէ յա-  
ռաջացել էր նրա՝ մի ինչ որ յայտնի «Ճանկերում» գտնուելու  
պատճառով, և երբ արդէն խմբագրութեան գործակցի պաշ-  
տօնին՝ արձակուած ալ. Սիմէօնեանցի տեղ՝ սինողը նշանակել էր

միաբան գպիր Գալուստ Տէր-Մկրտչեանին,—մի քանի ի միջի-  
այլոց նկատողութիւններ է անում այս հարցի մասին, որոնք  
խիստ յիշեցնում են իսկապէս որ «Ճանկերից» նոր ազատուածի  
յաղթական աղաղակը և որոնցից մի քանիսը կարեռ են  
մեզ խնդրի պարզաբանութեան համար. Ե միջի այլց ասացինք,  
որովհետեւ «տեղակալական խնդիրը նորից յարուցանելու մտա-  
դրութիւն» չունի ամսագիրը իւր այդ ասպարէղ հրաւի-  
րող ակնարկներով:—Կաթողիկոսական համազային ընտրողա-  
կան ժողովի ներքին կանոնագիրը յայտնապէս ասումէ. Դա-  
խանդած այնուղի, որ և աւեղակալ (ՅԱԽԵԿՈՎԻԿ) պատրիարք-էտ-  
նոպէհան. «Այս մի առղով, աւեղացնում է ամսագիրը, կարելի  
էր վերջ դնել աւեղակալական բանակառուին, բայց մամուլի  
մեծ մասին անձանօթ էր այս կանոնների դօյութիւնը»: Մայր-  
Աթոռի պաշտօնական բերանը բացի գրանից վկայում է, որ  
սինոդում երբէք չբարձրացաւ այդ հարցը այն ձեռվ, ինչ-  
պէս որ եղաւ մամուլի մէջ, «ընայելով իւր մի քանի ան-  
դամների ապօրինի ընթացքին», ակնարկում է ամսագիրը,  
այսինքն, սինոդը և իւր մի քանի անդամները չըմիացին  
գեր. Նախանդամի աւեղակալութիւնը: Նո աւեղակալ է ճանա-  
չուած և Պոլսի ու Երուսաղէմի պատրիարքներից ի դիմաց  
ազգի մեծամասնութեան, որոնք շնորհաւորել են զրով սրբ-  
բազմանի նոր պաշտօնը:—Գալով աւեղակալի իրաւասութեան  
սահմաններին, պաշտօնական ամսագիրը իւր այս և յաջորդ  
փետրուարի աետրակներում նոյն համոզման վրայ է կանգ-  
նած, ինչ որ այս բանակի բոլոր հրատարակութիւնները:

«Մշակում» այս հարցի մասին լոյս տեսած բաղմաթիւ՝  
մեծ մասամբ բանակութի ձեռվ գրուած՝ յօդուածներից ու-  
շալութեան արժանի է իր տեսակետով պ. Հ. Առաքելեանի  
յօդուածը (Մշակ), 1891, № 91, 92): Պարոնը կամենում է  
«մի քանի խօսք» ասել «նկատելով այդ խնդիրը լոկ իրեւ  
սկզբունքի խնդիր, որ կարօտ է բազմակողմանի ուսումնա-  
սիրութեան, իբրև մի եկեղեցական իրաւագիտական խնդիր»,  
և որը «բոլորովին անաշառ և առարկայական կերպով ու-  
սումնասիրելու համար հաստատ ակադեմիա և առատ նիւթ»

ունի իւր առաջը դրած՝ պարբերական հրատարակութիւններից հանած։ Այդ տեսակէտն է «Հայկական եկեղեցու պատմութեան և աւանդութեանց ուսումնասիրութեան զիմելը», որ, ինչպէս տեսանք, և հակառակ բանակի տեսակէտն էր։ «Ամեն մի վիճելի հարց, շարունակում է պարոնը, որ երեան է գտլիս հայ եկեղեցու կազմակերպութեան և վարչութեան մէջ, պիտի լուծուի նորա պատմութեան անցած իրողութիւնների և աւանդական սովորութիւնների հիմնա վրայ», որովհետեւ տիրող օրէնքը հիմնուած է մեր եկեղեցու այդ անցեալ աւանդութիւնների և կանոնների վրայ։ Արգէն մեզ ծանօթ իրողութիւնները հաստատելուց յետոյ, — որ հայ եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ կայ տեղապահութեան աստիճան նոյն իսկ Լուսաւորչի ժամանակից, որ տեղապահներ եղել են կաթողիկոսների նշանակելով կամ կոնդակով, կամ մասնաւոր հայ իշխանութեան ընտրութեամբ, կամ աղջովին և կամ հոգեորականների ընտրութեամբ, — այդ իրողութիւններին պ. յօդուածավիրը աւելացնում է և հետեւալները, իբրև պատմութեան ուսումնասիրութեան արդիւնք. նախ տեղապահութիւնը «Հաստատուել է այն անհրաժեշտութիւնից, որ առաջ է եկել եկեղեցին անիշխանութեան և քաօսի մէջ ըլթողնելու համար. այդ պատճառով տեղապահներ նշանակուել են և կաթողիկոսների կենդանութեան ժամանակ, երբ նրանք որև է պատճառով ձեռնհաս չեն եղել հովուել եկեղեցին (Յովսէի Վայոց Զորեցու, Մելիտէ Մանաղկերտցու, Գիւտ և Քրիստափոր կաթողիկոսի ժամանակ)։ Այս գարու սկզբում ներսէս Աշտարակեցու խորհրդով և նախաձեռնութեամբ ու Դանիէլ կաթողիկոսի հաւանութեամբ էջմիածնում կազմվում է «ժողով բարձրագոյն խորհրդարանի ս. էջմիածնի» կամ սիւնհոգոսը, որ այժմեան սինողի նախատիպն էր։ Ժողովը կազմուած էր արքեպիսկոպոսներից ու եպիսկոպոսներից, նախագահում էր ներսէս Աշտարակեցին, նամիւնշն ժամանակ սկսում է և տեղապահի պաշտօն կատարել Դանիէլ կաթողիկոսի աստանդական և Աթոռից հալածուած ժամանակները։ Երբ վերջապէս Դանիէլ կաթողիկոսը

եկաւ հաստատուեց իր Աթոռի վրայ, տեղակալի պաշտօնում՝  
նշանակեց Եփրեմ Եպիսկոպոսին։ Վերջապէս՝ 1836-ից սկսած  
սինողի ատենապետի տեղակալը կատարել է միևնույն ժամանակ  
և տեղապահի պաշտօն, և «մինչև այսօր չի պատահել մի գէպք,  
որ «տեղապահը» ուրիշ լիներ, իսկ սինողի նախանդամը»  
ուրիշ։ 1885 թ. կաթողիկոսական ընտրութեան պատղամա-  
ւորները չնորհակալութեան ուղերձ ներկայացնելով նախան-  
դամ Մկրտիչ արքեպիսկոպոսին՝ զրում էին. «Ամենապատիւ  
սրբազնն Տէր-Մկրտիչ արքեպիսկոպոս, տեղակալ ատենապե-  
տի սինողի սրբոյ Եջմիածնի և նախագահ Համազգային կա-  
թողիկոսական ընտրողական ժողովոյ», այսինքն Ճիշտ այն-  
պէս, ինչպէս 1884 թ. պատգամաւորներն էին զրում Մա-  
կար արքեպիսկոպոսին իրենց չնորհակալութեան ուղերձում։  
Երկու նախանդամներն էլ, նախագահելով ընտրողական ժո-  
ղովներում, ստորագրում էին միակերպ՝ «տեղակալ ատենապետի  
սինողի»։ 1884 թ. ապրիլի 16-ին, Ներսէս պատրիարքը յայտ-  
նելով կաթողիկոսական ընտրութեան վերաբերեալ ազգային  
ժողովի վճիռը Մակար սրբազնին, զրում է. «Ամենապատիւ  
Տ. Մակար սրբազնն արքեպիսկոպոս, արժանընտիր տեղա-  
կալ կաթողիկոսութեան ամենայն հայոց»։ Տեսեեալ տարին  
ազգային պատրիարքարանը և ազգային ժողովը ընտրութեան  
յայտագիրն ուղարկելով հանգուցեալ Մկրտիչ սրբազնին,  
դարձեալ զրում են. «Ամենապատիւ Տ. Մկրտիչ սրբազնն  
արքեպիսկոպոս, արժանընտիր տեղակալ կաթողիկոսութեան  
ամենայն հայոց»։ Խուսաստանի բոլոր առաջնորդները և ալ-  
գր դիմում էին Մկրտիչ արքեպիսկոպոսին «տեղապահ» տիտ-  
ղոսով, չընայելով որ նա չէր նշանակուած կաթողիկոսից, և  
ոչ ոք չըբողքեց այդ բանի դէմ։ Նշյն իսկ «կոնդակ ունե-  
ցող տեղապահ Մակարը Ճանաչում էր Մկրտիչն իբրև տեղա-  
պահ»։ Մակար կաթողիկոսի առաջարկած անդամներից աւա-  
գագցնը, Թաղէսս Եպիսկոպոս Զիւնականը, գեռ կաթողիկո-  
սի կենդանութեան ժամանակ, յայտնի է որ նկատվում էր  
տեղապահ։ Ուրեմն կոնդակը ոյժ ունի, երբ օրէնքի հետ հա-  
մապատասխան է, հէնց որ այդ երկու գործօնները ընդհար-

վում են, միշտ յաղթողը օրէնքն է լինում, իսկ կոնդակի ոյժը չեղքանում է. գա կատարուած իրողութիւն է, որը կամայ թէ ակամայ, մի գարուց յետէ տեղի է ունենում մեր պատմական կեանքում և որը պէտք է ի հաշիւ առնել: «Այս դրութիւնը համապատասխան չէ հայոց եկեղեցու ոգուն և աւանդութեանց», խոստովանում է պ. Առաքելեանցը, համապատասխան չէ մեր հին ժողովրդական ընտրութեան ըսկզբունքին, բայց նոյն սկզբունքին համապատասխան չէ նաև այն, որ մեղանում առաջնորդները չեն նշանակվում ժողովրդական ընտրութեամբ, ինչպէս տաճկահայոց մէջ լինումէ այժմ և ամբողջ հայ ազգի մէջ լինում էր առաջ, այլ նոցանշանակում է մասնաւոր իշխանութիւնը, և մենք հաշտուել ենք այդ իրողութեան հետ կամայ թէ ակամայ:

Տեղապահի իրաւասութեան սահմանները որոշելու համար պ. Առաքելեանի բերած փաստերից նշանաւորներն են՝ Արիստակէս, որ իբրև հայ եկեղեցու ներկայացուցիչ մասնակցեց Նիկիոյ ժողովին, քանի որ գեռ կաթողիկոս չէր գարձել այլ միայն փոխանորդ կամ տեղապահ էր. սուրբ Մեսրովը, որ վարդապետում էր, խրատական թղթեր էր գրում, մի խօսքով կատարում էր հայրապետական բոլոր գործերը, մինչդեռ նա օծուած կաթողիկոս չէր. Վրթանէս Քերթողը, որ Կիւրիօն, վրաց կաթողիկոսին թուղթ և յանդիմանութիւն գրեց Քաղկեդոնի ժողովը ընդունելու մասին, ուրեմն գործադրեց զուտ կաթողիկոսական մի իրաւասութիւն. Յովհաննէս Մանազկերացին, որ իր հայրենի Մանազկերտ քաղաքում եկեղեցական ժողովը ընդունելու մասին, ուրեմն գործադրեց նրա հետեւողներին, Լեռն պապին ու Եղը կաթողիկոսին և «աահմանեց ու վերահաստատեց հայկական եկեղեցու նախնական վարդապետութիւնն ու գոգմատը—Քրիստոսի մի և անշփոթ ընութեան մասին», այսինքն գործադրեց զուտ-հայրապետական իշխանութիւն, և այն էլ բուն կաթողիկոսի, Ներսէս Շինողի, կենդանութեան ժամանակ, որ գահից հրաժարուել էր: Այնուշետեւ, Քրիգոր Փ. օրով հաստատուեց «աթոռակալութեան» կամ տեղապահութեան պաշտօնը. ա-

թոռակալները վայելում էին կաթողիկոսներին հաւասար պատիւ և իրաւունք, կոնդակներ էին ուղարկում, առաջնորդներ նշանակում: 1836-ից սկսած տեղապահների իրաւունքների մասին որոշ բան չէ ասում պ. Առաքելեանը: Մեր պատմական տեղապահների այս մեծամեծ հայրապետական իրաւունքները ոչ միայն չեն հանդիպել ամբողջ ազգի ու հոգեւորականութեան կամ նոցա մի մասի բողոքին, ինչպէս եղաւ մեր օրերում, այլ և նպաստ ու աջակցութիւն են գտել: Մրանից յետոյ պարոնը ցանկանում է, որ սինոդի նախանդանն էլ վայելէ այդ բոլոր իրաւունքները, և այդ առմիւ ոչ մի բողոք չլսուի ազգի ու հոգեւորականութեան կողմից:

Մեծ նշանակութիւն տալով խնդրի լուծման համար պատմական տեսակէտին,—որ երկու բանակների ամենալուրջ մասի առաջնորդող սկզբունքն էր և որի հիման վրայ միայն պէտք է եղակացութիւններ անի այս հարցի ճիշտ լուծման հետամուտ եղողը,—մենք այստեղ լիուլի բերեցինք երկու կողմերի առաջարկած պատմական նիւթերը, որոնք այժմ մեզ ծառայելու են բուն ճշմարտութիւնը պարզելու: Արդէն բերուած փաստերը աւելի քան բաւական են:

Տեսանք, որ «Արձագանքն» ու «Նոր-Դարը» տեղակալ բառի հին իմաստը փոխարկեցին նոր՝ ժամանակակից իմաստի,—երկուան էլ ընդունեցին, որ պաշտօնական գործածելի «տեղակալ ատենապետի սինոդի» տիտղոսը կամ առօրեայ գործածութեամբ «տեղապահը» նոյնանիշ են սինոդի նախանդամին, և այդ անունները կրելու համար անհրաժեշտ չէ որևէ է կաթողիկոսական կոնդակ, այլ բաւական է և տիրող օրէնքի մի յօգուածի գործազրութիւն: Եյսպիսով չառակ վերջացաւ. պահպանողական համարուող յիշեալ երկու թերթերը՝ թէև դժուարութեամբ, բայց և այնպէս զիջեցին դոհել բառը, որ դէմ նրա հասար փրկեն: Ի դէպ (թէև ոչ այնքան այս կէտի նկատմամբ) ուղում ենք դիտել, որ այդպիսի ակամայ զիջումների հետևանքը լինում է ամենանուիրական իրերի ու պատմական յիշատակների ստորացումն, անկումն իրենց

պատուի բարձրութիւնից և յանգուգն ոտնահարութիւն փառասիրութեան տենչով վառուած մանր անձինքների կողմից: Բառերի յախուռն և վայրիներոյ գործածութեան վարժուելը հետեանք է բառի բուն իմաստի տկար ըմբռնողութեան և մուռոր թշուառութեան: Այդ թշուառութեան շնորհիւ զեռ շատ կրտեսնենք գետին գլորուած մեր գյութեան ամուր նեցուկները... Մնում է այժմ որոշել տեղապահի իշտառապետան սահմանները այդ նոր, ժամանակակից նշանակութեամբ: Օրէնքի իսկական իմաստով՝ նախանդամը կաթողիկոսի տեղակալն է «ինուն»: դա է իսկական սահմանը. այդպէս է ընդունում նոյն իսկ միւս բանակի «Մուրճ» ամսագիրը. այսպէս են բացարում նաև ազագանձր կոչուած մամուլի լուրջ ներկայացուցիչները. ուրեմն ինչ որ սինողի իրաւասութիւնից դուրս է, օրէնքի հիման վերայ անկարելի է ընծայել տեղակալին: Ուստի սխալ է աշխատել տեղակալի իրաւասութիւնները որոշելու օրէնքի հիման վերայ, և ուրեմն աւելորդ ենք համարում կանգ առնել «Մշակի» այդ մասին արած սխալ դատողութիւնների վրայ. արդէն ժամանակին դիտել տուին լրագրին իւր այդ արած սխալը, թէև նա պարզ կերպով ըլիոսառվանուեց: Ուրեմն օրէնքը իւր գերը կատարեց վերջացաւ: Մնում է տեսնել իրաւասութեան միւս աղքիւրի, աւանդութեան, որոշած սահմանները ժամանակից տեղակալի իրաւունքների մասին: Մենք դիտմամբ շեշտում ենք ժամանակակից խօսքը, որովհետեւ գարուս սկզբներում մեր եկեղեցական վարչութիւնը՝ համեմատելով սկզբնական վարչական ձեերի հետ՝ հիմնական փոփոխութիւններ կրեց, և ուրեմն ի զուր պէտք է որոնենք այնտեղ այդ ձեերը լիուլի կերպով և Ճիշտ իրենց նախնական կերպարանքով: Այդ է պատճառը, որ մենք չենք կարող հին տեղակալութեան Ճիշտ պատկերը ներկայացնել յանձին այժմեան նախանդամի, քանի որ այժմեան տեղակալի պաշտօն ստանալու ձեք, նոյն իսկ պ. Առաքելեանի վկայութեամբ, անհամապատասխան է մեր նախնի եկեղեցու ոգուն: Եթէ մենք այժմ այնուամենայնիւ տեղակալի իրաւասութեան սահմանները որոնում ենք տիրող

օրէնքից գուրս մի աղբիւրի, այն է աւանդութեան մէջ, այդ նրանից է, որ գեռ բոլորովին չի ոչնչացել այդ աւանդութեան ոյժը զրական օրէնսդրութեան միջոցով, և ուրեմն գեռ մնում են մի քանի ձեւը, որոնք ճիշտ պատկերն են անցեալ կազմակերպութեան։ Բայ այսմ՝ մինողի նախանդամը կաթողիկոսի մահից յետոյ սովորաբար էջմիածնի վանքի երիցագոյն եկեղեցականն է հանդիսանում։ մեր աւանդութեամբ՝ որև է վանքի մէջ երիցագոյն եկեղեցականը վանահայր է իւր բոլոր իրաւունքներով. ամենայն հայոց կաթողիկոսը միաժամանակ էջմիածնի վանահայրն է. նորա մահից յետոյ՝ մինչեւ նոր վանահօր ընտրութիւնը՝ կաթողիկոսի փոխարինողը կամ տեղակալը սինողի նախանդամն է, որ ըստանձնում է վանքի ու հոգեւոր գպրոցի ներքին կառավարութիւնը։ Բայց այդ կառավարութեան մէջ տեղակալը «նոյնքան տէր չէ, որքան կաթողիկոսը», ինչպէս արտայայտեց «Մուրճը»՝ խօսելով տեղակալի իրաւանց ծաւալի մասին, այդ պատճառով և մեծ սխալ ենք համարում այդ ամսագրի հետ միասին «Մշակի» քարոզած և տարածած մտքերը «Նոյնուած, ժամանակաւոր» և այլ տեսակ կաթողիկոսների մասին, որոնք միայն զայթակղութեան քարեր եղան նաև մեր օտարաբնակ աղղակիցների համար։ Այսպէս ուրեմն, սինողի նախանդամը տարածում է իւր իրաւասութիւնը նաև սինողի գործավարութիւնից գուրս եղած շրջանների, այն է վանքի և սրա ձեմարանի՝ ներքին կառավարութեան վերայ, և այդ՝ միայն աւանդութեան վրայ յենուելով, որի զօրութիւնը սկզբում չուզեց ճանաչել «Մշակի» պ. Խմբագիրը, թէև վերջը ստիպուեց խօսառվանել այդ, երբ առաջ-լուսարարչ տիտղոսը տեղակալութեանը հաւասարազօր ուզեց ցոյց տալ, և այդ՝ իբրև թէ հայոց եկեղեցու աւանդութեան համաձայն։ Մի անգամ որ մենք լայն ասպարէղ ունեցանք աւանդութեան շնորհած աղատութիւնից օգուտ քաղել այնուշետև կարող ենք աւելի հեռուն գնալ և որոշել թէ այդ աւանդութեան համաձայն՝ էլե ինչպէս և ինչ իրաւունքներ կարող է վայելել տեղակալը։ Ուրեմն օրէնսդիրքը չէ այսուհետև մեղ առաջնոր-

դողը. եթէ այդպէս է, մենք աւելորդ ենք համարում «բուն կրօնական» և «եկեղեցական-վարչական» իրաւունքի մէջ խրս- րութիւն գնել քանի որ տեսանք թէ Յովհաննէս Մանալ- կերտացին կրօնական խնդիրներ ևս անօրինեց իր տեղապա- հութեան ժամանակ, և քանի որ վարչական իրաւունքներին էլ մենք տալիս ենք այն կարևորութիւնը, ինչ որ կրօնական իրաւունքներին. իբրև կաթողիկոսական բարձր կոչման իրա- ւունքներ՝ երկուսն էլ հաւասարապէս անձեռնմխելի և նուի- րական են, երկու տեսակ իրաւունքներն էլ ժողովրդական ընտրութեամբ լիազօրութիւն ստացող անձին միայն սեփա- կան են: Մենք չենք կարող ազգի միահամուռ ոգեսրութեամբ ընտրուածի զուտ իրաւունքերը սահմանափակել մի նեղ՝ կրօ- նական իրաւունքների՝ շրջանում: Եթէ կաթողիկոսական ի- րաւունքների մէջ այդպէս խտրութիւն չեն գրել մեր նախ- նիք, և եթէ աեղակալութեան իրաւասութիւնները պէտք է միայն աւանդութեամբ որոշուին և ոչ թէ օրէնքով, ուրեմն չի կարելի նախանդամին վերագրել բոլոր վարչական իրա- ւունքները, և այն էլ՝ աւանդութեան համաձայն. որովհետեւ կարող էինք հարցնել թէ նոյն աւանդութեան համաձայն ինչո՞ւ ըվայելէ նախանդամը նաև կրօնական իրաւունքներից մի քանիսը, ինչպէս արել են մեր մի քանի տեղակալները անցեալում: Բայց բանն էլ հէնց նրանումն է, որ այդ տե- ղակալները ունեցել են կաթողիկոսի, ամեող ազգի ու հո- գեսրականութեան համաձայնութիւնը, այսինքն ընտրուել և նշանակուել են նոցանից այդ իրաւունքները գործադրելու հա- մար իսկապէս, քանի որ քաղաքական Ճնշումների տակ ուրիշ կերպ վարուելն անհնարին էին լուրձրել: Մինչդեռ բոլորովին այլ են նախանդամի տեղակալութեան հանդամանքները. ընտ- րողական սկզբունքին բոլորովին հակառակ դրութիւն է ըս- տեղծվում, երբ նախանդամը առաջ նպաստաւոր հանդամանք- ների շնորհիւ վայելում է կաթողիկոսական իրաւունքներ, սակայն առանց նոյն կաթողիկոսի, առանց ազգի և առանց նոյն իսկ եկեղեցական դասի հաւասարութեան: Որևէ է կաթողիկոսի վերջին օրերում նախանդամը կարող է իւր գոյնը փոխել բո-

լորովին այլ ձգտութեր յղանալ բոլորովին այլ թելադրութիւններով գործելու մոգեր ծնել՝ պատրաստուելով հայրապետի մահից հետոյ «ժամանակաւոր կաթողիկոսութիւն» անել այն ինչ այդ ձգտութերն ու մոտագրութիւնները բոլորովին դիւր չեն գալիս կաթողիկոսին, նոյն իսկ գժառութիւններ են ծագում կաթողիկոսի և նախանդամի մէջ, որոնք անսպատեհ միջադէպներ են յառաջ բերում: իհարկէ կաթողիկոսը չի համաձայնի այլպիսի նախանդամին տալ իւր նուիրական իրաւունքներից մի քանիսը, բայց արձակել նրան նախանդամութիւնից դժուարանում է և զույէ ուրիշ յարմար մարդիկ չեն պատահում նոյն պաշտօնի համար. ահա կաթողիկոսի մահից յետոյ նախանդամը առանց կաթողիկոսից լիազօրութիւն ստացած լինելու, առանց ազգի և հոգեորականութեան գոնէ մեծ մասի հաւանութեան, վայելում է այդ իրաւունքները. դժգոհութիւններ յայտնվում են թէ խուլ կերպով և թէ հրապարակաւ հասարակութեան ամեն շըջաններում... Պարզ է, որ այստեղ մեր աւանդական կարգերի մի նշոյն անգամ ըրկայ... Մենք աւելորդ ենք համարում երկար կանգնել տեսական գատողութիւնների վերայ. սակայն աւելորդ չէ այս առթիւ փակագծի մէջ մի քանի նկատողութիւններ անել որ զարթեցնում են մեր մէջ կատարուած իրողութիւններն ու բանակոիւր:

Մենք մեծ անհեռատեսութիւն և անտակառութիւն ենք համարում հրապարակի վերայ դործող մի քանի ոռւսահայ եկեղեցական թէ աշխարհական անձանց կողմից, որ նոքա օգուտ են քաղումներկայ բարեյաջող հանդամանքներից իրերի վիճակը մօտակայ մանր շահերի համար շահագործելու, միանդամայն աչքաթող անելով աւելի խոշոր և ընդհանուր աղջային՝ թէ կեռաւոր՝ շահերը: Ինչքան ել որ վերջին ամիսների «Արարատն», ու «Մշակը» իբրև առաջամիտ, լուսական, յառաջադրէծ օբյանէց, պարբերական մամուլի միւս «լաւագցին մասի» հետ ձեռք ձեռքի տուած աշխատեն հերքել այն բոլոր «անհեթեթ լուրերը», որոնցով սինոդական մրցութերը «լքցրին աշխարհը», և «մոլորեցրին ամբոխը» ու «ինտելի-

գենա դասակարգի մի մասը», ինչքան էլ բարեմբա «Հայրենիքը» յանկարծ այդ պայքարի ժամանակ լսու աշխարհ գալով «պրօգրամներ» կազմի ու «ջանքեր և փրկումներ» անի, ինչքան էլ այդ լուրերը սրտի ցաւ պատճառեն «Արևելքից» բաժանուած «Հայեմբա» պ. Արփիարեանին, նորածին «Հայրենիքի» խմբագրին և անզուապ զայրոյթ՝ Մշակի պ. հրատարակչին, ինչքան էլ «Երկու ազնիւ անձանց», այսինքն՝ Երեմիա և Արփիարեակէս սրբազնների թշնամիները փոքր ինչ խիստ կերպով «ցեխ գցեն» նոցա վերայ Թիֆլիդեց, եջմիածնից ու Պոլսից,—մեր զլիսաւոր կեղրոններից,—այնուամենայնիւ այդ «զրպարտութիւններն» ու լուրերը իրաւամբ գայթակղեցրին հայ ժողովրդին իրենց հաւանականութեամբ և ճշմարտանմանութեամբ։ Սյսպիսի օրերում, երբ համայն հայոց միութիւնն ու համերաշխութիւնը միակ գրաւականն էին ապահովելու այս հարցի պատճառով մեր գոյութեան քայլայուող շէնքի յարատեռութիւնը, այս ծանր և դժնդակ պարագաներում; երբ իւրաքանչիւր օրը նոր հարուածներ, նոր աղէտներ է բերում ազդի զլիին ամենուրեք, եռանգի ու լքման այս ուժասպառ կովում,—խիստ ցաւալի է, որ հայոց միութեան պաշտօնական ու պատմական կեղրոնը, Մայր-Աթոռը, իր հարազատ որդոց մէջ մրցութիւններ ու յուղմունքեր յառաջ բերելու պատճառ է դառնում՝ վարակելով իր խոսական ոգով այդ զաւակների սրտերը և զրժտութիւններ տարածելով նոցա մէջ գրսի մեր աղզակից եղբայրներն իսկ՝ ցաւալի մոքեր էին որոճում,—խղել հայոց սրբավայրից դարաւոր ամուր կապերը։ Մենք չենք ուղում քննել թէ գործին ընթացք տուող անձանց ձգտումները որքան անկեղծ են համարվում կամ են. մենք մեղ չենք ուղում թոյլ տալ «եղիպտական բրդերի բարձրութեան» հասնող՝ այլ և այլ՝ մութ կասկածներ տանել այդ ձգտումների իրական կամ անիրական լինելու մասին, սակայն դատելով գործերի հետեանքներից,—որոնք շատ կարելի է և անսպասելի էին նոյն իսկ յիշեալ անձանց համար,—այնուամենայնիւ մենք համարում ենք նոցա բռնած ընթացքը խիստ ան-

բնական ու անհարազատ։ Ոչ մի «ըմբոստական գործողութիւն» կամ «ապօրինի ընթացք» ոչ «չարամիտ մարդոց» անցեալ կամ ներկայ շահադիտական գործողութիւններ կամ «անձնական հաշիւներ», և ոչ էլ «1884-ի և 1885-ի ընտրութիւնների ժամանակ կատարուած իրողութիւնները» ու «նպատակին համանելու համար ընտրողներից մի քանիսի գործ գրած միջոցները, —ինչքան էլ զոքա մեղագրութեան արժանի լինեն, —բայց և այնպէս չեն կարող իբրև չքմեղանք մէջ բերուիլ կատարուած խոշոր սխալանքները արդարացնելու համար։ Ճին ցաւերը բժշկելու համար նորանոր վէրքեր չըպէտք է աւելացնել. մի դատապարտելի ծայրայեղութիւնից անցնել միւսին՝ հաւասարապէս դատապարտելի է։ Ովչունի բարձր ու փեհ բարցյական առաքինութիւններ, ովչի կարողանում իր հակառակորդներից ամբողջ գլխով բարձր կանգնել, ով այնքան մանրանում է, որ մտածում է միայն հակառակորդից վրէժ հանել անցեալ թշնամութիւնների համար և իր զայրայթին զոհում է ընդհանրութեան և մերձաւորների մեծամեծ շահերը, նա չըպէտք է մոնի հասարակաց ծանր գործի վարչութեան մէջ, մանաւանդ եկեղեցու վարչութեան, որտեղ մեծանձնութիւնն ու անյիշաչարութիւնը պահանջվում են առաւելապէս եկեղեցու պաշտօնեաններից՝ իբրև անհրաժեշտ քրիստոնէական առաքինութիւններ։ Մեղ համար թանդ է իւրաքանչիւր հայ եպիսկոպոսի անարատ վարքն ու անունը, և մենք կըցանկայինք որ մեր ընտանի անձանց թերութիւնները ամենայն քաղցրութեամբ ու լրջութեամբ ուղղուեին. ցանկացողը այս ուղղութեամբ հնարներ շատ կրգանի... Մենք գեր. Երեմիային չենք զւանում մեր անկեղծ յարգանքն ու որդիական սէրը՝ իբրև շատ համեստ ու քաղցրաբարց, հեղ ու բարեսիրա եպիսկոպոսի, բայց ցաւում ենք որ նրա վարչութեան օրով կատարուեցան, —համոզուած ենք, նոյն իսկ նորին Սրբաղնութեան ցանկութեան հակառակ, —այնպիսի դէսքեր, որոնք արգիւնք են Տեղակալ Հօր բարեսիրա վստահութեան առհասարակ գէպի շըջապատողները։ Իբրև այդպիսի անձ, մենք չենք ցանկանայ գեր. Սրբ-

բազանին կատարել տալ այն գերը, որ ստիպեց նրան յանձն առնել գլխաւորապէս մամուլի «լաւագոյն մասը» և այդպիսով չինք ուզի Մայր Աթոռի որդոց մեծամասնութեան աչքում տեսնել գեր. Տօր անարատ համբաւը թուլացած:— Մեղ ցանկալի էր, որ սրբազանի պաշտօնավարութեան դժուար ժամանակամիջոցը անցնէր առանց որևէ է տարածայնութիւնների, միջադէպների, բանակոփւների և այլն. այսինքն այնպիսի գոյն ստանար այդ միամեայ պաշտօնավարութիւնը, որ բովանդակ ազգի համակրութիւնն ու պատկառատնքը միանդամայն շահած լինէր, ինչպէս որ յոյս էր տալիս մեզ շնորհաշուք Տօր սրտագրաւ բնաւորութիւնը և արտաքինը:

Մեղ մեծ ցաւ էր պատճառում, երբ կարդում էինք՝ գեր. տեղակալին իրեն կուսակից, ուրիշ խօսքով, իշխան ճարդը համարող «Մշակում» այսօրինակ տողեր, որոնք մեր կարծիքով պէտք է վերաւորիչ լինեն Սրբազանի արժանապատվութեանը. «Սրբազան Երեմիան այդ մամուլի («Արձագանքի», ու «Նորդարի») կողմակից չէ երեսում, մանաւանդ որ նոյն Երեմիա սրբազանին կասկածում են բարեկամ լինել Ս. Արիստակէս Սեղրակեանի («Մշակ» 1891, № 90): Կարծես թէ հայոց Մայր Արտուր Քենաչալը իրաւունք ունի այս կամ այն մասնաւոր թերթի կուսակից լինել, այս կամ այն զուտ տեղական իշխան-Ռէւտան ճարդ գառնալ ու այդ հոսանքով տարուիլ. Կարծես այդ տեղակալը ընդհանուր ազգային Մայր Եկեղեցու պահապանն ու Հսկողը չէ, այլ «Մշակի» մի հասարակ կուսակից, որ բնաւ վայել չէ Հայաստանեաց եկեղեցու անկողմնակալ պաշտօնեայի կոչմանը: Աւելի տարօրինակն ու ցաւալին այն է, որ սրբազանի Հայական լինելու իրողութիւնը ապացուցանելու համար մէջ են բերում այն հանգամանքը, որ նորին Սրբալնութիւնը Գեր. Սեղրակեանի բարեկամն է, այսինքն՝ լռելեայն ենթազրում էին «Մշակի» պ. Խմբագրի և սրբ. Սեղրակեանի բարեկամութիւնը, իշխան անդարշակութել իշխան: Մենք խիստ զարմանում էինք՝ թէ ինչպէս «Մշակի» խմբագրութիւնը իրար վըայ լսու էր ընծայում բաղմաթիւ անյայտ պարոնների ձախ ձեռքով գրած յօդուածները,

որոնց մէջ առանց ամաչելու և տղայամիտ պարծենկոտութեամբ յայտարարում էին այդ բարձրագոչ մունիտիկները, թէ զեր. Երեմիան Եվենյն է և ոչ թէ Հակառակորդներինը, և որ այսուհետեւ նրա շնորհիւ ասլահովուած է «արժանաւոր կաթողիկոսի ընտրութեան գործը»... Մի ոմն յոխորտալով դառնում է արքայու Հակառակորդներին և զրումէ. «Ձեր վէճը... ներկայ զեր. Երեմիա տեղակալի դէմ է այն պատճառով, որ նրան յեր ու յեր դաշնակցութեան հարցեածը չէք համարում և մտածում էք թէ նու իր իշխանութեամբ կարող է ի վեաս ձեր նպատակների ու ի նպաստ ձեր Հակառակորդների ուղղութեան տանել առաջեկայ գործերը», այսինքն կաթողիկոսի ընտրութիւնը. Ուրեմն համազգային հովուապետը, Երեմիա եպիսկոպոսի իշխանութեամբ, Հակառակորդների «դաշնակցութեան մարդ» կը լինի, այսինքն մի կուսակցական եպիսկոպոս... Ո՞րքան տարօրինակ և անբայցատրելի ինքնապարծութիւն, և միւնցին ժամանակ՝ ո՞րքան թոյլ հայեացք Ս. Աթոռի գահակալի մասին։ Շարունակում ենք քաղել էլի մի քանի նշանաւոր տողեր «Մշակից»։ Իբրև բացատրութիւն՝ յիշեալ յօդուածազիրները յայտնում են, որ այդ զրութեան շնորհիւ՝ Հայաստանեայց եկեղեցու զաւակներից ոմանք զեր. Երեմիայից վախում են, դողը բըռնում է նոցա, ցնցվում են՝ «Համակրող տեսնելով նրան (այն) անձերի, որոնք հաճոյանալ չեն կարողացել իրենց», և որովհետեւ տեղակալը իր բռնած ընթացքով օժանդակում է այնպիսիների յառաջանալուն։ Մեր մէջ բերած տողերով «Մշակի» միամիտ յօդուածազիրները մեզ բայցատրում են տեղակալութեան հարցի բոռ պատճառը.—զեր. Երեմիա եպիսկոպոսը նախառարարագուուն է «աղատամիտ» կաթողիկոսի ընտրութիւնը նրանով, ըստ մինողականների է առաջարկում զեր. Մեղրակեանին և միւնիերին, որոնք «վարդ քաղողներ չեն մեղուականների համար», այլ մշակականների։ Ի հարկէ այդ նորընտիր մինողականների հետ միասին՝ Տէր Տեղակալը առաջիկայ գործերը վարչական կողմից կը տանի. «ի նպաստ հա-

կառակորդների ուղղութեան», ուրեմն և կրնտրուի աշխանա-  
ռը կաթողիկոս. ուսաի «Արձագանքի» ու «Նոր-Դարի» հա-  
մար «նեղ գրութիւն է ստեղծուել» և «չպիտեն ինչ անեն».   
իսկ մի ուրիշը մինչև անգամ լրջօրէն ասում է. «Վերջապէս  
կարող է այն էլ պատահել որ այդ տեղակալը ինքը միայն  
հերիք համարուի իր բռնած տեղը գրաւելու»... Տարօրինակ  
ժամանակներումն ենք ապրում... Օ tempora, օ mores! Հայոց  
կաթողիկոսի սուրբ կոչումը սպառնալիքի գործիք է դարձել...

Այսուհետեւ աւելորդ է մի առ մի յիշել՝ տեղակալու-  
թեան բանակուուի առթիւ մամուկի մէջ լոյս տեսած՝ զա-  
նազան անձերի ու նոյցա անցեալ գործերի թշկացո-հուշը, Փե-  
լիէտօնների աղայական ծաղրն ու երգիծանութիւնները, մա-  
մուկին անվայել մակդիրներն ու ածականները՝ որ կայնում  
էին թերթերին ու անձերին (Քառարայր, յշտարէն, շահամու  
անուշըն-ն+ ) և որոնք նոյն իսկ հայհոյելու չափ անպատկառ  
էին, և վերջապէս մեր խմբագիրների միմեանց տուած ակա-  
ճայ դաստերը: Ձենք ուղում կանգ առնել նաև այն հանգաման-  
քի վերայ, որ այս բանակուուի պատճառով, ինչպէս մեր մա-  
մուկի մէջ սովորական է, գրիչ էին վերցնում հարցին բոլո-  
րովին անտեղեակ մարդիկ և այդ պատճառով երևան էին  
գալիս զանազան կուրիօններ, օր. «պապականութիւն է կոն-  
դակով իշխանութիւն տալը. Հարկաւոր է ժողով գումարել.   
կամ թէ պալաժենիայից թէ առաջ և թէ յետոյ չեն եղած  
կոնդակներ», ևն: Աւելորդ է մի առ մի թուել և այն բոլոր  
կծու վիրաւորանքներն ու մեղագրութիւնները, որոնք՝ իբրև  
գրգուուած զայրոյթի արդիւնք՝ թունաւորում էին հասարա-  
կութեան սիրան ու միտքը չարագուշակ աղմուկով... Միայն  
աւելորդ չէ լինի բերել այս տողերը, որ գրում էր պ. Արծ-  
րունին սինոգական պայքարի տաք միջոցին, խօսելով Հակա-  
ռակորդ անձանց և թերթերի մասին. «Եթէ այս բօպէիս  
կաթողիկոսական տեղակալը լինէր Սուքիաս կամ ներսէս, —  
այդ մարդիկ և այդ թերթերը կուրօրէն կըհպատակուէին...  
բայց որովհետեւ այս բոպէիս տեղակալը երեմիան է, որին  
կասկածում են Արիստակէսի հետ բարեկամ լինել, ուրեմն

պէտք է ամեն ջանք գործ գնել և այլն» (Մշակ № 67): Այդ-պիսի մեղաղբութիւններից ու սև երփիծանութիւններից մէկըն է և յայտնի «ծուղբուղուան», որ «Տարազի» երկունքից ծնուեց և նուէր բերուեց մեր մամուլի բոլոր ներկայացուցիչներին: Մեր տարաբախտ զրական բարքերի բնանիշ գծերն են սոքա և շատ ուրիշները, որոնց մասին լռում ենք հանդիսի էջերի սղութեան պատճառով:

Յիշենք անցողակի, որ այս բանակուզում, ինչպէս և ընտրութեան միւս հարցերում, «Մշակին» միշտ համաձայն է եղել վերջին ամիսներում «Արարատը», որ, ի դէպ նկատենք, Ա. էջմիածնի պէս հաստատութեան պաշտօնական բերանին անվայել կիրք ու կողմնապահ լեղու էր գործ ածում՝ խօսելով «Մշակի» հակառակորդների մասին՝ մի առանձին քընք-շութիւն ցըց տալիս նոյն թերթի բարեկամներին, թէև այս բոլորը արտայայտում էր պատէպատ և խուլ բայցատրութիւններով: Նոյն թերթի կողմն էր և մամուլի միւս «լաւագոյն մասը», այսինքն Տ. Նազարեանցն իւր «Աղբիւրով» ու «Տարազով»: Տաճկահայոց թերթերից, որոնք ըստ «Մշակի» միշտ այն կողմն են «թեքվում», որ կողմից շատ փող կստանան, այս անդամ նոյն թերթի կողմը բռնել էին «էջմիածնական» համարուած «Փունջը» և մանաւանդ գէպքերից այլափոխուած Արփիարեանի «Հայրենիքը»: Հակառակ բանակի կողմն էր միայն «Արևելքը». իսկ արտասահմանի հայ թերթերը առհասարակ բողոքում էին կաթողիկոսական իրաւունքների ոտնահարութեան դէմ և նոցանից մի երկուսը բացարձակ դէմ էին «լաւագոյն մամուլին»:

Սինողական ծանր երկունքից յետոյ ամեն բան խաղաղացաւ: Էջմիածնին տիրած Ճնշող արամաղբութիւնն անցաւ: Տեղակալ սրբազնն այժմ սկսեց անխոռով գործել և նորակաղմ սինողի հետ խորհրդակցելով՝ մի շարք կաթողիկոսական իրաւասութիւններ գործադրեց: Մենք միայն կրյիշենք ընտրութեան գործը նախապատրաստող կարգադրութիւնները: Սակայն անցողաբար այստեղ յայտնենք, որ «բարեկոխուած» սինողում, այնուամենայնիւ, երեսն եկան տա-

բաձայնութիւններ և Բարդուղիմէսոս վարդապետը Բարձրագոյն հրամանով անդամութիւնից հեռացաւ: Աշակերտ Տեղակալը վերջերս նորից առաջարկեց ի հաստատութիւն նուխուայ յաջորդ Վահան և Էջմիածնի միաբան Ներսէս վարդապետներին, որոնք և հաստատուեցան սինողի անդամներ: Այսպիսով սինողն ամբողջացաւ, միակերպարան և միագոյն ներկայացաւ:

Էջմիածնի միաբանութեան կողմից պատղամաւորների ընտրութիւն կատարելու նպատակով սինողը շատ վազ «կարեոր դատեց» միաբանների և զրսի վանքերի բաւական բարդ տեղափոխութիւններ անել: ոմանք Էջմիածնից ուղարկուեցան դուրս, ինչպէ Եղեշէ վ. Ամատունի, Նահապետ և Աշոտ արեղաններ: Միւսները հրաւիրուեցին Էջմիածին, ինչպէս Վարդան, Գրիգոր, Մինաս, Մակար վարդապետները, Եփրեմ արեղան ևն: Դոցանից և Էջմիածնի միաբաններից սինողը նշանակեց 7 պատղամաւորներ, ինչպէս օրէնքը պահանջում է: Այսպիսով միաբանութիւնն էլ «նախապատրաստեցին»... Մնում էին թեմական առաջնորդները, որոնք սինողին են ենթակայ և օրէնքով եկեղեցական պատղամաւոր են: Ազուլեաց ս. Թովմաս վանքի վանահայրութիւնից արձակելով Գրիգորիս եպիսկոպոս Աղափիրեանին սինողը կարգեց նորնախիջեանի և Բեսարաբիոյ թափուր թեմի կառավարիչ Սրբազնը Էջմիածնից անցնելուց և իր թեմը գնալուց յետք՝ նշանակում է իր կողմից ներկայացուցիչը ընտրութեանը մասնակցելու համար վերջիշեալ Եփրեմ արեղային, որ Էջմիածին էր կանչուել շատ վաղուց: Սակայն Ատրպատականի առաջնորդ Մխիթարեան սրբազնն էլ իւր կողմից ներկայացուցիչ յայտարարեց Էջմիածնից Հառիճոյ վանքն ուղարկուած Եղեշէ վարդապետին:

---

Նախ քան անցնելը բուն ժողովրդեան պատղամաւորական ընտրութիւններին՝ կարեւոր ենք համարում այստեղ ներկայացնել հայ հասարակութեան բոլոր շրջաններում աիրապետող այն գլխաւոր հոսանքները, որոնք ուղղութիւն են տուել ոչ միայն այդ ընտրութիւններին, այլ մինչև անգամ դեկապարել

Են սինողի ու միաբանութեան ընտրութիւնները. (Թէև այս ակնարկը աւելի պատշաճ կը լինէր սոյն տեսութեան սկզբում՝ իբրև լուսաբանութիւն կատարուող շարժման ու պայքարին):

Սպրելով երկու բոլորովին տարբեր պետութիւնների՝ Ռուսից և Թիւքիոյ իշխանութեան տակ, մենք հայերս մեր այլ և այլ վարչական կարգերով, մեր դաստիարակութեան տարբեր տարբեր եղանակներով, ուրեմն և տարբեր աշխարհահայեացքներով, կազմում ենք մի հայ հասարակութիւն՝ շնորհիւ ներկայումն գոյութիւն ունեցող միակ սերտ կապի, որ ամենայն հայոց կաթողիկոսն է: Երկու հասարակութիւններն ապրում են տարբեր կենցաղով, խօսում են տարբեր և շատ անգամ միմևանց անհասկանալի բարբառներով, տասնեակ տարիների ընթացքում գտնուել են այլ և այլ ազդեցութիւնների ներքոյ և մշակել են իրենց նիստ ու կացը համապատասխան կերպով: Աննպաստ պատմական հանգամանքների շնորհիւ նոքա չեն կարողացել իրար ուսումնասիրել ապրելով իրարից անկախ՝ նոքա միմեանց խորթ են ֆնացել, միմեանց կարիքները չեն ըմբռնել միմեանց ցաւերը չեն զգացել... Այդ մեծ յանցանքի հետեանքն այն է եղել որ ընդհանուր ազգային խոշոր հարցերում, երբ երկար տարիներից յետոյ երես առ երես են կանգնել ուսուահայ և տաճկահայ «եղայրները» և ձեռնարկել են վճռել երկուսի շահերի համար էլ հաւասարապէս թանդ հարցերը, միշտ ցցց են տուել այնպիսի անհասկացողութիւն փոխագարձ շահերի և այնպիսի անհամերաշխոգի, որ վտանգաւոր գրութեան մէջ է դրել մեր ազգային-եկեղեցական կեանքը: Այդ կողմից մենք ուսուահայերս միշտ մի տեսակ թեթեամիտ և հարեանցի վերաբերութիւն ենք ցցց տուել գէպի ամեն մի լուրջ խնդիր, որ ծագել է Պոլսում: Մենք մի տեսակ ինքնաբաւական գոհունակութեամբ պարծենում ենք մեր ստացած իբրև թէ եւրոպական կրթութեամբ, և ամենևին չենք կարողացել ուսումնասիրել տաճկահայերի դաստիարակութիւնը, նոցա հասարակական կեանքըն ու գործիչներին, նոցա հոգեւորականներին, ժողովուրդն ու նորա նիստ ու կացը: Մենք դժուարութեամբ ենք հաս-

կանում նոցա զրաւոր լեզուն, իսկ նոցա զրականութիւնը շատ սակաւ է ծանօթ մեզ. ուստի զարմանալի չէ, որ մենք մոլորվում ենք և առաջնորդվում այլ և այլ աեսակէտներով որոնք խիստ հեռու են ընդհանուր ազգային լինելուց: 1885-ի ընտրութիւնների ժամանակ մեր պատգամաւորներից ոմանք աշկարայ արտայայտեցին իրենց անհամերաշխութիւնը տաճկահայոց շահերին և «եղբայրները» ըսմանակցեցին իրենց հօր ընտրութեանը: Մենք այն ժամանակ տխուր հետևանքների էինք սպասում... Սակայն տաճկահայոց խոհեմութիւնը յաղթանակեց և խաղաղութիւնը ու զեջողութիւնը միակ միջոցն եղաւ գործին սուր կերպարանք ըստալու համար: Հասանք վերջին ընտրութիւններին: «Յանցանք կրլինէր ըսխրատուել անցեալեց», զգուշացնումէ մեզ ո. էջմիածնի բերան «Արարատը»: Սակայն այս անգամ էլ դանուեցան մեր մեջ մարդիկ, որոնք անցեալը յիշելով փայփայեցին այն միաքը, որ այս անգամ էլ կաթողիկոսի ընտրութիւնը յաջողեցրին անցեալի նման, թէև այդ մարդիկ տարբեր էին անցեալի մարդիկներից: Զըկարողանալով բացարձակ մերժել տաճկահայոց իրաւունքները, այդ անձինք ներմ կողմնակից էին զուտ-ռուսահայ շահերի և պաշտպան էին ռուսահայ եպիսկոպոսների թեկնածութեան, թէև այդ բոլորն արտայայտում էին քողարկուած: Սակայն ռուսահայոց լուրջ մարդիկ լաւ տեսնում էին այդ անհամերաշխութեան ապագայ հետևանքները և ջանք չեին խնայում տաճկահայոց և ռուսահայոց միթիւնն ու ընդհանուր շահերը պաշտպանելու համար: Բայց արդէն սինողն և միաբանութիւնն նախադատքասարդութեան էին. տաճկահայոց մասնակցութիւնը խիստ կասկածելի էր, այնպէս որ համարձակ կարելի էր ձեռնարկել և աշխարհական պատգամաւորներին նախապատրաստելու: Աչքե առաջ ունենալով՝ որ տաճկահայերը եթէ այս անգամ էլ ըսմանակցեն, տխուր հետևանքների պէտք է համնենք, մենք մեծ կարեւորութիւն ենք տալիս այդ մասնակցութեանը և սկսում ենք խօսել դորա մասին.

Թիւրքիոյ հայոց սահմանադրութիւնը պահանջումէ, որ

Պոլսի Աղքային Ժողովը ճանաչուի իրեւ ներկայացուցիչ համայն տաճկահայոց ուստի այդ ժողովում քուէարկուած կաթողիկոսացուները համարվում են տաճկահայոց ընտրելիներ։ Ուստահայերը, իրենց տաճկահայ եղբարց կամքին հակառակ չըգնալու համար, սովորաբար նոցա ընտրելիներին ճանաչում էին նաև իրենց ընտրելի և դոցա ստացած քուէների վերայ աւելացնելով իրենցն էլ, ընտրուած էին համարում առաւելազոյն քուէ ստացողին։ Բայց նախընթաց ընտրութիւնների ժամանակ մեր իշխող օրէնքը չուղեց ճանաչել այդ ձեփ ընտրութիւնը, չուղեց ընդունել աղքային ժողովից ուղարկուած երկու պատգամաւորներին իրեւ բոլոր տաճկահայոց լիազօր ներկայացուցիչներ, այլ պահանջեց, որ իւրաքանչիւր անձն ներկայանայ մի քուէով միայն և որքան անձն լինի՝ այնքան էլ ձայն համարուի։ Այսպիսով տաճկահայոց եկեղեցական և աշխարհական երկու պատգամաւորները, իրեւ Պոլսից եկած, ճանաչուեցին նոյն տեղի թեմական պատգամաւորներ իւրաքանչիւրը մի ձայնով։ Մեր երկրի կառավարութեան պահանջը, ուրեմն, հակառակ էր դուրս դալիս տաճկահայոց սահմանադրութեանը։ Դորա հետեւանքն այն եղաւ, որ նոքա կորցրին 92 ձայն և մեր աւանդական կարգի համաձայն փոխանակ ժողովրդային ու համազդային ընտրութիւն կատարելու, կատարուեց մի մասնաւոր ընտրութիւն 30—35 ձայնով։ Ի հարկէ տաճկահայերը վնասուեցին դրանով և եթէ նոյնը կրկնէին հետեւալ անդամ էլ, վոանդի դուռը բացուելու էր նոցա առաջ։

Այս ցաւերին գարման անելու համար Պոլսում դեռ սահմանադրութեան առաջին օրից կաղմուեց «Կաթողիկոսական Յանձնաժողով», որ աշխատում էր հաշտեցնել պալաժենիան և սահմանադրութիւնը կաթողիկոսական հարցում, սակայն առանց օրեւէ զգալի արդիւնքի։ Ահա էջմիածնի դահը դարձեալ թափուր է, բայց տաճկահայերը դեռ մի քայլ անդամ չեն արել օրինաւոր ձեռվ մասնակցելու իրենց պետի ընտրութեանը։ Երկու ամսից աւելի էր անցել կաթողիկոսի մահից, և մինչդեռ Թիֆլիսի մամուլը «տեղակալութեան»

մասին էր աղմուկ հանում, ահա Պոլսի հայոց մէջ էլ նկատելի էր մի առանձին շարժում վարչական շրջաններում և բարձրաստիճան եկեղեցականների մէջ. բոլորն էլ պատրաստվում էին ընտրելու և ընտրուելու: Առաջնորդները թեմերը թողած զալիս էին Պոլսիս անձամբ խորհրդակցելու ընտրութեան մասին և իրենց ուղածը թելադրելու աղջային կեղրոնական վարչութեանը: Բոլոր թէ բարձրաստիճան հոգեուրականների և թէ աշխարհական նշանաւոր գործիչների մըտքերը տրամադրուած էին, որ այս անգամ համազգային ընտրութիւն լինի Ս. Եջմիածնում: Հասարակութեան բոլոր խաւերում նոյն միտքն էր արծարծվում՝ իբրև ներկայ վտանգաւոր զրութեան միակ ելքը: Ամենքը տեսնում էին, որ անօգուտ է հին սխալը նորից կրկնել մի քանի գիւրութիւնների և սահմանադրութեան մի յօդուածի համար, մանաւանդ որ սխալը ինքն ըստ ինքեան սխալ էր շատ տեսակէտից: Մամուլը արևելքում և արևմուտքում նոյնպէս զբաղվում էր այդ հարցով և ուստահայոց մամուլի ներկայացուցիչներից մէկը, «Արձագանքը», որ և առաջինը խօսեց այդ նիւթի մասին իւր № 20-ում, աշխատեց ցոյց տալ տաճկահայոց ընթացքի սխալը տեսական կողմից, խոստանալով վերջը քննել հարցը նաև պատմական ու գործնական կողմերից: Օրաթերթը նպատակ է դնում պարզել թէ երկու իշխող օրէնքներից «ո՞րն է բնականը և նպատակայարմարը, նամանաւանդ զրանցից ո՞րն է համապատասխան ազգի կրօնական իրաւունքին»: Տեսական կողմից, այն է ընտրողական սկրզբունքի ու ոգու և նորա կանոնաւոր գործադրութեան տեսակէտից՝ սխալ է աղջային երեսփոխանին լիազօրութիւն տալ նաև կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու. իբրև կրօնական ընտրութիւն, և ոչ թէ քաղաքական, նա պէտք է կատարուի ած հօշ ընտրուած պատգամաւորների ձեռքով և ոչ թէ օր առաջ ընտրուած երեսփոխանի միջոցաւ. այլապէս մենք հնար չենք ունենայ ժողովրդի տրամադրութիւնը ձիշտ իմանալու, որովհետեւ կրօնական ընտրութիւնները միշտ տեղի են ունենում հոգեսոր անձի մահից յետոյ, իսկ մահը

յանկարծ է գալիս, և հինգ այդ ժամանակ աշա ժողովրդի տրամադրութիւնը պէտք է չափել պատղամաւորական ած հօնտրութիւններով։ Ուստի օրաթերթը իրաւամբ նկատում է, որ «Կաթողիկոսի ընտրութիւնը Ազգային ժողովին յատկացնելը մեծ սխալմունք էր սահմանադրութեան մշակողների կողմից։ Եյժմն այդ սխալմունքի հետեանքը հետզետէ զգալի է գառնում։ իսկ թէ նորա շարունակութիւնը մինչեւ ուր կարող է տանել թող այդ երեակայէ հայ ընթերցողը»։ Կարելի էր զույց ազգային երեսփոխանին լիազօրութիւն տալ նաև ընտրութիւններին մասնակցելու, ինչպէս այդ լինում է քաղաքական ընարող ժողովներում, եթէ միայն զոյութիւն ունենան այդպիսի ժողովներին յատուկ հաշուեավութիւնը հասարակութեան առաջ և վերջինիս շարունակ հսկողութիւնը ընտրեալ երեսփոխանի զօրծողութիւնների վերայ. բայց այդպիսի յարաբերութեան նշոյն անդամ ըրկայ տաճկահայ ժողովրդի և նրա ընարած երեսփոխանի մէջ։— Դարձեալ ընտրողական սկզբունքը պահանջում է ընարական միութիւն, այսինքն՝ որ ընտրութիւնը մի անդամ և մի տեղում կատարուի։ «Աշխարհիս երեսին չէ կարելի երեակայել ինս ընդունին, որ ստեղծեց Տաճկահայերի Սահմանադրութիւնը, որի հիման վերայ ընտրութեան առաջին կեսը կատարվում է Պոլսում, իսկ ֆնացեալ կեսը ս. էջմիածնում»։ Դրանից ծագում են և կարող են ծագել շատ անցարմարութիւններ. ընարողական սկզբունքի պահանջած զանազան նախապարաստական արարողութիւնները, այն է մի տեղ հաւաքուել և նախօրօք քննել ու մշակել վճռելու խնդիրը, կարծիքներ յայտնել ու առնել, մոքերի շփումն յառաջ բերել գիտակցական ընտրութիւն կատարելու համար,— այս պահանջները կատարել անկարող է Պոլսում նստած երեսփոխանը։ Բայցի դրանից, ամեն մի դաւանութեան յատուկ ծէսերը սրբազն նշանակութիւն ունին այդ դաւանութեանը պատկանող անդամների համար. այդպիսի սրբազն և խորհրդաւոր ծէսերից մէկն է իջման ծեղում Պատղամաւորների միասին երդում տալը պատարագիչ եպիսկոպոսի առաջ. այդ ծէ-

ոլ մեծ ազգեցութիւն է անում ընարողների հոգու ներքին շարժումների վերայ. այդ սրբազն ազգեցութիւնից էլ զուրկ են Պոլսում նստող երեսփոխանները: Երգուող պատգամաւորը խօսք է տալիս ժողովրդի ներկայութեանը միայն հայ եկեղեցու շահերն ի նկատի ունենալ ընտրութիւնը կատարելիս, «սակայն, զրում է մեր օրաթերթը, այդ շահերը եկեղեցական օրէնքների համաձայն պաշտպանելու համար, նա պիտի դիտենայ թէ ինչպիսի հանգամանքներում գործելու է ապագայ կաթողիկոսը, որի աթոռանիստ տեղը մինչև այսօր է ս. էջմիածինը»: Ուրեմն Պոլսի ընտրողները գոնէ իրենց աչքով մի անգամ պիտի տեսնեն այն տեղը և այն շրջապատող հանգամանքները, որոնց մէջ պէտք է գործէ նոյցա ընտրած անձը: «Տաճկահայոց սահմանադրութիւնը զրկում է մօտ հարիւր հայազգի երեսփոխաններին այդ բոլոր անփոխարինելի առաւելութիւններից, երբ ընտրութիւնը էջմիածնումն է լինում, առանց մազի չափ օգուտ ունենալու իրենց՝ տաճկահայերին, մեր եկեղեցական շահերին, վնասում է կաթողիկոսի ժողովրդական ընտրութեանը և ընտրական ամրողութեանը»: Աչքի առաջ ունենալով Կովկասի հայոց մէջ տեղի ունեցած մի քանի ծածուկ հնարները՝ արտասահմանի մի հայ լսազիր զրում է. «Եթէ թիւրքահայերը կարենան այս անգամ դէթ մեծ մասով մէն մի վիճակէ պատգամաւորներ յղել էջմիածին, տարակյս չկայ որ ոմանց այժմէն շինած հաշիւները կրնան խանգարուիլ և կրօնական փոքրամասնութեան մը ըսպիտի թողուի ընդհանրական կաթողիկոսի ընտրութիւնը, ինչպէս եղաւ վերջին ընտրութեան ատեն»: Վերջապէս պէտք է նկատել և այն, որ ազգային ժողովը՝ ուղարկելով իր վճիռը էջմիածին՝ Ճնշումն է գործ դնում Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի ձայների վերայ, որովհետեւ «այն անձն որ Ազգային ժողովի մէջ քուէլից մեծամասնութիւն չ'ունէր, կարող էր այս կողմի թեմերու քուէլից շնորհիւ առաւելութիւն ստանալ փոխանակ Ազգային ժողովի ընտրելեաց ցանկէն իսպառ հանուելու»: — Տաճկահայաստանի գաւառների ժողովուրդն էլ նոյն համողման էր հա-

սել անցեալի բոլոր տպարդիւն փորձերն ու ջանքերը աչքի առաջ ունենալով, նա այս անդամ անտպատճառ ուղղում էր իր իրաւունքից օգտուել ու մասնակցել ընտրութեանը պատգամաւորների միջոցով։ Պոլսում, այսպիսով, օրուայ խնդիր. էր գարձել թեմերից պատգամաւորներ ուղարկելու հարցը և կեզրոնական ազգային վարչութիւնը պէտք է լուծէր այդ խնդիրն ու ժողովրդի արդար պահանջին բաւարարութիւն տար:

Թուսաց կառավարութիւնից գեռ չին ստացուել սինողի հրաւիրազրերը, որից յետոյ միայն կարելի էր ձեռնարկել ընտրութեան պաշտօնական գործողութիւններին։ Բայց ժամանակն անցնում էր, ուսւահայերն արդէն պատրաստութիւններ էին տեսնում ընտրութիւններ անելու։ Պատրիարքը մի անդամ պաշտօնապէս ազգարարում է կաթողիկոսական տեղակալին և սինողին, որ շաապեցնեն հրաւիրազրերը ժամանակն ուշ է։ Մինչ սպասում էին հրաւիրազրերին, Պոլսում և զաւառներում կատարուեցան ազգային ժողովի երիսխուանական նոր ընտրութիւններ՝ սակայն մի անտպարսկը ուղարկունքով—ընտրութեանը մասնակցելու իրաւունք ստացան 72 զուլուշ ազգային տուրք վճարելու կարողութեան ունեցող անձինք միայն, խակ բուն ժողովը գական դայն տալու իրաւունքից.—այնուհետև կազմուեցին կրօնական ու քաղաքական ժողովները։ Երեք ժողովներն էլ նիստեր ունեցան և խաղաղ էին ընթանում, որովհետեւ ընդդիմախօս պատգամաւորին ժողովից արտաքսում էին. հարցերը նպատակայարմար կերպով ու ցանկալի յաջողութեամբ լուծելու այդ գաղանիքը այժմ միայն կարելի էր գործ դնել և այժմ էլ հարկաւոր էր ազգային վարչութեան զեկավարներին։ Այսպէս կարգին բանը տեսնելուց յետոյ, վարչութիւնը ձեռնամուխ եղաւ ընտրութեան նախապատրաստութիւններին։ Նոր քաղաքական ժողովը պատրիարքի նախագահութեամբ վճռեց մի խառն յանձնաժողով կազմել այդ խնդիրն ուսումնասիրելու և պարզելու վարչութեան հետեւելիք ընթացքը։ Եւ յանձնաժողովը կազմուեց երեք հոգեուրական անձերից

(Գարեգին ծ. վ. Թաթարեան, Մովսէս ծ. վ. Կէօմրիւկեան և Յովհաննէս ա. ք. Հիւնքիարպէյէնտեան), երեք էլ աշխարհական (Տիգրան Եռլսութեան, Ստեփան Ալյանեան և չ, Պալըլարեան). նա պէտք է պարզէր Թիւրքիոյ հայոց մասնակցութեան եղանակը, բայց այնպէս, որ սահմանադրութեան պահանջներն ու գաւառների իրաւունքները միանդամայն ի նկատի առնուին: Ուրեմն Պոլսի նորակազմ վարչութիւնը ձրգառում էր սահմանադրութեան պահանջների համեմատ յաջողեցնել տաճկահայերի մասնակցութիւնը այն է աղջային ժողովի միջոցաւ, և ոչ թէ պատգամաւորներ ուղարկելով թեմերից գէպի ս. էջմիածին: Այդ նպատակով մայր-դիւտանը քննութեան ենթարկեց 1863-ից ի վեր կաթողիկոսական ընտրութեան համար կաղմած յանձնաժողովներն ու նոցա գործերը, որ յանկացած ուղղութեամբ մի ճանապարհ գտնեն. նոյնպէս զիմումներ եղան ում անկ է և ջանքեր գործ գրուեցան այդ նպատակով բայց մէջ տեղը մի շօշափելի արդիւնք չըլեցաւ:

Վերջապէս ռուսական գեսապանատնից ստացուեցան սինովի 44 հրաւիրազրերը տաճկահայոց 44 թեմերի անունով՝ Դեսպանատունը՝ յանձնելով յիշեալ հրաւիրազրերը հայոց պատրիարքարանին՝ յայննեց միենոյն ժամանակ, որ՝ եթէ այս անգամ էլ այդ հրաւիրազրերը Թիւրքիայի ամեն մի հայաբնակ թեմերին ըզդրկուեն, ուրիշ անգամ էլ հրաւերը պատրիարքարանի միջոցաւ չի կատարուի: Խնդիրը ըստիպողական էր. պատրիարքը անմիջապէս Բարձրադրյան Դրանը տեղեկացրեց իրերի վիճակը և թոյլտվութիւն խնդրեց աղդային ժողով գումարել ինչպէս պահանջում է սահմանադրութիւնը: Պէտք է զիտենալ որ սահմանադրութեան 61 և 62 յօդուածների վերջին պարբերութիւնների տրամադրութեան համեմատ՝ աղջային ընդհանուր ժողով գումարելու համար պէտք է թոյլտվութիւն խնդրել Բ. Պոնից և քննուելու հարցերի օրակարգը յայտնել նրան. քառորդ դարից աւելի կըլինի որ կառավարութիւնը թոյլ աչքով է նայել այդ օրէնքի վերայ, և աղջային ժողովը նիստեր էր դումարում առանց որևէ

ձեականութեան: Բայց այժմ, երեխ կողմնակի քամիների բերած նախատինքներին ու սահմանադրութեան մասին եղած բամբասանքներին ականջ զնելով, որոնց նպատակն էր այդ սահմանադրութեան վարկը կոտրել այժմ Բ. Դուռը յիշեալ երկու յօդուածների կէտ առ կէտ զործադրութիւնն է պահանջում: Ուրեմն, պատրիարքը յայտնում է կառավարութեանը զործերի գրութիւնը և խնդրում է ժողով գումարելու իրաւունք տալ: Սակայն օսմանեան Դուռը իրեն յատուկ գանդադրութեան ու մեռցնող ձեականութեան շնորհիւ, մանաւանդ խիստ կասկածելով հայերի յուղուած գրութիւնից՝ մի անյայտ վտանգ է տեսնում և զործը ձգձգում է անորոշ ժամանակով. իսկ պատրիարքը սպասում է՝ առանց հետեանքները նախատեսնելու: «Եյս վիճակի մէջ, զրում էին Պոլսից արտասահմանի հայ թերթերին, կաթողիկոսական խնդիրը մեծ գժուարութիւնների և զուցէ անդարմանելի վտասի հանդիպիսի»: Պատրիարքը ստիպուած է սպասել ազգային ժողովի որոշմանը, իսկ կառավարութեան այդ արգելքների դէմ մի արիական ընթացք բռնել գժուարանում է. «Եւ ահա թէ ինչպէս պատրիարքը զրում էին Պոլսից մի ռուս թերթի, շատ կարելի է ստիպուած կըյինի վերադարձնել ռուսաց կառավարութեանը հրաւիրագրերը այն պատրուակով, թէ ինքը չէ կարող զործին պատշաճաւոր ընթացք տալ»:

Եյս անորոշ ու տարտամ գրութիւնը խիստ այլայլել էր ամենքի տրամադրութիւնը Պոլսում, ինչպէս և Տփխիսում մասամբ: Ժողովուրդը խիստ գժգոհ էր. գժգոհ էր և բարձր եկեղեցական դասը, որ մասածում էր ժողովրդին աղատել այդ վատթար վիճակից: Պատրիարքին մեղադրում էին, որ իրը թէ նա ինքը չէ ուղում ազգային ժողով գումարել այլ կամենում է քաղաքական ժողովի միջոցով խնդիրը կարգաւորել «առանց տարածայնութեան և առանց խնդիր յարուցանելու ներկայ վիճակի վերայ»: Կովկասեան թերթերումն էլ նոյն կասկածներն էին յայտնում, ինչպէս և արտասահմանի հայ թերթերում: Ժողովրդի գժգոհութիւնը այն տեղ հասաւ, որ Պոլսի հայերի մի մասը 40 ստորագրութիւննե-

բով զրտւոր գիմեցին պատրիարքին՝ պահանջելով որ հրաժարուի իր պաշտօնից. այլ և՝ զանազան անախորժ բնաւորութիւն ունեցող ցցցեր եղան նորա հասցէին: Անորոշ ու տարտամ զրութեան մի հետեւանքն էլ այն էր, որ առաջնորդները թողնում էին հետզհետէ իրենց վիճակները և Պոլիս էին զալիս: Երեք ամսի չափ տևեց այս սպասողական դրութիւնը, մինչեւ որ պոլսեցիք՝ սատանուելով մերթ յուսոյ և մերթ յուսախարութեան մէջ ազգացին ժողովը գումարելու թոյլավութիւնը արգելել է աղղային ժողով գումարել: Այնուհետեւ Պոլսում տեղի չունեցաւ նաև համագումար եկեղեցական ժողովը, որի կազմած ընտրելիների ցանկին այնքան կարեորութիւն են ընծայում բոլոր տեղերի հայերը: Սյստիսով տաճկահայոց սահմանադրութիւնը գործնականապէս գերեզման դրուեցաւ այդ օրուանից, և հայ վարչութեան կողմից ոչ մի բողոք չեղաւ այդ մասին: Սակայն արդէն յայտնի էր Պոլսում աղղային երեսփոխանական ժողովի արամադրութիւնը. «Երեսփոխանաց մեծամասնութիւնը, զրում են արտասահմանի մի հայ լրագրի, անցեալին խրատուած և տեղական մամլոյ համերաշխ հրատարակութիւններէն ներշնչուած, արդէն պիտի սրոշէր սալամինիոյ արամադրութեանց համակերպիլ», այսինքն՝ պատգամաւորներ ուղարկել դաւառներից, և առհասարակ այնպէս սանել ընարութիւնների գործը, որ ոչ մի գէպքում՝ ինչ հետեւանք էլ ունենայ ընտրութիւնը՝ աղղը գժգոհ չըմնայ: Պոլսում, ուրեմն չըկայացան համագումար ու աղղային ժողովները: Մնում էր գործը տնօրինել քաղաքական կամ խառն ժողովների միջոցով, և իրեւե միակ ձանապարհ՝ պատգամաւորներ ուղարկել: Դորա համար պէտք էր կառավարութեան թոյլավութիւնը և աջակցութիւնը: Այդ կողմից արգելքներն հէնց սկզբից այնքան խիստ չէին երեսում: «Համոզուելով ու տեսնելով Ռուսաստանի անշահասէր ընթացքը, զրում էին Պոլսից մի ոուս լրագրի, Բ. Դուռը թոյլ կըտայ ընտրութեան բնական եղանակի իրավործումը»: Մի ամսից յետոյ նոյն ոուս լրադրում զրում

Են Պոլսից, որ կառավարութիւնը գէմ չէ թեմական պատգամաւորների էջմիածին զնալուն: «Ընթերցողին արդէն յայտնի է, զրում է Կովկասի հայ լրապիրներից մէկը, որ այն առարկութիւնը թէ թրքական կառավարութիւնը արգելումէ թրքահայերին մասնակցելու կաթողիկոսական ընտրութեանը թեմական պատգամաւորներ ուղարկելով անհիմն ընդունել և միշտ այսպէս թէ այնպէս պնդել ենք, որ թրքական կառավարութեան կողմից արգելք չկայցի: Լրապիրը նաև կցում է, «Մենք արդէն անցեալ տարուայ նոյեմբերի սկզբումը շատ վատահելի աղբիւրից դիտէինք, որ արգելքը պատրիարքարանից էր. այստեղ գէմ էին պատգամաւորներ ուղարկելուն և աւելի յարմար էին համարում մասնակցութեան այն եղանակը, որ զործ էր զրուել Մատթէոս և Գէորգ կաթողիկոսների ընտրութեան ժամանակ»: Ասում էին մինչև անգամ, որ պատգամաւորների ուղերութիւնը դիւրացնելու համար Սուլթանը առանձին շողինաւ է նշանակել մինչև Բաթում հասցնելու նրանց, որ շողինաւը կանգ կ'առնի Սև ծովի ասիսկան նաւահանգիստներում՝ գաւառների պատգամաւորներին էլ վերցնելու համար:

Երկար ժամանակ պատրիարքը ունինդրութիւն էր խնդրում սուլթանից, բայց ձգձում էին բանը. պատգամաւորներ ուղարկելը գուցէ ժողովրդի համար շատ ցանկալի էր, բայց դրամի պակասութիւնը մի կողմից, ուրիշ անյարմարութիւններն ևս պատրիարքին ստիպում էին իրերի վեճակը սուլթանի առաջ ներկայացնել և եթէ հնար է, կըրկին ձեռք բերել ազգային ժողով գումարելու իրաւունքը: Վերջապէս փետրուարի 6-ին պատրիարքը Ելազի պալատում տեսնվում է տռաջին սենեկապետ Ալի պէյի հետ, ապա և տռաջին քարտուղար Սիւրէյտ փաշայի հետ. վերջինիս միջոցով լսում է սուլթանի հրամանները: Ազգային ժողով գումարելու առաջարկութեանը սուլթանը գէմ է, որովհետեւ Աթէնքում, Լոնդոնում և այլ տեղերում հայկական մասնաժողովներ կան, որոնք ամենաընչին միջնադէպից անդամ օգուտ են քաղում: Խոկ հրաժարական տալու մասին պատրիարքի արած ակնարկը բայց է բաց մերժում է սուլթանը և հրա-

մայում է զործագրել ընտրութեան մասնակցութեան այն եղանակը, որով հայերը սովոր են եղել վարուել սահմանադրութիւնից էլ առաջ, այսինքն՝ թեմերից պատգամաւորներին ուղարկել: Սուլթանը խօսք տուեց պատգամաւորներին թողնել, որ աղաս էջմիածին գնան: Պալատից վերադառնալով պատրիարքը խառն ժողով է զումարում: ուր որոշում են թեմերին ուղարկել սինոդի շքջաբերականները. մի առանձին հրահանգ էլ իբրև «կարեոր զիտելիք», պատրիարքը գաւառական առաջնորդների «մասնաւոր ուշադրութեանն» է յանձնում: Տրահանդի համաձայն, գաւառական ընդհանուր ժողովը (ըստ սահմանադրութեան) արժանաւոր պատգամաւորին ընտրելուց յեայ, որ հայոց է լինել և «-ըւլ արել բնակուած անյն իամ ու-ըւլ վեհակի խոզմց արդէն ընդրուած պատշաճառը, մի տեղեկագիր է կազմում ընտրութեան և ընտրուածի մասին բոլոր ժողովականների և նախագահի (թեմական առաջնորդի) ստորագրութիւններով և ընտրութեան արդիւնքը յայտնում է նախագահի միջոցաւ պատրիարքարանին: Պատրիարքը յիշեցնում է էջմիածնի ընտրողական ժողովի ներքին կանոնագրի այն յօդուածը, որի համաձայն բացակայ պատգամաւորների զրաւոր կարծիքը ընդունվում է միայն ընտրութեան նախական գործողութիւնների ժամանակ, այն է՝ քառանուն ցանկը կազմելիս. իսկ ընտրութեան վերջնական արդիւնքին, այսինքն երկու ընտրելիների քուէարկութեանը, մասնակցում են միայն ներկայ եղող պատգամաւորները. «ուստի, շեշտում է պատրիարքը, պատգամաւորաց անձամբ ներկայութիւնն ընտրական վերջին զործողութեան պահուն՝ անհրաժեշտ է կատարելապէս մասնակցած լինելու համար ընտրութեանը»: Ընտրութեան արդիւնքի և էջմիածնի մեկնելու օրուայ մասին առաջնորդը պէտք է յայտնի պատրիարքարանին: Այսպիսով սկսուեցաւ տաճկահայոց ընտրութիւնները, որոնց մի քանի պարագաները թողնում ենք միւս անդամին, երբ կրխոսենք ուստահայոց և ապա համազային ընտրութեանց մասին, որով և կ'ամբողջացնենք սոյն տեսութիւնը:

# ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յարգելի բարեկամ

Խմ համեստ կարծիքով վատ չէր լինի, եթէ «Վրաքսի» երկրորդ գրքի մէջ ազգային լրագիրների տեսութեան բաժնում, որպէս պատմական արձանագրութիւն ի յիշատակ անցելոց իրաց՝ ի մի ամփոփելով արձանագրէիք այն ամէնը, որ մեր մամուլը արդիւնաւորեց կաթողիկոսական ընտրութեան առթիւ<sup>\*</sup>): Այս գործը շատ պէտքական է և նիւթ կարող է լինել ապագայ պատմաբանի համար, որ գուցէ գծուարանայ ի մի ժողովել մեր լրագիրների համարները և ամբողջութեամբ տեսնել իրողութեան պատկերը: Վրանով գոնէ ապագայ սերունդը պարզօքէն տեսնելու է, թէ ինչպէս մեր յառաջադիմականները ջանք ու ճիգ չեն թողել, որ իրանք, իրանց ձեռքով իրանց հայրենիքում նուաստացնեն իրանց ազգային եկեղեցին: Յառաջադիմականները պահանջում են «Եկեղեցական բարեփոխութիւն»—ըէֆորմա: «Արանք կարծում են, թէ Վրիստակէս արհին կարող է այս բանն անել: Կուզէնքի իմանալ, թէ ո՞վ պիտի վաւերացնէ այն օրէնքները, որոնք պիտի բռնեն «Հին, փոած ինել մը օրէնքների» տեղը: Այդ ինեղը մարդիկ այնքան չեն հասկանում, որ եկեղեցու վարչական ու գատաստանական իրաւասութեան ենթարկեալ ինդիրների քննութիւնը կատարվում է, ոչ թէ այն օրէնքներով, որ եկեղեցին ինքն է սահմանում,—այլ այն օրէնքներով, որ պետութիւնն է տալիս կամ վաւերացնում: Այդ ինեղները մինչև անդամ չեն իմանում իշխանութեան ու իրաւասութեան բառերի արտայայտած իմաստների տարբերութիւնը: Վմէն բանը թողնենք. սա վեր առնենք: Անտարակոյս եկեղեցու «Հին, փթած ինել մը այլ ևս անտանելի օրէնքների տեղ նորը խմբագրելու համար պէտք է, որ համազային և եկեղեցական ժողով գումարուի.—ժողով, որ լինի անկախ իւր գործունէութեան մէջ, ազատ կողմնակի և իւր բնութեան հակառակ ազգեցութիւններից: Վացէք ևնդրեմ: Ներկայ հանգանակներում կայ արդեօք այդպիսի ժողով կազմելու հնարաւորութիւն: Յունական եկեղեցին իսկ բազմաթիւ առկախ ինդիրներ ունի, որոնց վճիւը կախուած է տիեզերական ժողովից, և չնայելով, որ նրա գաւանութեան պատկանող ժողովուրդները պետութիւն ունին՝ անհնար են համարում ներկայում մի այդպիսի ժողովի գումարում:

Ա.

\* ) Զեր գեղեցիկ միտքը, ինչպէս տեսնում էք, խմբագրութիւնն արդէն ունեցել էք և իրագործել է մասամբ այս գրքում:



## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ

### ՆԱՄԱԿՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պուլիս 92 |թ. մայիս 7/19.

Կաթողիկոսական ընտրութեան արդիւնքը չէք զիտեր ի՞նչ մեծ ուրախութիւն պատճառուց հոս. Խրիմեան Հայրիկի անունը բոլոր սրաեր կը թոթռացնէ. խնդիրը կը մայ Վեհ. Զարին բարկյօժարութեան. բայց նոյն խի հակառակը մատածելով երբ Խղմիրլեան սրբազան վաւերանոյ՝ անձին համար գժղոհ ըլլալու պատճառ մը չկայ, թէպէտ աղջը մեծ մխիթարութենէ մը զրկուած պիտի ըլլայ՝ Հայրիկէն զրկուելով: Գոհունակութեան այս ընդհանուր արտայայտութեանց մէջ սխալած չենք ըլլար երբ ըսենք թէ երկու գժղոհներ կան միայն—թուրք կառավարութիւնը և Աշրդեան պատրիարքը: Առաջինը՝ գժղոհութեան կրկնակի պատճառներ ունի, զի երկու ընտրեալներն ես իրեն թշնամի կընկատէ. խի Աշրդեան գժղոհ է որովհեաւ, հակառակ իւր յոյսերու, ինք չէ ընարուած...: Չէք զիտեր ի՞նչ սրաի բարախմամբ կ'սպասէինք ընտրութեան արդեանց. կը վախնայինք թէ մի՛ գուցէ պատճամաւորք իրենց բարոյական քաջութիւնը կորսյունելով անդունդի մէջ գահավիժին և հեգնող բաղդը ժապահ Պոլսոյ արժանընտիր՝ պատրիարքին կամ ուրիշ ոչ նուազ անարժանի մը. ուրախ ենք որ պատղամաւորք շատ գոհացուցիչ և շնորհակալութեան արժանի գործ մը կատարերեցին. սխալած չենք ըլլար եթէ յայտարարենք թէ ոչ մէկ ընտրութիւն աղջին բաղձանայ այսչափ համապատասխան արդիւնք ունեցած է:—Գիտէք 'ի հարկէ թէ Խրիմեան Հայրիկ

Երուսաղեմ աժառյուղած էր թուրք կառավարութեան կողմէ,  
զիտէք նմանապէս թէ իզմիրեան սրբազնան քաղաքական ան-  
բաստանութեամբ քանից հարցաքննութեան ենթարկուած է  
և ապա երբ կրօնական ժողովոյ անդամ ընտրուեցաւ՝ վաւե-  
րացումը մերժուած էր. կրնաք հետեցնել թէ ի՞նչ ծանր հա-  
րուած էր կառավարութեան սրտին մայիս 5-ի պատմական  
ընտրութեան արգիւնքը. այժմ բոլորովին արգելուած է յի-  
շեալ երկու եկեղեցականնաց նկատմամբ ու և է լրազրական գո-  
վեստ հրատարակել. ամեն լրազիրք առհասարակ կրքաւա-  
կանանան չըր ու ցամաք կերպով ծանուցանելով ընտրութեան  
մանրամասնութիւնները. ինձ կրթուի թէ լրազրական այս  
սեղմում պիտի տեսէ միայն մինչեւ Վեհ. Զարին վաւերացու-  
մը. Խրիմեանը պաշառողներ հաղարաւոր հեռազիրներ պիտի  
տեղացնէին իրեն՝ բայց կառավարութիւնը չըթցլատրեց...:  
Ի՞նչ ընենք, Խոռոչոյ ողորմած ինքնակալին վաւերացման  
կամայ ակամայ պիտի սպասենք, որ ատեն կարծենք ոչ ոք  
արգելք պիտի ըլլայ մեղ մեր համակրական ցոյցերը շոայ-  
լու մեր սիրեցեալ և պաշտեցեալ Հայրիկին:—

Ա. Պուլիս 92 թ. մայիսի 15/27.

Հետզեաէ գաւառներէն հասած աեղեկութիւններ կրհաս-  
տասեն այն ընդհանուր բերկրութիւնը զոր պատճառած է  
ամենուրեք Խրիմեան Հայրիկի կաթողիկոսացումն: Պոլոյ մէջ  
օտար հասարակութիւններն ևս, որոնց անձանօթ չէր Հայ-  
րիկի անունը, անկեղծօրէն կանորհաւորեն զմեղ մեր այս յա-  
ջող ընտրութեան համար: Բայց, ինչպէս կանխառ գրած եմ  
թուրք կառավարութիւնը և պատրիարքը չափազանց զժգոհ  
են. կառավարութիւնը իր զժգոհութիւնը բաց է՝ ի բաց  
յայտներ է պատրիարքին. միջոյներ կը իորհուին ընտրու-  
թիւնը բեկանել առաջ համար. կ'ըսուի թէ զիւանազիտա-  
կան բանակցութիւններ եղած են զեսպանաց ումանց Հետ ա-  
ռանց յաջող արգիւնքի. Իզմիրեանի զիմում եղեր է անուզ-  
զակի կերպով Ճնշում բանեցնելով զինքը քանդիտատութենէ  
հրաժարեցնելու և այս կերպով ընտրութիւնը բեկանել առաջ

համար, բայց նա մերժեր է՝ պատասխանելով թէ ազդին բաղձանքը յարգելու պարաւոր է. Հիմայ կը պատրաստուին եղեր Երուսաղէմի Յարութիւն պատրիարքին միջոցաւ Հայրեկի վրայ Ճնշում բանեցնելով հրաժարեցնել. եթէ այս լուրը ստոյդ է մեզ կը թուի թէ ոչ Յարութիւն պատրիարք այնքան թոյլ է որ Աշքեանի գործիք գտնույց, ոչ ալ Հայրիկ այնքան միամիտ որ հրաժարական մասուցանէ, բայց և այնպէս Պոլսոյ հասարակութիւնը այսպիսի երկիւղալի զրոյցներ լսելով ահ ու դողի մէջ ինկած է. մի՛ գուցէ իրենց չար նպատակին մէջ յաջողութիւն գտնեն. ամեն ոք կ'սպասէ Վեհափառ Զարին շուտափոյթ և արգարակորով վաւերացման. որովհետեւ որքան որ վաւերացումը ուշանայ՝ այնքան չարերուն և բանսարկուներուն ժամանակ և միջոց տուած կ'ըլլանք նորանոր դաւեր և մեքենայութիւններ նիւթելու:

Կ. Պոլիս 92 թ. մայիս 17/29.

Երեկ «Արեելք» պիտի հրատարակէր արտասահմանի հայոց կողմէ առ Խրիմեան Հայրիկ յղուած բաղմաթիւ հեռագրերն. բայց զրաքննին բացարձակապէս արգելեց:

Երեկ «Ճէրիտէի Նարդիյէ» լրագիրն իւր երրորդ երեսին վրայ կաթողիկոսական ընարութեան տոթիւ խիստ ընդգարձակ հրատարակութիւն մ՝ լրած լլաւով բոլոր թերթերն զրաքննիչ կողմէն զրաւուեցան և այրեցան. «Ճէրիտի Նարդիյէ» ստիպուեցաւ ուշ ատեն կէս թերթի վրայ օրուան ընթացիկ լուրերն հրատարակել միայն:

Անցեալ օր վանեցի հայ մը հեռազրատուն կըներկայացանայ Խրիմեան Հայրիկի շնորհաւորական հեռագիր զարնելու. խեղձ մարդը կը ճերբուկալուի և հարցաքննութեան կ'ենթարկուի ու միայն քանի մը ժամու բանսարկութենէ յետոյ կ'արձակուի աղաս:

Աշքեան պատրիարքը չէ բարեհաճած Խրիմեան Հայրիկին շնորհաւորել ոչ հեռազրաւ և ոչ նամակաւ:—

Ա. Գոլիս, 92 թ. մայիս 20/1 յունիս.

Գրեթէ տարիէ մ'ի վեր, «Արևելք» ամեն տեսակ ան-  
նպատակ տեղեկութիւններ հրատարակեց Սեղրակեան սրբա-  
ղանի նկատմամբ. միւս կողմանէ «Հայրենիք» Նորին Սրբազ-  
նութիւնը մինչև եօթներորդ երկինք կրթարձրացներ. «Արևելք»  
«Արձագանք»-ի արձագանքն էր, իսկ «Հայրենիք»՝ «Մշակի»:  
Տաճկահայ ժողովուրդը, որ Ռուսիոյ հայ եկեղեցականաց նր-  
կատմամբ մօտէն ճնառ տեղեկութիւն չունի և իւր նպաստա-  
ւոր կամ աննպատ զաղափարներն գրեթէ բոլորովին լրա-  
զրական հրատարակութիւններէ կրկազմէ շուարած մնացած  
էր իրարու այս աստիճան հակասական տեղեկութիւններ կամ  
զաղափարներ կարդալով մանաւանդ որ մինչև կաթողիկոսա-  
կան ընարութեան խնդրոյն արծարծումը՝ Սեղրակեանցի մա-  
սին միշտ նպաստաւոր լուրեր առած էր. բայց 'ի նկատի ու-  
նենալով կարդ մը իրողութիւններ՝ որք որչափ որ Սեղրա-  
կեանցի կարողութեան և ճարպիկութեան յայտարար նշան-  
ներն էին, միւս կողմանէ նորա կաթողիկոսական թեկնածու  
լինելուն ապացոյններն ալ կրնային նկատուիլ՝ 'ի նկատի ու-  
նենալով միանգամայն սա պարագայն թէ, երբ երկու ընտ-  
րելեաց մին Արիստակէս սրբազնն Սեղրակեանը լինէր՝ հա-  
ւանօրէն ինքը վաւերացուէր՝ մինչ տաճկահայք Խրիմեան  
Հայրիկ կուլէին կաթողիկոս տեսնել՝ ժողովուրդը ջերմ փա-  
փաղ ունէր որ Խրիմեանէն յետոյ երկրորդ ընտրելին ևս  
տաճկահայ եկեղեցական մ'ըլլայ, որպէս զի Խրիմեանի վաւե-  
րացումը մինչև մէկ աստիճան ապահովուի. ուրիշ խօսքով,  
սինոդն և միաբանութիւնն վաւերացման գործին մէջ զեր  
չսահանձնէն: Եւ ըստ որում, հոս սա համոզումը կրտիրէր  
թէ «Մշակ»-ի խմբագիրն Սեղրակեանցի կուսակից է և անոր  
'ի նպաստ պիտի քուէարկէ, մինչ «Արձագանքի» խմբագիրն  
կրփափաղի, որ երկու ընարելիք ևս տաճկաստանցի լինեն՝  
ժողովուրդը մէծ հետաքրքրութեամբ կ'սպասէր Թիֆլիսի թե-  
մական պատղամաւորի ընարութեան ելքին, քանի որ այդ  
կարեոր թեմի պատղամաւորը կրնար իր աղվեցութեամբ  
'ի հարկին այս կամ այն ընտրելոյն 'ի նպաստ զօրաւոր

կուսակցութիւն կազմել: Արդ, երբ վերջ ի վերջոյ «Մշակ» ընտրուեցաւ պատգամաւոր՝ հոս շատերը տիսրեցան զի մի գուցէ Խրիմեանի ընտրութիւն և վաւերացում գժուտարութեանց հանդիպի. ուստի հարկ էր «Մշակն» հաչակշելու համար «Արձագաննքն» ալ տաճկահայ թեմի մը ուստղամաւոր ընել. Բրուսա իր աշխարհական պատգամաւորը ընտրած չ' դեռ և Պոլսոյ ամենէն մօս գաւառը լինելուն՝ կարելի էր պ. Արգար Յովհաննիսեանցի վրայ շուտով ընտրութիւն կատարել. ուստի հարկ էր, որ անպատճառ և շուտով ընտրութիւն կատարեն և պ. Յովհաննիսեանը ընտրեն. այս բանիս համար Պոլսոյ գործիքները կ' երթան պատրիարքը խորադիտութեամբ կըհամոզեն որ նա դէմ չըլսոյ «Արձագանքի» ընտրուելուն Բրուսայի թեմէն: Փակաղծի մէջ ըսենք թէ Պոլսոյ հայք արդէն զիտէին որ պ. Յովհաննիսեանի ընտրելիներէն մինն էր— իզմիրլեան սրբազնն: Սյս նազատակաւ պատրիարքը ամեն Ճիդ ի գործ կրդնէ Բրուսայի ընտրութիւնը յաջողեցնելու: Սյսպիսով պ. Արգար կ' ընտրուի, բայց արդէն երեք օր առաջ գիտէինք որ նա անպատճառ պիտի ընտրուէր:

Ա. Պոլիս 92 թ. մայիս 25/6 յունիս.

Գրեթէ տարիէ մը ի վեր արդէն բոլորովին դաղրած էր Ազգ. Սահմանադրութիւնը գործնականապէս գոյութիւն ունենալէ: Ազգային ժողով գումարելու հրաման չ' արուերիսկ երեկի, Սահմանադրութեան տարեգարձի հանդէսին առթիւ, պետական հարուած մը եկաւ պաշտօնական վերջ տալ անոր:

Ազգային Սահմանադրութեան տարեգարձի հանդէսը սատիկանական նախարարութեան կողմէ կանխաւ արտօնուած ըլլալով հանգերձ, կերակրոյ և մուտքի տոմսակները կառավարութեան կողմանէ պաշտօնապէս վաւերացած և կնքուած ըլլալով հանդէրձ, երեկ առաւոտ 24 Մայիս (Տ. Տ.), բարձրագյն հրամանաւ հանդէսը արգելուեցաւ. ժողովուրդը սկիզբէն ոչինչ աեղեկութիւն չունէր. ամէն ոք գունդագունդ կը զիմէր հանդիսավայրը հեռաւոր և մօտաւոր վայրերէ. բայց երկաթուղեաց կայարանները, եկալի Գուլէի պարիսպներուն

գոները, Ազգ, հիւանդանոցի բոլոր անցքերը, հանդիպակաց պարափղին (ուր պիտի տօնուեր հանդէսը) բոլոր մուտքերը ժողովրդին առջև փակուած էին բազմաթիւ հեծեալ և հետեւակ զօրքերով, ոստիկաններով և ոստիկան զինուորներով. ամենուրեք միակ պատասխան մը կը արուի ժողովրդին — ետաստած առջ (արդելուած է): — Ժողովուրդը չափազանց յուղուած է. կիներն անզամ չեն կրնար զատել իրենց արտասուրը և կը բացականչեն «Աշբեան Սրբազնը ի՞նչ կ'անձ...»:

Պատրիարքը նոյն օրը Բերայի ս. Երրորդութիւն եկեղեցին պատարագ պիտի մատուցանէր՝ բայց ժողովրդային յուղումէն վախնալով տունէն դուրս չելաւ: — Ընդհանրապէս կը կարծուի թէ Խրիմեանի ընտրական յաջողութեան դէմ կառավարութեան կողմանէ վրէմինդրութեան ցոյց մ'էր այս արդելքը:

Լուսաւ.

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Ինչպէս յայտնի է Թիֆլեսի մեր լուսպիրներից, մեծարդոյ տիկին Վ. Քանանեան, ցանկանալով լսս ընծայել Գամառ-Քաթիպայի ընտիր երկասիրութիւնների ժողովածուն, բարի և սիրուն միտք է յղացել իւր հաշուով տպադրել այն և վաճառումից յառաջացած բոլոր արդիւնքը ամբողջապէս յատկացնել մեծանուն հայ բանաստեղծին: Անշուշա, ազնիւտիկնոջ այս նախաձեռն քայլը հայ կնոջ գովելի և օրինակելի գործերից մինն է ներկայանում մեր այս առօրեայ անցացած կեանքում: — Ժողովածուն հրատարակուելու է երկու հաստրով մաքուր տպադրութեամբ և տպադրական ընտիր զարդերով: Առաջին հատորը կաղմում են բանաստեղծութիւնները, իսկ երկրորդը արձակ գրուածները՝ գրական և Ն. Նախիջեանու բարբառներով: Ժողովածուն տպադրվումէ «Սրաբսի» նորերս ձեռք բերած սեփական տառերով, որոնք գտընվում են Լիբերմանի տեղւոյս տպարանում:

Մեր այս դարում, երբ թեթև յաջողութիւն և էժան անուն ձեռք բերելը մի ախտ է գարձած, երբ այդ ողին մուտքա է գործել և զիտնական աշխարհում և այն հեղեղել է զիտութեան կեղծիքի վաղահաս պտուղներով, ուրախալի է մատնանիշ լինել ամեն մի անխոնջ մշակի վերայ, որ առանց աղմուկի աշխատում է ի սէր նոյն իսկ զիտութեան և որի համար նա իր անձնական շահերին յեախն տեղն է տալիս: Ամեն մի մարդ, որ այդպիսի համեստ գործիչների արած ծառայութեան զնահատմանը ականատես է լինում, նա անշուշտ զգում է մի տեսակ բարսյական գոհունակութիւն:

Հենց այդպիսի մի զգացմունք էին տածում բոլորը, որոնք ներկայ էին 1892 թ. ապրիլի 30-ին Կայսերական բժշկական ճեմարանի Բնախօսական աշխատանոցի (լաբորատորիա) պրովեկտորի պաշտօնակատար Պ. Վարդան Վարդանեանի շարադրութեան պաշտպանութեանը: Այնպիսի հեղինակաւոր քննիչներ, ինչպէս են ակադեմիկ Մերժէւսկին, ուսուցչապետ ի. Թարխանովը և պրիվատ-գոյցէնդ Ա. Եռլիցկին միաձայն վկայեցին Պ. Վարդանեանի ներկայացրած աշխատութեան աչքի ընկնող զիտնական նշանակութիւնը, որի նիւթն էր գործի ժաշկի մէջ աւելի ուժեցրող ժաւկանական երեսընէր է հետազոտութիւնը: Այս արտակարգ հետազոտութիւնը ուսուցչապետ Թարխանովի կարծիքով հնարաւոր է գարձնում հաստատել այնպիսի բնախօսական երեսյթների գոյութիւնը, որոնց ուսումնական մշակութիւնը ապագայում կարող է բանալ զիտութեան համար նոր հորիզոններ: Յարդելի ուսուցչապետը, որ եռանդով մատնացոյց էր անում քնննելի երկասիրութեան զիտնական նշանակութիւնը, յայտնեց լիուլի վատահութիւն, որ մի այդպիսի աշխատութիւն աննկատելի չի մնայ նաև Ռուսաստանի սահմաններից դուրս, և որ դա, անշուշտ, արժանի է թարգմանուելու եւրոպական լեզուներով: Ի. Թարխանովը նաև մատնանիշ եղաւ թէ՛ ինչպէս Պ. Վարդանեանը միշտ լուրջ է վերաբերուել դէպի զիտութիւնը և յայտնեց, որ այս արդէն յարգելի պաշտպանողի եօթներորդ գործն է, և թէ նրա նախկին ամբողջացրած գործերից մէկն ու մէկը

արդէն լիուլի բաւական կը լինէր ցանկալի գոքտորութեան աստիճանը ստանալու համար: Իսկ վերջումը ուսուցչապետը գծագրեց նորա բարօյական պատկերը, նրա հոգատար սէրը և մտերմական յարաբերութիւնը գէպի իւր բժիշկ ընկերները և ուսանողները, որոնք միշտ գտնում էին յանձին պ. Վարդանեանցի ամենաբարեացակամ զեկավար բնախօսական աշխատանոցում տեղի ունեցող իրենց պարապմունքների, և որոնք մի քանի անդամ մամուլի միջոցաւ յայտնել են նորան իրենց շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը:

Նատ սակաւ ուսումնականներ կարող են պարծենալ այլպիսի վերաբերութեամբ գէպի իրենց ըջապատող աշխարհը, որի շնորհիւ մարդ ստիպուած է յարգել նոցա ոչ միայն իբրև զիանականի, այլ և իբրև մարդու և հասարակութեան անդամի: Մենք հաճութեամբ իմացանք, որ պ. Վարդանեան միաձայն ընտրուեց պրօվեհտօրի պաշտօն ստանալու համար: Անշուշտ եկող աշունքին նա կ'արժանանայ ձեմարանի գոցենատի կոչման, որը և նրան միջոց կտայ ընդլայնել իր օգտաւէտ գործունէութեան ըջանը:

Մայրաբաղաքիս հայ բժիշկներից պ. Ա. Ա. Մելինեանցը ներկայ տարուայ յունուար ամսից նշանակուել է կայսերական ձեմարանի փորձական բժշկականութեան զիտնական բաժնի աշխատանոցի կառավարչին օդնական:

Ներկայ տարուայ սկզբում մենք այլ և այլ պատճառներով սպիտուած էինք «Արաքսի» տպագրութիւնը տեղափոխել մի նոր տպարան, բայց տեղը միւս տպարաններում հայերէն տառեր չըդանուելու պատճառաւ, հարկագրուած եղանք մի քանի ձուլարաններից ձեռք բերել նոր տառեր, որոնցով և տպագրուած է այս գիրքը: Ահա մեր այս գործի սկզբնաւորութիւնն է «Արաքսի» ուշանալու զլիսաւոր պատճառը: Հաւաստի ենք որ այսուհետեւ միջոց ունենք կանոնաւորապէս հրատարակելու մեր հանդէսը:— Շուտով դարձեալ ստանալու ենք զանազան տեսակի ընտիր նոր տառեր և զարդեր: Մեր տառերով այժմ միջոց ենք ունենում ընդունելու նաև կողմակի զանազան պատուէրներ:

«Երաբսը», հրատարակուելով Պետքբուրգում, անշուշտ,  
բարոյական պարտք ունի երբեմն շօշափել նաև մեր տեղա-  
կան խնդիրները: Այս անգամ անցողակի յիշենք տեղւոյս եկե-  
ղեցապատկան տան մասին, որի մի մասի վերաշինութիւնը  
երկու տարի առաջ աւարտուելուն մօտ էր, երբ նոր շինուած  
վերեկի մասը քանդուելով, ինչպէս յայտնի է, այնքան դժբաղդ  
զոհերի պատճառ եղաւ և մեծ յուղում առաջ բերեց տեղւոյս  
մամուլում և ոռու հասարակութեան մէջ: Վերաշինութիւնից  
յետոյ—որի առթիւ մէջ տեղը խաղաց 200,000 ռուբլուց աւելի  
կանխիկ գումար—բնական էր, որ այդ վերաշինուած մասը շօ-  
շափելի մի արդիւնք բերէր, ինչպէս նաև հաւատայնում  
էր «Մշակում» պ. Ծփականը, որի հաշուելով դորանից եկեղե-  
ցին 33,000 ռ. տարեկան արդիւնք էր ունենալու: Սակայն ական-  
ջին ախորժալուր այդ խոստումը դժբախտաբար մնումէ մինչեւ  
այսօր անկատար և պ. Գասպար Եաղուբեանի համարեա ան-  
միջական հսկողութեան տակ շինուած այդ մասի մի յայտնի  
թիւ բնակարանները ահա երկրորդ տարին է, որ թափուր և  
անբնակ մնալով, տարեկան 10—12000 ռուբլի վեաս են բե-  
րում եկեղեցուն, չնայելով որ տները գտնվում են նեվսկի  
պողոտայի ամենայաջող մասում: Ի՞նչն է այս տիտուր երեց-  
թի պատճառը, որ հարիւր հազարներ ծախսելուց յետոյ՝ մըր  
եկեղեցին տարեկան տասնեակ հազարների մնասներ է ունե-  
նում բնակարանների անվարձ մնալուց....:

---

Խօլերայի պատճառով մայրաքաղաքիս առողջապահիկ  
խմբերից մինը այցելելով և հայոց եկեղեցապատկան տունը,  
առայժմ աչքի է անցրել ժամկոչի և դռնապանի կացարանները,  
որոնք նորերս վերաշինուած մասի մէջ են գտնվում, և առող-  
ջապահական պայմաններին հակառակ գտնելով կարգադրել է  
փակել, իսկ ժամկոչին ու աւագ դռնապանին յատկացնել նոր  
կացարաններ: Արդեօք, ո՞ր անփութութեան Հետեանք պէտք  
է համարուեն այս զանցառութիւնները, որոնցով վսսր է ընկ-  
նում եկեղեցապատկան տան առանց այն էլ ընկած վարկը...

---





Անգլիական Պատկանեան

Рафаэль Патканянъ.



## ՈՍՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(Ծնաւ 1830 թ. Հոկտեմբերի 5, † 1892 Օգսոստ, 22).

Չէ այլ ևս մեծ բանաստեղծը. չէ լսվում այլ ևս այն ձայնը,  
որը քառասուն տարի շարունակ հայ ազգի նույնական զգաց-  
մունքներն է շարժել և նորա ինքնաճաշութեանը հումկու  
զարկ տուել. այսօր այդ մեծ անձնաւորութիւնը, հայ ժողո-  
վըրդի այդ մեծ զաւակը հեռացաւ մեզանից դէպի յաւիտենա-  
կանութեան զիրկը, սղի մատնելով իր փայփայած ժողովը-  
զին. Այս վերջինս յանձին Գամառ-Քամթիսպայի կորցրեց իր  
այն զօրաւոր նեցուկը, որը, որպէս մի մեծ մաղնիտ, կարո-  
ղանում էր ժողովը դին նորա տագնապալից օրերում իր քեա-  
րի շուրջը ժողովել և այդպիսով նորան գիտակցութիւն ներ-  
շընչել: Այս զգալի պէտքէ լինի ազգին մեծ բանաստեղծի կո-  
րուսոր, երբ հայ ժողովուրդը իր այս լրեալ դրութեան մէջ  
այժմ աւելի ևս զօրաւոր ներշնչութների, հոգեկան բարձր  
պահանջների կարիք է զգում:

Այսօր, այս մեծ կորուստի առաջ, մէնք դեռ անկարող  
ենք երկար կանգ առնել աղջի նշանաւոր բանաստեղծի կեան-  
քի և զործերի վերայ: Առայժմ սգում ենք միայն, յանձին  
Պատկանեանի, հայ գրականութեան և հայ ազգի ինքնաճա-  
նաշութեան զօրեղ արտայայտիչ մահը:

Հայ աղջը խիստ ապերախտ գտնուեցաւ դէպի իր մեծ  
զաւակը, մանաւանդ որ սա առաջին օրինակը չէ մեր օրե-  
րում: Այն ինչ որ աեղի ունեցաւ Խաֆֆիի նկատմամբ՝ այ-  
սօր ցաւօք սրտի տեսանք իրազործուած և մեր այս ազգային  
նշանաւոր գործիչի վերաբերմտմբ: Տարիների ընթացքում,  
երբ բանաստեղծը բաջութեամբ կանգնած հայ յատկանի ների  
դղեակի մէջ՝ այնտեղից իր քնարով բովանդակ աղջի մէջ զօ-  
րաւոր զիտակցութեան փայլուն ձաւագայթներ էր տարա-  
ծում, երբ աղջի խսկական գյութիւնը մարմնանում էր մեծ  
մասամբ բանաստեղծի ստեղծած ինքնաճանաշութեան մէջ,  
այդ ժամանակ աղջի հասկացող մասը չէ հետաքրքրուել  
իմանալու, որ այդ զիտակցութիւն ներշնչող աղբիւրը հեկե-  
կում է նիւթական ծանր հարուածների տակ...

Մեր այսօրուան հայ կեանքը այնքան տղքատ է նշանաւոր գործիշներով ու զրողներով, որ ազդի նուիրական պարագն է զեթ իր ունեցած եղափի նշանաւոր անձերին աւելի ջերմ վերաբերուել այն ինչ խիստ բաղդաւոր աստղի տակ երեան եկած ազգի մեծ մարդիկը մինը միւսի յետեից իջնում են ասպարիզեց... և ամօթ է անգամ արձանազրել... սոսկ նիւթական նեղ պայմաններից: Զէ, մենք չենք կարողանում ճանաչել և պատուել մեր մեծ մարդիկը, երբ նոքա դեռ կենդանի են, իսկ երբ մեռնում են, այն ժամանակ միայն մենք աղաղակներ ենք արձակում:

Մեր այս զգուելի յատկութիւնը շատ յաջող նկատել էր նոյն խակ հանգուցեալը, իր միքանաստեղծութեան մէջ «Խաֆֆի» բաժանէ վրայ՝ խորագրի ներքոյ, որը արտատպում ենք այս սեղ «Արաքսի» անցեալ զրքից.

Քանի դու մեր մէջ կեանքով լի էիր,  
Դու միշտ հալածուած, տտելի էիր.  
Բայց հէնց առ հարս գնացիր, հեռացար,  
Դու մեր աղջային հանձարը գարձար:  
Հայքս, որ հոգուով վաղուց ենք մեռած,  
Միշտ զիակներ ենք մեր կեանքում սիրած.  
Սուտ չը խօսքը մեր տած պապերէն—  
Գնա՞ դու մեռիր, արի՞ քեզ սիրեմ:

Մենք առայժմ զդիտենք, ինչ մի արտաքոյ կարգի պատճառ ստիպեց այնքան շուտ թաղել հանգուցեալին, ինչպէս ասում են, «ալալոց կալալոց» անել որ ազգի մեծ բանաստեղծի անհամար յարգողներին միջոց չտուին մասնակցելու այդ վերջն տխուր հանդիսին. կարծէք թէ թաղում էին մի որ և է սովորական մարդու և ոչ «Մայր Արաքսի» հեղինակին: Կրապասենք և կրտենեկանանք:

Ի դէպի, բարոյական պարագ ենք համարում աղջի մասնաւոր ուշագրութիւնը հրաւիրել հանգուցեալի «Էջ կապէ» խորագրով ոտանաւորի վերայ, որը թէւ մտնելու էր անցեալ տարուայ «Արաքսի» մէջ, սակայն բանաստեղծի մի նամակի շնորհիւ մնաց անտիպ: Ահա այդ ոտանաւորը.

Կեանքիս մէջ մի հատ սին փառք ունեցայ—  
«Սուրբ էջմիածնում թաղուել ցանկացայ»:  
Սիրական իմ Սզդ, թէ Սստուած սիրես,  
Սյս իմ մի հատիկ իղձըս կատարես:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԷԶ ՍՏԱՑՈՒԱՆ ԵՆ  
ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յուցակ հայերէն ձեռագրաց Կայսերական մատենագրա-  
քանին ի Վիեննա, կազմեց Տ. Յակովը 1891 թ.  
Տ. Կոստանդնուպոլիս՝ Թովմա Մեծոփեցու յիշատակարանը. Թիֆլիս,  
1892:—Պ. Վլոյչից. Պետրոս Աղամեան, մի համառօտ հայեացք  
նորա կեանքի և զործունէութեան վերայ. Թիֆլիս,—Դ. Կ.  
Թուրեանի երևանամեայ բեմական զործունէութեան առ-  
թիւ. Թիֆլիս: 1891,—Տ. Առաքելչանից. Աղա-Մուհամմէդ  
Շահը Շուշում (պատմական անցք). 1891, Թիֆլիս:—Միաբա-  
նից. Անանիա Նարեկացի, գիր խոստովանութեան. Վազարչա-  
պատ, 1892:—Յ. Ղարաբէջնից. Եւանդելինա և Կօլմարի դա-  
տաւորը:—Տ. Բաքչիչից. Բաֆիի Վէպիկներ և պատկերներ,  
դրուած և անտիպ աշխատութիւններից, հատոր Ա. Թիֆլիս:  
Խ. Յովհաննիստանից. Եղիշէի պատմութիւն Վարդանանց, Մոս-  
կուս, 1892 թ.:—Գ. Լեռնէանից, Հայ աշուղներ. Հրատարակու-  
թիւն Շիրակ գրավաճառանոցի, Ալէքսանդրապոլ:—Մ. Յովհան-  
նիստանից. Իրական կեանքի նուազներ. Պոլիս, 1892 թ.:—Լ.  
Սարգսէանից. Ժողովրդի կրթութեան զործը մեղանում Մոսկուս:  
Մ. Զլիկնանից. Օրացոյց պատկերազարդ, պատի և գրպանի 1892:  
Մ. Գաբրիէլչանից. Խրիմեան Հայրիկ, Նիւ-Եօրք 1892 և Ար-  
ուեստ ատենախօսութեան, 1891 թ.:—Ս. Պատկանա. Տիպ օ-  
տացկаго богатыря по остыацкимъ былинамъ и героическимъ сказа-  
ніямъ, Спб. 1891,—Гр. Ջանիևа. Изъ Эпохи Великихъ реформъ.

«Արաքսի» այս գրքի մշջ սպրուել են մի քանի սխալներ,  
որոնցից կարեղուներն են. Երես 17. Եղիշէյ-նէջի փոխարէն  
տպուած է Եղիշէ-յնէջ, 33 և 59 Երեսներում՝ Պահաւու-  
նեանց և Բագրատունեանց բառերի մշջ վերջին ն տառը մտած  
է սխալմամբ, 90 Երեսում՝ բանաստեղծութեան վերջին տան  
Երկրորդ տողում՝ փոխանակ տառ, տպուած է հայ, ևն:—

Բագուաբնակ Մեծ. պ. Առաքել Ծատուրեանը իւր սովորական առատաձեռնութեամբ այս տարի ևս ստորագրուել է մեր հանդիսին 33 օրինակ, որոնք ուղարկելու ենք նորա կողմից նուշերներ զանազան կարօտ հայ հաստատութիւններին և հասարակութիւններին: «Արաքսի» երկրորդ գրքում մի առ մի կընշանակենք ուղարկելիք տեղերի անունները:

Հայ ընթերցող դասակարգի անկարող շրջաններում ընթերցանութիւնը ձրի տարածելու նպատակով, մի քանի յարդելի անձինք՝ Պետերուրդում, Մոսկուայում, Ն. Խախիջևանում ու Ռոստովում՝ ստորագրուել են մեր հանդիսին մի քանի տարով: Այս անձանց անունները կը յայտարարենք յարմար ժամանակին, սակայն միւս գրքում կը տպենք հանդիսի ուղարկելիք օրինակների նշանակած տեղերը, սկսեալ 1892թ:

Ստորև յիշուած յարդելի անձինք «Արաքսի» գրքերից մի օրինակ նուիրած են հետևեալ հաստատութիւններին:  
Պետերբուրգ.՝ Պետրոս Մաթուղեանց նուիրում է Թիֆլիսի թանդիշյեան և Յովեանեան օրինութաց դպրոցներին:  
Գրիգոր Արիստակէսեանց՝ Երևանի Գայիանեան դպրոցին:  
Քրիստափոր Թոմասեանց՝ Ազուլիսի և Նուխուայ հայոց օրինութաց դպրոցներին:  
Յովսէփ Ներսեսեանց՝ Մեղքի գիւղի դպրոցին:  
Սարգիս Յովսէփին՝ Սղնախու հայոց օր. դպրոցին:  
Մակուտա.՝ Աշոտ Բեկիսարեանց՝ Մեղքիի գիւղայուց:  
Աւետիս Պողոսեանց՝ Նախիջևանի Զահրի գիւղի դպրոցին:  
Աստրախան.՝ Պետրոս Քուրդեան՝ տեղւոյն հայոց օր. դպրոցին:  
Ռոստով.՝ Սերովը Անանեան՝ Ս. Խաչ վանքին և Նոր-Նախիջևանու Հոփիսիմեանց դպրոցին:  
Ն. Նախիջևան.՝ Տիկին Վ. Բէրեկեեան՝ Թէոդոսիայի հ. դպրոցին:  
Մողենի.՝ Սերովէ Գանջումեանց՝ տեղւոյն ծխական դպրոցին:  
Արմատիլ.՝ Քաղաքապետ Յ. Մուրադեան՝ տեղւոյն օր. դպրոցին.  
Գաբրիէլ Այվաղեան.՝ Արաքսը Տաճկաստան արգելուած լինելով, փոխանակ Պոլսի ազգային հիւանդանոցի, ուղարկում ենք Թիֆլիսի կուսանաց վանքին:  
Ղալար.՝ Սիմեօն Իզմիրեանց՝ տեղւոյն հայոց դպրոցին:  
Սէմբէրուն.՝ Գ. Զիրախեան՝ տեղւոյն հայ կաթոլիկաց դպրոցին:  
Օդեսա.՝ Խշան Պարէտ Արզութեան Երկայնաբազուկ՝ Կիրչի հայոց դպրոցին և Մեծ Ղարաքիլիսի Արսէն քահանային:  
Մելքոն Սյդինեանց՝ Օրաբազարի հայոց ծխ. դպրոցին:

**ԱՃԱ-ԼՅԱ.** — Տիկին Անապչեան և տիկին Աւետիանց՝ Ներքին  
Ազուլիսի հայոց դպրոցին:

**ԲԱԴԻՆ.** — Նաբաթեան եղբայրներ՝ Դիլիժան աւանի հայոց  
դպրոցին, Ղամարլու գիւղի հայոց դպրոցին, Գանձա-  
կու Ս. Յովհաննէս եկեղեցու օր. դպրոցին, Հաղարծինի  
վանքին և Սալմաստի դպրոցին:

Արժ. Կիւրեղ վարդ. Սրապեան՝ Սարուշէնի գիւղացւոց:  
Գրիգոր Սյաղեան՝ Սարուշէնի Սյաղեան դպրոցին:  
Սողոմոն Վրթանէսեանց՝ Նուլսու հայոց տղայոց և օրի-  
որդաց դպրոցներին: —

Եթէ սխալմամբ նշանակած չըլինենք այստեղ մի որ և է  
նուիրատվութիւն, կլրացնենք այդ երկրորդ դրքում:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

**«ՆՈՐ-ԴԱՐ»** գրադարական-դրական լրագիր: Հրատարակ-  
վում է շաբաթը հինգ անգամ: Տարեկան բաժանորդագիրներ է  
10 ռուբլի, վեց ամսուանը 6 ռ.: Հասցէն. Տիֆլիս. Въ редак-  
цио газеты «Норь-Дарь» կամ Tiflis. Rédaction du journal «Nor-Dar».

**«ՄՇԱԿ»** գրականուկան և գրադարական լրագիր: Հրատա-  
րակիվում է շաբաթը երեք անգամ: Տարեկան բաժանորդագիրներ է  
10 ռուբլի, վեց ամսուանը 6 ռ. Հասցէն. Տիֆլիս. Въ редак-  
цио газеты «Мшакъ» կամ Tiflis. Rédaction du journal «Mschak».

**«ԱՐՁԱԳԱՆՔ»** գրական-գրադարական լրագիր: Հրատա-  
րակիվում է շաբաթը երեք անգամ: Տարեկան գինն է 10 ռ.,  
կես ամրուանը 6 ռ. Հասցէն. Տիֆլիս. Въ редакцио «Ардзаганка»  
կամ Tiflis. Rédaction du journal Armenien «Ardzagang».

**«ՄՈՒՐՃ»** գրադարական, հասարակական և գրական ամսա-  
գիր: Տարեկան գինն է 10 ռ.: Հասցէն. Տիֆլիս. Въ редакцио  
журнала „Мурчъ“ կամ Tiflis. Rédaction de la Revue «Mourtch».

**«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՑ»** բարոյական, ուսումնական և արու-  
եստական ամսագիր: Տարեկան բաժանորդագիրներ է 4 ռուբլի,  
իւրաքանչիւր թիւ կարժէ 50 կ. Հասցէն. Vienne (Autriche).  
Rédaction de la Revue «Hantess». Mechitharistengasse, 4.

**«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ».** Երկու գրքի գինն է տա-  
րեկան 2 ռուբլի: Հասցէն. Տիֆլիս. Набережная д. № 11.

«ԱՐԱՔՍԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷԶ ՎԱՀԱՌՎՈՒՄ ԵՆ

---

«Արաքս», 1889 թուից, իւրաքանչիւր տարուանը.	3	ռ.
Ղազար Փարագեցւոյ թուղթը, Մոսկուա, 1853 Մ. էմին.	1—20	
Ղազար Փարագեցի և գործք նորին, պատմական և գրական	”	
քննութիւն, Գ. Խալաթեանց, Մոսկուա, 1883.	1—50	
Ծրագիր հայ ազգագրութեան և աղդային իրաւաբանա-		
կան սովորութիւնների, Խալաթեանց, Մոսկուա, 1887,	—60	”
ֆենելոն, Արկածք Տելեմաքայ, թարգ. Հ. Մանուէլ		
Զախարիսեան, պատկերազարդ տպագրութիւն.	7—	”
Նշանարք մատենագրութեան Հայոց. Գ. Պատկանեան.	”	75
Սեբէս Եպիսկոպոսի ի Հերակլին Հր. Պատկանեանի.	2—	”
«Հանդէս պատմական և գրականական», ամեն մի զիրքը	2—	”
Լեռնեց. Բանաստեղծութիւններ. Ս.-Պետերբուրգ.	„—60	
Ասորակետեան. Շուշան, ողբերգութիւն Ս.-Պետերբուրգ	1—	”
Չուբար. Վէպեր և պատկերներ. Ն. Նախիջևան.	1—	”
Մսերեանց, Մանր ուսմունք եկեղեցական պատմութ.	”	30
Ճռաքաղ. երկու Հատոր. իւրաքանչիւր տարուանը	3—	”
«Փարոս Հայաստանի» 1880 թուականի տետրերը.	1—	”
1881 թուականի տետրերը. զինն առաքմամբ.	5—	”
Առանձին տետրները, բացի 1881 թ. չորրորդ դրեից.	”	50
Կնոջ կոչումը, Յ. Ղարագեօղեանց. Թիֆլիս.	”	—10
Մաֆֆիի Հեղինակութիւնները.		
Մամուէլ Ա. Բ. Գ զիրք.	3—	”
Դաւիթ բէկ. Ա. Բ. և Գ. զիրք վերջաբանով.	3—	”
Խենթ և Զալալէդդին.	2—50	
Կայձեր Բ. Հատոր.	2—50	
Կայձեր Գ. Հատոր.	”	50
Խաչագողի յիշատակարան Ա. և Բ մաս	1—20	
Խաչագողի յիշատակարան Գ. և Դ մաս	1—50	
Հայ կինը և երիտասարդութիւնը.	1—50	
Ղարաբաղի աստղադէսոր.	1—50	
Կայէնի կտակը. Զախիր-Մազօն.	1—20	
Մինն այսպէս, մինն այնպէս.	1—	”

Histoire de la Siounie, par Stéphannos Orbélian. Traduite de l'arménien, par M. Brosset. S.-Pétersbourg. 1864. 4 roub.

Collection d'Historiens Arméniens. M. Brosset. St.-Pétersbourg 1876. II. partie 2r.  
Lettres sur le Caucase et la Géorgie en 1821. 4 r.

- Исторический памятник состояния Армянской области въ эпоху ся присоединения къ Российской империи. И. Шопена, Петербургъ, 1852 г. 4°. 1237 листовъ. Членъ к. 6 томъ.
- Новые замѣтки на древнія исторія Кавказа и его обитателей. Ив. Шопена. Спб. 1865 г. 501 листовъ. Членъ к. 3 п.
- Сборникъ материаловъ для описания мѣстностей и племенъ Кавказа. Выпускъ шестой, въ переплѣтѣ 2 р. 40 к.
- Всеобщая исторія Степана Таронскаго-Асохика. переводъ Эмина 3 р.
- Материалы для новой исторіи Кавказа съ 1722 по 1803 годъ П. Г. Буткова. Три части 8 р. Вторая часть отдельно. 2 р.
- Армения, изд. Ахвердова 1 р. 25 к.
- Взглядъ на сословныя права и на взаимныя отношенія сословій въ Дагестанѣ. (Брошюра). 1 р.
- Березинъ, И. Н. Путешествіе по Дагестану и Закавказью съ картами, планами и видами замѣчательныхъ мѣстъ. Казань, 1849. Ц. 8 р.
- О началѣ беспокойствъ въ сѣверномъ и среднемъ Дагестанѣ 1847 г. 4 р.
- Кодексъ Шамиля. (Брошюра) 1 р.
- Картина Кавказскаго края Платона Зубова 1835 г. 2 р.
- Шамиль. Политический и духовный глава Дагестана. (Статья) 1 р.
- Критическое разъясненіе нѣкоторыхъ вопросовъ о древностяхъ Аржема-Азіи. (Брошюра) 1 р.
- Армянская географія VII в. Хоренскаго, текстъ и переводъ Патканова. 1 р. 50 к.
- Изслѣдованіе о составѣ Армянского языка К. Патканова 1864 г. 1 р. 50 к.
- Исторія Монголовъ Ионка Магакія XIII вѣка Патканова 1881 г. 2 р.
- Материалы для изученія Армянскихъ нарѣчий Патканова:
- Русско-Армянский словарь Ирицпухова. 6 р.
- Выпускъ I. Говоръ Нахичеванскій 1 р. 75.
- Вып. II. Говоръ Мушекій. 1 р. 75 к.
- Материалы для армянского словаря, вып. I и II, 1882, и 84. 1 р.
- Исторія Монголовъ по Армянскимъ изслѣдованіямъ, выпускъ II. 1 р.
- Любопытныя извлечения изъ древней исторіи Армении, Шаганъ Чирбета. 1815 г. 5 р.
- Объ ученіи Персидскихъ Маговъ, Г. Эзова. 1 р.
- Обозрѣніе Армянской-Периодической печати. (Брошюра). 1 р.
- Новые архивные материалы для исторіи Грузіи XVIII стол. Цагарели, 1 р.
- Зиссерманъ, А. Современное состояніе Кавказа, ИБургъ, 1857. 18 стр. Ц. 75 к.
- Дубровинъ, Н. Тысяча восемсотъ второй годъ въ Тифлисѣ, Спб. 1868. Ц. 1 р.
- Общий очеркъ народныхъ армянскихъ сказокъ, Москва, 1885. 1 р.
- Празднованіе 50-ти лѣтнаго юбилея ученой педагогической дѣятельности Н. О. Эйина подъ ред. Г. Халатянца. 1887. 1 р.
- Новѣйшая извѣстнія о Кавказѣ С. Броневскаго I и II. 1823 г. 252—165 стр. Москва. 5 р.
- Обозрѣніе российскихъ владѣній за Кавказомъ, въ статистическомъ, этнографическомъ и финансовыхъ отношеніи. I, II, III, и IV томы 410, 392, 400, стр. 1836 г. 5 р.
- Путешествіе въ Имеретію 1 р. 50 к.
- Кавказъ, путешествіе Александра Дюма, переводъ съ французскаго 2 выпуска 1861 г. 3. р.
- Арменская исторія М. Хоренскаго съ краткимъ географическимъ описаніемъ древней Армени 1, II т. Іосифъ Йониніанъ 355, 242 стр. 6 р.
- Собрание высочайшихъ указовъ и актовъ онтосящихся до Лазаревскаго института, 1839 г. 2 р.
- Сборникъ свѣдѣній о Кавказѣ. Томъ I. Тифлисъ. 1871 г. 4 р.
- Тоже. Томъ II. 1872 г. 4 р. Томъ III и IV. 1873 г. 6 р.



## “ՈՒՐՓԵՆ”

**ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆԻ ՍԿՈՒԽԱՑ Է ԻՐ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԻՒՆԸ ՈՒԽԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐ 12,000,000 ՖՐԱՆՔ.

**ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ առ մէկն յուն. 1889թ., գոյացելէ 60,000,000 ֆր.**  
**ՄԱՅՐԱՆԴԻ օժանդակ-ապահովութեալ ապահովագրեալ անձանց համար:**  
 ա) ԱԽԱՆԴ 500,000 ռուբրի պահ տուած պետական գանձատունը.  
 բ) ՄԱՅՐԱՆԴԻ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ և  
 շ) ՄԱՅՐԱՆԴԻ ՊԱՀԵՍՏԻ ԱՆՁԵՌՆԱՄԽԵԼԻ ԳՈՒՄԱՐ կայս. բանկում:  
 Ընկերութեալներին վրայ կարգուած է պետական հսկողութիւն:

Բացի այս ապահովութիւններից Արբէն ընկ. առաջարկում է բոլոր ապահովագրեալներին չետեեալ առաւելութիւնները:

Եթէ հիւանդութիւն կամ որեկից անբազդ արկած ապահովագրեալ անձին ենթարկէ լիովին կամ ժամանակաւոր անընդունակութեան աշխատելու և սորա մասին երկու ամսուայ մէջ Ծնկեր. յայտարարութիւն օրից արած, ապահովագրեալ անձը Ծնկ. բժշկի պահանջի վերայ ստիպուած լինի մնալ անկողնում կամ տանից դուրս չգալու, այն ժամանակ պրեմիա (տուրքի) հատուց ումն ժամանակաւորապէս ընդհատվումէ և Ծնկ. ընդունումէ պրեմիաները իր հաշուեին, մինչև որ սոյն վիճակը շարունակուի: Այս գեպքում ապահովագրեալը չնայելով պրեմիաների չվճարելուն, չէ կորցնում իր իրաւունքները: Բացի սորան, չնայելով որ ապահովագրութիւնը արած է միայն մահուան դէմ, սակայն ապահովեալ գումարի երեք մասը տրվումէ ապահովագրեալ անձին, եթէ ու է մի անբազդ արկած կամ հիւանդութիւն առաջ բերէ աշխատելու համար մշտական անընդունակութիւն. զօր, կիսամարմնեայ կաթուած կամ լեզուի, մուաւոր ընդունակութիւնների թուլութիւն, խլացումն և մինչև անգամ ձայնի կորուստ երգիչների, գերասանների, դաստիարակների, փաստաբանների կամ թէ խելագարութեան կամ այլ հիւանդութիւնների դէմ, որոնք շարունակում են երկու կամ երեք տարի: Այս բոլոր գեպքերում ապահովագրեալ անձը աղատվումէ յետագայ տուրքերի վճարելուց. սակայն գիտելու է որ ապահովեալ գումարի վերջին չորրորդ մասը պէտք է վճարել ապահովագրութեան ժամանակամիջոցը համելուն պէս:

Մանրամասն արեղջուն-նիւները յէլու-ած արտօնութեանց հասնի, որդ միայն այս ընկերուն-նիւնան էն յարուն-ի Բուռաստակուն-է, իսրելէ է ինանաւ կէնդրունական Գործակալուն-նիւն մէջ. Общество страхования жизни «Урбэнъ», С.-Петербургъ, Невскій проспектъ, д. № 13.

Կործակալները գտնվում են տէրութեան նշանաւոր քաղաքներում:



# СТРАХОВАНИЕ ЖИЗНИ

ВЪ СТРАХОВОМЪ ОБЩЕСТВѢ

# „РОССІЯ“

ВЫСОЧАЙШЕ утвержденное въ 1881 г.

ОСНОВНЫЙ И ЗАПАСНЫЕ КАПИТАЛЫ 16.500,000 РУБ.

Общество заключаетъ на выгодныхъ условіяхъ и по  
умѣреннымъ преміямъ страхованія:

Капиталовъ на случай смерти,  
Вдовъихъ пенсій,  
Капиталовъ на старость,  
Пенсій на старость,  
Приданаго для девушекъ,  
Стипендій для мальчиковъ,  
Пожизненныхъ доходовъ.

Страхователи участвуютъ въ прибыляхъ  
Общества.

Къ 1 Января 1892 г. въ Обществѣ „Россія“ было за-  
страховано 24,795 лицъ на капиталъ въ 69,328,905 руб.

Дивидендъ страхователей въ 1892 г. составляетъ 12%.

Заявленія о страхованіи принимаются и всякаго рода  
свѣдѣнія сообщаются въ Правлениі въ С.-Петербургѣ (Боль-  
шая Морская, собственный домъ № 37), и агентами  
Общества въ городахъ Имперіи.

ПЕРСИДСКАЯ  
СИРЕНЬ  
НАСТОЯЩІЕ  
ДУХИ  
САМАГО  
ВЫСОКАГО  
СОРТА

**БРОКАРЬ и К°**



ГЛИЦЕРИНОВАЯ  
ПУДРА

НОВОЕ ИЗОБРѢТЕНИЕ

ОБЕЗПЕЧЕНО  
ПРАВОМЪ  
СОБСТ:

50 коп.



ЗА КОРОБКУ

БРОЧИР С ПОЧЕМУ ИЗПУСТИ

ЗОЛОТАЯ МЕДАЛЬ  
Парижской Всемир. Выст. 1889 г.

**БРОКАРЬ и К°**  
ИЗОБРѢТАТЕЛЬ  
ЦВѢТОЧНОГО  
О-ДЕ-КОЛОНА


РАЗНЫХ ЦВѢТОЧНЫХ ЗАПАХОВЪ.



Этот о-де-колонъ употребляется какъ духи,  
туалетная вода и куренія.

Можно получать во всѣхъ  
городахъ Россіи у главныхъ  
торговцевъ.

ЗОЛОТАЯ МЕДАЛЬ  
Парижской Всемир. Выст. 1889 г.



Извѣстное своимъ качествомъ  
**ГЛИЦЕРИНОВОЕ МЫЛО**  
и  
всевозможные благовонные

косметические товары

ФАБРИКИ

**БРОКАРЬ и К°**

можно получать во всѣхъ лучшихъ  
магазинахъ  
РОССІЙСКОЙ ИМПЕРИИ.